ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՏԵՐԵՐԸ

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՏԵՐԵՐԸ

Հրատարակիչ՝ Հայրենիք Ակումբ

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 941(479.25):23/28
ԳՀԴ 63.3 (2Հ) +86.37
Հ 854

Հ 854 Գևորգ Հովհաննիսյան, Հայոց Տերերը: Նկարների հեղինակ՝ Հեղինե Հովհաննիսյան: Խմբ.՝ Ավագ Հարությունյան: Հրատ. «Հայրենիք» Ակումբ, Եր., 2012, 330 էջ:

Գրքում պատմական համոզիչ փաստերով հիմնավորապես հերքվում է այն սխալ և վտանգալից մոտեցումը, թե քրիստոնեության հաստատումից հետո հայկական պետականությունը տվել է թույլ, օտարի կամքով առաջնորդվող արքայիկներ: Հանգամանորեն, հանրամատչելի և նորովի ներկայացված են 340-374թթ. պետություն-եկեղեցի հարաբերությունները, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հայ ազնվականության, եկեղեցու և պետականության կյանքում նրա խաղացած դերին: Այս համատեքստում բացահայտվել է հայոց պետականության և ազգային շահերի պաշտպանության դիրքերից եկեղեցու հանդես եկած լինելու մասին դարեր շարունակ տիրապետող առասպելը:

Գիրքը նախատեսված է մեր պետականության հզորացմանը ծառայող, պատմության հերոսականությամբ հպարտացող, ազգային արժեհամակարգին գաղափարապես հավատարմորեն ապավինած Տիրապաշտ հայ երիտասարդության համար:

ՀՏԴ 941(479.25):23/28
ԳՀԴ 63.3 (2Հ)+86.37

© Գևորգ Հովհաննիսյան
© «Հայրենիք» Ակումբ

ISBN 978-99941-41-81-4

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Վահագնի հետ պիտի խոսի հայ մարդը հիմա –
Աստվածը հին հայոց, Աստվածը Արիության և Հաղթանակի:
Գարեգին Նժդեհ

Մենք մեր պատմությունը հարկ եղած և անհրաժեշտ չափով չգիտենք: Ավելին, մեզ դարեր շարունակ հրամցվածն ու պարտադրվածն ամենևին էլ այն պատմությունը չէ, որը հենց մերն է: Սովորել և շարունակում ենք սովորել մի բան, ինչն ընդհանուր առմամբ խճողված է, խեղաթյուրված և նպատակասլաց ուղղորդմամբ ոչ դաստիարակիչ[1]:

Արարչածին Հայն իր տեսակով ի սկզբանե եղել է Տիրապաշտ և Տիրասեր: Սակայն, Հայոց աշխարհում քրիստոնեության որպես պետական կրոն հաստատման և պետականության կորստի արդյունքում զրկվեցինք ու կորցրեցինք մեր ազգային արժեհամակարգի կարևորագույն, վճռորոշ գործոններից մեկը՝ ՏԻՐՈՋ ոգին և զգացումն ու նրա հանդեպ անվերապահ, հլուհնազանդ պարտավորվածությունը:

Գրքում ներկայացված են մեր արտաքին հերոսական հաղթանակներն ու ներքին ողբերգական պարտությունները: Այս գիրքն ակադեմիական աշխատանք չէ՝ նմանին բնորոշ բնութագրիչներով: Հեղինակն իրադարձությունները և հերոսներին ներկայացնում-գնահատում է կենդանի և աշխույժ կերպով,

---

[1] Ահավասիկ Նժդեհյան գնահատականը. «Հայությունը չգիտե իր պատմությունը, ասել է՝ չգիտե օգտվել իր պատմությունից – ահա իր դժբախտության ակն ու աղբյուրը: Նա ծանոթ չէ իր արիական անցյալին, իր հավաքական դյուցազնականին և դրա համար էլ – հուրախություն իր գոյության թշնամիներին – նա հավատում է ամեն ինչի, միայն ոչ իր սեփական բազկի ուժին, դրա համար էլ իր ամբողջության մեջ նա պարտվողական է: ... Ինքնաճանաչ չէ մերօրյա հայը: Նրա համար հայոց պատմությունը անզօրության և պարտության, կոտորածների և տեղահանությանց տխուր նկարագրություն է, և ոչ ավելին»:

հայավարի, և ըստ այդմ էլ՝ գիրքն ընթերցվում է մեկ շնչով: Այսինքն, հեղինակային ոգևորությունը, սրտով-հոգով շարադրումը՝ իր փառավոր անցյալի նկատմամբ ընթերցողի, մանավանդ՝ պատանի-երիտասարդ, մոտ պաշտամունք է առաջացնում: Գիրքը մեր պատմության ելևէջներում յուրահատուկ որոնումների, փնտրտուքների, դրանց արդյունքում՝ վերագնահատման փորձ է: Հենց վերջին հանգամանքն է հատկապես շեշտադրված: Այն նաև հետազոտվող ժամանակահատվածի վերապրման-վերաիմաստավորման փորձ է, ընդ որում, ընթերցողին էլ դրան տրամադրող:

Հեղինակը ձգտել է այդ որոնումների շնորհիվ գտնել մեր պետականությանը պատուհասած աղետալից դժբախտությունների և պարտությունների իրական պատճառները, խրատական դասեր քաղել դրանցից: Նա առանձնակի ուսումնասիրել և վեր է հանել հայության ներքին թշնամիներին (նժդեհյան ձևակերպմամբ՝ ցեղի տականքին), քննադատել-պախարակել պետական ընտրախավի որոշ տարրերի երկպառակտիչ պահվածքը, տվել դրա ախտաբանական հատկանիշները, առաջին հերթին՝ ռազմի դաշտում հայրենադավ օտարամոլությունը[2]:

Առաջին հայացքից կարող է այն թյուր և մերկապարանոց տպավորությունը ձևավորվել, որ գիրքն ընդգծված հակաքրիստոնեական կամ հակաեկեղեցական ուղղվածություն ունի[3], կամ էլ՝ հեղինակն իր առջև խնդիր է դրել «սևացնել» այն կրոն-

---

[2] Վերջինի կապակցությամբ տեղին է հիշել Նժդեհի դիպուկ բնորոշումը. «Զինվորի և ռազմավարի մեր բազուկից ավելի օտարն օգտվեց, քան հարազատ երկիրը: Անպարտելի էր օտար բանակը, երբ նրա կողքին օտար զենքի հաջողության համար կկռվեր և Հայը, մանավանդ, երբ դա կառաջնորդվեր հայ զորավարի կողմից»:

[3] Ահա, այս առումով Նժդեհյան պատգամը. «Ինքնապաշտպանությունը հայ ժողովուրդի – ահա Հայ եկեղեցու նոր հավատամքը: Չընդունե՞ց այս ճշմարտությունը, չքարոզե՞ց, չտարածե՞ց ամեն օր այս փրկարար գաղափարը, իր բոլոր միջոցներով չնպաստե՞ց մեր ինքնապաշտպանության գործին – կործանված է դա»:

ական, ռազմական և պետական գործիչներին, որոնց գործունեության հետ մասնակի կամ ամբողջությամբ համաձայն չէ:

Մինչդեռ, նման տպավորությունը խաբուսիկ է: Նախ, հեղինակային քննադատությունն ամենևին ինքնանպատակ չէ, այլ արդյունք է մեր պատմության հերոսա-անկումային դրվագների վերապրման, այն հիմնավոր է, փաստարկված և համոզիչ: Իսկ որ ցավոք սրտի մեր պատմության մեջ քննադատության՝ այն էլ անողոք, արժանի անձինք ու երևույթներ շատ կան, ակնհայտ է: Եվ որ այդ ամենը մինչ այժմ ինչպես հարկն է և համակարգային կերպով չի արվել և առավել ևս՝ չի արվում, միանշանակ անհանդուրժելի է: Վաղուց արդեն այլևս աններելի է մեր կրավորական-պարտվողական կեցվածքը, այն ուղղակի դավաճանական և սրբապիղծ մոտեցում է մեր նախնիների հերոսական ոգու հանդեպ: Ու շարունակել աչքակապությամբ զբաղվել, ջայլամություն անել՝ ոչ իրավունք, ոչ էլ ժամանակ չունենք: Այլևս ոչ մի քայլ, որը կշարունակի ջուր լցնել մեր գաղափարա-դավանանքային թշնամիների ջրաղացին, մեր հոգևոր ստրկամտության խորացմանը:

Գրքի առանցքը մեր պետականության, մեր հերոսական անցյալի աստղաբույլի երեք փառավոր ներկայացուցիչներն են՝ Արքայից արքա Արշակ Բ Մեծը, Տիկնանց տիկին Փառանձեմը, Արքայից արքա Պապը: Ահավասիկ, հայրենասիրության տիպար մեր Տերերը՝ հանիրավի անտեսված, ծրագրավորված մոռացության մատնված, ըստ արժանվույն չգնահատված և չարժևորված, եղծված ու բառի բուն իմաստով՝ անուշադրության մատնված: Մինչդեռ, թե որպես հոգու պարտք, պետականամետ մտածողություն, թե պարզ տրամաբանությամբ, մենք բոլորս նրանց պարտավոր էինք մեր սիրո, հպարտանքի, դաստիարակության և քարոզչության օրինակելի կերպար դարձնել: Եվ այսպես, գրքում վեր են հառնում նրանց կերպարները - Արշակը՝ հասուն պետական-ռազմական գործիչ, Փառանձեմը՝ բոլոր հայուհիների համար ընտանեկան-հայրենատիրական օրինակ, Պապը՝ երիտասարդ հայի, մասնավորապես պետական գործչի երանելի տիպար:

Այս գիրքն իր պատմագիտական նորույթով, մեր պատմության բազմաթիվ մութ և վիճահարույց հարցերի նորովի լուսաբանմամբ ունի նաև ուսուցողական-քարոզչական դերակատարություն: Ինչպես ժամանակին Նժդեհն է մեզ խրատական պատգամել. «Չկա ավելի մեծ հանցանք, ուրացում, քան՝ իր սեփական պատմության անծանոթ լինելը: Նմանը զուրկ պատմական զգացումից և հիշողությունից – ազգ չէ: Սեփական պատմությունն է մեր իմաստուն խորհրդականը, մեր ոգու դայակը, մեր ազգային խղճմտանքի վարիչը»: Այսինքն, բոլորիս պարտքն է հասու լինել մեր փառավոր անցյալին, սակայն պարտադրաբար՝ իմանալ միմիայն ճշմարտացին և չեղծվածը, այն՝ ինչը մեր սիրտն ու միտքը պետք է ոգևորի, փառավորի, և արդարացի հպարտանքով լուսավորի թե ներկան և թե հատկապես ապագան: Եվ որ հույսն ու հավատը մեզ միշտ զորավիգ կլինի. «Եվ կհաղթանակենք, քանզի ցեղի հեթանոս աստվածները՝ Հայկն ու Վահագն՝ պիտի բարձրացնեն շանթընկեց մեր բազուկը և վարեն նրա հարվածները» (Նժդեհ):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատահականություն չէ, որ հայը դեռ չունի իր պատմության իմաստասիրությունը, որ ասել է՝ դեռ չի խոսել իր գոյության խորհուրդի, իր նպատակի հետ: «Պատմություն» ասելով՝ հայն ավելի հասկանում է իրերի ընթացքի նկարագրությունը, քան՝ ոգու տրամաբանության, իր կյանքի ներքին ուժերի և խորհուրդների մեկնաբանությունը:

Հայկ Ասատրյան

Մեր պատմությունն իր ողջ փառքով ու ողբերգականությամբ, հակասությունների ու դեռ չլուծված գաղտնիքների հանգույց է, վերելքի ու գահավիժումի, ահեղ պոռթկումի և խեղճ նվաստության գլխապտույտ պարբերականություն, աշխարհակալ Հայկազունների մի աստղաբույլ ու փոքրոգի, մանրախնդիր արքայիկների մի տարեգրություն: Այն մեր հոգեկերտվածքի, ազգային առաքինությունների ու թերությունների հավերժական պայքարի ճշգրիտ արտացոլանքն է, այն հետքն է, որ թողել է մեր Տեսակն իր անցած ուղու վրա՝ հետք, որ բնորոշ ու հատուկ է միայն մեզ: Այն մեր Էության, Ես-ի վկայականն է, որ պարուրում է անցյալը, ներկան ու գալիքը՝ միաժամանակ: Թվերի ու դիպվածների անշունչ շարան չէ, և ոչ էլ՝ հերոսների ու դավաճանների ձանձրալի տարեգրություն: Այդ այն աղբյուրն է, որից ճիշտ օգտվելու դեպքում բացվում են անմահության դռները, այն կամուրջն է, որ կարող է անխափան պահել անցյալ ու գալիք հազարամյակների մեր կապը: Հասկանալ սեփական պատմության օրինաչափությունները, մտովի ապրել, պայքարել ու խոսել պատմություն կերտած անհատների հետ՝ նշանակում է ճանաչել սեփական անձը, ինքդ քեզ, գտնել ուժի այն ակունքը, որ անթեղված է յուրաքանչյուրիս հոգում, ամրացնել մեր

թիկունքը մեր Մեծ Նախնիների ներկայությամբ, նրանց հետ շունչ-շնչի տված՝ վստահ քայլել դեպի ապագան:

* * *

Տեսակի գոյության կռվում առավելագույն կենսունակությամբ պայքարելու անհրաժեշտ պայման է սերունդների անխզելի կապը՝ մոգական այն շղթան, որի բոլոր օղակների անվնաս առկայությամբ է պայմանավորված Պատմաստեղծ Ոգու երկունքը՝ անցյալը, ներկան ու գալիքը անքակտելի ամբողջականության մեջ միավորող հզորագույն անհատները: Այս բնական կապը պայմանավորված է պատմական և գենետիկ հիշողությունների անխաթարությամբ՝ գործոններ, որոնց անեղծության ու ամրության փոխշաղկապվածությունը տվյալ ազգի մեջ կերտում է հաստատուն հավատ՝ դեպի իր ուժն ու ապագան: Չկա առավել սարսափելի արհավիրք, քան այս գործոններից որևէ մեկի թուլացումն ու խաթարումը. գլխապտույտ մի արագությամբ անդունդն են գահավիժում այն ամեն սրբազանն ու պաշտելին, որոնք, հազարավոր սերունդների ջանքերի գնով՝ վերածվել էին ազգային որակների:

Բնության մեջ ցանկացած տեսակ դատապարտված է անհետացման, եթե դադարում է սնվել սեփական արմատներից: Մարդկային տեսակները, հանգամանքի բերումով որդեգրելով օտար, իրենց էությանը խորթ ու հակոտնյա արժեհամակարգ՝ կորցնում են բնական-հոգևոր կապն անցյալի հետ, դադարում սնվել միայն իրենց հարիր հոգևոր սնունդով, խեղաթյուրում պատկերացումները սեփական ակունքների մասին և ներկան քարշ տալով՝ սոսկ իբրև առօրեական արժեքներով առաջնորդվող կապկային հոտեր, բացահայտ հարցականի տակ դնում իրենց ապագան:

301 թվականը լոկ սկիզբն էր հսկայական այն ավերի, որ հետագայում պիտի արվեր մեր հավաքական հիշողության հետ: Հետևողական ու համառ աշխատանք տարվեց մեր ազգի

գոյությունը քրիստոնեական դավանանքով պայմանավորելու, նախաքրիստոնեական Մեծ Հայքը սերունդներին իբրև ջունգլի ներկայացնելու, և հայոց պատմությունը՝ եկեղեցու հաղթարշավի լույսի ներքո հրամցնելու ուղղությամբ: Եկեղեցու այս քաղաքականությունն ունեցել է մի կարևոր պատճառ. դրսից պարտադրված հայեցակարգն արմատավորելու համար պետք էր կործանել այն ամենն, ինչ ազգին կհիշեցներ իր անցյալը, պետք էր գլխիվայր շրջել մեզ հարազատ արժեհամակարգը, ողջ աշխարհը: Եվ այս ամենն արվեց կույր ատելությամբ: Փառահեղ քաղաքակրթության և մշակույթի կրողներս սկսեցինք խարխափել պարտադրված խավարում, աշխարհակալ հայի՝ տարածվելու սովոր օրգանիզմը սմքեց, փոքրացավ ու սեղմվեց իր բնաշխարհի տարբեր անկյուններում՝ բնաշխարհի, ուր հայն այլևս ներկայացվում էր իբր եկվոր, ուր հայն այլևս քարշ էր տալիս գոյությունը՝ տարագրի կարգավիճակով:

* * *

Մաշտոցի հանճարը սկիզբ դրեց հայ մշակույթի մի նոր վերելքի: Երկարատև նիրհից հետո, որում գտնվում էր հայ ընտրանին, ասես աներևույթ մի զորություն, խթանեց մեր Տեսակի՝ եկեղեցական «բարեփոխումների» արդյունքում թուլացած ու անհետանալու աստիճան նվաղած ինքնապաշտպանական բնազդը: Հայրենիքում այլասերման և փոշիացման վտանգը ծնունդ տվեց մտավորականների մի փաղանգի, որն իր սրբազան պարտքն էր համարում մոխիրների միջից պեղել և վերծանել այն ամեն փառահեղն ու լուսեղենը, որ ի վերուստ տրված է մեր ազգին: Անցյալի հետ խաթարված կապի վերահաստատումը՝ ահա Մաշտոցի ծնունդ տված Ոսկեդարի ողջ հմայքն ու զորությունը:

Հայրենանվեր մտավորականների բանակում առանձնանում և յուրահատուկ տեղ է գրավում Քերթողահայր Խորենացին: Պատմահայրը ժամանակակիցներից և հետագա բոլոր ուսումնասիրողներից շահեկանորեն տարբերվում է նրանով, որ

երևույթների սոսկ նկարագրող չէ: Նա ապրում-պայքարում է նախնիների հետ և սերունդներին փոխանցում նրանցից ստացած զորությունը: Նրա հավաքած հսկայական նյութը նրա գործն անկենդան մի շարադրանքի չեն վերածում: Պատմահոր տրամաբանությունը հետևյալն է: Դեպքերն ու դեմքերը լոկ արտացոլումն են մեր պատմությունը կերտող այն ուժի, որ կոչվում է Հայ Ոգի, որի հաղթական բռնկումներն ու վայրէջքները պայմանավորված են մի տրամաբանությամբ՝ Տեսակի հարատևման ճիգը: Արքաները, հերոսներն ու զորավորներն անցնում են: Մնում և հետագա սերունդների մեջ մարմնավորվելով՝ ապրում ու ներգործում է նրանց Ոգին, զորավոր ենք այնքանով, որքանով որ հաղորդակից ենք՝ Արարչի կամքով մեր մեջ գործող այդ Ոգուն: Բացարձակ այդ ուժի՝ պատմակերտ Հայ Ոգու, և Տեսակի հարատևման ճիգն՝ իբր ամենազորավոր մղիչ ուժ ընկալելու հանգամանքը, Խորենացուն բերում է այն համոզմունքին, որ մեր անցյալը, ներկան ու ապագան մի ամբողջություն են՝ Հայ Ոգու դրսևորման հարատև ընթացք: Ամբողջության մեջ Պատմահայրն առանձնացնում է երեք անուն՝ Հայկ, Արամ և Տիգրան[4], որպես մարմնավորողներ համահայկական ազգասիրության և համահայաստանյան հայրենասիրության, որպես Հայ Ոգու մեծագույն երկունք, և նրանց օրինակով ցույց է տալիս այն ամենալավն ու առաքինին, ինչ հատուկ է մեր Տեսակին: Մնացած ամեն երևույթ անցկացնում է այս պրիզմայով, ինչն ամենևին չի ենթադրում, թե Քերթողահայրը նվազեցնում է մնացյալի արժեքը կամ կասկածի տակ դնում մյուս արքաների քաջությունը: Շեշտում եմ՝ Խորենացու համար անունները երկրորդական են: Գլխավորն այն չափանիշներն են, որոնք խտացված են երեք կերպարների մեջ: Խորենացին պատգամում է յուրաքանչյուրիս՝ անձն-

[4] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գլուխ Ա., ԼԱ. «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան - Հայկ, Արամ, Տիգրան, քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջգք, իսկ միջոցքն որպէս դէպ ումեք թուիցի կոչել»:

ական կամքի մշակմամբ, սատարել Հայ Ոգու զորությանը: Ահա սա է նաև պատճառն այն հանգամանքի, որ մեծ մտավորականը գիտակցաբար միախառնել է տարբեր դարերում գործած հայ մեծերի կերպարները (Տիգրաններ, Արտաշես ու Սանատրուկ, Վաղարշակ և Տրդատ Ա...): Ահա Պատմահոր գործի բուն արժեքը՝ հետագա սերունդներին փոխանցել Հայ Ոգու զորությունը, որի հարատև ընթացքը հավասարապես պայմանավորված է հայ մեծագործ արքաների, իշխանների ու հոգևոր այրերի կամային զորութենականությամբ՝ թե նախաքրիստոնեական և թե քրիստոնեական շրջանում: Հայոց Քերթողահայրը եզակի մնաց ոչ միայն հայ, այլ նաև համաշխարհային իրականության մեջ. եզակի՝ դեպի Պատմությունն իմաստասիրական մոտեցմամբ, այն միայն և միայն Տեսակի հարատևման բնական ու աստվածահաճո գործին ծառայեցնելու միտումով:

* * *

Գրի առնվելով հիմնականում վանքերում, եկեղեցու պատվերով կամ իշխանական տների հովանավորությամբ՝ հայ պատմագրությունը կղերական բարոյախոսության, դեպքերի ու երևույթների քրիստոնեական-դոգմատիկ մեկնաբանության կրողն ու արտահայտիչն եղավ: Հիմնականում դուրս չգալով կրոնա-դավանաբանական կաղապարներից՝ հայ պատմիչները, եզակի բացառություններով, մեր պատմությունը մեզ ներկայացրել են որպես եկեղեցու հաղթանակների ու պարտությունների պատմություն՝ դրանով հայ իրականության մեջ քաղաքագիտական լուրջ մտքի և ուսումնասիրությունների առկայությունը զրոյի հասցնելով: Սրա ամենավառ օրինակն է Փավստոս Բուզանդի «Հայոց Պատմությունը»: Տեղեկատվական անգնահատելի պաշարը, որ սերունդներին Բուզանդը փոխանցել է՝ նրա երկը մթ. 4-րդ դարի հայոց պատմության կարևոր սկզբնաղբյուրներից մեկի է վեր ածել: Ի տարբերու-

թյուն Խորենացու, Բուզանդի երկն աչք ծակող կղերական կողմնորոշում ունի, որն հաճախ, դեպքերի և դեմքերի՝ նրա կողմից կամայական վերլուծությունների արդյունքում, սուր հակապետական, հակազգային բնույթ է ստանում: Ժամանակի խիստ գրաքննությունն ու դարերի ընթացքում արված խմբագրումներն, անկասկած, իրենց կնիքն են դրոշմել նաև Խորենացու աշխատության վրա, սակայն, գիտական բարեխղճությամբ ու սրբազան մի հայրենասիրությամբ Պատմահայրն աշխատել է ավելորդ որակումներից հնարավորինս խուսափել: Եվ եթե նույնիսկ չի հաջողվել բացահայտ ասել ճշմարտությունը՝ չի զլացել ընթերցողին ցանկացածը ակնարկով հասկացնել: Խորենացու «Պատմության» ձեռագրերի թիվը 48-ի է հասնում: Դրանցից ամենահինը մեզ 14-րդ դարից է հասել: Սրանք բոլորն էլ արտագրություններ են: Բնագիրը մեզ չի հասել: Զարմանալի չէ, որ Պատմահոր աշխատության մեջ մեծաթիվ ձևափոխումներ և աղավաղումներ տեղ գտած լինեն:

Մեր պատմության ավելի խոր և ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դարեր շարունակ պարզ ու հասկանալի ճշմարտությունները աղավաղված են ներկայացվել: Մոլեռանդ քրիստոնյա քարոզչի կամ տոհմական ավանդույթի դիրքերից մեկնաբանված բազմաթիվ իրողություններ դարերի ընթացքում ուսումնասիրողների համար քարացած օրենքներ են դարձել: Բացարձակ արհամարհանք և անվստահություն է տածվել հայ մատենագիրների՝ թող որ վանական, վկայությունների նկատմամբ: Հռոմեական կայսրերի փառքն աստվածացնող ճոռոմաբերան լատին պատմիչը, որ երբեք չի խորշել ստից և բամբասանքից՝ միշտ էլ համարվել է առավել վստահելի աղբյուր, քան՝ Խորենացին, Օրբելյանը կամ նույն Բուզանդը: Մեր ուսումնասիրողների մոտ ազգային թերարժեքության բարդույթն է խոսել՝ հայ պատմիչների նկարագրած փառավոր սխրանքները «ավանդապատում» համարելիս, և այդ հերոսապատումներին՝ օտար աղբյուրների ներկայացրածը կուրորեն

հակադրելիս: Ժամանակագրական ճշգրտումների տեսանկյունից օգտակար է հայ և լատին պատմիչների հաղորդած տեղեկությունների համեմատությունը, սակայն, դա երբեք չի նշանակում, որ պատմական փաստի արժանահավատության մեջ վերջիններիս վկայությունները միշտ էլ իրենց բարձրության վրա են գտնվել:

* * *

Մեր ազգի, պետականության և հետագա սերունդների համար բախտորոշ նշանակություն է ունեցել 4-րդ դարը: Այն խոր հետք է թողել մեր հոգեկերտվածքի և ճակատագրի վրա: Այդ բեկումնային ժամանակահատվածի խոր ուսումնասիրումն առավել քան կարևոր է: Այնինչ, մեր պատմության որևէ հատված պատմիչներն ու պատմաբաններն այնպես չեն աղավաղել և կամայական մեկնաբանել՝ ինչպես 4-րդ դարը:

Կրոնական արյունոտ հեղաշրջումը տարածաշրջանային գերիշխանության համար պայքարող հայոց քաղաքական նկրտումները վերջնականապես հօդս ցնդեցրեց: Հայոց պետությունը նախկին հզորությունն այլևս երբեք չվերագտավ, և եթե մինչ Խոսրով Մեծ[5] Արշակունյաց առաջին գահին հավակնող հայոց արքաներն ահավոր սպառնալիք էին հարևան Պարսկաստանի և Հռոմեական տերության համար, ապա Տրդատ Գ-ից սկսած պայքարի թատերաբեմն արդեն Հայաստանն էր, ուր նոր հաստատվող եկեղեցին և պետական իշխանությունը կենաց-մահու պայքար էին մղում՝ եկեղեցին ամեն գնով ճգնում էր պետական իշխանությանը փոխարինել և չէր խորշում օգտագործել օտարին և ցանկացած միջոց՝

[5] Համարվել է, որ Խոսրով Մեծի կերպարը միախառնված է Տրդատ Բ կերպարին: Մեկ բան ակնհայտ է. Խոսրով Մեծ-Տրդատ Բ իրոք եղել է քրիստոնեություն ընդունած Տրդատ Գ հայրը և Սասանյան Պարսկաստանի հզորագույն ախոյանը (Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ., Ե., 1958, էջ 77-120):

նպատակին հասնելու համար: Երկիրը ներքաշված էր պառակտիչ ու կենտրոնախույս բախումների մեջ: Բուն հայկական, ավանդական ազնվական տներին փոխարինելու էին գալիս նորերը, որոնք հենվելով եկեղեցու պաշտպանության վրա, իրենց տեղն ու դիրքը ամրացնելու համար դաժան պայքար էին մղում: Պայքարն անողոք էր՝ հիմնահատակ կործանվում էին հին արժեքներն ու դարերով ամրագրված պետական ավանդույթները: Պատմիչները հիմնականում ձգտել են դրանք ներկայացնել եկեղեցու գաղափարաբանության տեսանկյունից, և ընդհանրապես ողջ այդ ժամանակահատվածը շարադրված է՝ իբրև եկեղեցու հաղթարշավի պատմություն: Այնինչ, ուշադիր ուսումնասիրելով դժվար չէ հասկանալ, որ ամեն ինչ գլխիվայր է ներկայացված:

Տրդատ Գ և Խոսրով Կոտակի օրոք եկեղեցուն հաջողվում էր իր տիրապետությունը հաստատելու և ամրապնդելու ուղղությամբ պետական իշխանության օժանդակությունն ապահովել: Թերևս, հիշյալ արքաները դեռ չէին տեսնում այն ծրագրված դավադրությունը, որով երկիրը վերածվում էր մի խղճուկ կրոնապետության: Համընդհանուր խառնաշփոթի ու հուսալքության այդ տարիներին իրեն որսին ու զվարճություններին տված Կոտակի մասին մեր պատմիչների իրար հակասող գնահատականները հատկանշական են.

«Նա էլ հոր նման ոչ մի քաջագործություն ցույց չտվեց ... այլ պարսից թագավորին իր կամքին թողնելով՝ նրա հետ խաղաղություն է կնքում, բավական համարելով տիրել մնացած սահմաններին, բոլորովին չհակվելով ազնիվ մտածումների: Սա անփույթ լինելով քաջության և բարի հիշատակների՝ զբաղված էր զբոսանքներով, թռչնորսությամբ և այլ որսերով...»[6]:

Ուշագրավն այն է, որ հզոր պետականությունը իբրև Տեսակի հարատևման անփոխարինելի գործոն ընկալող հայաշունչ պատմիչը «ազնիվ մտածումներ» ասելով հասկանում է

[6] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Ե., Ը.:

միմիայն պետական սահմանների պաշտպանությունն ու հանուն հայրենիքի ամբողջականության պատերազմելը: Միայն այս տեսանկյունից կարելի է հասկանալ առաջին հայացքից տարօրինակ թվացող նրա ակնարկը Խոսրով Կոտակի հոր՝ Տրդատի մասին:

Այժմ դիմենք այլ աղբյուրների.

«Սրանց (Խոսրովի և Վրթանեսի) տարիներում աճեցին և բազմացան խաղաղություն և շենություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և գործի հաջողություն և աստվածային մեծ պաշտամունքը և աստվածահաճո բարի վարք: Սուրբ Վրթանեսը իր հոր և եղբոր նման նրանց լուսավորում էր և առաջնորդում: Այն դարում ծաղկած էին իրավունքն ու արդարությունը...»[7]:

«Խոսրովը հետևում էր քրիստոնեական կարգերին, տիրոջ պատվիրաններին, մեծն Վրթանեսի խրատներին, ուստի ամեն կողմից ապահով էր...»[8]:

Հեզ ու խոնարհ քրիստոնյա արքայիկ, և ամենակարևորը՝ կղերական վերնախավին մինչև ուղն ու ծուծը հնազանդ. Ահա պատմիչների կողմից սերունդներին փոխանցված պետական գործչի իդեալը: Կոտակը շարունակեց հայ նախարարական տոհմերի բնաջանջման և հօգուտ եկեղեցու՝ նրանց կալվածքների բռնագրավման, Տրդատի քաղաքականությունը:

Սահուն կերպով, աննկատ, եկեղեցին երեք տասնամյակում ամենամեծ ավատատերը դարձավ, ձեռք բերեց անառարկելի հեղինակություն և ուղղորդում էր անգամ երկրի արտաքին քաղաքականությունը: Հայոց աշխարհն այլևս երկու տիրոջ համար շատ փոքր էր: Գրիգորի տոհմն արդեն բացահայտ սկսեց նկրտումներ ցուցադրել՝ նրան հարկավոր էր բացարձակ իշխանություն: Իշխանությանը հասնելու ճանապարհին, իրեն ու աստծուն թշնամի հռչակեց բոլոր հակառակ-

---

[7] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987, Գ.:

[8] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց Տան, Ե., 1978, էջ 80:

վողներին, նրանց, ովքեր ազգի ու պետականության գաղափարը եկեղեցու շահերից վեր դասեցին: Իսկ այդպիսիք գտնվեցին: Զգալով երկրի առջև ծառացած վտանգը՝ որոշ գործիչներ փորձեցին ամեն բան համախմբել աշխարհիկ իշխանության շուրջ, ստեղծել ուժեղ, ազգային պետական համակարգ: Իսկ դա առաջին հերթին նշանակում էր եկեղեցու բոլոր ձեռքբերումների փոշիացում: Եվ սկսվեց մի դաժան, կենաց ու մահու պայքար պետության և եկեղեցու միջև:

Եկեղեցու՝ արդեն սպառնալիք դարձած ուժը չեզոքացնելու առաջին լուրջ փորձն արեց Խոսրով Կոտակի կինը՝ հայոց թագուհին (Տիրանի մայրը), սակայն Վրթանեսին սպանելու նրա ծրագիրը ձախողվեց: Կղերական պատմիչներն, իհարկե, չզլացան թագուհուն ամենամահացու մեղքերի մեջ մեղադրելուց:

Կոտակից հետո հայոց արքաներն՝ ի դեմս Տիրանի, Արշակ Բ և Պապի, արդեն պետական մակարդակով ձեռնամուխ եղան կենտրոնաձիգ, ուժեղ իշխանության ստեղծմանը, որը միայն Հայաստանի անկախ, ինքնուրույն քաղաքականությունը կապահովեր: Հատկապես Արշակ Բ ժամանակից, արքունիքն սկսեց համախմբել բնիկ հայկական ազնվական տոհմերին, առանձնացնել ու պետական ծառայության մեջ ներգրավել կենտրոնամետ քաղաքական գիծ ունեցող գործիչների, որոնք կարճ ժամանակում հայոց արքայի համար կարողացան ապահովել բավական հզոր հիմք՝ արտաքին քաղաքական բարդ իրավիճակում ինքնուրույն, սեփական խաղ սկսելու համար: Փորձ էր արվում վերաստեղծելու հզոր, ազգային պետություն, որի միակ տիրակալն արքան էր:

Եկեղեցու ծրագրերի մեջ հզոր ու ազգային պետությունը մի պարզ պատճառով չէր տեղավորվում՝ այնտեղ ոչ եկեղեցու և ոչ քրիստոնեական դավանանքի գերակայություն չէր լինելու: Շատ կարճ ժամանակ էր անցել Հայոց աշխարհի բռնի քրիստոնեացումից, և արդեն Տիրանի օրոք միայն Հուսիկ կաթո-

ղիկոսի մահը բավական եղավ, որ ողջ երկիրն արհամարհանքով վրայից քրիստոնեական շղարշները դեն նետեր:

Եվ սկսվեց մի դավ, որի նպատակն էր քայքայել հայոց արքաների շուրջ ձևավորված միաբանությունը, երկիրը ներքաշել ծանր, անիմաստ, արյունահեղ ներքին զզվռտոցի մեջ և արդյունքում՝ արժեզրկել ու վարկաբեկել հայոց պետության ու արքայական իշխանության գոյության իմաստն անգամ: Այս ծրագիրն ի կատար ածելու համար ժամանակի ընթացքում ոտքի հանվեցին ազնվական բոլոր այն տոհմերը՝ հիմնականում նորելուկ, ում համար թիվ մեկ խնդիր էր հայոց Գահնամակի սանդղակով վեր բարձրանալը: Օգտագործվեցին օտարամետ տրամադրություններն ու տնտեսական, թե քաղաքական տարաձայնություններն արքունիքի ներսում:

Տասնամյակներ շարունակ, ճարպկորեն ու առանց երկմտանքի թունավորելով հայոց աշխարհի քաղաքական միտքն ու զգոնությունը, իրար դեմ լարելով ագահությունից ու փոխադարձ ատելությունից կուրացած նախարարական տոհմերին, արտաքին լարված իրադրություններ հրահրելով, ի դերև հանելով ներքին կյանքը կարգավորելու հայ արքաների բոլոր փորձերը՝ եկեղեցին միշտ էլ հաջողեցրեց ստեղծված դրամատիկ իրադարձությունների կիզակետում խաղալ հաշտարար հրեշտակի դեր՝ չզլանալով, իհարկե, ամեն անգամ արքունիքի վրա նզովք ու նախատինք կարդալուց: Արդյունքում, քայքայվեց երկիրը, արքաները մնացին մենակ ու անօգնական: Անտեր ու հուսահատ ամբոխի վերածված նախկին կենսախինդ ազգն այլևս հայացքը չէր կտրում եկեղեցուց: Հայ արքաների անուններն արդեն չարության, անհաջողակության ու դժբախտության հասցնող մեղքի հոմանիշ էին:

Հայ պատմիչները չզլացան այս երկարատև մղձավանջը, որ ձգվեց 4-րդ դարի ողջ ընթացքում, սերունդներին ներկայացնել կաթողիկոսների շուրթերից պարբերաբար հնչեցված նզովքի տեսքով. նզովք, որ հավիտյանս խարանեց արքայական իշխանությունը, շղթայեց ու բարդույթավորեց սերունդների

հոգին ու միտքը և գլխիվայր շրջեց հայոց կործանված պետականության ողջ պատմությունը: Կղերական մատենագրության կողմից ջանասիրաբար ու խնամքով տարփողված ու մինչև մեզ հասած այդ նզովքները սերունդների սրտերում վերջնականապես փոխեցին բարու և չարի, արդարության և տմարդիության, անցավորի և հավիտենականի մասին ունեցած նախկին պատկերացումները:

Հայոց աշխարհը պարուրվեց անեծքով ու ահեղ դատաստանի սպասումով, որից փրկվելու ելքը դարձավ եկեղեցին՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որն արդեն միակ տերն ու արքան էր «Հայաստան» կոչվող նախկին հզոր պետության խղճուկ ավերակների վրա:

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ
ԱՆՕՐԵՆՆԵՐ.
ՏԻՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Դուք կցրվեք ու կբաժանվեք, ձեր սահմաններն էլ՝ իսրայելացոց նման ցրիվ կգան: Դուք կմնաք անտեր, անխնամ, ոչ ոք ձեզ չի խնայի: Դուք խաշներ կդառնաք, որոնք հովիվ չունեն: Ինչպես ոչխարների հոտ՝ կմատնվեք գազանների ձեռքը, ձեր փառքերից կզրկվեք, օտար թշնամիների ձեռքը կմատնվեք՝ իբրև գերի: Նրանց ծառայության լծի տակ կընկնեք, և այդ լուծը երբեք ձեզանից չի վերանա և չի պակասի:

Ձեր պարանոցից երբեք չի պակասի ծառայության՝ չարաչար ստրկության լուծը. ձեր ցանկությունների մեջ հալումաշ կլինեք:

Ինչպես որ Իսրայելը պատառվեց և այլևս չկարկատվեց, այնպես էլ դուք կցրվեք ու կկործանվեք:

Ձեր վաստակածն ուրիշները կվայելեն, ձեր զորությունն ուրիշները կուտեն, և չի լինի մեկը, որ ձեզ փրկե:

Տերը չի քաղցրանա, ձեզ չի նայի, ձեզ այլևս չի փրկի...

Ա

Հայոց աշխարհում քրիստոնեության հաստատվելուց անցել էր չորս տասնամյակից քիչ ավելի.[9] ավերումի, ոչնչացման, դաժան ու արյունահեղ պատերազմների 47 տարի, և ահա, արքունի բանակը՝ արքայի, մեծամեծ նահապետների ու հոգևորականների ներկայությամբ, քարացած լսում էր ազգի և պետականության գլխին թափված նզովքի սահմռկեցուցիչ այս տարափը: Նզովողն՝ ի պաշտոնե և կոչման համաձայն օրհնություն ու փառք պիտի բերեր

[9] Քրիստոնեության իբրև պետական կրոնի հաստատման տարեթիվ ընդունում եմ 301թ. վարկածը, որը սակայն, խիստ պայմանական է:

արքային, հաղթանակ մաղթեր հայոց բանակին և բարօրություն՝ ազգին ու պետությանը: Այդպես եղել է բոլոր երկրներում, միայն՝ ոչ մեզ մոտ:

Թունախառն այս խոսքերի հեղինակը պարթև Գրիգորի աշակերտ ու զինակից, Հայքի եկեղեցիների գլխավոր տեսուչ ու վերակացու ասորի Դանիելն է: Ատելությունից մոլեգնած ասորու նզովքն ամենայն հոգատարությամբ ու խնամքով փոխանցվեց սերունդներին՝ իր անդառնալի կնիքը դնելով հայոց պետականության ճակատագրի վրա, խարանելով նրա ապագան, կասկածի տակ դնելով գոյության իրավունքը, իմաստն անգամ: Սա միայն սկիզբն էր հրեշային այն մարգարեացումների, որոնցով զինված՝ Գրիգորի հետնորդներն ավարտին հասցրին «հայոց թագավորության բարձումը»:

Սարսափելի անեծքի այս խոսքերը, սակայն, չճայթեցին անամպ երկնքից և ունեն իրենց նախապատմությունը...

Բ

Արևմտյան Հայաստան. Մարդինից մի քանի վերստ հեռու, բարձրաբերձ լեռներում ծվարել է փոքրիկ, աննշան մի գյուղ՝ Բենաբիլը[10]: Թրքաշունչ է այն, խղճուկ, աննշմար: Իր անկիրթ գոյությունն այստեղ քարշ տվող այսօրվա կիսագրագետ թուրքի մտքովն իսկ չի կարող անցնել, որ Ծոփաց աշխարհի փառքը, հարստությունն ու վեհությունն է խորհրդանշել մոռացված այս բնակավայրը: Անհիշելի ժամանակներից այստեղ վեր է խոյացել անձեռակերտ մի ամրոց՝ հանճարեղորեն պատշաճեցված շրջակա միջավայրին: Բնաբեղն է դա՝ արքունիքի անառիկ ոստանը: Հայ տիրակալների համար բացառիկ նշանակություն է այն ունեցել: Դեռ արքայից արքա Տիգրանն է այս ամրոցում պահել իր գանձերը: Պետական գանձարանի զգալի մասն այստեղ են պահել նաև նրան հաջորդած արքաները՝ ընդհուպ մինչև Պապ: Այստեղ պահվում

[10] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:

էր մշտական կայազոր՝ արքունի ոստանիկ ասպարավորների հզոր մի գունդ, որ ենթակա էր Մարդպետության մեծ գործակալությանը: Այդտեղ ազատ ելումուտ ուներ միայն արքունի գանձարանի տեսուչ Հայր Մարդպետի նշանակած վերահսկող մարդպետը, ով հաշվետու էր միայն նրան: Արքաները հազվադեպ էին այցելում Բնաբեղ՝ վստահում էին իրենց մարդպետներին:

Տիրան արքայի օրոք, Մարդպետության գործակալության ներկայացուցիչը Բնաբեղում Դրաստամատ մարդպետն էր՝ Անգեղտան իշխանը, որին միաժամանակ վստահված էին նաև Անգեղ բերդում գտնվող արքունի գանձերը:

347 թվական. Բնաբեղում անսովոր եռուզեռ էր: Խաղաղ ու անվրդով կյանքով ապրող ամրոցը երբեք այսպիսի իրարանցում չէր տեսել: Պատերազմներն անգամ անցնում էին նրա կողքով: Չարագուշակ, տագնապալից սպասում կար օդում, մի զգացում, որ ամրոցի բնակիչներին հանգիստ չէր տալիս: Անհանգիստ էին բերդապահ զինվորները, մռայլ էր Դրաստամատ մարդպետը այն պահից, երբ չգիտես ինչու ժամանեց քահանայապետ Հուսիկը: Հայտնվեց առանց արքայի ու նրա մերձավոր իշխանների: Ժամանեց մի խումբ սնազգեստներով: Տարեկան տոնի օր է, և քահանայապետի խելքին փչել է՝ աստծու սպասավորությունը կատարել Բնաբեղի եկեղեցում, այն դեպքում, երբ արքան Միջնաշխարհում է, հայոց զորքը՝ ռազմադաշտում: Տարօրինակ էր այս ամենը և անբացատրելի:

Անհանգստությունն առավել սաստկացավ, երբ ամրոց հասավ անսպասելի լուրը. արքան ժամանում է: Բնաբեղցիները խռնվել են նեղլիկ փողոցներին, իրարանցում և աղմուկ է ամենուր. եկել են դիմավորելու արքային: Միայն ամրոցի եկեղեցին է, որ ամուր փակած դռները՝ չարագույժ լռություն է պահպանում: Եվ ահա, բացվեցին դարբասներն, ու ամրոց մտավ արքունի հեծելախումբը: Աղմուկը դադարեց: Առջևից ինքն է՝ Տիրան արքան, մռայլ ու անհամբեր հայացքով: Քրտնաթոր երիվարների վրա նրան են հետևում երկրի տերերը՝

ամենազոր Հայր Մարդպետն ու իմաստուն Արշավիր Կամսարականը, երիտասարդ իշխան Սիսական Անդովկն ու քաջարի Վասակ Մամիկոնյանը, Մեհենդակ Ռշտունին ու արքայազն Արշակը: Շքախմբի հոգնած, անհանգիստ տեսքը հուշում էր, որ եկել են առանց դադար առնելու, գաղտնի լուրն ստանալուն պես՝ Հուսիկը Բնաբեղում է: Արքային դիմավորեց լուրն առաքող Դրաստամատը, և իսկույն, առանց հապաղելու, արքայական շքախումբը շարժվեց դեպի եկեղեցի: Շվարած ամբոխը հետևում էր արքային:

Ահա Տիրանն իջնում է ձիուց, մոտենում եկեղեցու դռանը: Նրա հետ են իր հավատարիմ իշխանները: Ահա բացվում է դուռը, և արքան քայլ է անում դեպի ներս: Բայց, կատարվեց անսպասելին. ապշած ժողովրդի առջև, զարմացած իշխանների հայացքի ներքո, եկեղեցու դռնից դուրս նետվեց «սուրբ մանուկ» Հուսիկը և դեպի արքան կարկառելով ձեռքերը՝ գոչեց սպառնագին.- *արժանի չես, ինչո՞ւ ես եկել, հեռացիր*[11]:

Ահեղ Տիրանն ապշած նայում էր քահանայապետին: Ցնցված էին բոլորը: Այն, ինչ երբևէ չէր լսվել ոչ մի տեղ, կարող էր կատարվել միայն Հայոց աշխարհում: Ինչ-որ մի սևազգեստ սպառնալից արգելում էր երկրի տիրոջը՝ ոտք դնել եկեղեցի: Հուսիկը մոռացել էր, որ իր առջև անկամ ու թուլասիրտ Խոսրով Կոտակը չէր: Սակայն, Հուսիկը գիտեր նաև այն, որ աղոթք անելու համար չէ հեթանոս Տիրանը մուտք գործում եկեղեցի, որ մոմ վառելու համար չեն իրենց նախնյաց հավատքին մնացած Հայր Մարդպետը, Անդովկն ու Վասակը կտրել-անցել Միջնաշխարհից Բնաբեղ ընկած հսկայական ճանապարհը: Գիտեր, և ուրիշ ոչինչ չէր գտնում անելու, քան նզովքի սպառնալիքով կասեցնելու նրանց մուտքը եկեղեցի: Ատելություն էր թափվում Հուսիկի աչքերից: Երբևէ չէր սպասում, որ լուրն այսքան շուտ կհասնի արքային:

Տեղի ունեցավ անխուսափելին. արքայի տիրական հայ-

---

[11] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԲ.:

ացքի ներքո նրա հավատարիմ իշխանները քարշ տվեցին քահանայապետին եկեղեցի, պառկեցրին գետնին և սարսափահար սևազգեստների աչքերի առջև սկսեցին գանահարել: Պապանձվել էին ամենքը: Միայն արքան էր Հայր Մարդպետի հետ միասին անվրդով հետևում իշխաններին, ովքեր գործում էին անասելի ջերմությամբ: Փշրեցին պարթև Գրիգորի թոռան «սուրբ» ոսկորները, թողեցին Հուսիկին անշարժ փռված եկեղեցու սրահում և դուրս եկան: Արքայական շքախումբն այլևս անելիք չուներ Բնաբեղում: Տիրանն իսկույն հեռացավ՝ այստեղ թողնելով Հայր Մարդպետին. Դրաստամատը վերջինիս շատ բան ուներ զեկուցելու:

Լկտի պահվածքի վարձը ստացած քահանայապետին եկեղեցականները Բնաբեղից իսկույն տեղափոխեցին Դարանաղյաց գավառի Թորդան ավանը՝ Գրիգորի տոհմական տիրույթ: Չանցած մի քանի օր, արքունիք հասավ լուրը. Հուսիկը վախճանվել է՝ այդպես էլ ուշքի չեկած[12]:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին հերթական սուգը հայտարարեց Հայոց աշխարհում...

Գ

338 թվական. Հայոց աշխարհը սգի մեջ էր: Վախճանվել էր քաջարանց, աշխարհաշեն Խոսրով Կոտակը՝ Տրդատ Գ որդին. առաքինի ու բարեպաշտ, խաղաղասեր, աստվածահաճո մի այր, իսկական հետնորդն ու ժառանգը հոր: Հայոց երկիրը նրա օրոք հաստատակամորեն բռնեց քրիստոնեացման ուղին: Կառուցվում էին եկեղեցիներ, հիմնվում թեմեր, արքունիքն ընկղմված էր բարեպաշտ աղոթքների և աստվածաբանական իմաստուն զրույցների մեջ: Ասենք, Կոտակին այլընտրանք չէր էլ տրված: Այդպիսին էր կամքը Գրիգորի որդի Վրթանեսի, որ Հայոց երկրի փաստացի տերն էր ու տիր-

[12] Օրմանեան Մ., Ազգապատում, Պէյրութ, 1959, հտ. Ա., էջ 73-75:

ակալը: Նա աղոթում էր մեր աշխարհի շենության ու բարօրության համար, աստծու աչքը քաղցր պահում մեզ վրա, և փոխարենը՝ արքան նրան էր տալիս այն ամենը, ինչ վաղուց արդեն իրենն էլ չէր՝ հող, զորք, իշխանություն: Իսկ եթե որևէ մի հանդուգն ըմբոստանում էր համատարած այդ թմբիրի դեմ՝ պատիժն ահավոր էր: Այդպես բնաջնջվեցին Հայկյան Բզնունիները, Մանավազյաններն ու Որդունիները: Սրանց տոհմական կալվածքներն ու հարստությունն, իհարկե, անցան եկեղեցուն: Այդպես պախարակվեց հայոց թագուհու՝ Կոտակի կնոջ անունը, ով համարձակվել էր համակրել Վրթանեսի դեմ հայ իշխանների սկսած շարժմանը: Այլևս փոխել չէր կարելի այն, ինչ ամրագրված էր արյունով, հրով ու արքայական հրամանով: Այսպես նախանձելի ներդաշնակությամբ գոյատևում էին արքունիքն ու եկեղեցին. Վրթանեսն օրենքներ էր սահմանում, նախարարական տոհմեր բնաջնջում ու նորերին առաջ մղում, երկրի արտաքին ու ներքին «աստվածահաճո» քաղաքականություն վարում: Արքան աղոթում էր, անտառներ տնկում և քաղաքներ կառուցում: Երկիրը գոհ էր, կուշտ ու շեն: Հոգ չէ, որ հայկական պետականության սահմանները վաղուց արդեն չէին համապատասխանում բնական Հայաստանի տարածքին: Հոգ չէ, որ պարսիկն ու հռոմեացին էին տիրում հայոց ծայրագավառներին: Արքան մեկ անգամ էր աշխարհ եկել և պատերազմը թեկուզ Հայրենիքի ամբողջականության համար՝ նրա սրտով չէր: Եվ մի ամբողջ տասնամյակ՝ հայոց տերերը տրված էին որսին, խրախճանքներին ու «աստվածահաճո» այլ վայելքների: Գլխավորը, գոհ էր Վրթանեսը, գոհ էին պարսիկն ու հռոմեացին, կուշտ էր ժողովուրդը, և Միջնաշխարհը հեռու էր պատերազմներից:

Ամեն ինչ վերջացավ: Այլևս չկար աշխարհաշեն Կոտակը, և Վրթանեսն անկեղծորեն սգում էր իր հավատարիմ արքայիկի մահը: Հայոց աշխարհի հսկողությունը թողնելով Առաջին իշխան Արշավիր Կամսարականին, նրան ու երիտասարդ իշխան Անդովկին վստահելով փոքրաթիվ բանակի

հրամանատարությունը՝ Վրթանեսը շտապեց պաշտոնապես ստանալու կայսեր համաձայնությունը գահաժառանգ Տիրանին թագադրելու համար: Տիրանը Կոտակ չէր. ամբարտավան էր և գոռոզ, եկեղեցի չէր հաճախում, քամահրում էր սևազգեստներին: Շրջապատել էր իրեն Ռշտունյաց, Տայոց և Սյունյաց աշխարհների հեթանոս իշխաններով, ժամերգությունից առավել՝ նախընտրում Արամազնյա փանդռահար ծերերի գողթան երգերը: Ասում էին, ինքն էլ հեթանոս է մոր պես ու նախնյաց հավատքով էլ դաստիարակում է իր Արշակ որդուն: Գոռոզ, հեթանոս Հայր Մարդպետն էր Տիրանի միակ խորհրդատուն՝ քրիստոսատյաց մի այր, որից սարսափում էր սևազգեստների ողջ բանակը: Այո, այն չէր Տիրանը, սակայն Վրթանեսին այլ ելք չէր մնում. Կոտակն այլ ժառանգ չէր թողել:

Մինչ քահանայապետը Հռոմում բանակցում էր կայսեր հետ, Արշավիր Կամսարականն ու Անդովկ Սյունին Մռուղի դաշտում զենքի ուժով էին պաշտպանում Տիրանի գահակալական իրավունքները: Փոքրաթիվ ուժերով ջախջախելով Շապուհ Բ եղբայր Ներսեհի բանակը՝ ստիպում են պարսից արքունիքին ճանաչել Տիրանին հայոց օրինական արքա[13]:

Այն, որ Տիրանը չէր կառավարելու նախորդների պես՝ հասկանում էին ամենքը: Կտրուկ շրջադարձերի ակնկալիք կար կախված օդում: Հոգևոր դասից մինչև երկրի ավագագույն իշխաններ՝ բոլորն էին անհանգիստ: Տիրանին Հայոց աշխարհում լավ էին ճանաչում: Եվ երիտասարդ արքան երկար սպասել չտվեց...

Դ

Պատմագիտության մեջ տիրապետող է այն մոտեցումը, որ Տիրանի օրոք Մեծ Հայքի թագավորությունը թույլ էր և անկայուն, արքունիքը չուներ անկախ քաղաքականություն և երերում էր Հռոմի ու Պարսկաստանի միջև: Ընդհանուր առմամբ,

[13] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., Ժ.:

այս մոտեցումը հեռու չէ ճշմարտությունից: Մատենագիրներն իրենց հերթին տվել են այս ցավալի իրողության սեփական, միակողմանի բացատրությունը. Հայոց պետականությունը թույլ էր, որովհետև Տիրանը զբաղված էր ներքին կռիվներով, նախարարներն անհնազանդ էին, որովհետև արքունիքը չէր հետևում սուրբ քահանայապետերի խրատներին: Ամեն ինչ, սակայն, շատ ավելի լուրջ էր:

Մենք համառորեն անտեսել ենք այն ողբալի ժառանգությունը, որ Տիրանն ստացավ «քաջարանց» Կոտակից: Ի՞նչ էր իրենից ներկայացնում Հայոց աշխարհը Տիրանի գահակալման սկզբում: Մեծ Հայքի թագավորությունից անջատվել և Հռոմին ու Պարսկաստանին էին կցվել ծայրագավառները: Կոտակին ամենևին էլ չէր անհանգստացնում երկրի ռազմա-քաղաքական և տնտեսական համակարգերի առողջացումը: Եվ բոլոր կողմերից թույլ ու երերուն այդ պետությունը նա թողեց որդուն: Նախարարական զզվռտոցները հասել էին բարձրակետին: Կենտրոնախույս ձգտումները, հռոմեական և պարսկական արքունիքների կողմից ուղղորդվող քաղաքական կողմնորոշումները, պալատական խարդավանքները՝ հանուն բարձի և պատվի, քայքայում էին երկրի կառավարման համակարգը: Մոտավոր պատկերացում կազմելու համար, թե անվստահության ինչ մթնոլորտ էր տիրում Հայոց աշխարհում, բավական է հիշել, թե ինչպես Խոսրով Կոտակի հրամանով երկրի ավագագույն իշխաններ «բյուրավորներն ու հազարավորները» պետք է իրենց զորքով մշտապես գտնվեին արքայի հետ՝ նրա աչքի առջև[14]:

Երկրի սահմանները մատնված էին օտարների բարեհաճությանը: «Աշխարհաշեն» արքան այլ միջոց չէր գտել կենտրոնախույս ձգտումներին վերջ տալու համար: Այսքանից հետո պարզ է դառնում, թե ինչպես Կովկասի լեռնականների զորքերն առանց դույզն ինչ դիմադրության գրավելով երկրի

[14] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ը.:

սիրտը՝ կարող էին մի ամբողջ տարի ասպատակել արքունի Ոստանը: Իսկ արքան ու քահանայապետն այդ ընթացքում աղոթում էին Դարոյնք բերդում՝ Վաղարշապատը հանձնելով ասպատակներին[15]:

Անասելի ծանր էր շինականի և քաղաքացու վիճակը: Երկիրը հեծում էր հարկերի ծանրությունից՝ հարկեր, որոնք ազատ հայը պարտավոր էր մուծել իշխանին, եկեղեցուն ու արքունիքին: Վերջինս պետական գանձարան մտնող փշրանքների մի մասը մսխում էր որսի, խնջույքի և անտառ տնկելու վրա, իսկ մյուս մասը՝ պարտաճանաչորեն մուծում Հռոմին և Պարսկաստանին: Սա էր այն գինը, որ վճարում էր Հայաստանը իրեն շնորհված խաղաղության դիմաց:

Այս թշվառ պատկերի ֆոնին բոլորովին այլ էր Հայաստանյայց եկեղեցու վիճակը: Սա միակ հաստատությունն էր, որ դեպքերի ցանկացած դասավորության դեպքում անշեղ վերելք էր ապրում: Այո, եկեղեցին բարգավաճում ու ծաղկում էր, արքունիքի և նախարարական տների հաշվին զորանում: Գրիգորի տոհմն այլևս բացարձակ հեղինակություն էր, և նրանից էր կախված արքունի ներքին ու արտաքին քաղաքականության ողջ տրամաբանությունը: Հայոց աշխարհն անշեղ գնում էր դեպի հռոմեականացում: Խոսրովի վերջին տարիներին, հռոմեական ազդեցությունն արդեն բացարձակ էր Հայաստանում: Սա էր Գրիգորի տոհմի համար ընդունելի միակ քաղաքականությունը:

Ահա այս խաղաղ ու շեն, մարդաշատ ու առողջ, պտղաբեր, առատ և հաջողակ երկիրն էր, որ իր «աստվածապաշտ, աստվածահաճո բարի վարքի տեր» բնակիչներով Տիրան որդուն թողեց Խոսրով Կոտակը:

---

[15] Հատկանշական է, որ մազքութների արշավանքի դրդապատճառներից մեկն ըստ Խորենացու Խոսրով Կոտակի թուլասրտությունն ու ծուլությունն էր: Տես՝ Հայոց Պատմություն, Գիրք Ե., Թ.:

Ե

Իսկ Տիրան թագավորը և մյուս ավագ նախարարները և բոլոր աշխարհը՝ ամենևին չէին վարվում աստծու կամքով, խելացի կյանք վարելով...[16]

Ինչ խոսք, կղերական քարոզչի, Հայոց աշխարհի սկիզբն ու վախճանը Գրիգորի տոհմի հետ պայմանավորող մոլեռանդ քրիստոնյայի կողմնակալ կարծիքն է սա: Ո՞րն էր այդ «աստծու կամքը», որով ըստ քահանայապետերի պարտավոր էր շարժվել Տիրանը: Ամենևին էլ մեծ չէին եկեղեցու և նրա տերերի պահանջները արքայից. ընդհամենը՝ թողնել ինքնիշխան կենտրոնախույս նախարարներին՝ վարվել ըստ իրենց ցանկությունների, կուրորեն շարժվել եկեղեցու հայրերի գծած ուղով, ջերմեռանդ հետևել «վերևում աստված, ներքևում՝ եկեղեցի» տրդատ-կոտակյան քաղաքականությանը, և վերջապես, աղոթքներով, բարեգործական նվիրատվություններով ու զվարճանքներով սպասել Հռոմից և Պարսկաստանից եկող ողորմածություններին: Ահա այն խելացի վարքը, որ պահանջվում էր Տիրանից: Բայց երիտասարդ արքան բոլորովին այլ կերպ էր պատկերացնում իր առաքելությունն ու երկրի ապագան: Նա շատ պարզ տեսնում էր Հայրենիքին բաժին հասած դժբախտությունների բուն պատճառները. կենտրոնական իշխանության աստիճանական թուլացում, ազգային արժեհամակարգի հետևողական անկում, ներքին անմիաբանություն: Այս ամենն ուղեկցվում էր հաստատուն մի ծրագրով, որ որդեգրել էր Գրիգորի տոհմը. բուն հայկական ազնվական տոհմերի թուլացում և մեկուսացում, նրանց հաշվին՝ եկեղեցուն հավատարիմ իշխանական տների բարձրացում:

Եթե փորձենք վերլուծել եղած ուժերի դասավորությունը

[16] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԲ.:

Տիրանի գահակալման սկզբում, ապա կստացվի հետաքրքիր մի պատկեր: Այսպես, Հուսիկ քահանայապետին Կեսարիա՝ ձեռնադրման ուղեկցող հայոց մեծ նախարարների ցանկը հետևյալն է. Անձիտի իշխան Վաղարշ մեծ հազարապետ, Մեծ Ծոփքի Զարեհ իշխան, Շահունյաց Ծոփքի Վարազ իշխան, Հաշտենքի իշխան Գնիթ Կամինական, Որոթ Վանանդեցի, Շահեն Անձևացի, Ատամ Գողթնեցի, Մանավազ Կողբացի, Գորութ Ձորեցի, մաղխազ Մանասպ Խոռխոռունի, Սահառունյաց տեր, Աբա Գնունի[17]: Չկան Բագրատունիներն ու Սյունիները, որոնց բարձերը բոլոր ժամանակներում եղել են Գահնամակի առաջին շարքերում: Չկան Մարդպետունիներն ու Արծրունիները, Ռշտունիները, Մանավազյաններն ու Բզնունիները: Վերջին երկու տոհմերն արդեն հիմնովին բնաջնջվել էին եկեղեցու օրհնությամբ: Խոռխոռունյաց մեծ իշխանին տեսնում ենք ցուցակի՝ տոհմին անհարիր վերջին շարքերում: Փոխարենն, արքունիքում հեղինակություն են վայելում բոլորովին նոր, մինչ այդ ստվերում մնացած անուններ: Տիրանն սկսում է այստեղից: Կարճ ժամանակ անց իր շուրջն է համախմբում գահին հավատարիմ, ավանդաբար կենտրոնամետ և բնիկ հայկական տոհմերին:

Արտաքին անկախ քաղաքականությունը պայմանավորված է պետության ներքին կազմակերպվածությամբ և ուժով, առանց որի անհնար է մտածել երկրի ամբողջականության վերականգնման, տարածաշրջանային հեղինակության մասին: Դա շատ լավ գիտակցում էր Տիրանը: Իսկ ներքին կազմակերպվածություն, ուժ և միասնություն հնարավոր էին միայն կենտրոնախույս ձգտումների վերացմամբ՝ ձգտումներ, որոնց սնուցիչն ու խրախուսողը եկեղեցին էր: Հենց եկեղեցին էր պայքարում ամեն գնով իշխանական սանդուղքներով վեր մագլցելու համար: Եկեղեցու հետ պետության հարաբերությունների շտկումը՝ ահա Տիրանի դեմ ծառացած ամենա-

[17] Մատենագիրների հաղորդած նման ցուցակները, որպես կանոն, արտացոլում են ժամանակահատվածի ներքաղաքական պատկերը:

հրատապ խնդիրը: Իսկ եկեղեցին շատ էր հզորացել:

Արդեն Տրդատի և Գրիգորի տարիներին եկեղեցին ձեռք էր գցել Արտաշատ քաղաքն իր դաստակերտներով: Այնուհետև, Տրդատը Գրիգորին նվիրեց Թորդանն իր շրջակայքով՝ Դարանաղյաց գավառում, Անի ամրոցը, Երեզ ու Թիլ ավանները՝ Եկեղյաց գավառում:

Գրիգորի տոհմին տրվեցին Վահունիներից խլված Աշտիշատը՝ ողջ շրջակայքով, Բագառիճ գյուղը՝ Դերջան գավառում, Բագավանը, բազմաթիվ այլ գյուղեր ու դաստակերտներ՝ Այրարատում, Տարոնում և այլուր[18]: Մոտավորապես այսպիսին էր Գրիգորի տոհմի ավատական հզորությունը Տիրանի գահակալման սկզբում: Հիմնավորապես հաստատվելով Տարոնում՝ Գրիգորը շտապեց իր հետ վեր բարձրացնել նաև տեղի Մամիկոնյաններին: Սրանց կալվածքներն ընդարձակվում էին միմյանց կից հարևանությամբ: Գրիգորի կրտսեր՝ Արիստակես որդին ժառանգաբար ստանձնեց հոր գործի շարունակությունը: Եռանդուն ու խստակրոն այս քահանայապետին, սակայն, տրված չէր երկար գլխավորել հայոց քրիստոնեացման գործը: Արիստակեսին սպանեց Մեծ Ծոփքի Արքեղայոս իշխանը՝ անսանձ լեզվի, և հայրենի ավանդույթներին կառչած իշխաններին բանսարկելու պատճառով: Կաթողիկոսական աթոռին նստեց Գրիգորի ավագ որդի Վրթանեսը: Սա հոր արժանի զավակն էր և օգտվելով Խոսրով Կոտակի թուլությունից՝ նոր բարձունքների հասցրեց սեփական տոհմի և եկեղեցու դիրքերն Հայոց աշխարհում: Իր Հուսիկ որդուն նա թողնում էր ավատական հզոր մի իշխանություն, արքայականին համազոր տոհմային մի կարողություն, մի յուրօրինակ պետություն՝ պետության մեջ, որի դեմ արդեն շատ դժվար էր պայքարել: Եվ Հուսիկն ամենայն պատասխանատվությամբ ընդունեց իր հոր ժառանգությունը:

Կղերական մատենագրությունը մեզ է թողել մի շարք

[18] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1977, էջ 185:

հրաշապատումներ՝ Վրթանեսի ժառանգների ծննդյան հետ կապված: Անկախ այդ պատումների ողջ անհեթեթությունից՝ ակնհայտ է դրանում թաքնված մի կրքոտ մարմաջ՝ Գրիգորի տոհմի ժառանգական հաջորդականության ապահովումը կաթողիկոսական աթոռին: Պարզվում է, Վրթանեսը ամուսնացած լինելով հանդերձ՝ զավակ չէր կարողանում ունենալ: Երկար թախանձանքից հետո աստված առատ վարձատրեց իր տեղապահին՝ ծերության օրերին լույս աշխարհ են գալիս երկվորյակներ Գրիգորիսն ու Հուսիկը: Շատ էր շտապում Վրթանեսը, ուստի դեռ 15 տարեկան Գրիգորիսին ձեռնադրելով եպիսկոպոս՝ նշանակեց Վրաց և Աղվանից աշխարհների վրա: Գրիգորիսի ողբերգական վախճանին չենք անդրադառնա: 15-ամյա պատանուն չհաջողվեց համոզել անտաշ ու վայրի լեռնականներին՝ թողնելու պատերազմներն ու ավարառությունները և զբաղվելու մուրացկանությամբ: Առավել հաջող և հետաքրքիր դասավորվեց Հուսիկի կյանքը: Երեխան մեծանում էր արքունիքում և ստանում փայլուն կրթություն: Կոտակը նույնիսկ գահաժառանգ Տիրանին էր հանձնարարել նրա դաստիարակությունը: Այնուհետև, 12 տարեկան մանուկին ամուսնացնում են Տիրանի քույրերից մեկի հետ: Այսպես էր զառամյալ Վրթանեսն ապահովում իր տոհմի ապագան[19]: Հուսիկը, որ պատմիչների կողմից ներկայացված է իբրև «սուրբ մի մանուկ», պարզվում է, տարված միայն երկնային փառքով ու Քրիստոսի սիրով՝ ատում էր անցավոր աշխարհի բոլոր վայելքները և զզվում երկրային կյանքից: Սակայն, խեղճ «սուրբը», մի անգամ, ակամա մերձենալով կնոջը՝ իսկույն նեթ տեղեկացվում է հրեշտակից, որ մերձեցումից լույս աշխարհ են գալու երկվորյակ մանուկներ՝ միանգամայն

[19] Ժամանակագրական առումով առավել տրամաբանական է Օրմանյանի կարծիքը, ըստ որի Հուսիկին ամուսնացրել էին ոչ թե Տիրանի դստեր հետ՝ ինչպես նշում է Բուզանդը, այլ՝ քրոջ: Տես՝ Ազգապատում, հտ. Ա, էջ 71-73:

անարժան հոգևոր կոչմանն ու երկնային արքայությանը: Խորապես զղջում է Հուսիկն և այլևս երբեք չի մոտենում կնոջը: Ասել է թե՝ ապագա քահանայապետը հեռանում է արքայազարմ տիկնոջից: Կնաթողության այս փաստն առաջ է բերում համապատասխան արձագանք արքունիքի կողմից: Բուզանդը կսկիծով պատմում է, թե ինչպես էր արքայական ընտանիքը թշնամացել «սուրբ տղայի» հետ: Շուտով Հուսիկին հանգիստ են թողնում. վախճանվում է նրա կինը: Այդուհանդերձ, հայոց ապագա արքայի «բարեկամական» զգացմունքները՝ եկեղեցու գալիք քահանայապետի հանդեպ, ապահովված էին: Հուսիկի վշտերը թեթևացնելու համար մի վերջին անգամ աստծու կողմից հրեշտակ է առաքվում նրա մոտ՝ տեղեկացնելու, որ երկու անառակ զավակներից սերվելու է մի սուրբ, հանճարեղ ու առաքինի մի այր, որն իր անձով լուսավորելու է Հայաստանյայց եկեղեցին և Հայոց աշխարհը: Նրանից օրհնվողներն անմահանալու են, իսկ անիծվողները՝ կործանվելու: Եջանիկ «սուրբն» իսկույն լծվեց ծնվելիք թոռան բարեկեցիկ ապագան հոգալու երկրային գործին: Եվ Հուսիկը, որ ապրում էր միայն անանձնական կյանքով, ոչինչ էր համարում թագավորների սերն ու բարեկամությունը, արհամարհում երկրային բարիքներն ու ամեն իշխանություն, հաջողեցնում է զավակներին՝ Պապին ու Աթանագինեսին նշանել Տիրանի մյուս երկու քույրեր Վարազդուխտի և Բամբիշի հետ:

Տիրանի գահակալման առաջին տարիներին մեռավ Վրթանեսը՝ որդուն թողնելով այն ամենն, ինչ հարկավոր էր՝ վերջնական ցատկ դեպի բուրգի գագաթ կատարելու համար. անասելի հարստություն, վարչական, տնտեսական ու զինվորական լծակներ: Եկեղեցու և մասնավորապես Գրիգորի տոհմի հավատարիմ հետևորդները դարձան այդ շրջանում՝ Տարոնի Մամիկոնյաններն ու Ամատունիները: Լիակատար երջանկության համար Հուսիկին պակասում էր ընդամենը մի բան՝ վերահսկողությունը պետական գանձարանի և երկրի հարկ-

ային քաղաքականության վրա: Այս երկու կարևոր լծակներն էին միայն, որ իր նախորդները թողել էին արքունիքի ձեռքում: Այս երկու լծակներն էին պակասում Հուսիկին, և նրա տոհմը կդառնար երկրի իսկական, անառարկելի տերը: Հուսիկը զուրկ չէր խելամտությունից և գիտեր գործել: Բայց նաև տեսնում էր, որ Տիրանն ամենևին էլ իր նախորդների պես չէ: Հուսիկը զգում էր վտանգի մեծությունը: Եվ որ ամենակարևորն է՝ քահանայապետի աչքի առջև Տիրան արքայի կամքով տասնամյակների նիրհից արթնացել և թռիչքի էր պատրաստվում ահարկու մի ուժ, որը կոչվում էր «Մարդպետության մեծ գործակալություն»:

Զ

Բայց այս անմիտ թագավորության ժամանակ... բոլորից գերազանցում էր մի անօրեն՝ սատանայի գործիք դարձած... չարասիրտ, չարամիտ, չարագործ մի մարդ, որին Հայր էին ասում...[20]

Մարդպետության մեծ գործակալությունը ժառանգական իրավունքով տնօրինող Մարդպետունյաց մեծ իշխանի մասին է խոսքը՝ Հայր Մարդպետի: Տիրանի օրոք գործած այս իշխանին, որ մեծ հաջողությամբ վարում էր արքունի գործերը նաև նրա որդի Արշակի օրոք, դեպքերին անդրադարձած բոլոր պատմիչները՝ բացի Խորենացուց, ներկայացրել են ամենամռայլ գույներով: Մեզ հայտնի չէ նրա անունը: Մատենագիրների մոտ պետական այս անզուգական գործիչը մնացել է որպես Հայր Մարդպետ՝ ասես իր անձով մարմնավորելով ազգային-պետական մի շոշափելի գաղափար, վճռական մի բազուկ, որի ուժն ու հաստատակամությունը դարեր շարունակ մղձավանջի պես ուղեկցել են հայոց պետականությունը ներսից խարխլողներին: Այս անձի, նրա տոհմի և գործունեության

[20] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԸ.:

շուրջ մինչև օրս ծավալված վեճերը դեռ վերջնական լուծում չեն ստացել: Ո՞վ էր այս Հայրը, ո՞րն էր նրա մեղքը, նրա տոհմի դերը Հայոց աշխարհում: Առասպելների թանձր շղարշով պատված այս հարցերը միշտ են հուզել ուսումնասիրողներին: Կփորձեմ ներկայացնել իմ մոտեցումը:

«Մարդպետ» տերմինը բոլոր ժամանակներում ստուգաբանվել է որպես «ներքինապետ», «կանանց պետ»: Այս անհեթեթությունը պայմանավորված է նրանով, որ մեր պատմիչների մոտ մարդպետ գործակալի մասին խոսելիս միշտ դրվել է «ներքինի» ածականը:

Ն. Ադոնցն առաջ է քաշել այն վարկածը, թե «մարդպետ» նշանակում է «մարդերի պետ»: Մարդերն իրանական քոչվոր ցեղ էին, որոնք հիմնականում զբաղվում էին ավազակությամբ: Ըստ նրա, գաղթելով Հայաստան, մարդերն զբաղեցրին Վանա լճի հարավային և հարակից Պարսկահայքի մի շարք շրջաններ: Հայանալով՝ մարդերը ձևավորեցին Մարդպետական տոհմը, և «մարդպետ» տերմինը դարձավ տոհմանուն: Այս տոհմն էլ հենց ժառանգաբար վարում էր իր կալվածքներին կից արքունի տիրույթների պահպանությունը[21]:

Մատնանշելով Խորենացու՝ բոլորի կողմից անտեսված վկայությունն այն մասին, որ մարդպետները սերում են Հայկից ծագած առաջին թագավորներից, Ա. Մուշեղյանը հիմնավոր հերքեց նրանց օտար ծագման Ադոնցի թեզը: Ցույց տալով ուսումնասիրողների կողմից անուշադրության մատնված այն հանգամանքը, որ Վանա լճի ավազանից բացի՝ Տարոնում, Ծոփքում, Ատրպատականում և այլուր, արքունի կալվածքները նույնպես վերահսկել են մարդպետները՝ նա նշում է, որ մարդպետական գործակալությունը պետական կենտրոնացված գերատեսչություն էր, որն ընդգրկում էր Մեծ Հայքի ողջ տարածքը: Ըստ այդմ էլ, ինչպես նաև հաշվի առնելով հայ և օտար աղբյուրներում առկա մի շարք եզրաբանական տվյալ-

[21] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 354:

ներ, «մարդպետ» տերմինը նա բխեցնում է «մարզպետ»-ից: Նրա համոզմամբ, սակայն, Մարդպետական տոհմ գոյություն չի ունեցել, քանզի մարդպետության գործակալության պաշտոնյաները ներքինիներ էին: Այսինքն, այդ պաշտոնը ժառանգական լինել չէր կարող մի պարզ պատճառով՝ ներքինիները սերունդ տալ չեն կարող[22]:

Նա անտեսել է մի շատ կարևոր վկայություն: Պատմելով Հայկից սերված մարդպետների մասին, Խորենացին ասում է, որ Վաղարշակ արքան հրամայեց այդ տոհմին՝ ներքինիներ պատրաստել արքունի կանանոցի համար[23]: Այսինքն, մարդ-պետական գործակալությունը կար նաև մինչև Վաղարշակը, և այն վարում էր Մարդպետունիների տոհմը: Վաղարշակն ընդ-ամենը կարգադրում է այդ գործակալությանը ներքինիներ պատրաստել՝ նույնպես այդ տոհմից: Նույն տոհմից Վաղար-շակը հրամայում է ստեղծել չորս պահապան գունդ՝ Ոստանիկ ասպարակիրները: Խոսքն, այսպիսով, տոհմի մասին է, որի կողմից ժառանգաբար վարվող գործակալությունն ընդլայն-վեց Վաղարշակի կողմից: Արքունի կանանոցի համար հնա-գույն ժամանակներից ներքինիներ տալու փաստն էլ հենց դարձել է մատենագիրների կողմից բոլոր մարդպետներին սխալմամբ «ներքինի» բառով բնորոշելու պատճառը:

Մարդպետական գործակալությունը հիրավի արքունի կենտրոնացված մի գերատեսչություն էր: Այն սովորական մի գործակալություն չէր, այլ պետական բոլոր համակարգերի գլխավոր, վերահսկող մարմինը, որի իշխանությունը տարած-վում էր հայոց պետության ողջ տարածքի վրա: Նրան էին ստորադասված բոլոր մյուս գործակալությունները: Այն ժառանգական էր և գլխավորվում էր բնիկ Հայկյան ծագումով Մարդպետունյաց տոհմի նահապետի կողմից, որը հայտնի էր «Հայր» պատվանունով: Նրան էին ենթարկվում արքունի

---

[22] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Ե., 2007, էջ 218-235:

[23] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., Է.:

գանձերն ու կալվածքները վերահսկող մարդպետ-գործակալ-ները, կանանոցի պահապան ներքինի-մարդպետները: Չնչին բացառություններով այս տոհմից էին նշանակվում նաև սենեկապետն ու արարողապետը: Հայր Մարդպետն էր գլխավորում ոստանիկ չորս գնդերը: Հայոց մեջ Ոստանիկ կամ Վասպուրական ազնվականության՝ որպես առանձին մի դասի, հայտնաբերմամբ Ա. Մուշեղյանն առաջ քաշեց մի նոր տերմին՝ «Վասպուրական համարակար», որի պաշտոնն էր արքունիքից տրվող եկամուտը Ոստանիկ ազնվականներին բաշխելու գործը[24]: Այս պաշտոնյան անպայման պետք է, որ լիներ մարդպետական գերատեսչությունից: Այսպիսով, Հայր Մարդպետը՝ Հայկյան զորեղ այդ իշխանը, ամենևին էլ ներքինի չէր: Նա ղեկավարն էր պետական զորեղ մի համակարգի, որ վերահսկողություն ուներ մնացած բոլոր գործակալություն-ների նկատմամբ: Հայր Մարդպետի բարձը ամենաբարձրն էր արքունի գործակալների պատվո ցուցակում: Արքունի բոլոր պաշտոնյաների, պետական բոլոր գերատեսչությունների պետն էր ամենազոր Հայրը: Ըստ այդմ էլ, «մարդպետ» տեր-մինի առավել հավանական ստուգաբանությունն է «արքունի մարդկանց պետ», այստեղից էլ՝ «մարդպետ»:

Քրիստոնեության հաստատումից հետո այս գործակալ-ությունը մղվեց ետին պլան: Եվ դա օրինաչափ էր. արքա-ներին այլևս պետության գերագույն շահը չէր հետաքրքրում, այլ առավել վերերկրային գաղափարներ: Հայոց արքաների խորհրդատուն այլևս կենտրոնախույս իշխաններին արքունի ոստանիկ վաշտերով զսպող իմաստուն Հայրը չէր, այլ այդ պատվանունը սեփականացրած քահանայապետը, ով հենց ինքն էր խրախուսում պետությունը խարխլող ցանկացած շարժում: Քաշված Վանա լճի ավազանի և Պարսկահայքի տոհմական կալվածքներում՝ Մարդպետունիները սպասում էին իրենց ժամին: Եվ ահա երկար սպասումից հետո Տիրանը

[24] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 289-290:

կրկին հիշեց Մարդպետաց նահապետին: Մի նոր վճռական-ությամբ ու թափով գործի դրվեց բացառապես պետական շահը պաշտպանող հինավուրց մեխանիզմը: Կենտրոնաձիգ, ուժեղ պետություն. ահա այն միակ գաղափարը, հանուն որի Հայր Մարդպետը պատրաստ էր զոհել ամեն ինչ: Բոլոր այն պատժիչ գործողությունները, որ նա կիրառել է եկեղեցու և նախարարական որոշ տների նկատմամբ և որոնք ներկա-յացվել են իբրև նրա «չարանենգ էության» կամ տոհմական թշնամանքի հետևանք՝ իրականում բխել են բացառապես պետության գերակայությունն ապահովելու պահանջից:

Ձեռքում կենտրոնացնելով կառավարման ողջ համա-կարգը՝ Հայր Մարդպետն անցավ երկրի վարչա-տնտեսական լծակներն արքունիքին վերադարձնելու գործին: Շատ լավ ըմբռնելով Գրիգորի տոհմի և նրան ենթակա իշխանների նկրտումները՝ նա ուշի-ուշով հետևում էր նրանց բոլոր քայլերին: Հետաքրքիր օրինաչափություն. քահանայապետերի՝ իրենց տոհմական կալվածքներ կատարած այցերը համարյա միշտ զուգադիպել են դրանց կից արքունի կալվածքներ Հայր Մարդպետի ստուգայցերով. փորձառու պալատականը չէր վստահում կանացիազգեստներին: Եվ ոչ առանց հիմքի: Մեհենական անսպառ հարստությունն ու քրմական հազար-ամյակների ժառանգությունն անէացան կարճ ժամանակում: Ո՞ւր մտավ փոշիացած այդ հարստությունը՝ հայտնի չէր: Համենայն դեպս, ոչ արքունի գանձարան: Տասնամյակներ շարունակ կղերականների հավատարիմ գործակալներն են զբաղվել հարկերով ու պետական եկամուտներով: Արդյուն-քում՝ անդունդի եզրին էր կանգնած հազարամյակների մի քաղաքակրթություն: Հայր Մարդպետը հսկում էր և գործում:

Սխալվելու իրավունք չուներ և Հուսիկը: Հազարամյակ-ների փորձն ու կորցրած ժառանգության ցավն ուսերին առած մի զորություն էր կանգնած իր դիմաց՝ մի ուժ, որի համար գոյություն ուներ միայն մեկ աստված՝ Պետություն:

Է

Չնայած պատմաբաններից ոմանց կարծիքին, մատենագիրները հստակ խոսում են այն մասին, որ Տիրանի օրոք արքունիքի քաղաքականությունը հիմնովին փոխվեց դեպի Պարսկաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ: Խորենացին և Բուզանդը համամիտ են այս հարցում: Խախտելով քրիստոնեության հաստատումից հետո ավանդույթ դարձած՝ ցանկացած գնով Հռոմին կառչած մնալու քաղաքականությունը, Տիրանն անմիջապես քայլեր ձեռնարկեց Շապուհ Բ (309-379) հետ մերձենալու ուղղությամբ: Այս հանգամանքը, բնականաբար, չէր կարող չմտահոգել Հայաստանն Արևմուտքի նահանգ դարձնելու կողմնակիցներին:

«Բայց Որմզդի որդի Շապուհն ավելի սերտ մտերմություն հաստատեց մեր Տիրան թագավորի հետ, մինչև իսկ, նրան թիկունք և օգնական եղավ՝ ազատելով հյուսիսային ազգերի հարձակումից»[25]:

Պատմահոր այս տողերը շատ խոսուն են: Առաջին պահից կարող է թվալ, թե խոսքը հայ-պարսկական ռազմական դաշինքի մասին է: Բայց ավաղ, այդպես չէր: Հայոց պետականությունը դեռ շատ թույլ էր Պարսկաստանի հետ հավասարի իրավունքով դաշնակցելու համար: Խոսքը հայոց արքունիքի պարսկական կողմնորոշման մասին էր: Երկու սալի արանքում գտնվող Հայաստանը հակվեց դեպի պարսկական հովանավորչության: Սա այն միակ ճիշտ ելքն էր, որը Տիրանին թույլ էր տալիս՝ ազատ շունչ քաշել երկիրն ասպատակող ազգերի հետ պատերազմներից և ապահովել Պարսկաստանի բարեկամությունը: Սա Տիրանին օգնում էր բավականաչափ նվազեցնել Հռոմի աջակցությունից օրեցօր անկառավարելի դարձող եկեղեցու ազդեցությունը երկրում: Իրեն

[25] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԺԲ.:

ապահովելով Պարսկաստանի կողմից՝ Տիրանն առժամանակ հնարավորություն ստացավ երկրի ներքին կյանքով զբաղվելու: Մեզ կցկտուր տեղեկություններ են հասել այն մասին, որ Տիրանի օրոք տարածաշրջանում կրկին սկսում է թնդալ հայոց ծանրազեն հեծելազորի համբավը: Հազարամյակներ շարունակ ողջ աշխարհում հայտնի հայոց այրուձին, որ Խոսրով Կոտակի օրոք կորցրել էր նախկին փայլն ու համարումը, կրկին վերակազմավորվում է Տիրանի ջանքերով[26]:

Հայոց աշխարհում, բոլոր ժամանակներում լավագույն համարում և պահանջ է ունեցել սյունյաց այրուձին՝ իր ընտիր նժույգներով և անզուգական հեծյալներով:

Տիրանի օրոք սյունյաց նահապետը Վաղինակն էր՝ մեծարգո և ազդեցիկ, ինչպես այդ տոհմի բոլոր նահապետները: Եվ որ պակաս հետաքրքրական չէ՝ Վաղինակը համարվում էր Շապուհի սիրելին, ուներ պարսկական հստակ կողմնորոշում և հայտնի էր պարսից արքունիքում ունեցած ազդեցիկ կապերով: Շապուհի հետ Տիրանի դաշինքը գլուխ չէր բերվել առանց Վաղինակի միջնորդության: Շապուհը Հռոմի դեմ առաջիկա պատերազմում հայոց հեծելազորի կարիքն էր զգում և օգնելով Տիրանին հյուսիսային ցեղերի դեմ մղվող մարտերում՝ փոխարենն ապահովեց հայկական վերակազմվող այրուձիու աջակցությունը: Վաղինակ Սյունին անցավ գործի. Սիսական քաջերը միշտ էլ հայոց բանակի կորիզն էին:

Տարածաշրջանում խաղաղությունը կարճ տևեց: Շապուհը տենդագին պատրաստվում էր պատերազմի: Կոստանդիոս կայսրն ուժերը կենտրոնացրեց պարսկական սահմանների երկայնքով: 345թ. կայսրը շարժվեց Պարսկաստան: Մեր

---

[26] Առաջնորդվելով այն կանխակալ վարկածով, թե Տիրանն իր գահակալության ողջ շրջանում մնաց Հռոմի հավատարիմ դաշնակիցը՝ Հ. Մանանդյանը եզրակացրել է, թե ծանրազեն հեծելազորի վերաստեղծումը տեղի է ունեցել Կոստանդիոս կայսեր նախաձեռնությամբ, որն իրականում իբրև վարկած հիմնազուրկ է (Տես՝ Երկեր, հտ. Բ, էջ 141-160):

մատենագիրները լուռ են այս պատերազմին Տիրանի մասնակցելու առթիվ: Ենթադրվում է, որ փոխադարձ ստանձնած պարտավորությունները արքունիքին չպետք է ետ պահեին պարսիկներին օժանդակ զորք ուղարկելուց: Սրա մասին է վկայում և այն, որ երբ 345թ. Սինգարայի ճակատամարտում պարսից բանակը պարտվեց, և սպանվեց արքայազն Ներսեհը[27], հռոմեական բանակի դեմ միայնակ մնացած Տիրանը հարկադրված՝ պատանդներով շահեց Կոստանդիոսի վստահությունը: Բյուզանդիոն ուղարկվեցին արքայազն Տրդատը Գնել որդու հետ և Տիրանի անդրանիկ՝ մահացած Արտաշես որդու ժառանգ Տիրիթը: Հատկանշական է, որ որդիներից կրտսերին՝ Արշակին է Տիրանը պահում իր մոտ: Այս պատանդները վստահություն են ներշնչում կայսերը, որ Տիրանն այլևս չի թեքվի դեպի Պարսկաստան: Հաջողությունից ոգևորված՝ Կոստանդիոսը 347թ. կրկին վերսկսում է մարտական գործողությունները: Անելանելի դրության մեջ հայտնված Տիրանը՝ պարսկական սահմանն անցած հռոմեական զորքերին օգնության է ուղարկում հեծելազորային մի զորախումբ: Ռազմական բախտն այս անգամ Շապուհի կողմն էր: Հռոմեական բանակը ծանր պարտություն է կրում: Զինադադար կնքելով Շապուհի հետ՝ Կոստանդիոսը շտապ հեռանում է, իր հետ տանելով նաև հայոց հեծելազունդը[28]: Թույլ, սեփական քաղաքականություն չունեցող երկրի համար սա ծանր հարված էր: Բոլոր առումներով Հռոմից կախման մեջ գտնվող հայոց թագավորությունը մնացել էր մեն-մենակ՝ պարսկական ներխուժման վտանգի առջև: Կայսրը զբաղված էր երկրի խորքերում ծագած ապստամբական շարժումները ճնշելով: Շապուհը տերության արևելյան կողմերում բռնկված խռովությունների պատճառով առայժմ ժամանակ չուներ Տիրանից

[27] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2006, էջ 129:

[28] 351թ. Մուրսալի ճակատամարտում Կոստանդիոսը հաղթեց հենց այս հեծելազնդի շնորհիվ: Տես՝ Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 157:

վրեժ լուծելու:

Դժվարին այս կացության մեջ, երբ հայոց արքունիքն հայտնվել էր հռոմեական թակարդում և երկիրը զրկված էր ռազմական ուժի կարևոր մասից, Հուսիկը որոշեց գործի անցնել: Տիրանը ժամանակ չուներ ներքին խնդիրներով զբաղվելու: Հայոց զորքը ետ էր մղում պարսից սահմանային զորքի ասպատակությունները: Ավելի հարմար պահ՝ ձեռք գցելու պետական գանձարանն ու հայոց արքունիքը կատարյալ կախման մեջ պահելու եկեղեցուց և Հռոմից այլևս չէր լինի: Մեկ վճռական քայլ, և Գրիգորի տոհմի ձեռքում կհայտնվեր ողջ երկիրը՝ բանակ, տնտեսություն, կառավարման համակարգ: Վերջապես կվերանար սարսափելի այն վտանգը, որ կախված էր եկեղեցու գլխին՝ Տիրանի թույլտվությամբ ազգային հավատքի վերահառնումով: Հենց այս ժամանակ, թողնելով արքունի բանակը՝ Հուսիկն անսպասելի հայտնվում է Բնաբեղում, ուր պետական գանձարանի առյուծի բաժինն էր պահված:

Բուզանդը Հուսիկի և Տիրանի բախումը պայմանավորել է վերջինիս անօրենությամբ, անհավատ կենսակերպով, անբարո և գոռոզ վարքով: Ըստ Խորենացու, բախման պատճառը Հուլիանոս Ուրացող կայսեր (361-363) պատկերն է: Տիրանն իբր, ստանալով պատկերն անձամբ կայսրից, փորձել է այն տեղադրել Բնաբեղի եկեղեցում: Հուսիկն, իհարկե, արգելում է: Արքան սպանել է տալիս խեղճ քահանայապետին[29]: Հուլիանոսի պատկերը, պարզվում է, դիվական էր: Ուրիշ ի՞նչ կերպ կարող էր Պատմահայրը ցույց տալ Տիրանի և Հուսիկի միջև մղվող պատերազմի բուն պատճառներից մեկը, որ խնամքով թաքցված է արքայի «անբարո, անառակ կյանքի» առասպելների տակ: Տիրանը հեթանոս էր, և իր նախնյաց հավատքն էր թույլատրել երկրում: Սա կարևոր հանգամանք էր՝ Հուսիկի թշնամանքին արժանանալու համար:

Ինչևէ, Հուսիկն արդեն կատարել էր իր քայլը: Լուրը

[29] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԺԳ., ԺԴ.:

հասավ Տիրանին: Հերթն արքայինն էր, և Տիրանը չվարանեց: Մնացածն արդեն հայտնի է.[30] Հայաստանյայց եկեղեցին սուգ էր հայտարարել, իսկ Հայոց աշխարհը՝ թմբիրից արթնացած, նոր զարթոնք էր ապրում: Հայաստանում գարուն էր...

Ը

Այդ ժամանակ մարդիկ իրենց չարի օրինակ վերցրին թագավորին, նրա պես սկսեցին ձևել, նրա պես գործել...

Նրանք համարձակ գնում էին կորուստի ճանապարհով, իրենց կամքով չարիքների մեջ էին ընկնում, իրենց կամքով դառնում էին բարկության որդիներ և աշխարհում շրջում էին առանց աստծու՝ Հայոց աշխարհի այդ կամակոր ազգը...[31]

Ահա թե որն էր գլխավոր դժբախտությունը, ինչն էր Հայոց աշխարհի մեղքը: Վերջապես... Վերջապես մի երկրում, ուր տասնամյակներ շարունակ քահանայապետական խույրից բարձր ոչինչ չէր երևում, ուր եպիսկոպոսական գավազանն էր դարձել ճշմարիտ օրենքի խորհրդանիշը, ուր վեղարով ու սքեմով էր խեղդված հայրենի ամեն մի առաքինություն՝ մարդիկ օրինակ վերցրին թագավորին: Չլսված ու անսովոր մի բան էր սա: Հաշվված տարիների ընթացքում թագի պատիվը հավասարեցվել էր ցեխին, թագավորը մի բան էր, որն ընդունակ էր միայն անզոր հառաչել՝ մեծազոր եպիսկոպոսապետի ազդու հայացքի ներքո: Ոչինչ էր թագավորը և անգործ: Իսկ հիմա, մեծազոր Գրիգորի թոռանն սպանած արքան դարձել

---

[30] «... տարօրինակ եւ գրեթէ անհաւատալի կ'երեւի հայ քրիստոնեայ թագաւորի մը՝ մինչեւ այդ աստիճան լրբենի եւ անգութ կերպով իր հայրապետին դէմ համարձակիլը»,- բողոքում է Օրմանյանը (Ազգապատում, հտ. Ա, էջ 73-74): Այս խոսքերը հետաքրքիր են այն առումով, որ եկեղեցու պաշտոնավորները բնական են համարել իրենց անամոթ պահվածքը, իսկ արքայի, իշխանի կամ պետական որևէ այլ գործչի պատասխանը համարել են «տարօրինակ և անհավատալի»:

[31] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԳ.:

էր օրինակ: Ողջ Հայոց աշխարհն էր նրա պես գործում: Ծանր էր արքայասպան Անակի ժառանգների գործը: Հիմա նրանք քաղում էին այն, ինչ սերմանել էին իրենց պապերը: Եկել էր քարերը հավաքելու ժամանակը: Ոչխարի մորթով ծածկված ամբողջ մի ազգ դեն էր նետել օտար կրոնի շղարշը և գնում էր «կորուստի ճանապարհով»:

Ի՞նչ էին անում «բարկության որդիներ» դարձած երեկվա այդ բարեպաշտները՝ դժվար չէ գուշակել. Հայոց աշխարհում կործանված մեհյանների վրեժն էր լուծվում: Եթե հպարտ ու հանդուգն Տիրանը՝ դեռ հոր կենդանության ժամանակ իրեն շրջապատել էր ազգային հավատք կրող սեպուհներով, եթե նրա թագադրվելուց հետո արդեն մեծահամբավ իշխաններ դարձած այդ նույն սեպուհները հպարտորեն մերժում էին կղերականների հեղինակությունը, ապա այլ էր ժողովրդի վիճակը: Քրիստոնեական կրոնը մնում էր իբրև մահակ՝ իր ազգային ակունքներից չկտրված հայի գլխին: Հիմա, Հուսիկի սպանությունից հետո, ամեն ինչ գլխիվայր շրջվեց՝ արքունիքը դեն նետեց վրայից «առաքելական» շղարշը: Հայոց ազգն այլևս ստիպված չէր մթության քողի տակ թաքուն երկրպագելու իր աստվածներին: Երկիրն ազգայնանում էր: Այդ իշխանները՝ «չար ու ոխակալ, արյունախում և վայրենի», իրենց ժամանակը «մաշում էին պարսավելի կրթություններով, հին հեթանոսական սովորություններով, խուժադուժ բարբարոսական մտքերով»: Հայոց աշխարհի այդ կամակոր ազգը, որ «սիրում էր իր առասպելների երգերը, վիպասանությունները, նրանցով կրթվում, նրանց հավատում, նրանց մեջ հարատևում»: Բոլորովին անտեսվել է առաջին հայացքից զարմանալի թվացող այն իրողությունը, որ քահանայապետի մահն ու արքայի կամքը բավական էին հռոմեական լծի տակ կեղեքվող ու պարսից վտանգի առջև շվարած մի երկրի՝ առանց վարանելու հին հավատքին դառնալու համար: Ո՞րն էր այդ բուռն զարթոնքի պատճառը՝ միայն հեթանոս արքան և իր չարախոհ իշխան-

նե՞ը: Բացատրությունը գտնում ենք հենց Բուզանդի մոտ. *«Որովհետև վաղուց ի վեր, երբ նրանք քրիստոնեության անունն ստացան, այդ կրոնն հանձն առան հարկից ստիպված՝ իբրև մի մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի...»*[32]:

Ահա թե ինչ: Մեզ ուսուցանել էին, թե Քրիստոսից առաջ անգամ՝ հայը քրիստոնյա էր, թե մեր էության անբաժանելի մասն էր այդ կրոնը, թե Գրիգորից դարեր առաջ՝ լուսավորչական էինք: Այնինչ, պարզվում է, «հարկից ստիպված»՝ իբրև մի մոլորություն ենք հանձն առել այն: Եվ ահա արգասիքը. սոսկ արքայական հրամանով պահպանվող մի օտար դավանանք, նույնպիսի մի հրամանով, իր տեղը զիջում է ազգայինին՝ այն տարբերությամբ, որ հայոց ազգն ու ավագանին ցնծությամբ էին հետևում նոր հրամանին: Հուսիկը լոկ սկիզբն էր: Նա իր հետևից տարավ բազում հոգևորականների. *«Նրանց ատում էին, հալածում և սպանում»*[33]: Կղերականների հետ հաշվեհարդար էին տեսնում Հայոց աշխարհում՝ ահա իսկությունը: Ցնծու՛մ էր Հայքը և կենդանանու՛մ...

Հուսիկի մահն ու հաջորդած ազգային զարթոնքը, որ բնականաբար ուղեկցվում էր եկեղեցական գործիչների հանդեպ համատարած հալածանքով՝ շատերի կողմից ընկալվում էր իբրև մի շարժում, որն առաջին հերթին ուղղված էր հունասիրության, հռոմեական կողմնորոշման և նրա ջատագով՝ Գրիգորի տոհմի և իր զինակիցների դեմ: Դա, իհարկե, այնքան էլ հեռու չէ ճշմարտությունից: Բայց հունական թևին զուգահեռ, եկեղեցում գործում էր մեկ այլ զորեղ ուժ ևս, որ թեև, էականորեն խիստ տարբերվող, սակայն, այդ շրջանում՝ սերտորեն կապված էր Գրիգորի տոհմի հետ: Խոսքը Հայաստանյայց եկեղեցու ասորական թևի մասին է: Ընդհանրապես, ուսումնասիրողները եկեղեցու շրջանակներում նկատել են երկու՝ հունական և ասորական հոսանքների պայքար: Լեոն

---

[32] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԳ.:

[33] Նույն տեղում:

միայն առաջ քաշեց Աղբիանոսյանների տոհմը՝ իբրև բուն ազգային, երրորդ ուժ՝ եկեղեցու մեջ[34]: Մինչ այդ, հիմնականում Աղոնցի եզրահանգումների տպավորության ներքո, նրանք մասամբ դիտվում էին որպես ասորական թևի ներկայացուցիչներ՝ սոսկ այն պատճառով, որ Աղբիանոսը ձեռնադրվել էր Տարոնում: Աղբիանոսյաններին մենք դեռ կհանդիպենք, իսկ առայժմ՝ ասորական եկեղեցու մասին:

Սրանք Հայաստան թափանցեցին Եդեսիա-Մծբին գծով և Հայկական Տավրոսում հենց սկսեցին տարածվել՝ հաստատվելով երկրի հարավում: Երկրորդ՝ հունական թևն արդեն սկսեց ներս խուժել Կապադովկիայից՝ Գամիրքից, հանձինս Գրիգորի: Թե ինչպես նրան հաջողվեց հասնել հաղթանակի՝ երկար է խոսվել, և դեռ ոչինչ էլ պարզ չէ: Սակայն, էական է մի հանգամանք: Գրիգորը մեծագույն ցանկության դեպքում անգամ չէր կարող անտեսել այն հզոր ուժը, որ Հայաստան մուտք էր գործել իրենից շատ առաջ՝ ասորական քրիստոնյա համայնքներին: Սրանց կենտրոնն այդ շրջանում Մծբինն էր: Գրիգորը հսկայական զիջումներ արեց սրանց՝ աշխատելով միավորել իր իշխանության ներքո: Հայաստանի հարավային գավառներում և Տարոնում եղած նշանավոր կենտրոններում թեմեր հիմնելով՝ նշանակեց ասորի եպիսկոպոսների: Կրոնական քարոզչությունը տարվում էր հավասարապես՝ հունարեն և ասորերեն լեզուներով, բացվում էին երկլեզու դպրոցներ: Նույն նպատակով Գրիգորը ձեռնադրեց եպիսկոպոսներ քրմական ժառանգներից՝ նշանակելով Հայաստանի հարավարևմտյան շրջաններում: Այն, որ եկեղեցու ներսում Փավստոսին հայտնի է երկու տոհմ՝ շատ խոսուն փաստ է: Նա չի ժխտում ասորական զորեղ ուժի առկայությունը: Այն պարզապես սերտաճել էր Գրիգորի տոհմի հետ և ղեկավարվում էր հիմնականում Մծբինից: Մենք դեռ կտեսնենք ասորիների զորեղ ազդեցությունը Հայաստանում՝ անգամ հունասերների

[34] Լեո, Երկեր, հտ. Ա, Ե., 1966, էջ 425:

վրա: Երրորդ՝ Աղբիանոսյան տոհմը, որ զուտ ազգային էր, նախապես որևէ թեմ չուներ: Միայն Վրթանեսը՝ ասորական գործոնին հակակշռելու համար նրանց տվեց Մանազկերտը շրջակայքով՝ Տարոնի հարևանությամբ:

Տարոնի եկեղեցու գլխավորն էր Դանիել ասորին: Սա Գրիգորի աշակերտն էր և նրանից ստացել էր Տարոնի բոլոր եկեղեցիների գլխավորությունը շրջակա գավառներով հանդերձ: Պատկերացնելու համար այն մեծ ազդեցությունը, որ տրված էր սրան, բավական է ասել, որ նա միաժամանակ վերակացուն և տեսուչն էր Մեծ Հայքի բոլոր եկեղեցիների, Մեծ Դատավորության Տարոնի գործակալն էր և հսկայական ազդեցություն ուներ նաև Պարսկաստանի եկեղեցիների՝ այսինքն, ասորական եկեղեցիների վրա: Սա մի փաստ է, որ ցույց է տալիս, թե ինչպես էր ասորական հոսանքը սերտաճել Գրիգորի տոհմի հետ այս շրջանում: Այդ միայն հետո՝ 5-րդ դարում, սրանք սկսեցին լրջորեն պայքարել միմյանց դեմ: Գրիգորը Դանիելի սեփականությունն էր դարձրել Վահագնի բագինից ներքև գտնվող տարածքն Աշտիշատում: Հենց այս Դանիելի շնորհիվ է, որ Հայաստանում տարածվեցին անապատական-ճգնավորական կարգերն ու սովորույթները[35]:

Մեկ հետաքրքիր հանգամանք, որ ուշադրության չի արժանացել. Ադոնցն իրավացիորեն կարծել է, որ ասորական թևի ներկայացուցիչները ջանք ու եռանդ չեն խնայել իրենց դպրությունը մեզանում տարածելու համար: Կորյունի նշած Դանիել ասորին սոսկ մի հիշողություն է նրա մասին[36]: Եթե այդպես է, ապա Դանիելը փորձել է ասորական տառերն հարմարեցնել հայոց լեզվին, որը բնականաբար չի ընդունվել հայոց կողմից: Այս ենթադրության օգտին խոսում է հետևյալ ակնարկը. նախ, Վռամշապուհը հայտնելով Սահակ պարթևին ոմն ասորի Դանիելի մոտ պահպանված հայկական տառերի

[35] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 441:

[36] Ադոնց. Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 390:

մասին, մարդ է ուղարկում ոչ թե Դանիելի, այլ ուրիշի մոտ: Ըստ երևույթին, սրա մոտ պահպանված էին Դանիելի տառերը: Այստեղից էլ՝ նրա անվան հետ կապված հիշողությունը Կորյունի մոտ: Երկու տարի այս տառերն ուսումնասիրելուց հետո, Մաշտոցը պարզում է, որ դրանք ոչ միայն չեն համապատասխանում մեր հնչյունական համակարգին, այլև ունեն օտար ծագում[37]: Մաշտոցը դեն է շպրտում այդ այբուբենը: Այսպես, քորեպիսկոպոս ասորի Դանիելը վերջնականապես մեր ազգը խեղելու նպատակով դեռ 4-րդ դարում փորձ է արել ասորական տառերը փաթաթել մեր վզին: Դա տեղի է ունեցել հենց Տիրան արքայի օրոք, և մերժվել է:

Հուսիկի մահից հետո, կարծելով, թե խնդիրը սոսկ Գրիգորի տոհմի հետ թշնամությունն է՝ ասորական թևն առաջ է քաշում հենց այս Դանիելի թեկնածությունը: Այն հենց սկզբից մերժվում է Տիրանի կողմից. արքան լսել անգամ չէր ուզում սրա մասին: Թեև Փավստոսը ներկայացնում է, իբրև թե Դանիելին արքան էր կանչել՝ նրան քահանայապետի աթոռն առաջարկելու համար, սակայն, իրականությունն այլ կերպ է երևում: Դանիելը չի բերվում արքունիք, այլ ինքն է գալիս. թե ինչու՝ դեռ կտեսնենք: Խորենացին ակնարկ անգամ չի անում Դանիելին հրավիրելու մասին, այլ պարզ ասում է միայն, որ նա նախատել էր արքային[38]:

Եվ այսպես, Գրիգորի աշակերտ և գործի հետնորդ, Հայաստանյայց եկեղեցու ամենածայրահեղ խավարամիտ, ասորա-հրեական հոգեբանությունը հարազատեցրած հոսանքի պարագլուխ Դանիելը Հուսիկի մահից անմիջապես հետո հայտնվում է արքունի բանակում: Դրան արդեն նախորդել էին տառերի հետ կապված նրա անհաջողությունները: Որևէ լավ բան չէր սպասվում չարացած ասորու այդ այցից...

---

[37] Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1979, Զ.:

[38] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԺԴ.:

Թ

Դուք կործանվեցիք և ընկաք, ետ կանգնեցիք արդարության ճանապարհից, դուք թողիք ձեր բարերար աստծուն, որ ձեզ ոչնչից ստեղծեց ու հաստատեց, և մոլորվելով՝ նրան այլևս չճանաչեցիք...[39]

Դանիել ասորու այս խոսքերը լավագույն վկայությունն են հոգևոր այն կապի, որ ուներ նա պարթև ուսուցչի հետ: Գրիգորի վարքում տեղ է գտել նմանատիպ մի բարբաջանք: Պատմելով մեհյանների կործանմանը զուգընթաց՝ հայոց քրիստոնեացման մասին, Ագաթանգեղոսը գրել է. *«Գրիգորը համոզեց թագավորին, որպեսզի զանազան գավառներից, կողմերից, այլևայլ տեղերից մանկանց բազմություն հավաքեն՝ ուսուցանելու նպատակով գազանամիտ, վայրենագույն և ճիվաղաբարո գավառների բնակիչներին...»:* Անսալով նրա հրամանին՝ Տրդատը երկու մասի է բաժանում «քրմերի պղծագործ ցեղին և նրանց մանուկներին»՝ ոմանց տալով ասորի, մյուսներին՝ հելլենական դպրության: Այս ամենից հետո մի ակնթարթում *«երկրի վայրենամիտ, դատարկասուն և անասնաբարո բնակիչները՝ արագորեն մարգարեագետ, առաքելածանոթ և ավետարանի ժառանգորդներ դարձան...»*[40]:

Ահա Գրիգորի և իր հետնորդների հասցրած ամենամեծ ապտակը մեր Տեսակին. ինքնաժխտման, ինքնանվաստացման այդ թույնը, որ քրիստոնեության տարածվելուն զուգընթաց՝ սերմանվում էր մեր հոգիներում:

Ահա, ամենազոր քորեպիսկոպոսն եկել էր նվաստացնելու և նզովելու համար: Տիրանը զորքի և ավագանու հետ բանակել էր Աղձնյաց գավառի Բառաէջ գյուղում, երբ Կարեն

---

[39] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԴ.:

[40] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, էջ 138-139:

Ամատունու, Վարազ Դիմաքսյանի, Զոմն Սահառունու և Արտավան Վանանդեցու ուղեկցությամբ՝ տեղ հասավ ծերունի Դանիելը: Նրանից անբաժան էին իր երկու աշակերտները՝ ասորի Շաղիտան և հույն Եպիփանը: Մոլեգնած էր Դանիելը: Ցնորված հայացքը հառելով արքային՝ վեր պարզեց բազուկներն ու սկսեց խոսել: Դրանք խոսքեր չէին, այլ զարհուրելի անեծքի, նախատիքի և սպառնալիքի կույտ: Հազարամյակներով կուտակված ցեղային անհուն ատելությունն էր ժայթքում ասորու շուրթերից. սեփական տեսակի ախտաժետ պետականությունը կորցրած գաղթականի ատելությունը՝ դարավոր թշնամի, բայց այնուամենայնիվ, իրեն տեղ տված ազգի դեմ: Արքային և ողջ ազգին մեղադրելով հնարավոր ու անհնար բոլոր մեղքերի մեջ, Դանիելն ելույթն ավարտեց հայտնի նզովքով՝ չմոռանալով ավելացնել. «*այս ամենը ձեզ պիտի պատահի, որովհետև տերն այսպես ինձ ցույց տվեց*[41]»:

Ապշած էին ամենքը: Արքան և իշխանները, ողջ զորքն ու ժողովուրդը քար կտրած լսում էին զարհուրելի այս խոսքերը: Սպասում էին, որ Գրիգորի աշակերտը պետք է Հուսիկի մահվան, քրիստոնեության դեմ սկսված հալածանքների համար դժգոհի: Գիտեին, որ ասորին գազազած է սեփական ցեղի անկատար տառերը հայոց լեզվին պարտադրելու անհաջող փորձից: Բայց նզովել մի ողջ ազգ, պետություն, անեծքի հեղեղ թափել համայն երկրի վրա՝ արդեն չափազանց էր: Լռեց Դանիելը: Իր «մարգարեությունների» թողած տպավորությանը վստահ՝ հավանաբար սպասում էր մեղայական խոսքերի, զղջումի և ապաշխարհության՝ ինչպես սովոր էին Տրդատի ու Կոտակի «հին և բարի ժամանակներում»: Լուռ էր և Տիրանը, լուռ էին իշխանները, պապանձվել էր զորքը: Հանկարծ արքան սկսեց խոսել՝ հանդարտ, հատու և տիրական.

-*Խեղդել*:

Եվ հայոց այդ կամակոր ազգի «բարկության որդիները»՝

[41] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԴ.:

նույն նրանք, ովքեր բրածեծ անելով, երկնային արքայության էին ուղարկել «մանուկ» Հուսիկին, քարշ տվեցին Դանիելին դեպի հրապարակ: Չվանը վիզը գցելով՝ խեղդամահ արին լպիրշ ասորուն, խեղդեցին այնպես, ինչպես խեղդում են կատաղած մի շան:

Հայոց հողն ազատվեց մոլագար ասորու տհաճ ներկայությունից, բայց ժանտահոգի ծերուկը հասավ նպատակին. մնաց նրա նզովքը՝ քարացած զորքի, ժողովրդի գլխավերևում: Նրա հաջորդները կրկնեցին ու կատարելագործեցին թունալից անեծքների այն շտեմարանը, որով այնքան հարուստ էր Գրիգորի տան հոգևոր զինանոցը: Դանիելը հավաքական կերպարն է հայոց պետականության հանդեպ բացահայտ ատելության ու նախանձի: Այդ նախանձն ու թույնն ի ցույց դնելը դարձավ «գեղեցիկ» ավանդույթ նրա հետնորդների համար:

Ժ

Հուսիկին և Դանիելին հասած պատիժներն ու դրանց հաջորդած դեպքերը թևաթափ չարեցին եկեղեցուն ու Գրիգորի տոհմին: Այս նշանավոր զոհերը նրանք օգտագործեցին տեղին՝ նահատակի, հանուն հավատքի զոհվածների լուսապսակով պատելով իրենց հայրերին: Հարվածը շատ ծանր էր, սակայն, այն առաջ էր բերելու պատասխան ընդվզումներ՝ կազմակերպված եկեղեցու կողմից: Տիրանը դրան սպասում էր:

Արքայի դեմ ելան Ռշտունիներն ու Արծրունիները: Մատենագիրները տարբեր կերպ են ներկայացնում այս ընդհարումը: Հասկանալու համար, թե իրականում ինչ է թաքնված հակասական այս պատմության տողատակերում, տեսնելու համար այն, ինչ մինչ օրս անուշադրության է մատնվել ուսումնասիրողների կողմից, նախ դիմենք սկզբնաղբյուրներին:

Այսպես, ըստ Բուզանդի, սոսկ Հայր Մարդպետի չարախոսություններին ունկնդիր լինելով, Տիրանը կոտորել է

տալիս Ռշտունյաց և Արծրունյաց տոհմերը՝ չխնայելով նույնիսկ կանանց: Փրկվում են միայն երկու մանուկ՝ Մեհենդակ Ռշտունու որդի Տաճատն ու Վաչէ Արծրունու որդի Շավասպը, որոնք դեռ ծծկեր երեխաներ էին: Սրանց փախցնում են Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները և տանում Տայքի ամուր տեղերը՝ մեծացնելով ու սնուցանելով: Հետագայում երեխաները փեսայանում են Մամիկոնյաններին, և վերընձյուղում իրենց տոհմերը: Եվ որ ամենակարևորն է՝ երկու տոհմերը բնաջնջվում են առանց որևէ մեղքի ու հանցանքի[42]:

Թովմա Արծրունին նույնպես տոհմերի բնաջնջման պատճառ է համարում Հայր Մարդպետի չարախոսությունները: Հայր Մարդպետը, ըստ նրա, հույս ուներ նրանց հետ բնաջնջել նաև Մամիկոնյաններին: Մանուկներին փրկողները դարձյալ Արտավազդ և Վասակ Մամիկոնյաններն են, բայց, ի տարբերություն Փավստոսի, Թովման՝ Շավասպ Արծրունու հետ փրկում է ոչ թե Մեհենդակ Ռշտունու որդուն, այլ հենց իրեն՝ Մեհենդակին: Մնացածն, ինչպես Փավստոսի մոտ[43]:

Իսկ հիմա քննենք Պատմահոր հաղորդածը, որն առանց ավելորդ հույզի և կողմնապահության ներկայացնում է բոլորովին այլ պատմություն: Այսպես, լսելով Հուսիկի հետ կատարվածի մասին, և առնելով նախարարներից ոմանց դժգոհությունների լուրը՝ Ռշտունյաց Զորա նահապետը, որն հայոց հարավային զորքերի հրամանատարն էր Մանաճիհր Ռշտունու փոխարեն, վերցնում է զորքն ու ամրանում Տմորիքում՝ արքայի դեմ ապստամբվելու կոչ անելով նաև մյուս նախարարներին: Տիրանը նրա մոտ բանակցությունների է ուղարկում Հայր Մարդպետին: Զորան, որ սկզբում չհավատալով նրա խոստումներին՝ հրաժարվում է բանակցություններից, տեսնելով, որ զորքը լքում է իրեն, և մյուս իշխաններից էլ օժանդակություն չկա, մնալով միայնակ՝ վայր է դնում զենքն

---

[42] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԸ.:

[43] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց Տան, էջ 80:

ու գնում արքայի մոտ: Տիրանը գրավել է տալիս նրա Աղթամար բերդը և կոտորում ընտանիքի անդամներին: Փրկվում է միայն Զորայի Մեհենդակ եղբոր որդին, որին փախցնում են իր դայակները: Տիրանը հարավային զորքերի հրամանատար է նշանակում Անձիտի տեր Սաղամութին[44]:

Այսքանը. պարզվում է «առանց մեղքի և հանցանքի» ձևակերպումը կղերական պատմիչների մոտ հավասարազոր է պետական դավաճանությանը, որը սակայն պարսավելի չէ: Պատմահայրը ոչ մի տեղեկություն չունի Արծրունյաց տոհմի բնաջնջման մասին, որն ավելի քան տարօրինակ է՝ եթե հաշվի առնենք, որ ըստ Փավստոսի և Թովմայի, այն սերտ կապված է եղել Ռշտունիների «անմեղ» կոտորածի հետ:

Այս դեպքերը մինչ օրս պատկերվել են երկու վարկածով: Առաջին. Ռշտունիներին և Արծրունիներին կոտորել է տվել Հայր Մարդպետը՝ տոհմական թշնամանքից ելնելով: Երկրորդ. այս երկու տոհմերը բնաջնջել է Հայր Մարդպետը՝ արքայի հրամանով, որպեսզի հարքունիս գրավի նրանց կալվածքները[45]: Ոչ ոք հաշվի չի առել Պատմահոր հաղորդածը: Ոչ ոք իրեն հարց չի տվել, թե այդ ինչպե՞ս Ռշտունյաց տան «կատարյալ բնաջնջումից» հետո, կրկին հանդիպում ենք Մեհենդակ Ռշտունուն՝ իբրև ավագագույն նախարարի, իրեն վայել պատիվներով ու զորքով, Գահնամակում առաջնակարգ բարձով: Սպառված տոհմը, եթե չունենար նախկին ուժը՝ չէր հիշատակվի հայոց տերերի ցանկում: Դրանից տարիներ չանցած հանդիպում ենք մեծ նահապետ Մեհրուժան Արծրունուն, Արծրունիների փառահեղ, հզորագույն մի տոհմի, որը մեծ դերակատարություն ունեցավ հայոց կյանքում: Անհնար է հասկանալ կատարվածի

---

[44] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԺԵ.:

[45] Ըստ Հ. Մանանդյանի՝ Հայր Մարդպետին վերագրվող այդ դեպքերն արքայական իշխանության ամրապնդման տեսակետից մեծ նշանակություն են ունեցել: Ն. Ադոնցն այս հարցում լիովին վստահել է Արծրունու և Բուզանդի մանվածապատ տեղեկություններին:

ողջ պատկերը՝ առանց դեպքերից փոքր-ինչ ետ գնալու: Նախ, ովքե՞ր էին Մանաճիհր, Զորա և Մեհենդակ Ռշտունիները: Եվ այդ ի՞նչն է նրանց հետ կապել Արտավազդ և Վասակ Մամիկոնյանների անունները:

Մանաճիհրին հանդիպել ենք դեռ Տրդատ Գ օրոք՝ որպես հայոց հարավային զորքի հրամանատար: Նույն պաշտոնը նա վարում էր Կոտակի գահակալման սկզբում: Ռշտունյաց մեծազոր նահապետը մեկն էր այն իշխաններից, ովքեր, չնայած թագավորի հրամանին, ամեն կերպ խրախուսում էին հայոց ազգային հավատքն իրենց գավառներում: Մանաճիհրի ազդեցությունն ու համբավը մեծ էին Հայոց երկրում: Ողջ իր կյանքը Հայրենիքի համար մղվող մարտերում էր անցկացրել քաջարի իշխանն ու իրավամբ վայելում էր մեծ հեղինակություն՝ ավագագույն նահապետների շարքում: Կոտակի և Վրթանեսի գալուստը նշանավորվեց մեծագույն խառնակություններով: Դրանցից մեկն էր՝ Աղձնյաց Բակուր մեծ բդեշխի դավաճանությունը: Անջատվելով հայոց թագավորությունից՝ Բակուրը հպատակվում է պարսից արքունիքին և պարսիկներին հանձնում արքունի կալվածքներն Աղձնիքում: Դավաճանի դեմ Կոտակն ուղարկում է Մանաճիհր Ռշտունուն: Հալածելով բդեշխի և նրան օգնության եկած պարսիկների զորքերը՝ Մանաճիհրը սպանում է Բակուրին, ձերբակալում նրա որդուն և Աղձնիքը մաքրում թշնամուց: Դուրս գալով Մեծ Հայքից՝ Մանաճիհրը հասնում է մինչև Մծբին, ավերում և գերեվարում դրա շրջակայքը: Ազդվելով Փավստոսի սրտաճմլիկ զրույցից՝ Լեոն Մանաճիհրի արարքը հասկացել է իբրև գազանաբարո բռնակալի, չարագործ մի հրեշի քմահաճույք, որին *«մի առանձին հաճույք էր պատճառում անմեղ մարդկանց տանջելն ու կոտորելը»*[46]: Մանաճիհրի դիրքի և պատասխանատվության տեր զորավարի դեպքում, սակայն, այս արարքն ունի իր տրամաբանությունը: Մծբինն ասորական եկեղեցու

[46] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 432:

հանրահայտ կենտրոնն էր, մեծ ազդեցություն ուներ կղերականների որոշումների վրա: Մծբինն այն որջն էր, որը բավական հաջող օգտագործվում էր պարսից արքունիքի կողմից՝ հայոց գործերին խառնվելու համար: Մծբինի եկեղեցին սեփական շահերն ուներ Հայոց աշխարհում: Իսկ եթե տեսնենք, թե ով էր այդ եկեղեցու գլուխը՝ պարզ կլինի, թե ինչ ահռելի կախում ուներ Վրթանեսը և, դրանով իսկ, Խոսրով Կոտակը Մծբինից: Մծբինի մեծ եպիսկոպոսն էր... պարթև Անակի որդին՝ Գրիգորի Սուրեն եղբայրը, որ ձեռնադրվելուց հետո կրում էր «Հակոբ Զգոն» անունը[47]: Մինչ Գրիգորը Կեսարիայից հրով ու սրով նոր կրոնն էր տարածում Հայաստանում, նրա հովանավորները հոգ տարան Սուրենին ասորական եկեղեցում բարձրացնելու մասին: Ահա, այն կարևոր պատճառներից մեկը, որ Հայաստանում ասորի համայնքների ղեկավարները՝ ձեռնադրվելով Գրիգորի կողմից, ենթարկվեցին նրան և 4-րդ դարի ողջ ընթացքում սերտաճում էին նրա տոհմի հետ: Հակոբն անառարկելի հեղինակություն էր՝ ոչ միայն պարսկական եկեղեցիների, այլև Հայաստանյայց եկեղեցու համար: Վրթանեսն իր հորեղբոր օգնությամբ և ցուցմունքով էր ամրապնդում սեփական տոհմի դիրքերը երկրի հարավում: Մանաճիհրի արշավանքը դեպի Մծբին՝ նպատակ ուներ պատժել և զգաստացնել հայոց հարավը փոթորկող պարսից արքունիքին և նրա ձեռքին գործիք դարձած Հակոբին, որն իր

---

[47] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ժ.: Գլակին վերագրվող այն աղբյուրը, ուր պահպանված է Սուրեն պարթևի մասին տեղեկությունը, փորձում է համոզել, թե այս Հակոբը Գրիգորի ոչ թե եղբայրն՝ այլ հորաքրոջ որդին էր: Եղբայրը Սուրենն է: Հրամցնելով անհավանական պատումների մի ողջ կույտ՝ Գլակն հորդորում է հավատալ միայն իրեն: Սուրենն ու Հակոբը նույն անձն են՝ ձեռնադրությունից առաջ և հետո: Նույնիսկ եթե ընդունենք Գլակի տվյալի ճշմարտացիությունը Բուզանդի համեմատ՝ հարցի էությունը չի փոխվում. Հակոբն ու Գրիգորը նույն արյունից էին և միաժամանակ առաջ էին մղվել տարբեր ճակատներում:

ցանցերն էր սփռել Աղձնյաց թեմերում:

Մծբինից Ռշտունյաց իշխանը գերում և իր մոտ է տանում Հակոբի ութ սարկավագներին, որոնք հոգեորսությամբ էին զբաղված Մեծ Հայքի հարավում: Եվ ահա, Հակոբ Զգոնը, թողնելով Մծբինը, գալիս է Ռշտունիք՝ Մանաճիհր հզոր իշխանի դուռը, և հորդորում վերադարձնել սարկավագներին: Բուզանդը Հակոբի գալուստը բացատրում է նրանով, թե լսած լինելով Մանաճիհրի գազանությունների մասին, Հակոբն եկել էր նրան քրիստոնեական դարձի բերելու և մեղմելու նրա «անասնաբարո, գազանային կատաղությունը»: Սա ուղղակի արտացոլումն է այն փաստի, որ ողջ Ռշտունիքը նահապետի հետ միասին մնացել էր նախնյաց հավատքին հավատարիմ: Գրիգորի հրաշագործի համարում ունեցող «սուրբ» եղբայրն իր հավակնոտ անձով ավելի է բորբոքում մեծ իշխանի հոգում բույն դրած «դևերին»: Ահավասիկ. մերժ-վելով Մանաճիհրից՝ Հակոբը դիմում է հենց իրեն՝ Խոսրով Կոտակին: Չնայած գերիներին հետ վերադարձնելու արքայի կարգադրությանը, Մանաճիհրը՝ իր գավառի բնակիչների պահանջով, Հակոբի աչքերի առջև ծովն է նետում նրա ութ սարկավագներին[48]: Սա շատ խոսուն վկայություն է. ըստ երևույթին «գազանային կատաղությամբ» վարակված էր Ռշտունյաց ողջ աշխարհը:

Տրտմեց ու զայրացավ Անակի «սուրբ» որդին և հեռացավ Մանաճիհրի մոտից: Հիշու՞մ եք Քրիստոսի պատգամն իր աշակերտներին՝ նրանց հոգիների որսի ուղարկելուց առաջ. *«... և ով որ ձեզ չընդունե կամ ձեր խոսքերին չլսե, երբ այն քաղաքից դուրս գալու լինեք, ձեր ոտներից փոշին թափ տվեք: Ուղիղ եմ ասում ձեզ, սոդոմացոց և գոմորացոց երկրին ավելի հեշտ կլինի դատաստանի օրը՝ քան այդ քաղաքին»*[49]:

Ահա, «մեծն պարթևն» ոտքի փոշին թափ տալով նրանց

---

[48] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., Է.:

[49] Մատթ., Ժ., 14, 15:

վրա՝ բարձրացավ Ռշտունյաց Ընձաքիարս լեռան գագաթը, որտեղից երևում էր ողջ գավառը: Լեռան կատարից նզովքի սարսափելի խոսքերի կարկուտ թափեց Հակոբը Ռշտունյաց ծաղկուն գավառի վրա՝ թող որ այդ աշխարհից հավիտյանս հավիտենից չպակասեն խռովությունն ու աղետները, թող ամայի և անբնակ դառնա չքնաղ գավառը: Մնացածն՝ ինչպես հեքիաթում. Հակոբը գնում է Մծբին: Երկու օր չանցած, անհայտ հիվանդությունից մեռնում են Մանաճիհրի կինն ու յոթ զավակները: Սարսափելի ցավերից վախճանվում է ինքը՝ Ռշտունիքի հզոր տերը: Բուզանդն անկեղծ հիացմունքով ավելացնում է. *«Այն օրից ի վեր, խաղաղություն չեղավ այս աշխարհում»*[50]: Ահա այսպես, սրբորեն հետևելով Քրիստոսի պատգամին, նրա առաքելական որսորդները սոդոմ-գոմորի են վերածում Հայոց երկիրը՝ գավառ առ գավառ:

Մինչև Հակոբ Զգոնի մահը Ռշտունիքը մնում է անտեր: Վրթանեսն ու Կոտակը փորձ անգամ չեն անում գավառը բարեկարգելու: Միայն Հակոբի մահից հետո, ըստ Խորենացու, Մանաճիհրի որդին՝ հանձն առնելով գավառի քրիստոնեացումը, գրավում է հոր տեղը: Պարզվում է, որ Մանաճիհրի բոլոր որդիները չէ, որ մահացել էին: Եվ նույնիսկ, մեկը չէ, որ փրկվել էր: Գավառի քրիստոնեացումը հանձն առավ Զորան: Իսկ Մեհենդա՞կը: Նրան հանդիպում ենք Օշականում՝ մազքութերի դեմ առյուծաբար կռվելիս: Սուրը ձեռքին՝ նա միշտ այնտեղ էր, ուր վտանգ կար Հայոց աշխարհի համար:

Մանաճիհրի և Հակոբի պատմությունը շատ ավելի հետաքրքրական ելևէջներ է ստանում, երբ տեսնում ենք, որ Հակոբի՝ Ռշտունիք այցելության շրջանը, համընկնում է Հայկյան երեք տոհմերի՝ Բզնունիների, Մանավազյանների և Որդունիների կոտորածի հետ: Ցայսօր, արմատավորված է հետևյալ համոզմունքը. Մանավազյաններն ու Որդունիները՝ Հայկյան հինավուրց այդ տոհմերն, արյունալի պատերազմ

[50] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ժ.:

սկսեցին միմյանց դեմ: Վշտացած Կոտակը նրանց մոտ է ուղարկում Աղբիանոս եպիսկոպոսին՝ հուսով, որ նա կարող է հաշտեցնել երկու տոհմերին: Գոռոզ ու վայրենի նախարարներն՝ անարգելով ետ են ուղարկում Աղբիանոսին, ապա գրավում և ավերում են իրենց գավառներում գտնվող արքունի կալվածքները: Այսքանից հետո, զայրացած արքան նրանց դեմ է ուղարկում սպարապետ Վաչէ Մամիկոնյանին, որն էլ, անսալով թագավորական հրամանին՝ սրի է քաշում երկու տոհմերի բոլոր արուներին:

Առավել սարսափելի էր Բզնունիներին բաժին հասած ճակատագիրը: Հինավուրց ու զորեղ այս տոհմի նահապետը՝ Դատաբենն, ըստ Փավստոսի, միանալով պարսից բանակին՝ ծուղակ էր սարքել սեփական զորքի դեմ: Արդյունքում, պարսիկները կոտորում են հայոց 40.000-ոց բանակը: Միայն քչերն են կարողանում փախնելով՝ լուր հասցնել արքային: Դատաբեն Բզնունին, այնուհետև, պարսից բանակին առաջնորդում է հայոց Միջնաշխարհ: Կրկին նրա դեմ է դուրս գալիս քաջարի Վաչէ սպարապետը, կոտորում պարսից բանակը և ձերբակալելով Դատաբենին՝ բերում արքայի մոտ: Կոտակի հրամանով Դատաբենին քարկոծելով սպանում են իբրև դավաճանի: Դրանով, սակայն, չեն բավարարվում: Լուր ստանալով, որ նրա ողջ տոհմը, կինն ու զավակներն ապաստանել են Ռշտունյաց նահապետի Աղթամար ամրոցում՝ Կոտակն այնտեղ է ուղարկում Վաչէին, ով կղզի մտնելով, այնտեղ ոչ էգ թողեց, ոչ արու: Այսինքն, կոտորվում են նաև Դատաբենի տոհմին ապաստան տված Ռշտունիները:

Սա նախարարական երեք տոհմերի բնաջնջման՝ կղերական վերսիա է, որ մեզ է հասցրել Բուզանդը: Հիմա դիմենք Խորենացուն: Սկսենք այնտեղից, որ Վաչէ Մամիկոնյանը երբեք ոչ միայն սպարապետ, այլ նաև՝ հայոց զորավարական չորս ուղղություններից որևէ մեկի հրամանատար չի եղել: Տրդատ Գ օրոք զոհված սպարապետ Արտավազդ Մանդա-

կունուց հետո մինչև Տիրան, հայոց զորքը գլխավորել են չորս զորավարներ՝ Բագրատունյաց, Ամատունյաց, Ռշտունյաց և Գուգարաց տոհմերից: Տիրանի օրոք պահպանված էին զորավարական չորս ուղղությունները, սակայն, զորքի ընդհանուր հրամանատարն էր երիտասարդ Անդովկ Սյունին: Արշավիր Կամսարականը նրա հետ համարվում էր ընդհանուր հրամանատար՝ կոչմանը համաձայն: Փավստոսը, որն աներկբա բոլորի կողմից ընկալվում է որպես Գրիգորի տոհմի և Մամիկոնյանների պատմիչ, լուծել է նաև մեկ խնդիր՝ ամեն կերպ պանծացնելով Տարոնի Մամիկոնյաններին, նրանց կենտրոնական, անփոխարինելի դեր վերագրել 4-րդ դարում: Սա է պատճառը, որ ցանկացած հաղթանակ նրա մոտ տանում են Վաչէն, Մուշեղը: Այլ տոհմերի անունները հիշատակվում են միայն պարտությունների և անհաջողությունների համատեքստում: Եվ սա այն դեպքում, երբ Պատմահայրը, որն, իմիջիայլոց, օգտվել է նաև Բուզանդից՝ հստակ և ճշմարտացի նշում է կոնկրետ անուններ: Իրականում, Վաչէն Տարոնի Մամիկոնյանների նահապետն էր և ամբողջովին գտնվում էր Վրթանեսի ազդեցության տակ: Հենց այս շրջանում է, որ Մամիկոնյանների կրտսեր՝ Տարոնի ճյուղը վերջնականապես վերածվեց Գրիգորի տոհմի մարտական ուժի: Եվ ահա, Սլկունյաց տոհմի տմարդի բնաջնջման արդյունքում Տարոնի մի մասին տիրացած Մամգունի տոհմը՝ Վաչէ նահապետի օրոք, հաջողեցնում է բնաջնջել միանգամից ևս երեք Հայկյան տոհմ: Հասկանալու համար կատարվածի իմաստը՝ հիշենք, որ Բզնունիքը, Հարքը և Որդորուն հարակից էին Տարոնին: Կոտորածների արդյունքում Հարքը Մանազկերտ կենտրոնով, Բզնունիքն ու Բասենն իրենց շրջակայքով անցնում են եկեղեցուն: Այսպես, Վրթանեսը Վաչէի ձեռքով Տարոնի շուրջ ստեղծում էր հսկայական ավատապետություն:

Պատմաբանների մոտ երբևէ հարց չի ծագել, թե հանուն ինչի՞ էին միմյանց դեմ պատերազմում Մանավազյաններն

ու Որդունիները: Եվ հետո, եթե նրանց կռիվն իրար դեմ էր, ապա այդ ի՞նչ տրամաբանությամբ անարգեցին Աղբիանոս մեծ եպիսկոպոսին, և որ ամենակարևորն է՝ ո՞րն էր պատճառը արքունի կալվածքների գրավման և ավերման: Սրանք հարցեր են, որ կասկածի տակ են դնում կղերական վարկածը: Հատկապես, երբ այդ ամենին ենք միացնում Աղթամարում Բզնունիների և Ռշտունիների կոտորածը: Խորենացին մեզ անուղղակի ցույց է տալիս Հայկից սերված երեք տոհմերի ոչնչացման բուն պատճառը: Այն կապված էր Վրթանեսի անձի հետ և տեղի ունեցավ Տարոնում՝ նրա դեմ կազմակերպված անհաջող մահափորձից անմիջապես հետո: Պատմելով, թե ինչպես նախարարների թելադրությամբ կազմակերպված ծուղակից բարեհաջող կերպով գլուխն ազատելով Վրթանեսը անցնում է Եկեղյաց գավառ, Պատմահայրը, որ մինչ այդ չէր նշել դավադիր նախարարների անունները, անմիջապես խոսում է ոչնչացած երեք տոհմերի մասին, որոնց վրա ողբալու համար էր Վրթանեսն անցել Եկեղիք[51]: Տոհմերի անուններն էին՝ Բզնունական, Մանավազյան և Որդունի, որոնք իբրև թե ոչնչացան մեկը մյուսի ձեռքով: Չկարողանալով նշել ոչնչացման բուն պատճառները՝ Խորենացին, այնուամենայնիվ, ակնարկում է դավադրության հետ դրանց կապի մասին: Թեպետ, չի բացառվում, որ հետագա խմբագրություններն եղծած լինեն բնագրի բուն տեքստը՝ որտեղից էլ, Պատմահոր համապատասխան նախադասության մեջ տեղ գտած տրամաբանական հակասությունը: Ուշադրություն դարձնենք. Բզնունիների ոչնչացման պատճառն, ըստ Պատմահոր, նույնն է՝ ինչ Մանավազյաններինն ու Որդունիներինը: Այսինքն, չի եղել և ոչ մի դավաճանություն: Պետության և արքայական իշխանության փառքը գովերգող մեր միակ պատմիչը, որի համար պետական դավաճանությունն աններելի մի հանցանք է, երբեք առիթը բաց չէր թողնի դատափետելու Բզնունյաց

[51] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԺԵ.:

նահապետին, եթե նա իրոք դավաճանած լիներ: Չմոռանանք, որ Պատմահայրը ձեռքի տակ ունեցել է Փավստոսի գիրքը, և ամենայն բծախնդրությամբ քաղել այն, ինչ համարել է արժանահավատ: Արդյոք առավել տրամաբանական չէ՞ր լինի փոխանակ Փավստոսի միակողմանի նկարագրությանը՝ հաշվի առնել նաև Պատմահոր հաղորդած տեղեկությունները: Բզնունիների ոչնչացումը բացատրել այդ տոհմի նահապետի դավաճանությամբ, Մանավազյանների և Որդունիների որձատումը՝ թագավորի և մեծ եպիսկոպոսի հանդեպ նրանց արհամարհալից վերաբերմունքով, կղերական պատմիչին հատուկ, հաճախ կրկնվող հնարքներ են: Դեռ կտեսնենք, որ Փավստոսն, ընդհանրապես, եկեղեցական կարգերին հակառակվող կամ ոչ քրիստոնյա ցանկացած անձի և տոհմի պախարակելու համար՝ չի տատանվել անցնելու բարոյականության և առողջ տրամաբանության ոչ մի սահման: Դատաբենն երկրին չի դավաճանել, այլապես՝ Մանաճիհր Ռշտունին չէր պատսպարի նրա տոհմը: Ավելին՝ Դատաբենին զորք չի վստահվել պարսից բանակի դեմ դուրս գալու համար, այն պարզ պատճառով, որ հայոց հարավային բանակի հրամանատարը Մանաճիհր Ռշտունին էր: Մանավազյանների և Որդունիների բնաջնջումը ներկայացվել է, իբր միջտոհմային անիրավ պատերազմի և արքային անպատվելու, իսկ Բզնունիներինը՝ պետական դավաճանության հետևանք: Այնինչ, պատկերը շատ պարզ է, երբ համադրում ենք բոլոր հակասություններն ու ուշադրություն դարձնում Խորենացու ակնարկին: Պարզապես ակնհայտ է, որ խոսք է գնում Վրթանեսի և Կոտակի կողմից Հայաստանի վանականացման արյունոտ քաղաքականության մասին: Դեպքերի հաջորդականությունն ուրվագծվում է հետևյալ կերպ. երեք տոհմերը, որոնց տիրույթներում դեռ չէր հիմնավորվել եկեղեցին, օգնում են հայոց թագուհուն՝ Վրթանեսից ազատվելու: Դավադրությունը բացահայտվում է և Վրթանեսն առիթը չի կորցնում Հարքին,

Բզնունիքին և Որդորուին տիրանալու համար: Արյունահեղ պատերազմի ընթացքում, ուր այս տոհմերի դեմ ելել էր եկեղեցու ողջ ուժը՝ Վաչէի գլխավորությամբ, Հայկյանները պարտվում են: Աղբիանոսի քայլը՝ հանդարտեցնելու նախարարներին, ըստ երևույթին, եղել է Կոտակի հուսահատ փորձը Վրթանեսի ծավալած արյունահեղությունը կասեցնելու համար: Հպարտ իշխանները անարգելով քրմի քրիստոնյա որդուն և ավերելով արքունի տունը Տարոնում, պարզապես Կոտակին ցույց են տվել արհամարհանք մի արքայի հանդեպ, որը դարձել էր կղերականների ստրուկը և ի զորու չէր զսպելու քահանայապետին: Դա հուսահատ մի քայլ էր, որին հետևեց դաժան հաշվեհարդարը: Վրթանեսն առիթը բաց չթողեց Աղթամարում պատսպարված Բզնունիների հետ միասին հաշվեհարդար տեսնելու նաև Ռշտունիների հետ. Հակոբ Զգոնի նզովքը հարկավոր էր ի կատար ածել: Եվ կոտորվեցին Մանաճիհրն ու ընտանիքը: Փրկվեցին, սակայն, երկու որդիները՝ Զորան ու Մեհենդակը: Սա է պատճառն այն խառնաշփոթ հակասության, որ ըստ Թովմա Արծրունու՝ Տիրանի օրոք փրկված երեխան Մեհենդակն էր: Իրականում, Տիրանի տարիներին կատարվածի նկարագրության հիմքում՝ անցյալում, Կոտակի և Վրթանեսի իրականացրած կոտորածների արձագանքն է պահպանվել: Մամիկոնյանների անվան շահարկումը Փավստոսի և Թովմայի մոտ՝ նույնպես Մանաճիհրի դեմ կատարվածի արձագանքն է: Հնարավոր է, որ փրկված Զորային և Մեհենդակին փախցրել են Տայքի Մամիկոնյանները: Սա շատ հավանական է եթե հաշվի առնենք, որ հեթանոս տոհմերի միջև պետք է, որ լինեին հոգևոր և բարեկամական կապեր: Տայքի հեթանոս Մամիկոնյաններն, ինչպես կտեսնենք, այդ շրջանում որևէ առնչություն չունեին Տարոնի իրենց տոհմակիցների հետ:

Զորա Ռշտունու պատժի տրամաբանական վարկածն, այսպիսով, Խորենացու մոտ է: Տիրանի հրամանով Ռշտունյաց

տոհմը չի բնաջնջվել: Կոտորել են միայն Զորայի ընտանիքին: Իսկ ինչ վերաբերվում է Զորայի ընտանիքից մանկահասակ երեխայի փրկության պատմությանը, ապա այստեղ ևս տրամաբանական է Խորենացու վկայությունը: Երեխային վաղորոք փախցրել էին նրա դայակները: Փավստոսն ասում է, թե արքայի մարդիկ գտնում են նրան, խլում դայակներից և բերում արքունիք, որից հետո միայն՝ Արտավազդ և Վասակ Մամիկոնյանները փախցնում են նրան: Արտավազդը Վաչէի որդին էր՝ Տարոնից, իսկ Վասակը՝ Տայքից: Լեոն կարծում է, թե Վասակի հոր անունն էլ Արտավազդ էր[52]: Եթե դա այդպես է, ապա նրա անվան հիշատակումն արդեն ուղղակիորեն աղերսվում է Մեհենդակ Ռշտունու փախուստին, իսկ Տաճատին, որը կարող էր և լինել Զորայի որդին, փախցնում են Տարոնի Մամիկոնյանները՝ ապաստան տալով իրենց մոտ: Բացի դա, կարծում եմ, դայակների ձեռքից երեխային փախցնելու միջադեպի նկարագրությունն արհեստական է և ի սկզբանե միտված է եղել բացատրելու մեկ հանգամանք. այդ ինչպե՞ս եղավ, որ չնայած ողջ տոհմի կատարյալ բնաջնջմանը, մեկ հարյուրամյակ էլ չանցած, կրկին հանդիպում ենք Հայաստանի քաղաքական կյանքում ազդեցիկ դերակատարություն ունեցող Ռշտունյաց իշխաններին: Այն, որ Տայքի Վասակի անվան շահարկումն անհիմն է՝ երևում է թեկուզ այն փաստից, որ Զորայի պատիժը եղել է Հուսիկի և Դանիելի հետ կապված դեպքերից հետո՝ մինչև Փառենի ձեռնադրումը: Բուզանդի խոսքերով, Վասակը երեխաներին փրկելով՝ փախավ Տայք: Այնինչ, Փառենին Կեսարիա ուղեկցող նախարարների ցուցակում, Վասակն ու Մեհենդակը նշվում են, որպես ավագագույն ու պատվավոր նահապետներ:

Իմիջիայլոց, փրկված երեխայի «Տաճատ» անվանումը խիստ կասկածելի է և չի համապատասխանում Փավստոսի

[52] Լեո. Երկեր, հտ. Ա, էջ 443:

հետագա շարադրանքին: Նկարագրելով Մեհրուժանի և Վահանի «չարագործությունները», նա հիշատակում է ոմն Գարեգին Ռշտունու, որին Մամիկոնյանները կնության էին տվել իրենց Համազասպուհի քրոջը: Հավանական է, որ սա հենց Զորայի ընտանիքի վերջին շառավիղն էր:

Տիրանը չէր կարող հրամայել ոչնչացնել Ռշտունյաց տոհմը: Նա դաժանորեն, բայց արդարացի պատժել է դավաճան Զորայի ընտանիքին՝ նրան փոխարինելով Մեհենդակով: Շեշտում եմ, Զորայի փոխարեն Անձիտի տեր Սաղամութին նշանակելու՝ Խորենացու հիշատակված փաստը խոսում է ոչ թե այն մասին, որ Ռշտունյաց կալվածքներն են անցել Անձիտի իշխանին, այլ Զորայի պաշտոնը՝ հայոց հարավային զորքերի հրամանատարությունը: Ստանալով տոհմի նահապետությունը՝ Մանաճիհրի որդի Մեհենդակն այն օգտագործում է միմիայն պետական շահին ծառայեցնելով:

Անունների և դեպքերի ողջ շփոթի նպատակ էր նաև կոծկել Կոտակի և Վրթանեսի նախկին «հերոսությունների» բուն դրդապատճառը:

Պատմահայրը Արծրունիների բնաջնջման մասին պարզ պատճառով ոչինչ չի խոսում. տոհմը չէր բնաջնջվել: Դեպքերից քարորդ դար էլ չի անցնի, երբ կհանդիպենք «Արծրունյաց ցեղից մեծ նախարար Մեհրուժանին»[53]: Եվ սա այն դեպքում, երբ տոհմը գլխովին բնաջնջված պետք է լիներ՝ մնալով միայն մանուկ Շավասպի հույսին: Պարզապես անմտություն է կարծել, թե սպառված տոհմի նահապետը կարճ ժամանակ հետո կդասվեր հայոց մեծ նախարարների շարքում: Ստ.Մալխասյանը Մեհրուժանին համարել է Վաչէ Արծրունու՝ կոտորածից մազապուրծ որդի Շավասպի զավակը[54]: Սակայն, 360-ականների կեսերին մեծազոր նախարար Մեհրուժանը դժվար թե լիներ հազիվ քսանը բոլորած Շավասպ Արծրունու որդին: Շավաս-

[53] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԳ:

[54] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ծանոթ. 105:

պին դեռ կհանդիպենք հայոց պետականության դեմ եկեղեցու մղած պայքարում, իբրև կույր գործիք՝ Ներսես քահանայապետի ձեռքում: Եվ կհանդիպենք Տարոնի եկեղեցական կալվածքներում, բայց ոչ երբեք Տայքում: Մեհրուժանը, որ գէս էր կրում, վկայում էր իր դիցապաշտ լինելն, ու ազգային հավատքի և նրա թաքնատեսական արվեստի ոչ միայն գիտակն էր, այլ նաև՝ բանեցնողը, երբեք չէր կարող դաստիարակված լինել Մամիկոնյան տնփեսա Շավասպի ընտանիքում: Եվ սա այն դեպքում, երբ Շավասպի՝ եկեղեցական կալվածքներում ձրիակերությամբ զբաղվելու տարիներին, Մեհրուժանը հայոց մեծ նախարար էր՝ Արծրունյաց նահապետը:

Եթե Զորային հետևել է նաև Վաչէ Արծրունին, ինչը ենթադրվում է Փավստոսի շարադրանքից, ապա բնականաբար, պատիժն անխուսափելի պետք է լիներ և ոչ պակաս մեղմ, քան Զորայի ընտանիքին հասածը: Հապա ինչպե՞ս է, որ Խորենացին Զորայի հետ միասին չի պատմել նաև Արծրունիների կոտորածի մասին: Մի՞թե միայն նրա համար, որ Մամիկոնյաններին ատելու մեջ մեղադրվող Պատմահայրը չի ցանկացել նշել պատանի Շավասպին փրկող «մեծահոգի ասպետների» անունները: Ոչ, իհարկե: Ամեն ինչ պարզ է դառնում, երբ աչքի ենք անցկացնում Գահնամակը[55]: Այն ընդգրկում է Արծրունյաց երեք տոհմ, ավելի ճիշտ՝ տոհմի ևս երկու ճյուղավորում: Խոսքն այն մասին է, որ Վաչէ Արծրունին՝ այդ հզոր տոհմի ճյուղավորումներից մեկի գլխավորը, միաբանված Զորա Ռշտունուն, դավաճանել է սեփական պետությանը: Դրան հետևել է նրա ընտանիքի արժանի պատիժը: Դե իսկ մանուկ Շավասպն էլ, ապաստանած Տարոնի Մամիկոնյանների մոտ, հետագայում սերտորեն համագործակցեց նրանց հետ՝ դառնալով նրանց և եկեղեցու հայրերի կամա-

[55]Հայ ազնվականության գահերեցության կարգն ու դրանց առնչվող բավականին խրթին հակասությունների ուսումնասիրությունը մանրամասն տես գրքի հավելվածում:

կատարը: Իսկ Արծրունյաց բուն տոհմը՝ զորեղ ու ազդեցիկ, Տիրան արքայի դեմ խժդժություններին չի մասնակցել: Այլ հարց է, որ Մամիկոնյանների ու Գրիգորի տոհմի գովքն անող Փավստոսը ցանկացել է Հայկյան այս տոհմը հավետ պարտապան դարձնել Մամիկոնյաններին ու եկեղեցուն:

Որ Տիրանի դեմ ընդվզումները կազմակերպված էին Գրիգորի տոհմի սադրանքով՝ կասկած չի կարող լինել: Բավական է միայն կարդալ Զորայի կոչը՝ ուղղված նախարարներին. *«Չվարվենք այն մարդու հրամանով, որ գայթակղություն է գցում Քրիստոսի երկրպագության մեջ և սպանում է նրա սրբերին, և չուղեկցենք այս ամբարիշտ թագավորին»*[56]:

Կոչին հետևեց միայն Վաչէն, իսկ ավագ Արծրունիները՝ Մեհրուժանի ընտանիքը, մյուս բոլոր նախարարների պես, չարձագանքեցին Զորային: Հոր սպանությունից հետո Վրթանեսի կամքով Ռշտունիքը բռնի քրիստոնեացրած Զորան, որ հիմա էլ՝ Վրթանեսի տոհմի սադրանքով դուրս էր ելել հայոց արքայի դեմ, պատժվեց դաժանորեն, բայց արդարացի: Տիրանը բնի մեջ խեղդեց դժգոհությունները՝ թույլ չտալով, որ երկիրը հրդեհվի ներքին բախումներից:

Եզրափակեմ. «չարանենգ Հայր Մարդպետն ու արյունարբու Տիրանը» արագ և խիստ կերպով զսպում են պետության դեմ սանձազերծված խռովությունները՝ պատժելով մեղավորներին: Եվ միայն այսքանը: Տիրանը երբեք չի ոչնչացրել հայկական բնիկ տոհմերին: Ժամանակն է նրա վրայից քերել այս մեղադրանքը: Յուրայինների դեմ արքան չէր կռվում: Նրա թշնամին այլ ծագում ուներ, և գալիս էր բոլորովին այլ տեղից:

ԺԱ

Արքունիքում հասկանում էին, որ եկեղեցուն բարձիթողի անելը հղի է վտանգավոր հետևանքներով: Տիրանն ու իր շուրջ համախմբված նախարարները՝ թեպետ հեթանոս, սակայն

[56] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԺԵ.:

լավ էին գիտակցում, որ քրիստոնեության դեմ կենաց-մահու պայքարով՝ երկիրը կվերածեն սպանդանոցի: Հարկավոր էր հասնել եկեղեցու նկատմամբ բացարձակ վերահսկողության՝ երկիրն առժամանակ ներքին ցնցումներից հեռու պահելու համար: Եվ Տիրանը գտավ այն ուժը, որն իրեն այնքան անհրաժեշտ էր: Դա Աղբիանոսյանների տոհմն էր:

Ագաթանգեղոսը հիշում է Գրիգորի կողմից եպիսկոպոս ձեռնադրված քրմերի 12 զավակի[57]: Աղոնցն իրավացի կարծում է, որ ցանկը աղավաղված է: Դա առաջին հերթին վերաբերվում է քրմական ժառանգների անուններին: Էականն այն է, որ արաբերեն «Վարքը» լրացուցիչ թույլ է տալիս պարզել, որ նշյալ 12 եպիսկոպոսներին՝ բացի Աղբիանոսից, Գրիգորը նշանակեց հարավ-արևմտյան թեմերում: Պատճառը հետևյալն է. նախ, այդտեղ դեռ շատ ուժեղ էր ազգային հավատքի հետևորդների դիմադրությունը, քրմերի սերունդների միջոցով Գրիգորը հույս ուներ առավել հեշտ «դարձի բերել» հեթանոսներին: Եվ հետո կործանված մեհյանների այն քրմերը, որոնք չէին ցանկացել լքել երկիրը և անցնել Կովկաս՝[58] շրջում էին հիմնականում Տարոնի, Բարձր Հայքի, Ծոփքի և Աղձնիքի լեռներում՝ հաճախ կազմակերպելով տեղական ընդվզումներ նորաստեղծ եկեղեցական թեմերի դեմ: Նրանց զավակներին կարգելով այդ թեմերի վրա՝ Գրիգորը նաև նպատակ էր հետապնդում քրմերին հաշտեցնել կատարվածի հետ: Աղբիանոսին թեև ձեռնադրում է Արածանու կողմերում, բայց հակառակ ընդունված կարծիքի, թեմ չի տալիս: Աղբիանոսը մնում է արքունիքում՝ իբր արքունի հոգևորականների գլխավոր և կաթողիկոսական

---

[57] Ագաթանգեղոս. Պատմություն Հայոց. էջ 140:

[58] Ըստ Վ. Լալայանի, սա կարևոր հիշատակում է կովկասյան ազգերի մոտ հայոց դիցական հավատալիքներն ու բանահյուսությունը վերհանելու գործում (Հայոց դիցաբանության և քրիստոնեության համեմատություն. Ե., 2009):

տեղապահ[59]: Հետո միայն՝ Խոսրով Կոտակի օրոք, Վրթանեսն Աղբիանոսի տոհմին նվիրեց Մանավազյաններից խլած Հարքը՝ Մանազկերտ կենտրոնով: Այսուհետ Աղբիանոսի ժառանգները կոչվում էին նաև Մանազկերտցիներ: Եկեղեցու ներսում գոյություն ունեցած հոսանքները թեև ժամանակի առումով միմյանցից առանձին թափանցեցին Հայք, բայց Գրիգորի ջանքերով որոշ ժամանակ գտնվում էին հաշտ ու խաղաղ գոյակցության մեջ: Սիրաշահելով ասորիներին՝ Գրիգորին հաջողվեց տևական ժամանակ իր տոհմի գերակայությունն ապահովել նրանց նկատմամբ: Աղբիանոսյանների տոհմը եկեղեցում սկիզբ դրեց երրորդ՝ զուտ ազգային ուղղության:

Հենվելով սոսկ այն փաստի վրա, որ Փառենը եղել է Աշտիշատի եկեղեցու երեց՝ Ադոնցն Աղբիանոսյանների տոհմը նույնացնում է ասորական եկեղեցու հետ: Ավելին, նույնիսկ ենթադրում է, թե չի բացառվում նրանց ասորական ծագումը[60]: Այն, որ Փառենը սկզբում ծառայել է Տարոնում՝ նրա ազգային պատկանելության մասին դատելու հիմք չի տալիս: Վաղարշապատում և Դվինում վխտում էին ասորի կղերականներ, բայց դա ամենևին չի նշանակել, թե Սահակն ու Մաշտոցն ասորական ծագում ունեին կամ ասորական եկեղեցու հետևորդ էին: Լեոն՝ ընդհակառակը, եզրակացրել է, որ Աղբիանոսյանները բուն ազգային տարրն էին եկեղեցում և միակն էին՝ ում ընդունում էին ազգային արժեքներով ապրող իշխանները[61]: Ադոնցը մեկ այլ դեպքում խոստովանում է. *«Աղբիանոսի տոհմի քաղաքականությունը՝ գերազանցապես Արշակունիների քաղաքականությունն էր, որը և դարձավ ազգային հիմք՝ ծառայելով հայկական եկեղեցու կազմակերպմանը»*[62]: Որ Աղբիանոսի տոհմը եկեղեցի բերեց քրմական նախնիներից

---

[59] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, էջ 140:

[60] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 390:

[61] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 425:

[62] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 392:

եկող ազգային մեծ ժառանգություն՝ անժխտելի է: Այս տոհմից առաջ քաշված կաթողիկոսների աթոռակալությունները մեր պատմության այն եզակի կարճատև շրջաններն են, երբ եկեղեցին և հայոց պետությունը ապրել են հաշտ գոյակցության, փոխշահավետ համագործակցության պայմաններում: Դա, ինքնին, շատ խոսուն փաստ է:

Ահա այս տոհմից էլ Տիրանն առաջ է քաշում նոր կաթողիկոսի թեկնածուին: Փառենն էր նա՝ մինչ այդ Աշտիշատի երեցը: Գրիգորի տոհմն, այսպիսով, դուրս մղվեց ասպարեզից: Ըստ երևույթին, պարսկական օրեցօր աճող վտանգին դեմ-հանդիման, կամենալով ցուցադրել Հռոմի հանդեպ լոյալությունը, Տիրանը համաձայնվեց Փառենին ուղարկել Կեսարիա՝ ձեռնադրվելու: Երկրի 10 ավագագույն իշխաններից կազմված շքախումբը գլխավորում էին Հայոց աշխարհի չորս ամենահեղինակավոր նախարարները՝ Մամիկոնյան Վասակը Տայքից, Մեհենդակ Ռշտունին, Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականը[63]: Խիստ է արտահայտվում Բուզանդը Փառենի հասցեին: Նա ընկերանում էր թագավորին, չէր նախատում, չէր հանդիմանում և չէր հակառակվում նրա չար գործերին: Դա Փավստոսի համար մեծ արատ է, նշան՝ կաթողիկոսի վախկոտության:

Շատ կարճատև էր Փառենի աթոռակալությունը: Նրա մահից հետո տեղապահ նշանակվեց Շահակ Մանազկերտցին: Հայր Մարդպետի գլխավորած տաս ավագ նախարարների շքախումբը նրան ուղեկցեց Կեսարիա ձեռնադրելու: Սակայն, դա արդեն Տիրանի որդու՝ Արշակ Բ օրոք էր: Սոսկ նշեմ, որ Շահակն էլ բարի խոսքով չի հիշվում կղերական մատենագրության կողմից՝ միևնույն պատճառներով: Ավելին, Փավստոսն ակնարկում է, որ նա հանգիստ էր նայում այն բանին, թե ինչպես Հայոց աշխարհում ծաղկում է հեթանոսությունը[64]:

---

[63] Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, ԺԶ.:

[64] Նույն տեղում, ԺԷ.:

Ահա այսպես. Հուսիկի և Դանիելի մահը, Գրիգորի տոհմի հրահրած նախարարական խռովությունների ճնշումն ու Աղբիանոսյանների կաթողիկոսական աթոռին տիրանալը՝ տվեցին իրենց արդյունքը. երկիրը խաղաղվեց: Սակայն, չնայած ստացած հարվածներին՝ եկեղեցին կարողացավ ճիշտ օգտագործել իր կորուստները. Հուսիկն ու Դանիելը սրբացան՝ վերածվելով Չարի դեմ մարտնչող նահատակների: Տիրանի անունը դարձավ անօրենության խորհրդանիշ: Նրա գահակալման տարիները ներկայացվեցին իբրև սարսափելի մղձավանջի մի ժամանակաշրջան, նրա իշխանները՝ Չարի որդիներ, իսկ պետությունը՝ անմիտ ու անօրեն: Հենց Տիրանից սկսեց եկեղեցին տարփողել Հայոց պետականության անիմաստության գաղափարը: Տիրանը գիտակցում էր, որ չհաղթեց Գրիգորի տոհմին: Հասկանում էր, բայց չհամակերպվել չէր կարող: Կրքերն առժամանակ հանդարտվել էին, և հարկավոր էր մտածել պետության հզորացման մասին: Արքային այդպես էլ չհաջողվեց շարունակել սկսած գործը. շատ կարճ ժամանակ էր մնացել Տիրանին թագավորելու...

ԺԲ

... Եվ մինչ երկու թագավորների մեջ խաղաղություն էր տիրում՝ աստված բարկանալով վրեժխնդիր եղավ, որպեսզի անօրեն Տիրանը տուժե երկու մեծ քահանաների ու առաջնորդների անմեղ մահվան և արյունի համար[65]:

Տեսնու՞մ եք, թե ինչպես, մահվանից հետո անգամ՝ երկու «սրբերը» հանգիստ չէին տալիս արքային: Պետականամերժ, ազգակործան այն գաղափարախոսությունը, որ արքայի վախճանն ու պետականության կորուստն անգամ համարում է աստծու վրեժ՝ եկեղեցուն հասցրած հարվածների համար: Պետության ու թագավորի ստորադասությունը եկեղեցուն և

[65] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ի.:

իր մոլագար «սրբերին»՝ ահա այս տողերի ողջ իմաստը:

Անհայտության թանձր մշուշով է պատված Տիրանի վախճանը: Պատմիչներից յուրաքանչյուրը տարբեր կերպ է ներկայացրել այն: Սակայն բոլորն են համաձայն մի հարցում. նա կուրացվել է և բանտարկվել Պարսկաստանում 350թ.: Արդյո՞ք դրան նախորդել է Շապուհ Բ բանակի ներխուժումն Հայաստան, թե՞ Տիրանին խաբեությամբ Տիզբոն կանչելուց և կուրացնելուց հետո է Շապուհը զորք ուղարկում մեր երկիր, ինչպես հաղորդում է Խորենացին՝ դժվար է ասել: Ստույգ է մի բան. 350թ.,Շապուհի ներխուժման նախօրյակին Տիրանին լքել էին աշխարհատեր նախարարների մեծ մասը: Արքունի փոքրաթիվ զորքի գլուխն անցած Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականն էին կրկին, որ ստանձնել էին երկրի պաշտպանությունը: Փավստոսի երկար ու ձիգ պատմությունն արքայի ճարտուկ ճանճկեն ձիու և դրա պատճառով՝ Ատրպատականի մարզպանի ձեռքով արքայի կուրացման ու պարսից դեմ ծագած պատերազմի մասին, երևակայական ոլորտից են: Փավստոսը Տիրանի կուրացման պատճառ է համարում սենեկապետ Փիսակ Սյունու բանսարկություններն Ատրպատականի մարզպանի մոտ, որի շարժառիթն արքայի ձին էր՝ աննման գեղեցկությամբ և հազվագյուտ տեսքով: Խորենացին, պատմելով Շապուհի կողմից Տիրանին կուրացնելու մասին, նշում է, որ ապա Շապուհը հայոց արևելյան զորքերի հրամանատար նշանակեց իրեն հավատարիմ Վաղինակ Սյունուն[66]: Հնարավոր է, որ Վաղինակը Փավստոսի մոտ պարզապես դարձել է Փիսակ (գուցեն՝ «փիս», «վատ» իմաստով): Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա չի բացառվում, որ հակառակության պատճառ եղած լինի սյունյաց հռչակավոր այրուձին: Այն, որ արքային լքողներից առաջինը Վաղինակն էր՝ գուցե նրան Շապուհի ձեռքը մատնողը, երևում է թեկուզ միայն նրանից, որ գահակալելուց հետո Արշակ Բ

[66] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԺԸ.:

առաջին գործերից մեկն է լինում Վաղինակի սպանությունը և նրա փոխարեն Անդովկին Սյունյաց նահապետ ճանաչելը: Այս ենթադրությունները զուրկ չեն որոշակի հիմքից: Ամեն դեպքում կատարվեց այն, ինչի համար աղոթում և ինչին այդպես սպասում էին Տիրանից դժգոհ «սրբակենցաղները»: Տարվելով Տիզբոն՝ արքան կուրացվեց և մնաց բանտարկված:

«Տիրանը, որ աղտոտվել էր պղծությամբ, մատնվեց Շապուհի ձեռքը, կուրացած ապրեց և ապա մահացավ՝ ըստ արժանվույն սուրբ Վրթանեսի, Հուսիկի և մեծն Դանիել քահանայի դեմ գործած իր արարքների»[67]:

Ահա այսպես. Հայաստանյայց եկեղեցին ցնծության մեջ էր: Իսկ պարսից բանակը հեղեղել էր հայոց «կամակոր ազգի» «անմիտ թագավորությունը»:

ԺԳ

Աշտիշա՛տ. Ցուլ լեռան դիմաց, Վահագնի բագինից մեկ քարընկեց հեռավորությամբ դեպի ներքև ձգվող ձորակն անհիշելի ժամանակներից ծածկված էր հացենու նվիրական ծառերով: Հացյաց դրախտն էր դա՝ Վահունյաց քրմերի սրբազան պուրակը: Անուշահամ մի աղբյուր էր բխում այդ պուրակում: Հայոց աշխարհի սրբազնագույն վայրերից էր Աշտիշատն իր պուրակով: Այստեղ՝ իր սենյակում, չքնաղ Աստղիկն անհամբեր սպասում էր հայոց քաջերին ռազմի դաշտ տարած Վահագնին: Այստեղ էր Վահագնն արբում իր պատվին հեղված ազնիվ գինու առատ շիթերից: Արշավանքի մեկնող Հայկյան ահարկու գնդերը այստեղով էին անցնում՝ հաղթանակ և ուժ ստանալու հզոր Վահագնից: Հացյաց դրախտում էին ճեմում իմաստուն Վահունիները, խմում աղբյուրի կենարար ջրից և ունկնդրում սրբազան ծառերի խորհուրդներին: Աշտիշատից էր օրն ի բուն սփռվում Հայոց աշխարհին փառք և բարօրություն, հայ տիրակալներին կամք

[67] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց Տան, էջ 80:

և զորություն, հայ ռազմիկներին ուժ և հաղթանակ պարգևող աստվածահաճո օրհնությունը իմաստուն քրմերի: Փառավորվում էր հայոց հին հողը: Գահեր էին սասանում և աշխարհակալություններ կործանում հայոց արքայից արքաները: Իրենց քրմերի իմաստնություններն ու մեհյանների լույսն էին աշխարհով մեկ սփռում հայ ռազմիկները: Կանգուն էր Հայքը, հպարտ էր հայը, և կենսախինդ էր նրա հավատքը:

Մեկ ակնթարթում փոխվեց ամեն բան: Կործանվեցին բագինները: Երամներ կազմած՝ չվեցին քրմերն հեռավոր եզերքներ: Աստղիկն այլևս չէր զբոսնում Հացյաց դրախտում: Չէր հեղվում գինին Վահագնի պատվին. արշավանքների սովոր հայոց գնդերը մկրտվելու համար էին սոսկ այստեղ հավաքվում: Աշտիշատն այլևս լույս և հավատ չէր սփռում Հայոց աշխարհի վրա, այլ միայն՝ ողբ, կական և հսկայական խաչի մահագույն մի ստվեր: Իսկ զինվորին ու շինականին կյանք և ուժ պարգևող աղբյուրը ձորակի, որ խառնվելով պուրակի սուրբ հողին՝ պտղաբերություն էր տալիս Հայոց աշխարհին, այլևս անուժ էր: Հացյաց դրախտը հավիտյանս զրկվեց իր աստվածատուր զորությունից. Այն պահից, երբ փոխվեցին նրա տերերը, այն պահից, երբ սրբազան աղբյուրի կողքին սկսեցին փտել ոսկորները ատելավառ մի մոլագարի:

Ասորի Դանիելն է այնտեղ թաղված՝ հայոց հողն ու ազգը պատուհասած անիծյալ ծերունին: Հացյաց դրախտի սուրբ հողն է պղծել իր ոսկորներով: Եվ թույն, նզովք ու դժբախտություն է արտաժետում իր գերեզմանից: Նախանձն ու չարությունն են դարեր շարունակ պարարտանում այստեղ: Եվ հրճվանքով հետևում է ասորին հայոց սահմանների ցրիվ գալուն, Հայկյան սերունդների՝ իրենց փառքերից զրկվելուն...

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
ՈՒՐԱՑՅԱԼՆԵՐ
ԱՐՇԱԿ ՄԵԾ

Կենդանույն թագավորությունիցդ զրկվիս և չարչարանքներ կրես՝ քո Տիրան հորից ավելի, և դառն մահվամբ՝ մեծ ներողության մեջ կյանքդ վերջացնես ...

Զարհուրելի է, այնպես չէ՞: Սա հայոց արքային ուղղված հայոց կաթողիկոսի հայրական «օրհնանքն» է: Անպատժելիությունից լկտիացած կղերականը թույլ է տալիս այն, ինչն արդեն իր հայրերի ու պապերի շնորհիվ դարձել էր «բարի» ավանդույթ: Նզովքի պատճա՞ռը. հպարտ արքան վճռել էր իր երկիրն ինքնուրույն կառավարել, ստեղծել կենտրոնացված ու հզոր մի պետություն: Եվ հանդգնել էր խորտակել այն ամենն, ինչն իրեն կխանգարեր այդ ճանապարհին: Ու այնքան ապերախտ էր, որ թքած ուներ այդ մասին՝ եկեղեցու հատուկ կարծիքի վրա. մտածելն անգամ ահավոր է: Ամեն ինչ վերսկսվեց 350թ.:

Ա

Սյունյաց իշխան Անդովկը, մի դրոշի տակ միավորելով այն փոքրաթիվ նվիրյալներին, ում համար հայոց պետականությունն իրենից դեռևս ինչ-որ արժեք էր ներկայացնում, իր ուսերին վերցրած երկրի պաշտպանության գործը՝ հզոր մի դիմադրությամբ կասեցրեց Տիրան արքային խաբեությամբ գերեվարած ու անտեր մնացած Հայաստանն ասպատակող Շապուհ Բ-ի առաջխաղացումը: Այս գործում նրա օգնականն էր Արշավիր Կամսարականը: Նրանք դիմել էին նաև Հռոմի օգնությանը, որն, իհարկե, պարսից դեմ հայերին օգնական զորք ուղարկելու առիթը չէր կորցրել: 350թ. Ոսխայի ճակատամարտում ջախջախելով պարսկական բանակը՝ հայոց ուժերին հաջողվում է ձեռք գցել նաև արքայի ողջ կանանոցը:

Այս բանից հետո միայն, հաշտվելով ստեղծված իրավիճակի հետ, Շապուհն ստիպված էր համաձայնել իշխան Անդովկի ներկայացրած բոլոր պայմաններին՝ այն է. դադարեցնել պատերազմն հայոց դեմ, ազատ արձակել Տիրան արքային և ճանաչել նրա գահակալական իրավունքները: Տիրանի պահանջով, սակայն, հայոց գահին է նստում Արշակը՝ երեք որդիներից միակն, ով իր հետ էր՝ գերության մեջ[68]:

Արշակին էր վիճակված վերսկսելու այն, ինչ չհաջողվեց Տիրան հորը: Իսկ անելու շատ բան կար, սկսել հարկավոր էր զրոյից: Նախարարների մի մասը տոհմերով լքել էին հայոց սահմանները՝ անցնելով Հռոմեական կայսրության արևելյան տարածքներ: Անտեր մնացած երկիրը վերածվել էր ներքին արյունոտ բախումների թատերաբեմի, ուր մնացած ազնվականները՝ մոռացած արտաքին վտանգը, զբաղված էին իրենց տոհմական հարցերը կարգավորելով:

Արշակն անմիջապես սկսում է կարգավորել երկրի ներքաղաքական խառնաշփոթությունը: Ամուր կենտրոնաձիգ իշխանություն ստեղծելու համար նրան հարկավոր էր հնարավորինս շուտափույթ լուծել եկեղեցու ջանքերով առաջացած այն բոլոր վեճերը, որ առկա էին ազնվական տների միջև: Հարկավոր էր վերջ տալ պետությանն անդունդի եզրին հասցրած երկպառակտչական պայքարին. պայքար հանուն տեղի, դիրքի և հարստության... Պայքար մեկ կողմից պետության հզորացման և անկախ Հայքի նվիրյալների, մյուս կողմից՝ այդ պետությանն այլևս չհավատացող, սեփական դիրքն ու աստիճանը՝ օտար տերերի միջոցով կարգավորել ցանկացող մանր ու մեծ իշխանիկների, պայքար Հայաստանակենտրոն քաղաքականության և տերեր փնտրելու դուրս եկած հունասերների ու պարսկասերների միջև: Կազմակերպչական մեծ ձիրք էր պահանջվում նորոգելու և վերագտնելու այն, ինչ քանդված

[68] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԱ.-Ա.:

ու կորցված էր նախորդների կողմից: Արշակին տրված էր այդ ձիրքը: Եռանդուն արքան սկսեց երկրի պառակտված ուժերը միավորելուց: Կարճ ժամանակում նրան հաջողվեց ետ կանչել Հայաստանը լքած կամ երկրի խորքերը քաշված նախարարներին: Ստիպելով բոլորին տեր կանգնել հայրենիքի հանդեպ ունեցած պարտավորություններին, Արշակը պահանջեց յուրաքանչյուրից պետությանը տալ Զորանամակով սահմանված մասնաբաժինը, այսինքն, սկսեց վերականգնել ու լրացնել պետական բանակը, որն, ըստ երևույթին, լուծարվել էր: Հարկ է նշել, որ Տիրանի գերեվարումից հետո պարսից բանակներին Անդովկն ու Արշավիրը դիմագրավում էին սեփական՝ փոքրաթիվ ուժերով: Անգամ Սյունյաց հռչակավոր զորագունդը, որ ըստ Զորանամակի առաջինն էր հայոց մեջ, Անդովկի հետ չէր. չմոռանանք, որ Անդովկը դեռ Սյունյաց նահապետը չէր: Եվ այսպես, վերականգնելով հայոց բանակի կազմն՝ Արշակն սկսում է ամրացնել երկրի սահմանները, ստեղծում կանոնավոր բանակ, որ հետագա տարիներին ահռելի ուժով ու մեծ համարումով դառնալու էր պարսից ու հռոմեաց տիրակալների սարսափի ու ակնածանքի առարկան:

Կարճ ժամանակում Արշակը կարգավորեց ազնվական տների միջև ծագած բոլոր վեճերը: Գահնամակում փոփոխություններ կատարելով վերասահմանեց յուրաքանչյուրի տեղն ու դիրքն՝ ըստ արժանավույն: Արքունի կյանքն ու պետական կառավարման համակարգը, որ կաթվածահար էին Տիրանի գահակալության վերջին տարում, մտան նորմալ հունի մեջ: Վերասահմանվեց գործակալությունների կարգը: Ուշագրավ է, որ գոհացնելով նախարարների սպասելիքները, Արշակը պետական կարևոր գործակալություններին մոտ թողեց սոսկ այն տոհմերին, որոնք դարերով էին ապացուցել իրենց արիությունն ու նվիրվածությունը հայոց պետությանը: Այս խնդրին կանդրադառնամ առավել հանգամանալից կերպով:

Բ

Մաղխազության գործակալությունը, որ արքունի թիկնազորի, արքայական գնդի հրամանատարությունն էր, տրվեց Խոռխոռունիների հինավուրց տոհմին: Նրանց տիրույթները տարածվում էին Բզնունիքի և Կոր գետի միջև՝ Նազուկ լճի մոտակայքում: Սա էլ հենց Խոռխոռունիքն էր՝ Հայկյան հնագույն զարմերի տոհմական բնաշխարհը: Խոռխոռունիքը սկզբնապես մտնում էր Հարք գավառի մեջ: Ավելի ուշ միայն, Ապահունիների և Բզնունիների հետ միասին, Խոռխոռունիները նույնպես անջատվեցին Հարքից՝ այն թողնելով Կոտակի օրոք բնաջնջված Մանավազյաններին[69]: Հատկանշական է, որ Խորենացին ևս այս չորս տոհմերին համարում է սերտ արյունակիցներ՝ նրանց ծագումը բխեցնելով հենց Հայկից[70]:

Թագադիր ասպետության կարգում վերահաստատվեց իմաստնությամբ ու պետականաշեն գործունեությամբ հայտնի Բագրատունյաց տոհմը: Մինչ օրս իբրև իրականություն ընդունվել է Բագրատունիների օտար՝ հրեական ծագման առասպելը: Բացարձակ անուշադրության է մատնված հայ ազնվական տոհմերի պատմության այնպիսի մի մասնագետի համոզիչ կարծիքը, ինչպիսին Ն. Ադոնցն է: Ուշադրության չեն արժանացել հենց Խորենացու շարադրանքում առկա ակնարկները այս տոհմի ծագման հետ կապված այլ տարբերակների մասին: Այն, որ Բագրատունիները բնիկ հայկական ծագման տեր են և իրենք ապրել ու գործել են այդ ծագման բարձր ու վեհ զգացումով՝ թվում է, պետք է, որ համարվեր անհերքելի մի ապացույց: Համառորեն արհամարհելով դրա օգտին խոսող բոլոր փաստերը, այսօր հային հրեա սարքող՝ դարն ապրած թեզերն են շահարկում շատերը: Որո՞նք են Բագրատունիների՝ Հայկյան ծագումի գլխավոր կռվանները:

---

[69] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 346:

[70] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Ա., ԺԲ.:

Ըստ Ադոնցի, Բագրատունիների նախահայրենիքը Բագրևանդն է: Նա սերտ աղերս է տեսնում Բագարատ և Բագրևանդ անունների միջև: Տիգրան Մեծի օրոք Բագարատը նշանակվեց Ասորիքի կառավարիչ: Այս փաստն էլ հենց Ադոնցը համարում է Խորենացու ներկայացրած՝ հրեական ծագման տարբերակի յուրօրինակ ռեֆլեքս[71]: Տիգրան Մեծը Ասորիքը կորցնելուց հետո Բագարատին է տալիս Հայաստանի հարավային սահմանների պաշտպանությունը: Բագրատունիների մի ճյուղն էլ հենց հաստատվել է Անգեղտանը[72]:

Ա. Մուշեղյանը Բագրատունիների օտար ծագման Խորենացու ներկայացրած սխալ վարկածի մեղավոր է համարում Կեղծ Մովսեսի հարուցած շփոթմունքը՝ բաբելոնացի քահանա Անանելոսի և Տիգրան Մեծի կողմից Ասորիքի փոխարքա նշանակված Բագարատի Անանոս որդու միջև: Հայազգի այս փոխարքայի մասին անտեղյակ Պատմահոր մոտ այս խառնաշփոթությունից ծնվում է Բագրատունի տոհմի հրեական ծագման գաղափարը[73]: Սա ճիշտ և ճիշտ համընկնում է Ադոնցի կարծիքին՝ ըստ որի, Խորենացու վարկածի պատճառը Բագարատի՝ Ասորիքի կառավարիչ լինելու փաստն է:

Ըստ Ա. Մուշեղյանի, Պատմահայրը մի կողմից համառորեն ժխտում է Բագրատունիների տոհմային ավանդությունը Հայկից սերվելու մասին և նրանց վերագրում հրեական ծագում, մյուս կողմից՝ նույն գլխում փառաբանում Հայկից սերված բնիկ հայ թագավորներին՝ համարելով իրեն արյունակից և սիրելի հարազատներ: Իրոք զարմանալի է մեկենասի հանդեպ Խորենացու նման վերաբերմունքը: Իսկ որ Բագրա-

---

[71] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 458-59:

[72] Հանգամանորեն քննելով Անանունի վկայությունները, Վ.Վարդանյանն եզրակացրել է, որ Բագրատունյաց տոհմի անունն ուղղակի աղերսվում է Անգեղ աստծո հետ (Տես՝ Բագրատունի տոհմի ծագմանը և գործառույթներին առնչվող մի քանի հարցերի շուրջ. ՊԲՀ. 2008, թ. 1):

[73] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 333-334:

տունիների տոհմային ավանդույթներն իրոք խոսել են Հայկից իրենց սերվելու մասին, վկայում է հենց այն բուռն երկխոսությունը, որ նամակների տեսքով ծավալվել է Պատմահոր և Սահակ Բագրատունու միջև: Ակնհայտ է, որ իշխանին դուր չեն եկել իր տոհմին օտար ծագում վերագրելու Խորենացու փորձերը[74]: Մուշեղյանն իրավացի ենթադրում է, որ հպարտ ու քաջարի Բագրատունիները մինչև վերջ էլ չընդունեցին այս անարդարությունը: Սա է պատճառը, որ նրանց մեկենասությամբ Պատմահոր գրած երկը նոր ծնունդ ապրեց ոչ թե Բագրատունյաց, այլ Արծրունյաց թագավորական տան շրջանում:

Հիշենք. ըստ Խորենացու, Վաղարշակը Բագրատունիներին կարգեց թագադիր ասպետներ, տվեց Հայաստանի արևմուտքի կուսակալությունը, դարձրեց բյուրավորներ և հազարավորներ[75]: Վաղարշակի անձին դեռ անդրադարձ արվելու է, իսկ առայժմ լոկ շեշտեմ, որ ըստ Ուխտանեսի, նրանից առաջ էլ կար Բագրատունյաց նախարարական տոհմը, որի անունը երկրորդն էր Գահնամակի ցուցակում: Արտաշես Ա Բագրատունիներին է տալիս նաև սպարապետության գործակալությունը[76]: Սեբեոսը Բագրատունիների ծագումը բխեցնում է Հայկյան Փառնավազից[77]:

Որպես ամփոփում մեջ բերեմ երբևիցէ այս տոհմին Պատմահոր տված լավագույն գնահատականը. *«... Որովհետև դու պատկանում ես նախնական և քաջ ազգի, արդյունավոր ոչ միայն խոսքի և պիտանի՝ խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ փառավոր գործերով»*[78]:

Պատմահոր մոտ ծագումնաբանական նման մի շփոթ կա նաև Արծրունյաց և Գնունյաց նախարարական տների հետ

---

[74] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Ա., ԻԲ.:
[75] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., Գ.:
[76] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., ԽԷ.:
[77] Պատմութիւն Սեբէոսի, Ե., 1979, էջ 51:
[78] Մովսես Խորենացի. Հայոց Պատմություն. Գիրք Ա., Ա.:

կապված: Միմյանց կապելով այս երկու տոհմերը՝ Խորենացին նրանց համարում է Սենեքերիմի սերունդներ, որոնց կրկին ավանդական Վաղարշակը կարգեց արքունի գործակալություններում[79]: Վանի թագավորության սեպագիր արձանագրություններից հայտնի է, որ Սենեքերիմի սպանությունից առնվազն մեկ դար առաջ Արծրունիները բնակվել են Մեծ Աղբակում և հարակից գավառներում: Այսպիսով, Սենեքերիմի հայրասպան որդիների հետ կապված լեգենդը վերանում է: Արծրունիները նույն Արմե կամ Ուրմե երկրի բնիկներն են՝ արմենները, որոնք իրենց Արձն աշխարհի անունով կոչվում էին նաև Արձնունիներ (Արծրունիներ)[80]:

Գնունիների ծագման հարցը նույնպես հարկ է վերանայել: Բացառված չէ, որ նրանք լինեին Արծրունյաց ճյուղերից մեկը, որոնք իրոք հետագայում վերանվանվել են Խորենացու ներկայացրած տրամաբանությամբ:

Հազարապետությունն Արշակը հանձնեց Գնունիներին, որոնց տոհմական կալվածքներն Աղիովիտում էին՝ Վանա լճի ափին, Արճեշ կենտրոնով: Նրանց տիրույթների թվում հայտնի է նաև Բերկրին: Արքունի գործակալությունում ծառայություն ստանձնելով նրանք տեղափոխվեցին Այրարատ՝ ձեռք բերելով տիրույթներ Կոգովիտում[81]:

Կարևոր մի հանգամանք կա, որի մասին լռում են մեր պատմիչները, որը սակայն ցույց է տալիս Արշակի ներքին քաղաքականության տրամաբանությունը. Արշակի նպատակն էր ստեղծել անկախ պետականության, ուժեղ թագավորական իշխանության նվիրյալ այրերից կազմված մի հիմք, որն ի զորու կլիներ ի հեճուկս օտար կողմնորոշում ունեցողների, սատարել իրեն հզոր Հայքի ստեղծման ճանապարհին: Դա նրան հաջողվեց: Այս գործում առանձնացրեց Սիսականներին

---

[79] Մովսես Խորենացի. Հայոց Պատմություն. Գիրք Բ., Զ.:

[80] Մուշեղյան Ա.,. Մովսես Խորենացու դարը, էջ 151:

[81] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 331-357:

ու Մամիկոնյաններին՝ այս տոհմերից առանձնացնելով իր գլխավոր զինակիցներին: Խոսքը վերաբերվում է հայոց պետականության երկու մեծ նվիրյալներին՝ Անդովկին և Վասակին. այրեր, որոնք մինչև մահ հավատարիմ մնացին հայոց գահին ու անկախությանը, բայց որոնց անունն ու գործը երբեք ըստ արժանվույն չի գնահատվել: Առաջ քաշելով այս երկուսին՝ Արշակը, միաժամանակ, նրանց հայրենի տոհմերի վրա դրեց կոնկրետ պարտավորություններ...

Գ

Սիսական տոհմը, որ սերվում է Հայկից ... երբեք չրմբոստացավ հայրենի իշխանությունների դեմ ...[82]

Հայ իրականության մեջ քիչ են ազնվական տոհմերը, որոնց մասին պատմիչն այսպես հպարտությամբ կարտահայտվեր: Այդ քչերի մեջ հզորագույններից ու հայոց պետականությանն ամենանվիրյալներից է Հայկյան Սիսակից սերված Սիսական կամ Սյունյաց տոհմը:

Օրբելյանը մի առիթով բողոքում է, որ պատմագրության մեջ չգտնվեց մեկը, որ գրի Սիսական տոհմի պատմությունը[83]: Դառնացած պատմիչը դժվարանում է բացատրել պատճառը, որն այնքան էլ բարդ չէ հասկանալ. ո՞վ էր լինելու այն հանդուգնը, որը համարձակվեր փառաբանել մի տոհմի, ում ներկայացուցիչներն, ի հեճուկս եկեղեցու, պարսից ու հունաց խարդավանքների, անմնացորդ նվիրումով ծառայեցին միայն և միայն անկախ պետականությանը: Տոհմ, որն իր ուժն ու դիրքը երբեք չօգտագործեց երկրի տերերի դեմ, չվարակվեց դարեր շարունակ Հայաստանը պատուհասող կենտրոնախույս ժանտախտի համաճարակով: Եվ ամենևին պատահական չէ, որ հայոց պետականությունը հիմնովին կործանել

---

[82] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, Ե., 1986, էջ 256:

[83] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, Ա.:

ցանկացող բազում օտարներ գլխավոր խնդիր են համարել Սյունյաց տան բնաջնջումը. բոլոր ժամանակներում այս տոհմն է եղել թագավորական իշխանությունը խարխլել ցանկացող եկեղեցու, օտարահաճ նախարարների ու նրանց օտարազգի տերերի հիմնական ախոյանը:

Հայ արքաները միշտ էլ ըստ արժանավույն են գնահատել Սիսականներին: Սիսական տոհմի պատմական առաքելության մասին ամենավաղ վկայությունն ենք հանդիպում Պատմահոր մոտ: Նկարագրելով Հայկյան Արամի քաջագործությունները՝ նա ասում է, որ Արամը տերության արևելքը հանձնել էր Սիսակյաններին[84]: Սա Հայոց աշխարհում գոյություն ունեցած կուսակալությունների մասին մեզ հայտնի առաջին հիշատակությունն է: Արևելյան կուսակալությունը Սյունիների պարտավորությունն էր: Ապա, հայոց ավանդական Վաղարշակ արքան արքունի զորքերի հրամանատարությունը հանձնում է Սիսականներին, նրանց դարձնում երկրորդը՝ արքայից հետո[85]: Իսկ նույն տոհմից սերված մի ճյուղին էլ տալիս է Աղվանքի կառավարումը: Սա խոսում է միայն Սյունիների ունեցած պատվի ու զորության մասին: Այս կարգը պահպանվում է մինչև 4-րդ դարի սկիզբ: Չմոռանանք, որ մեզ հասած Զորանամակում Սյունյաց իշխանի զորքի թիվը 19.400 էր: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ 120 հազարանոց բանակ ունեցող Հայաստանում արքունի զորքի թիվը 65 հազար էր, և միայն 55 հազարն էր կազմում նախարարական ու աշխարհազորային ուժերի գումարը, ապա հասկանալի կլինի այն զորությունը, որին տիրապետել են Սյունիներն իրենց 19.400 զինվորներով[86]: Ըստ Խորենացու, Սիսակի սերնդից էին նաև Ռշտունիներն ու Գողթնեցիները,

---

[84] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Ա., ԺԴ.:

[85] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., Ը.:

[86] Հայոց բանակի քանակն ու հայ նախարարների ռազմուժը հաշվառված են պայմանականորեն «Զորանամակ» անվանմամբ փաստաթղթում:

Ուտեացիներն ու Գարդմանացիները, Ծավդեացիներն ու Գարգարացիները: Եվ վերջապես, Սիսակից սերված գնդի նահապետ Առանի անունն է կրում Աղվանից աշխարհը[87]:

Քրիստոնեության ընդունումով ամեն ինչ փոխվեց: Հայոց աշխարհում դիրքերն ամրապնդելու համար Գրիգոր պարթևի տոհմն անհրաժեշտաբար պետք է ձգտեր իրեն հավատարիմ նախարարական տների բարձրացմանը: Ժամանակի ընթացքում նա հասավ դրան: Արդեն Ագանթանգեղոսի մոտ նկատում ենք, որ Գահնամակում՝ Տրդատ Գ օրոք կատարված փոփոխության մեջ Սիսական տոհմը գրավում է 14-րդ բարձը.[88] հայ իշխանական տոհմերից ամենաստվար՝ 19.400 հոգանոց կանոնավոր զորք հանող նախարարական տան համար այս տեղը չի համապատասխանում իրերի բնական կարգին: Ընդհանրապես, Գահնամակի փոփոխություններն, որոնք սովորաբար տեղի էին ունենում ոչ շատ հաճախ, արտահայտում էին արքունի տրամադրվածությունները ու ներքաղաքական կյանքի պատկերը: Ցավոք, այսօր կոնկրետ հայտնի չէ, թե Խոսրով Կոտակի տարիներին ինչպիսին է եղել Գահնամակի իրական պատկերը, բայց ակնհայտ է, որ փոփոխություններն եղել են հաճախակի:

Արդեն Տիրանի օրոք կրկին բարձրանում է Սյունիների դերը, և դա կապված էր նաև նրանց հոչակավոր հեծելազորի հետ, որ հայոց այրուձիու կարևոր մի մասն էր կազմում:

Այս տոհմը տվել է ազգային-պետական եզակի գործիչներ, որոնց անուններն, այնուամենայնիվ, մնացել են ստվերի մեջ կամ հիշատակվելով հպանցիկ կերպով՝ անտեսվել է գործի բուն խորհուրդը՝ անկախ Հայաստանի տեսլականը:

Հայկից սերված Սիսակի այս տոհմն է ահա, որ առանձնացվում ու արժանանում է Արշակի հատուկ ուշադրությանը: Սրան նպաստում են երկու հանգամանք. Անդովկ Սյունին

---

[87] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, էջ 126:

[88] Նույն տեղում:

պետականաշեն գործունեությամբ մեկ անգամ չէ, որ հայոց գահը փրկել էր ներքին ու արտաքին թշնամիներից՝ ամենաօրհասական պահերին ստանձնելով երկրի պաշտպանության պատասխանատվությունը: Կար մեկ այլ հանգամանք ևս, որ շատ կարևոր էր. հարկավոր էր վերականգնել հայոց սահմանների ամբողջականությունը, վերակազմավորել հայոց բանակը, մասնավորապես վերականգնել հայոց հռչակավոր այրուձին: Իսկ հայոց այրուձին անհնար էր պատկերացնել առանց սյունյաց հանրահայտ ազնվացեղ նժույգների և սիսական հռչակավոր հեծելազորի: Հայոց արևելյան սահմանների պաշտպանությունն ու բանակին կրկին որակյալ հեծելազոր տալը՝ ահա այն բնական պարտավորությունը, որ դրված էր Սիսական տոհմի վրա:

Արշակը կնության է առնում Փառանձեմին: Աննման գեղեցկությամբ, անբասիր վարքով ու բնածին խելքով հայոց աշխարհում նմանը չունեցող այս գեղեցկուհին Անդովկի դուստրն էր: Ազգային արժեքներով ու հայեցի դաստիարակությամբ մեծացած օրիորդը նմանը չունեցավ հայոց թագուհիների մեջ: Հայոց ազգային հավատքի հետևորդն էր Փառանձեմը, ուստի, հենց սկզբից էլ եկեղեցու սպասավորներն ի դեմս նրա տեսնում էին միայն երդվյալ թշնամու: Սյունյաց լեռներում պահպանված ու հորից ժառանգած հայկական ոգին էր Փառանձեմը բերում արքունիք, ուր այնքան շատ էին օտարամոլությունն ու ապազգային աղբը: Հայոց թագուհու հանդեպ կույր ատելությամբ լցված Բուզանդն անգամ հարկադրված խոստովանում է, որ սյունյաց օրիորդը *«… շատ հռչակված էր իր պարկեշտությամբ և գեղեցկությամբ*[89]:

Ակնհայտ է, որ Արշակը Փառանձեմին կնության է վերցնում շատ ավելի վաղ, քան Գնելի հետ կապված դեպքերը: Փառանձեմն արդեն Տիրան արքայի օրոք էր եկել արքունիք: Ամուսնությունն ավելի է մերձեցնում Անդովկին արքունիքին,

[89] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ:

որն այս իմաստուն ու հպարտ գործչի կարիքը շատ էր զգում: Արշակն Անդովկին ճանաչում է Սյունյաց տոհմի նահապետ, որը վերջինիս հնարավորություն է տալիս վերականգնել հայրենի տոհմի ցաքուցրիվ ուժերը, որով էլ՝ լիարժեք կատարել հայրենի երկրի առջև վերցված պարտավորությունները[90]: Անդովկը երբեք չհոգնեց հայոց արքաների ու երկրի սահմանների պաշտպանության համար կռվելուց: Երբեմն նա հարկադրված եղավ նույնիսկ անելու ուժերից ավելին:

Դ

Հաջորդ տոհմը, որն արժանացավ Արշակի հատուկ ուշադրությանը՝ Մամիկոնյանն էր, ավելի ստույգ՝ Տայքի Մամիկոնյանները: Ինչու՞ եմ սա շեշտում: Մամիկոնյանների վերաբերյալ ուսումնասիրողների կարծիքները ծայրահեղ հակասական են: Հիմնականում տիրապետող է այն թյուր կարծիքը, թե այս տոհմն ունի չինական ծագում: Խորենացու հաղորդած տվյալի կամայական ու միակողմանի ընկալումը միշտ էլ հեշտ միջոց է եղել՝ ապացուցելու համար, թե այս տոհմն օտարածին էր: Մամիկոնյաններին նույնիսկ թյուրքական ծագում են տվել[91]: Այնինչ, ամենևին էլ հարկ չկա հեռու գնալ, երբ այդ տոհմի արմատները Հայքում են. այո, Մամիկոնյանները մեկն էին հայոց բնիկ, հինավուրց տոհմերից և հարյուրամյակներ շարունակ իշխել են Տայքում, Խաղկտիքում, Ճաների երկրում: Ուշադրություն դարձնենք խեթական արձան-

---

[90] Թեպետ պատմիչները Անդովկի Սյունյաց նահապետ ճանաչվելու հանգամանքը կապում են Փառանձեմի հետ, ասելով, թե նրա խորհրդով Արշակը սպանել է տալիս Վաղինակ Սյունուն, սակայն, իրականում Վաղինակը պետք է սպանվեր՝ իբրև Շապուհին մերձավոր գործակից Տիրան արքայի դեմ: Բնականաբար, գահին հավատարիմ, իմաստուն և քաջարի Անդովկն էլ, որ միաժամանակ նաև արքայի աներն էր՝ պետք է ստանար Սյունիքի գահերեցությունը:

[91] Սվազյան Հ., Ճեները և Ճենաց աշխարհը ըստ հայկական աղբյուրների. ՊԲՀ, 1976, թ. 4:

ագրություններում նշվող «amumikuni» բառի վրա, որն ունեցել է «ռազմական գերագույն առաջնորդ, գլխավոր հրամանատար» իմաստը: Միայն այս փաստն արդեն բավական է՝ հերքելու համար Մամիկոնյանների եկվորության վարկածը: Ոչ պակաս ուշագրավ է և այն տեղեկությունը, որ Տիգրան Մեծի օրոք Տիգրանակերտի կայազորի հրամանատարն էր Մամիկը: Տիգրանակերտի պաշտպանությունը ստանձնած զորավարի Մանկայոս անունը համապատասխանեցնելով Մամիկին՝ Ադոնցը կարծում է, որ Մամիկոնյանների տոհմի սկզբնավորումը կարելի է ետ տանել մինչև Տիգրան Մեծի դարաշրջանը: Ինչ վերաբերում է Խորենացու հաղորդած ավանդությանը՝ ապա, ըստ Ադոնցի, նախապես նկատի է առնվել ոչ թե հեռավոր Չինաստանը, այլ՝ Տայքին սահմանակից Պարխարյան լեռներից հյուսիս ձգվող ճանիքը: Իրենց դյուրաբորբոք խառնվածքով, անսովոր քաջությամբ և ռազմատենչությամբ Մամիկոնյաններն, ըստ նրա, առավել նման են ճաներին, այլ ոչ թե խաղաղասեր չինացիներին[92]: Լեոն իր հերթին համոզմունք է հայտնել, թե Մամիկոնյանները սերում են հաբեթական ծագում ունեցող ճաներից[93]:

Անգամ ճաների երկրի կամ Ճանիքի անվան շահարկումն ունի հոգեբանական պատճառներ: Այն շրջանառության մեջ դրվեց և զարգացավ Խորենացու նշած «Ճենազն Մամգունի» ոչ թե չինական, այլ ճենական ծագումն ապացուցելու համար: Բնականաբար, սահմանակից լինելով Ճանիքին՝ Տայքը բավականաչափ ընդհանրություն և առնչություն կարող էր ունենալ նրա հետ: Այս առումով ուշագրավ է, որ Պարխարի ողջ սարահարթն ու Գայլ և Ճորոխ գետերի հովիտը զբաղեցնող Ճանիքը հնագույն ժամանակից ներգրավված է եղել «Խալդիա» անվամբ հայտնի հայկական ռազմա-քաղաքական միության մեջ: Ամենևին չի բացառվում Մամիկոնյանների

---

[92] Ադոնց Ն.. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 461:
[93] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 361:

առնչությունը ճաների հետ, որը հնագույն ժամանակներում կարող էր և արտահայտվել խնամիական կապերի տեսքով: Սակայն, փնտրել նրանց արմատները Ճանիքում այն դեպքում, երբ Հայկական Լեռնաշխարհում բավականին շատ են Մամիկոնյան նախնիների հետքերը՝ ավելորդ է: Այս տոհմին հատուկ «Մամիկ» անունը կարող է ստուգաբանվել «տոհմի հայր, տոհմապետ» իմաստով, որը հետագայում վեր է ածվել տոհմական ազգանվան: Սրա արձագանքը կարող է լինել և այն ավանդույթը, թե Մամիկոնյանները ծագել են Մամիկից[94]: Թե որքանո՞վ է այս ստուգաբանությունը ճիշտ՝ թողնենք լեզվաբաններին, սակայն, այն, որ այս տոհմի ծագման վերաբերյալ հայկական առավել տրամաբանական տարբերակները մղվել են հետին պլան՝ ակնհայտ է:

Ուշադրություն դարձնենք առաջին հայացքից տարօրինակ թվացող մի փաստի վրա. մեր պատմիչների մոտ Մամիկոնյանների տիրույթները տարբեր են. նրանք իշխում են մեկ Տարոնին, մեկ Տայքին: Իրականում այստեղ հակասական ոչինչ չկա: Մամիկոնյան բուն տոհմը հաստատված է եղել Տայքում, և մինչև վերջ էլ, այսինքն, մինչև այս տան վախճանը, Տայքը եղել է նրանց հայրենական բուն օրրանը: Այստեղ նրանց կենտրոնն էր Էրախանի հինավուրց ամրոցը: Հետագայում, նրանց մի կրտսեր ճյուղը, որն ինչ-ինչ պատճառներով դարեր առաջ լքել էր հայրենիքը, ետ է ուղարկվում Հայոց աշխարհ (Խորենացու հիշատակած Մամգունի գլխավորությամբ): Հավանական է, որ հեռավոր արշավանքներից մեկի ժամանակ նրանք մնացել են օտար աշխարհում, որպես տեղապահներ: Ամեն դեպքում պատահական չէ, որ պարսից արքան նրանց ուղարկում է հենց Հայաստան և այն էլ՝ Տրդատ Գ օրոք: Պատմահոր խոսքերով, արքան համոզված էր, որ նրանց այնտեղ մահ է սպառնում. ինչու՞: Պատճառը մեկն է. կրոնական արյունոտ հեղաշրջումը նոր էր ավարտվել Հայքում,

[94] Ադոնց Ն.. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 447:

իսկ ետ վերադարձած Մամիկոնյան իշխանները հին հավատքի կրողներն էին: Բայց սրանք չեն դիմում Տայքի իրենց հայրական կալվածքները, այլ ընդառաջ գնալով հայոց արքային՝ առաջարկում են իրենց ծառայությունները: Սա նույնպես տարօրինակ է թվում առաջին հայացքից: Առավել տրամաբանական կլիներ նրանց հայրենի բուն տոհմի մոտ միանգամից հանգրվանելը: Սակայն ոչ. պարսից արքայի կողմից Հայաստան ուղարկված իշխաններն այլ նպատակ էին հետապնդում. նրանց հարկավոր էր շահել հայոց քրիստոնյա արքայի վստահությունը:

Մամիկոնյանների հետքերը Հայոց աշխարհում փնտրելու հարցին որոշակի լույս է սփռում 10-րդ դարում ապրած Սեբաստիայի թեմի առաջնորդ Ուխտանես եպիսկոպոսի «Հայոց պատմությունը»: Այսպես, Վաղարշակ արքան դիմում է պարսից Արշակ թագավորին՝ իրեն ուղարկելու հայ նախարարների բարձն ու պատիվը սահմանող Գահնամակի վավերագիրը: Արշակի թույլտվությամբ Մար Աբասն արքունի դիվանում գտնելով այդ ցուցակը բերում է այն Վաղարշակին, ով էլ կարգավորում է հայ իշխանների գահերեցության կարգն ըստ այս ցուցակի[95]: Ճիշտ և ճիշտ Խորենացու վկայության համաձայն: Միայն այն տարբերությամբ, որ Ուխտանեսի մոտ առավել հստակ է մինչև Վաղարշակը ազնվական կարգի ու բարձի առկայության փաստը:

Այն, որ Վաղարշակը պարթև Արշակունի չէ և ոչ էլ մարմնավորել է Տրդատ Ա՝ ինչպես մինչ օրս ենթադրվել է, ակնհայտ է: Պատմահայրը Վաղարշակի շրջանը տեղադրում է Տիգրան Երվանդյանից հետո՝ մինչև Արտաշես Ա գահակալությունը: Ըստ Պատմահոր ուշագրավ վկայության, Արտաշես Տիեզերակալը պարսիկներից խլելով արքայից արքա տիտղոսը՝ Պարսկաստանում իր համար շինեց արքունի պալատ և

[95] Ուխտանես, Պատմություն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 40:

Պարսկաստանը կառավարում էր իր մարդկանցով[96]: Պալատում՝ ենթադրվում է, պետք է բնակվեին նրա ազգականներն ու մերձավոր արյունակիցները: Սրանցից էլ կարող էր սկիզբ առնել այսպես կոչված «Արշակունիների» հարստությունը Հայաստանում: Այսինքն, մթ. 1-ին դարում Հայաստան ուղարկված «Արշակունի» կոչվող արքաներն, իրականում Արտաշեսյան հետնորդներն էին՝ Պարսկաստանում մնացած և պարթև Արշակունիների հետ բարեկամացած: Ընդհանրապես, պարթևական ցեղի ծագումնաբանությունն առ այսօր վեճերի տեղիք է տալիս: Նշեմ միայն, որ պարթև վերջին տիրակալ Արտավանի դեմ ապստամբություն բարձրացրած Արտաշիրը՝ Սասանի որդին, պարսից և ասորվոց իշխաններին կոչ էր անում՝ թոթափել երկիրը զավթած պարթևների լուծը.[97] պարթևների իշխանությունն իբրև լուծ է ընկալվել բնիկ պարսից տոհմերի համար: Հնարավոր է, որ այս հանգամանքը սերտ աղերսներ ունենա Արտաշեսի՝ Խորենացու նշած գործունեության հետ:

Մենք 5-րդ դարի մի փաստ ունենք, թե ինչպես հայ իշխանները՝ չնայած իրենց բացարձակ կախյալ վիճակին, այդպես էլ չընդունեցին պարսիկ Շապուհի գահակալական նկրտումներն իրենց հանդեպ: Հայկյան արքաների հզորությունը չկորցրած հայն ինչու՞ պետք է ընդուներ մի ինչ-որ պարթև Վաղարշակի: Արտաշեսի և Տիգրանի փառքը դեռ չխամրած Հայաստանում նույնպես հազիվ թե հանդուրժեին օտար տիրակալների: Որ Վաղարշակը հայոց մեծ և հզոր արքաներից մեկի նախատիպն է, որի սերունդներից ծագել են հայ Արշակունիները, ըստ իս, բավականին ակնառու է: Ադոնցը համարում է, որ «Վաղարշակ» անունն աղերսվում է «Վարդգէս» անվանը[98]: Իսկ ինչու՞ պետք է օտարածին մի

---

[96] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., ԺԱ.:

[97] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի:

[98] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 481:

տիրակալ Հայաստան գալով, փոխանակ իր հետ այստեղ բերելու հարազատ ազգակիցներին, խնամքով հոգ տաներ բնիկ Հայկյան իշխանական տների բարձրացման և իրեն նրանցով շրջապատելու մասին:

Եվ այսպես, Ուխտանեսը տալիս է հայոց Գահնամակում առկա տոհմերից առաջին հինգի ցանկը.

Առաջին՝ Սիւնեաց տէր

Երկրորդն՝ ասպետ Բագրատունի

Երրորդն՝ Արծրունի

Չորրորդն՝ Մաղխազունի

Հինգերորդն՝ Մամիկոնեան

Արդյո՞ք սա մի յուրօրինակ հաստատում չէ Ադոնցի այն կարծիքի, որ հիշյալ տոհմերի շուրջ վաղնջագույն ժամանակներում ձևավորվել է Հայկական Լեռնաշխարհի պաշտպանական համակարգը: Եվ որ ամենակարևորն է. Վաղարշակից առաջ գոյություն ունեցած ցուցակում Մամիկոնյան տոհմն արդեն ազդեցիկ և հայտնի է եղել: Այլ հարց է, թե Վաղարշակը կամ նրա նախատիպն ինչպե՞ս է վերաբերվել այս ցուցակին:

Խորենացու մոտ հանդիպում ենք ուշագրավ դիպվածի, որը լուրջ չի քննարկվել: Վաղարշակի միավորիչ քաղաքականությանը դեմ դուրս գալով՝ Խաղկտիքի, Տայքի, հյուսիսային կողմերի միացյալ ուժերով, նրա դեմ է դուրս գալիս ոմն Մորփյուղիկես, որը երկար ժամանակ գլխացավանք է պատճառում հայ արքային: Հաղթելով նրան, արքան Տայքով անցնում է հյուսիսի սահմանը, հնազանդեցնում տեղի ժողովրդին, խոստանում, որ եթե խաղաղ ու հնազանդ ապրեն՝ կսահմանի նրանց նախարարությունը[99]: Ակնհայտ է՝ խոսքը Տայքում և Խաղկտիքում հզոր տոհմի պաշտոնապես ճանաչման մասին է: Ադոնցը օտար ուսումնասիրողներին հիմք ընդունելով, Վաղարշակին նմանեցնում է Տրդատ Ա-ին, հետևաբար հան-

[99] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., Ե.:

ձինս Մորփյուղիկեսի տեսնում Կորբուլոնին[100], որը կանխակալ մոտեցում է: Հայկյան բնիկ արքաներին սիրելի հարազատներ համարող Պատմահայրը, որ նույնպիսի ջերմ ու անկեղծ սիրով է խոսում Վաղարշակի մասին, երբեք մի պարթևի չէր գովերգի այդպես: Այստեղ նկատելի է հայոց հզոր արքայի դեմ ելած Տայքի ու Խաղկտիքի բնիկներին, հայկական հզոր մի տոհմ, որին չճանաչելն ուներ մեկ պատճառ. Վաղարշակի նախատիպը Հայկյան է, իսկ այս տոհմը՝ տիրելով Տայքին և Խաղկտիքին, ըստ երևույթին՝ մինչև Հայկյան գահակալները, չէր կամենում հպատակվել այդ արքայատոհմին:

Հանձինս Մորփյուղիկեսի, նկատելի է Մամիկոնյան նահապետի նախատիպը: Այդ դեպքում Մամիկոնյանները կարող են լինել հնագույն Խալդիա-Հայաստան երկրի այն նշանավոր զորավարները, միայն որոնց ծնկի բերելու համար օտար տիրակալներն անթիվ-անհամար անհաջող արշավանքներ էին կազմակերպում Հայոց աշխարհ:

Տարակուսելով, թե ինչու՞ ըստ Խորենացու, Տրդատը պետք է տեղից-տեղ փոխադրեր Մամգունին՝ այն դեպքում, երբ Մամիկոնյանների նախնական հայրենիքը Տայքն էր, Ադոնցը եզրակացնում է, թե Պատմահայրը տեղյակ չի եղել Տայքի՝ իբրև Մամիկոնյանների օրրան լինելու փաստին[101]: Այնինչ, Խորենացուն քաջ հայտնի է եղել այդ հանգամանքը: Այն, որ Տրդատը Մամգունին չի բնակեցնում Տայքում՝ խոսում է վերը շարադրված իմ ենթադրության օգտին. Տրդատը չէր վստահում Պարսկաստանից եկած իշխանին, բայց և, միաժամանակ, չէր էլ ցանկանում նրան ետ ուղարկել, քանի որ Մամգունը թեև սեփական տոհմից ու բնօրրանից վաղուց կտրված, բայց այնուամենայնիվ, Մամիկոնյան էր: Եվ հետո, Մամգունը չէր եկել իր տոհմին միանալու, այլ հայոց արքայի վստահությանն արժանանալու, Գրիգորի տոհմին պատվար

[100] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 284:
[101] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 344:

կանգնելու և սեփական, առանձին նախարարական տոհմ սկզբնավորելու համար՝ ինչը լիովին հաջողվեց: Դավադրաբար սպանելով Սլկունի Սղուկին և ընդունելով քրիստոնեություն՝ եկվորները տեր դարձան Տարոն աշխարհին՝ Ողական անառիկ ամրոցով: Տրդատը Մամգունի աղխը ճանաչեց որպես առանձին նախարարական տոհմ: Այդ պահից սկսած, սրանք իրենց ակտիվ դերն ունեցան հայոց ներքաղաքական կյանքում՝ դառնալով եկեղեցու հիմնական և ամենահավատարիմ կամակատարը: Հայոց բանակին մինչև 1000 զինվոր տվող կրտսեր Մամիկոնյաններն արդեն մրցում էին Տայքի՝ իրենց բուն տոհմի եղբայրների հետ, որոնք, ընդհանրապես, երկար ժամանակ անմասն էին երկրի քաղաքական կյանքից: Պատճառը մեկն էր: 301թ. հեղաշրջումն անցավ Տայքի Մամիկոնյանների կողքով. նրանք չուրացան հայ աստվածներին և երբեք չմասնակցեցին մեհենական հարստության թալանին: Դեռ երկար ժամանակ Տայքի անառիկ լեռներում ու թավ անտառներում ծվարած այս տոհմը պահեց իր նախնյաց հավատքի մաքրությունը: Ահա միակ պատճառն այն հանգամանքի, որ դարեր շարունակ հայոց ռազմական փառքը կերտող Մամիկոնյան տոհմը՝ 301թ. հետո միանգամից չքվում է քաղաքական եռուզեռից: Սա է պատճառը, որ Խորենացին դեռ երկար ժամանակ չի հիշատակում այս տոհմի անունը: Պատմահայրն ուղղակի չի ընդունել կրտսեր՝ Տարոնի Մամիկոնյանների վարքն ու քաղաքականությունը, նա Մամիկոնյան է համարել Տայքի տերերին և չի հիշատակել այս տոհմի մասին, քանի որ նրանք պարզապես հեռացած են եղել երկրի ներքաղաքական կյանքից: Իսկ ստորաբար Տարոնի տերը դարձած Մամիկոնյանների կրտսեր ճյուղը Պատմահոր համար հիշատակման արժանի չի եղել:

Հետագայում մեր պատմության մեջ կարմիր թելի պես անցնում է Տայքի ու Տարոնի Մամիկոնյանների միջև բացված անջրպետը, ուշագրավ է, որ հերթական ձախողված արկած-

ախնդրությունից հետո Տարոնի Մամիկոնյաններն առաջին հերթին փախել ու ապաստան են գտել Տայքի ու Խաղկտիքի լեռներում. Տարոնն այդպես էլ նրանց հարազատ չդարձավ:

Եկեղեցին ջանք ու եռանդ չխնայեց Մամիկոնյաններին հերոսի ու սրբի լուսապսակ տալու համար. և դա հաջողվեց: Բոլոր դարերում այս տոհմը համարվել է հայոց ռազմական կորովի մարմնավորող՝ պատրաստելով Հայրենիքի ու հավատքի համար մեռնելու պատրաստ գործիչների փաղանգ. սա, իհարկե, Տարոնի Մամիկոնյանների մասին է: Իսկ Տայքի տեր բուն Մամիկոնյանները կարծես չեն էլ եղել պատմիչների համար: Առանձին տոհմ ձևավորած Մամգունի տունը՝ հաստատվելով Տարոնում, եկեղեցու հետ ձեռք-ձեռքի տված՝ ջանք ու եռանդ չխնայեց հայոց պետականության կործանման համար: Չի բացառվում, որ օտարության մեջ բնակվող Մամգունի տունը՝ դեռ հավանաբար քուշանաց երկրում, մտերիմ է եղել Անակի տան հետ[102]: Սա կարող է որոշակիորեն բացատրել այն անհավանական զուգադիպությանը, թե ինչպես Գրիգորի համար ամենավճռական օրերին Մամգունը հավաքեց իր տոհմն ու եկավ Հայաստան. եկել էր Գրիգորին օգնության՝ բացառված չէ, որ պարսից արքայի հրամանով:

Ահա, երկու ճյուղի բաժանված այս հինավուրց տոհմի ավագ՝ Տայքի տերերին է դիմում Արշակ արքան: Անձամբ անցնելով Տայք և գտնելով Մամիկոնյան երեք եղբայրներին, Արշակը համոզում է նրանց անմասն չմնալ Հայոց աշխարհի գործերից: Տոհմի նահապետ է ճանաչվում Վարդանը, որ

---

[102] Մինչև Հայաստան գալը Մամիկոնյանների Գրիգորի տոհմի հետ առնչվելու հավանականության մասին կարծիք է հայտնել նաև Հ. Սվազյանը: Առնչությունները նա վերագրում է հետքրիստոնեական շրջանին: Եթե դա այդպես է, ապա առավել քան հավանական է, որ Մամգունի Հայաստան գալու պատճառներից մեկն էլ Գրիգորին սատարելն էր: (Տես՝ Ճեները և Ճենաց աշխարհը ըստ հայկական աղբյուրների. ՊԲՀ, 1976, թ. 4):

հայտնի էր պարսկամետությամբ և մեծ համարում ուներ պարսից արքունիքում: Կրտսեր եղբայր Բագոսին դարձնում է զորապետ: Վասակին, որը եղբայրներից միջնեկն էր և իր դայակը, դարձնում է սպարապետ: Հետաքրքիր է, որ պատմելով այս մասին, Փավստոսը վկայում է, որ այս գործակալությունն Արշակը Տայքի «աղավնակիր դրոշներով, արծվի՝ Վարուժանի» նշաններով Մամիկոնյաններին տվեց «բուն նախնյաց կարգերի համաձայն»[103]: Վասակը պատրաստակամ ընդունեց իր վրա դրված պատասխանատվությունը: Կղերական պատմիչների փառաբանած ու սրբացրած Մամիկոնյան իշխանների շարքում չի եղել որևէ մեկը, որն այդպես նվիրված ու նախանձախնդիր ծառայեր իր գործին: Վասակը միակն է Մամիկոնյան մեզ հայտնի իշխաններից, որ կյանքը նվիրաբերեց հայոց պետականության զորացման գործին: Նա նաև միակն է, ում համար չկային այլ սրբություններ՝ Հայրենիքից ու Արքայից բացի: Նա միակ Մամիկոնյանն է, ով ապրեց անբասիր կյանքով, ով երբեք չլքեց արքային, նրա հետ անցավ բոլոր տառապանքների ու դժվարությունների միջով, ով չփառաբանվեց եկեղեցու կողմից, չհերոսացվեց պատմիչների կողմից. երբեմն նույնիսկ ներկայացվեց որպես նախանձ, դավադիր ու բանսարկու: Պատճառը. Վասակը հայոց սպարապետն էր և ապրում ու գործում էր միմիայն իր պետության համար: Եկեղեցին հեղինակություն չէր նրա համար: Նրա քաղաքական միակ կողմնորոշումը արքայի կամքն էր: Իսկ եկեղեցին սովոր էր տեսնել միայն իրեն հլու-հնազանդ, ցանկացած պահի բանակը պետության դեմ հանելու ընդունակ, խորամանկ ու հաշվենկատ Մամգունի ժառանգներին: Նա անմնացորդ նվիրումով լծվեց բանակաշինության ու հայրենի սահմանների պաշտպանության գործին: Նրա գլխավորած հայոց բանակը երբեք չդադարեց պատերազմելուց, բայց և երբեք չճաշակեց պարտության դառնությունը:

[103] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Բ.:

Արշակի օրոք Վասակը եղավ նրա նեցուկն ու ընկերը, ապրեց իր արքայի փառքին ու պատվին նախանձախնդիր՝ նրան մենակ չթողնելով նաև մահվան ճանապարհին:

Սիսական տոհմի իմաստուն նահապետ Անդովկն ու Մամիկոնյան Վասակը - ահա այն երկու արծիվները, առանց որոնց անհնար է պատկերացնել Արշակի թռիչքը:

Ե

Հայոց արքայի առջև ծառացած էր, սակայն, հույժ կարևոր մի խնդիր՝ եկեղեցին պետությանը հնազանդեցնելու հարցը, որն հրատապ լուծում էր պահանջում: Հակառակ դեպքում, անհնարին կլիներ երկրում ապահովել կայուն միասնություն: Խնդիրն ամենևին էլ կղերականներին սիրաշահելը չէր, այլ՝ նրանց ճիշտ օգտագործելը: Դա այնքան էլ հեշտ չէր: Մեհենական թալանված ոսկուց շլացած կղերը, որն արդեն պալատական խժդժություններ հրահրելու և քաղաքական ճգնաժամեր ստեղծելու հարուստ փորձ ուներ, հասցրել էր ազդեցությունը տարածել ազնվական շատ տոհմերի վրա: Հունական կողմնորոշման խմբակցությունը, որին ավանդաբար հարում էին Կամսարականները, Տարոնի Մամիկոնյաններն ու Ամատունիները, բավականին լուրջ ուժ էր ներկայացնում և մեծ ազդեցություն ուներ նախարարական նորահայտ տների, սեպուհական դասի և արքունիքի վրա: Այս խմբակցության շարժիչ ուժն ու գաղափարախոսը եկեղեցին էր: Ամենևին էլ պատահական չեն Օրբելյանի այն խոսքերը, թե *«Հայաստանը նորածին շնորհներով նորոգելով աստծու առաքելագործ այրը՝ սուրբ քահանայապետ Գրիգորիոսը, հրամայում է Տրդատ Մեծին իր թագավորությունը կազմակերպել հունաց կայսրերի օրինակով...»*[104]: «Հրամայել» բառն այստեղ ամենևին էլ պատահական չէ գործածված: Որքան էլ կղերական մատենագիրները ջանացել են վառ

[104] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, էջ 78:

գույներով ներկայացնել Տրդատին՝ պատկերելով իբրև մի քաջ, հզոր ու պետականաշեն արքա, այնուամենայնիվ, իրականությունը բոլորովին այլ էր: Տրդատը Գրիգորի հլու-հնազանդ կամակատարն էր: Մեհենական հարստության «սրբազան թալանից» հետո քրմական հողերն ու դաստակերտները տրվում էին կայսրության խորքերից Հայաստան եկած թափառաշրջիկ աղանդավորներին, որոնք արդեն «քրիստոնյա եղբայրներ» էին կոչվում: Մի երկրում, ուր հողն ամենամեծ հարստությունն էր, այդպիսի շռայլություն միայն արքան կարող էր թույլ տալ իրեն: Իսկ Գրիգորը կարողանում էր:

Թերթենք Լեոյին. *«Թագավորը... մի կատարյալ ոչնչություն է այդ մարդու (Գրիգորի) առաջ, իր զորքն ու զենքը տվել է նրան, ինքը մի կողմ քաշվել: Երևի գոհ է, որ կատարվում է Կոնստանդիանոսի կամքը և ամրապնդվում է Արշակունիների գահը Հայաստանում: Այդպիսի մի ապիկար բնավորություն, առանց այլևայլության պիտի հաղթահարվեր Գրիգորի եռանդի, ճարպկության և մանավանդ՝ կազմակերպչական մեծ կարողության առաջ»*[105]:

Իրականությունն այն է, որ Արշակունյաց գահն ամենևին էլ չամրապնդվեց քրիստոնեության հաստատումով՝ այլ հակառակը: Եկեղեցին՝ ի դեմս Գրիգորի տոհմի և նրան հարած հունասերների, արքունիքին աջակցում էր մինչև այնտեղ, ուր ավարտվում էին Հռոմի շահերը: Իրականում Հայոց աշխարհում հաստատվելու առաջին իսկ օրից սկսած, Գրիգորի տոհմը ձգտեց պետական մակարդակով ավարտին հասցնել Հայաստանն արևմուտքի մի գաղութ սարքելու այն ծրագիրը, որը սկիզբ էր առել դեռևս Արտաշեսյանների հարստության տարիներին Հռոմեական կայսրության կողմից: Մինչև Տիրանի գահակալությունը՝ դա նրան հաջողվում էր դյուրությամբ: Բացի տնտեսական ահռելի լծակներից Գրիգորի տոհմին հաջողվել էր ստեղծել նաև քաղաքական պատկառելի մի

[105] Լեո, Հայ կղերական դիվանագիտություն, էջ 21:

հակակշիռ ընդդեմ բոլոր նրանց, ովքեր երբևէ կհանդգնեին Հայքը անկախացնելու փորձ անել:

Եկեղեցին նույնպես զերծ չէր ներքին խլրտումներից: Վերը նշել եմ քրմական դասից սերված Աղբիանոսյանների մասին, ովքեր երկրորդն էին Գրիգորից սերված կաթողիկոսներից հետո: Հայ արքաներից ոմանք առիթը չէին կորցնում Աղբիանոսյաններին առաջ մղելու: Հուսիկին հաջորդած Փառենը վախճանվեց 352թ.: Արշակի կամքով տեղապահ նշանակվեց Շահակ Մանազկերտցին՝ կրկին Աղբիանոսի տոհմից, որին, բնականաբար, պատմիչները չեն հիշում բարի խոսքերով: Խորենացին միայն իմաստնաբար գերադասում է լռել: Այս նշանակումը, սակայն, չէր կարող մարել եկեղեցու շուրջ բորբոքված կրքերը: Գրիգորի հետնորդները միմիայն իրենց էին տեսնում հայրապետական գահին: Նրանց հետ էր, բնականաբար, հունասերների խմբակցությունը: Կենտրոնաձիգ իշխանության կողմնակից ուժերին, ինչպես նաև պարսկամետ քաղաքականության ջատագովներին բավարարում էր Աղբիանոսյանների հովվապետությունը: Հարկավոր էր գտնել մի լուծում, որը, բավարարելով շահագրգիռ բոլոր կողմերին, միաժամանակ, կամրապնդեր արքայական իշխանությունը: Եվ Արշակը գտավ լուծումը:

353թ. աշխարհաժողովում երկրի տերերը համաձայնվեցին եկեղեցու աթոռին նստեցնելու արքունի սենեկապետ Ներսեսին: Սա Հուսիկի թոռն էր՝ Աթանագինեսի որդին: Մայրը՝ Բամբիշը, Տիրան արքայի քույրն էր: Ներսեսն ուսումը ստացել էր Գամիրքի Կեսարիայում, ամուսնացած էր Վաչէ Մամիկոնյանի թոռան՝ Վարդանի դստեր հետ: Զինվորական էր: Կնոջ մահից հետո հետաքրքիր զուգադիպությամբ, Արշակի գահ բարձրանալուն պես վերադառնում (ուղարկվում) է Հայաստան և իսկույն անցնում արքունի ծառայության: Արշակը նրան վստահելով՝ դարձնում է իր սենեկապետը:

Այս ընտրությունը մի քանի կարևոր հարց էր լուծում. որպես Գրիգորի տոհմի շառավիղ բավարարում էր եկեղեցուն և նրան հարող իշխաններին: Լինելով արքունի սենեկապետն ու Արշակի հորաքրոջ որդին՝ Ներսեսը վստահություն էր վայելում արքայի և նրան հավատարիմ ուժերի մոտ: Արշակն ուղղակի կասկած չուներ, որ Ներսեսն այսուհետ ևս կմնա իր հավատարիմ զինակիցը: Բայց այստեղ արքան չարաչար սխալվում էր: Նա մոռացել էր կաթողիկոսական խույրի մի անսովոր հատկության մասին. հայտնվելով Գրիգորի տոհմից ցանկացած մեկի գլխին՝ այն նրան դարձնում էր արքաների ոխերիմ թշնամին: Ավելի ուշ հասկանալով կատարած սխալը՝ արքան փորձելու էր շտկել իրավիճակը: Բայց ավաղ, այլևս անհնար էր լինելու որևէ բան դեպի լավը փոխելու[106]:

Իսկ առայժմ Ներսեսի ընտրությունը բավարարելով բոլորին մարել էր շիկացած կրքերը: Կարծես Հայոց աշխարհում վերջապես նշմարվում էին միաբանության ծիլերը, արքայական իշխանության շուրջն էին համախմբվել երկրի տերերը: Այժմ արքան կարող էր դժվարությամբ վերականգնված համերաշխությունից օգտվելով՝ պետության ողջ ներուժն օգտագործել Հայրենիքի ամբողջականության վերականգնման, սահմանների ամրապնդման, տնտեսական ու ներազգային բարեփոխումների վրա: Արշակին հանգիստ չէր տալիս երկրի կորուսյալ հեղինակությունը վերականգնելու և հպարտ Հայքի վերաստեղծման սևեռուն գաղափարը: Քաղաքական իրավիճակը Հայաստանի շուրջ առայժմ նպաստավոր էր. տարածաշրջանում տևական խաղաղություն էր տիրում:

---

[106] Թեպետ ըստ պատմիչների Ներսեսին կամքին հակառակ դարձրեցին կաթողիկոս, սակայն, միայն այն փաստը, որ ձեռնադրվելուց հետո ինչ վստահությամբ սկսեց իրագործել իր ծրագրերը՝ ցույց է տալիս մի բան. նա պատրաստ էր եկեղեցին գլխավորելու պաշտոնին:

Զ
ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Իսկ Արշակը թագավորությունը կառավարում էր ոչ աստծու օրենքներով...[107]

Ինչու՞մն էր հպարտ արքայի անօրենությունը: Արշակն անողորմ էր բոլոր նրանց հանդեպ, ովքեր Ազգն ու Հայրենիքը ստորադասելով անձնական ու տոհմային հատվածական շահերին, խուսափում էին պետության հանդեպ պարտականությունների կատարումից, փորձում պառակտել կենտրոնական իշխանության շուրջ հյուսված միաբանությունն ու խանգարել ներքին ու արտաքին ինքնուրույնության ձգտող արքունիքի քաղաքականությանը: Այդպիսիք շատ էին: Ուժեղ էին անկախ Հայքի ներքին թշնամիները, քանզի զորեղ էր նրանց տեր ու գոտեպնդող եկեղեցին: Արշակի կյանքն անցավ հզոր պետականության, կենտրոնացված պետական ու տնտեսական համակարգի, ազգային միասնության վերակերտման ու այդ ամենի ոխերիմ թշնամիների դեմ պայքարում, որի արդյունքում արիասիրտ արքան մնաց միայնակ՝ աշխարհին դեմ-հանդիման:

Օգտվելով ժամանակավոր խաղաղությունից, որ տիրում էր Հայաստանի շուրջ, նա զարկ տվեց քայքայված տնտեսության վերականգնմանը: Պատերազմներից դատարկված ու կիսաամայի քաղաքներն ու ավանները նոր շունչ ստացան, կրկին աշխուժացան արհեստներն ու առևտուրը: Հնարավորինս թեթևացրեց բնակչությունից գանձվող հարկերը: Այս վերջինը պատմիչները վերագրում են Աշտիշատի ժողովում Ներսեսի արձակած որոշումներին: Սակայն ակնհայտ է, որ ուժեղ ու կամային բարձր որակներով օժտված Արշակին չէ, որ պիտի կարգադրեր կաթողիկոսը: Աշտիշատի ժողովը լիովին ցույց է տալիս հակադիր կողմերի տրամադրությունը, որոնք բևեռվելով իրար դեմ՝ գնում էին դեպի անխուսափելի առճա-

---

[107] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԲ.:

կատում: Խոսքն Արշակի ներքին քաղաքականությանը զուգահեռ Ներսեսի տնտեսական քաղաքականության ու եկեղեցական բարեփոխումների մասին է: Նա Գրիգորից հետո միակն էր, որը մնաց անգերազանցելի՝ կղերականությանը կազմակերպելու, նրա համար նյութական հզոր հիմք ապահովելու գործում և արտաքին քաղաքականության ղեկը եկեղեցուն հանձնելու հավակնություններում. «*...Նրա նման ուրիշ մեկը չեղավ հայոց աշխարհում*»[108]:

Ընտրվելուց անմիջապես հետո Ներսեսն ուղարկվեց Գամիրքի մայրաքաղաք Կեսարիա ձեռնադրվելու: Փառահեղ պատվիրակությունը, որ Արշակի կարգադրությամբ ուղեկցեց նրան, խոսուն վկայությունն էր այն բանի, թե ինչ վստահություն ու հարգանք էր վայելում այդ ժամանակ նորընտիր Ներսեսը արքայի մոտ: Հայոց աշխարհի ամենաերևելի տասնյակից կազմված պատվիրակությունը գլխավորում էին Հայր Մարդպետն ու Անդովկ Սյունին: Վերադառնալով, Ներսեսն իսկույն անցավ այն գործունեությանը, որի համար «Մեծ» անունով է հորջորջվել եկեղեցու կողմից. Հայոց աշխարհի վանականացում: Կառուցեց ու վերանորոգեց Տիրանի քանդած եկեղեցիները, սարքեց անկելանոցներ, ուրկանոցներ ու աղքատանոցներ: Վանքապատկան հողերը լցրեց կուսանոցներով ու զինվորական ծառայությունից խուսափող նորաթուխ վանականների միաբանություններով: Գրիգորի տոհմին պատկանող գավառներում ծաղկում էին ձրիակերությունն ու պորտաբուծությունը: Կրկնապատկվեց կրոնավորների թիվը:

356թ. Աշտիշատի ժողովում ի թիվս որոշ օրենքների, որոնք միտված էին ամրապնդել քրիստոնեական հավատն ու եկեղեցական կարգը (ամուսնական, կենցաղային և այլ վարքականոններ), նա հաստատեց այն գլխավոր ծրագրերը, որոնք գտնվելու էին կղերականության ուշադրության կենտրոնում. տնտեսական ռեսուրսների կենտրոնացում եկեղեցու

[108] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.:

շուրջ և միջամտություն պետական գործերին: Արդեն բավական պարզ ուրվագծված էր այն պատկերը, որ ունենալու էր վանական միաբանության վերածվելիք Հայքը. ձրիակերների և նրանց որովայնը պարարտացնող ստրուկների մի օթևան:

Է

Այլ այր դու, տես զանձն քո, զի մի եւ դու կորիցես, եւ աշխարհս վասն քո[109]:

Ներսեսի գործունեությունը չէր կարող չմտահոգել Արշակին, ով գիտակցում էր եկեղեցու հզորացումից Հայոց աշխարհին սպառնացող վտանգը: Այդպես եղել էր միշտ: Արշակը լավ էր սերտել նախորդների դառը փորձը: Եվ հայոց արքունիքը փորձեց օգնել աստծու սպասավորներին՝ ազատվելու մամոնայի իշխանությունից:

Ընդունված է կարծել, թե եկեղեցական հողերի պետականացման առաջին փորձն արել է Պապ թագավորը: Իրականում, երիտասարդ արքան միայն շարունակողն ու հետևորդն էր հոր սկսած գործի: Արշակն էր, որ առաջինը փորձեց կղերական անբավ հարստությունն ուղղորդել պետական գանձարան, կենտրոնախույս ու դավաճան ազնվականների տիրույթները եկեղեցուն նվիրաբերելու փոխարեն պետականացրեց, առաջինը հասկացավ, որ Հայոց աշխարհի տասնհինգից ավելի ամենաբերրի գավառներին տեր ու տիրական դարձած հոգևորականությունը, որն ի լրումն այս ամենի, դեռ ողջ Հայքից գանձում էր նաև տասանորդի, պտղի և հասի հարկեր, վնասից ու կորստից բացի ուրիշ ոչինչ չի տալիս երկրի տնտեսությանը: Արքունիքի ու եկեղեցու միջև պայքարն անզիջում էր: Եկեղեցին կանգ չէր առնում ոչ մի բանի առջև: Պատմիչները մեզ են հասցրել մի պատմություն, որը թույլ է տալիս հստակ պատկերացում կազմել Արշակ-Ներ-

[109] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԳ.:

սես տնտեսական հակամարտության չափերի մասին: Հայր Մարդպետի հետ կապված միջադեպի մասին է խոսքը:

Տիրանի կամքով կրկին առաջ մղված Հայր Մարդպետը, ով ամենայն հոգատարությամբ պահպանեց պետական գանձարանը Հուսիկի նկրտումներից և անթերի կատարեց Գրիգորի տոհմի հրահրած խռովությունները խեղդելու արքայի հրահանգը՝ համարվում էր կղերականների թիվ մեկ թշնամին: Իսկ եկեղեցին, որպես կանոն, չէր ներում իր թշնամիներին...

Հետաքրքիր զուգադիպությամբ Հայր Մարդպետն ու Ներսես պարթևը միաժամանակ շրջագայության ելան իրենց կալվածքներում: Առիթից օգտվելով, Ներսեսը պատարագեց Աշտիշատի եկեղեցում: Այդտեղով անցնող Հայր Մարդպետի մոտ տարօրինակ ցանկություն առաջացավ ստանալ Ներսեսի օրհնությունը: Միշտ ազգային դավանանքին մնացած Հայրը ջերմեռանդորեն աղոթելով Ներսեսի հետ ուրախությամբ համաձայնեց իր պատվին տրվող ճաշին մասնակցելու Ներսեսի հրավերին: Բայց քանզի *«այր էր չարագործ, որի համար չար դիտավորությունները սովորություն էին»*, հարբելուց հետո հանդգնեց *«աստծո, նրա սրբերի և երկնքի վրա բացել իր աղտոտ բերանը»*.[110] Հայր Մարդպետն ասել է. *«Մենք այս տեղերը կքանդենք. այստեղ պետք է արքունի ապարանք շինել: Եթե ես կենդանի մնամ և թագավորի մոտ հասնեմ, ինչ որ այստեղ կա քանդել կտամ, այստեղ եղողներին կհեռացնեմ և այստեղ թագավորի բնակության սենյակներ կշինեմ...»*[111]: Չհասցրեց. *«...Ներսեսն իսկույն բազմաթիվ ազդու և զորավոր անեծքներ դրեց Մարդպետի վրա»*[112]: Պատահական չէ, որ Հայր Մարդպետը կասկածում էր, թե տեղ կհասնի: Ետդարձի ճանապարհին նա սպանվեց կրոնամոլ ձրիակերներից մեկի՝ Շավասպ Արծրունու ձեռքով, որովհետև *«սուրբ Ներսեսի*

---

[110] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց Տան, էջ 81:

[111] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԴ.:

[112] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց Տան, էջ 82:

խոսքերը խառնվեցին կենդանի աստծու խոսքին, որովհետև աստծու մարդու խոսքը երբեք գետնին չէր ընկնում»[113]:

Զավեշտի աստիճան պարզունակ այս պատմությունը, իրականում, Հայոց աշխարհում տիրող ողբալի վիճակի արտացոլումն է: Մարդպետաց մեծ Հայրը, ով զորությամբ ու իշխանությամբ զիջում էր միայն թագավորին, ում բարձը երկրորդն էր Գահնամակում, սպանվում է պետական ծրագիրն իրականացնելիս: Շավասպն՝ ինչպես գիտենք, Տիրանի հրամանով բնաջինջ արված Արծրունի Վաչէի ընտանիքից փրկված վերջին շառավիղն էր, որ մեծացել ու դաստիարակվել էր Մամիկոնյանների տոհմում՝ հետագայում դառնալով նրանց ու եկեղեցու կամակատարներից մեկը: Միամտություն կլինի կարծել, թե Հայր Մարդպետը սեփական նախաձեռնությամբ էր պատրաստվում քանդել եկեղեցական շինվածքները: Իրականում այս դեպքը վկայությունն է այն քաղաքականության, որ արքունիքն սկսել էր իրագործել. Պետականացվում էին վանքապատկան կալվածքները: Հայոց երկրի լավագույն գավառները վերադարձվում էին արքունիքին: Տիրող տրամադրությունները լավագույնս դրսևորվել են Հայր Մարդպետի խոսքերում. *«Մրբերին դուր չեն գալիս աչքի ընկնող տեղերը: Որովհետև, եթե այդպես չէ, ապա նրանք չե՞ն, որ ապրում են մահվան չափ անձուկ կյանքով»*[114]: Սրանք հոգևորականությանը նյութապաշտության ու ընչաքաղցության մեջ մեղադրող մարդու խոսքեր են:

Եկեղեցու կարծիքը բոլորովին այլ էր: Կալվածքների անձեռնմխելիությունը պաշտպանող Ներսեսը Հայր Մարդպետին հայտարարում է, թե ով աչք տնկի իր ունեցվածքի վրա, ուրեմն ուզում է խլել Հիսուսին պատկանելիքը:

Արշակ արքայի և արքունիքի սկսած պայքարը՝ պայքար Հայաստանի տնտեսության ազգայնացման, մասնատված

---

[113] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ժ.:

[114] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց Տան, էջ 81:

հողերի պետականացման համար, հանդիպեց կղերական վերնախավի կատաղի դիմադրությանը և դարերի միջով մեզ հասավ Հայր Մարդպետի եղերական մահը նկարագրող այս դիպվածով ու «աստծո մարդու» «սուրբ» խոսքերով.

«...Իսկ ով որ ագահաբար աչք է դնում և ցանկանում է Հիսուսին նվիրվածին, նա չի հասնի այն նպատակին, ինչ որ սպառնաց, այլ նրա գործած բազմաթիվ մեղքերը նրա մտադրությունը կխափանեն»[115]:

Սա սոսկ Մարդպետաց Մեծ Հորը ուղղված սպառնալիքի խոսք չէր, այլ չարաղետ նախազգուշացում՝ նախատեսված հետագա բոլոր սերունդների համար: Այն կոչված էր հավիտենական նզովքի մղձավանջով լցնելու եկեղեցու հավակնություններին դիմադարձող սրտերը: Եվ դարեր շարունակ այն հաջողությամբ կատարեց իր չարագուշակ դերը...

Արշակը հանդգնել էր դիպչել ամենանվիրականին, որ երբևէ ունեցել է կղերականությունը. նյութական, տնտեսական հիմք - ահա սրբության սրբոցը, առանց որի հնարավոր չէր թեկուզ մեկ օրով ապահովել եկեղեցու գոյությունը: Եկեղեցու երկարակեցության գաղտնիքը խոշոր ավատատիրոջ վերածվելու մեջ էր, և դա հասկացել էր արքունիքը: Այդ պահից սկսած Արշակը ու նրա շրջապատը դարձան Ներսեսի թշնամիները. հանուն տնտեսական գերիշխանության Հայաստանում ծայր առավ լարված հակամարտություն, որը գնալով ավելի ու ավելի լայն չափեր ընդունեց՝ մեծապես ազդելով հայոց պետականության հետագա ճակատագրի վրա:

Եկեղեցին ախոյաններին բարոյապես ոչնչացնելու տասնյակ տարիների փորձ ուներ: Արշակի դեմ, սակայն, ավելորդ զգուշավորությունը չէր խանգարի: Եվ Ներսեսը սկսեց նուրբ մի խաղ, որի մեջ, ժամանակի ընթացքում, կարողացավ ներգրավել ներքին թե արտաքին բոլոր շահագրգիռ ուժերին: Արշակն, իր հերթին, զբաղված էր «ոչ աստծու օրենքներով թագավորելով»:

---

[115] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԴ.:

Ը

Վասակի և Անդովկի օգնությամբ արքային հաջողվեց վերականգնել բանակի նախկին ուժն ու փառքը: Արշակի օրոք հայոց բանակի թիվը 120.000 էր: Դա ժամանակի ամենամարտունակ ու զորեղ ուժերից մեկն էր, որն Արշակին թույլ էր տալիս ոչ միայն պաշտպանել թագավորության սահմանները, այլև խորտակիչ ու ավերող արշավանքներ կազմակերպել դեպի հարևան երկրներ: Հայոց պետությունն ուներ լավ կազմակերպված ռազմական հետախուզություն, որն ապահովում էր Արշակի հետագա բոլոր գործողությունները: Այրուձին կրկին դարձավ հարևան երկրների սարսափի, հարգանքի ու պատկառանքի առարկան: Արշակի ռազմական բարեփոխումները չեն սահմանափակվել բանակի մարտունակության բարձրացմամբ կամ քանակական աճով: Արշակունիների օրոք Մեծ Հայքի պաշտպանության գործում առանձնահատուկ դերակատարում ունեին չորս բդեշխությունները: Սրանք սահմանային այն կուսակալություններն էին, որոնց վերապահված էր երկրի հյուսիսի, հարավի, արևելքի և արևմուտքի պաշտպանությունը: Յուրաքանչյուր բդեշխ, ըստ էության, կիսանկախ մի արքայիկ էր. բազմաթիվ են դեպքերը, երբ հենց սրանք են դյուրացրել թշնամու հաղթական ներխուժումներն Հայոց աշխարհ: Արշակն առավել ուժեղացրեց պետական հսկողությունը դրանց վրա: Տրոհելով բդեշխությունները՝ փոքրացրեց դրանց տարածքային ու ռազմական կարողությունները, միաժամանակ բարձրացնելով արդյունավետությունը: Երկրի հարավային սահմաններին ստեղծվեցին մի քանի նոր՝ կոնկրետ ուղղություններով գործող կուսակալություններ. հարավում Նոշիրականի, Կորդվաց, Աղձնյաց բդեշխությունները՝ համապատասխանաբար՝ Ատրպատական, Ասորեստան, Միջագետք ուղղությունները հսկելու նպատակով: Հյուսիսում Գուգարաց բդեշխությունն էր, արևելքում՝ Փայտակարանինը: Յուրահատուկ ռազմական դեր էր հատկացվում Սյունիքին, որը հնուց

ի վեր ամուր դարբասի դեր էր կատարում հարավ-արևելյան սահմանի համար: Արևմուտքում Ծոփքի կուսակալությունն էր: Սահմանային այս բարեփոխումներն ուղեկցվում էին պաշտպանական ամրությունների կառուցմամբ, բերդերի ամրացմամբ ու սահմանապահ զորքերի ամենօրյա զորավարժություններով: Ռազմական զորությունը Արշակին վստահություն էր հաղորդում որդեգրած անկախ քաղաքականությունն առաջ տանելու գործում, և ոչ միայն: Դեռ կհամոզվենք, որ բոլոր հիմքերը կան ենթադրելու, թե Արշակն իր նախնի Խոսրով Մեծի պես հայտ էր ներկայացրել՝ տարածաշրջանային գերիշխանության հասնելու համար:

Իսկ Հայոց աշխարհի շուրջ ամպեր էին կուտակվում. Պարսկաստանը և Հռոմը պատրաստվում էին պատերազմի: Երկուսն էլ ջանում էին նախօրոք ապահովել Արշակի աջակցությունը: Հայոց արքան, չցանկանալով երկիրը վերածել ռազմական գործողությունների թատերաբեմի, վստահ իր ուժին, մերժում էր երկուսին էլ՝ տենդորեն պատրաստվելով, սակայն, պատերազմի:

Թ

«Դրանք օտար ու հեռավոր երկրից գործի համար ուղարկված են մի հզոր թագավորի կողմից. դրանք Մեծ Տիրոջ պատգամավորներ են. մեր կողմից նրանց վնաս չպիտի հասնի, եթե ոչ՝ պատերազմ կծագի մեր և Հայոց Մեծ թագավորի միջև...» [116]:

Սովորաբար, հունասիրության ախտով վարակված պատմիչները, որոնք երբեք առիթ բաց չեն թողել գովերգելու արևմտյան արժեհամակարգը, միշտ էլ ճգնել են մեծարանքով ներկայացնել հունա-հռոմեական տիրակալներին ու զորավարներին՝ եթե անգամ դրանք չարիք են պատճառել հայ

[116] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե.:

ազգին: Եվ հակառակը, հայոց արքաների ու իշխանների մասին, հատկապես եթե նրանք գործել են արևմուտքի դեմ, դժվար է կարդալ թեկուզ մեկ գովասանական խոսք: Սա, թերևս, բացատրվում է մատենագրության վանքերում ծնվելով և կղերական հետագա գրաքննությամբ: Եթե Խորենացին այս առումով ձգտել է պահպանել խելամիտ լռություն և, չկարողանալով արժանի գնահատական տալ դեմքերին ու դեպքերին, այնուամենայնիվ, չի էլ խեղաթյուրել փաստերը, ապա Բուզանդը աչքի է ընկնում կրոնական անհանդուրժողականությամբ: Մասնավորապես, այն բոլոր պատմական անձերին, ովքեր այս կամ այն չափով հակառակվել են եկեղեցական գաղափարաբանությանն ու նորմերին, նա ներկայացրել է վատագույն կողմերով: Այս առումով, անչափ արժեքավոր է վերոնշյալ խոստովանությունը, որով Բուզանդն ակամայից ներկայացնում է այն մեծ հեղինակությունը, որ ուներ Արշակ արքան միջազգային ասպարեզում:

Այս խոսքերն ուղղված էին Կոստանդիոս Բ կայսրին: Արշակն էր այն մեծ ու հզոր տիրակալը, որի թշնամությունից այդքան զգուշանում էին կայսեր խորհրդականները: Իսկ զգուշանալ հայոց արքայի թշնամությունից, ինչպես կտեսնենք, ավելի քան խելամիտ էր:

Կոստանդիոսը գալիք պատերազմում ցանկանալով ապահովել Մեծ Հայքի աջակցությունը՝ առաջարկում է Արշակին վերանորոգել հայ-հռոմեական դաշնակցությունը: Կայսեր պայմանները, սակայն, խիստ աննպաստ էին Հայաստանի համար: Ամբարտավան բյուզանդացին չէր հասկացել, որ իր առջև Կոտակի ու Տիրանի ժամանակների Հայաստանը չէ: Արշակը, քամահրաբար անպատասխան թողնելով կայսեր նամակը, պատգամավորություն ուղարկեց Բյուզանդիա՝ ներկայացնելու համագործակցության իր պայմաններն ու պահանջները: Պատգամավորությունը գլխավորում էր Ներսեսը. ըստ երևույթին, վերջինս կարողացել էր համոզել արքային,

թե իր կապերն ու համբավը կօգնեն գործը հաջողությամբ գլուխ բերելու: Սակայն, դեպքերը զարգացան սպասվածին հակառակ: Զայրացած Արշակի մերժումից, կայսրը որոշում է պատժել նրան: Ընդհանրապես, Ներսեսի պատվիրակության պատմությունը աղավաղված է ներկայացվել: Նախապես սա ունեցել է մեկ նպատակ. թաքցնել Արշակի ու Ներսեսի միջև սկիզբ առած հակամարտության բուն պատճառներն ու արդարացնել վերջինիս հետագա հակապետական կեցվածքը: Բուզանդը փորձելով ներկայացնել այս ամենը աստվածաբանական վեճի քողի տակ և այդ նպատակով նույնիսկ փոխելով դեպքերի ժամանակագրությունն ու կայսեր իսկական անձը, նկարագրում է հուզիչ պատմություն՝ կայսեր հետ Ներսեսի խրոխտ վեճի մասին: Արդյունքում, իբր կայսրը որոշեց պատգամավորությանը սպանել, սակայն ազդված իր խորհրդականների զգուշացումից, բավարարվեց Ներսեսին աքսորելով[117]: Այս ամենը մտացածին սուտ է, որն իսկույն երևում է դեպքերի տրամաբանական վերլուծությունից: Ներսեսի խորհրդով կայսրը որոշեց ազդել Արշակի վրա՝ նրա դեսպանությանը առատ նվերներով ու մեծ պատիվներով հետ ուղարկելով: Բայց, միաժամանակ ի նշան զորության ու ամենակարողության, Կոստանդիոսը սպանել է տալիս դեռ Տիրանի օրոք Բյուզանդիայում պատանդ գտնվող Արշակի եղբայր Տրդատին: Ներսեսին վարձատրելով առատ պարգևներով, կայսրը նրա հետ Հայք ուղարկեց նաև Տրդատի, ու Արշակի մյուս եղբայր Արտաշեսի որդիներ Գնելին ու Տիրիթին: Այս քայլը մատենագիրները ներկայացրին, իբրև մեծահոգության վառ դրսևորում. զայրացած կայսրը Արշակի ամբարշտության պատճառով սպանեց անմեղ Տրդատին, բայց որպես մեղքերի քավություն, մեծ պատիվներով ուղարկեց արքայի եղբորորդիներին: Իրականում, Տրդատի սպանությունն ու դա Արշակի ուխտադրժությամբ պայմանավորելը հետապնդում

[117] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե.:

էր մեկ նպատակ. թշնամացնել Գնելին հորեղբոր հետ: Հունական փայլուն կրթություն ստացած և մինչ ուղնուծուծը բյուզանդամետ Գնելն էլ, իր հերթին, կայսեր համար մի հարմար թեկնածու էր՝ պատեհ առիթով Հայոց աշխարհի գահին բազմելու համար: Սա այն դեպքում, եթե Արշակը կփորձեր ընդդիմանալ կայսեր կամքին: Ահա թե ինչ պատիվ ու վարձ էր բերում Ներսեսն արևմուտքից: Կայսեր լկտիության գագաթնակետը Հայոց արքային հայրական հոգատարությունն ապացուցելու հռոմեական ձևն էր. Գնելի ու Տիրիթի հետ մեկտեղ, բարոյականության ու առաքինության մարմնավորող «մեծ» Ներսեսը արքունիք էր բերում կայսեր նախկին նշանած Ոլիմպիադային: Սա արդեն Արշակին ուղղված պարտադրանք էր: Ներսեսն ինքը լավ էր գիտակցում, որ նման դեպքերում կայսրերին չեն մերժում. բայց չարաչար սխալվեցին Ներսեսն ու իր տերերը[118]:

Երբ առատ նվերներից ու կայսեր բարեհոգությունից շլացած դեսպանները Արշակին ցուցադրեցին նրա համար նախատեսված կայսերական ադամանդե քարերն ու ճոխ ընծաները, հայոց արքան, կայսեր ամբարտավանությունից խոցված, դիմեց Ներսեսին. *«Այդ քարերը կայսեր գլխին թափվեն և ձեր, որ բերել եք: Քարեր մենք էլ շատ ունենք՝ դրանց տվողի և ձեր՝ բերողներիդ ատամները թափելու. ինչպե՞ս պետք է այս անպատվությանը դիմանամ: Ես այս երախտիքի փոխարենը կհատուցեմ... »* [119]:

Եվ հատուցեց. Արքան Վասակ սպարապետի գլխավորությամբ պատժիչ մի արշավանք ձեռնարկեց մեծամտությունից իրականության զգացումը կորցրած կայսեր դեմ: Վեց ամիս շարունակ հայոց այրուձին ասպատակում ու մահ էր սփռում

---

[118] Բուզանդը փորձելով մինչև վերջ վարկաբեկել Փառանձեմ թագուհուն՝ ասում է, թե Ոլիմպիադայի հետ Արշակն ամուսնացավ առաջինի անտարբերության պատճառով:

[119] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԱ.:

արեւելահռոմեական կայսրության տարածքում: Ավերվեցին Գամիրքն ու նրան հարակից շրջանները: Վասակը, մեկը մյուսի ետևից, առանց դադար տալու, գրավում ու ավարառում էր կայսրության ծովափնյա քաղաքներն ու առևտրի խոշոր կենտրոնները: Կայսրը Արշակի անսպասելի պատասխանից սարսափած՝ ժամանակավոր ճողոպրեց մայրաքաղաքից: Վաղուց, շատ վաղուց էր, ինչ կայսրերը նման պատասխան չէին ստացել Հայքի տերերից:

Բյուզանդիային և նրա հայաստանյան խամաճիկներին ուղղված Արշակի հաջորդ քայլը Ոլիմպիադայի սպանությունն էր: Պատմագրության մեջ վաղուց ամրագրված է, որ խեղճ Ոլիմպիադային սպանել է Փառանձեմը՝ հաղորդության նշխարին թույն խառնելով, խանդից ու նախանձից դրդված: Տրամաբանությունը հուշում է, որ անկոչ հյուրի տեսքով հայոց արքունիք ներխուժած և ամրապնդվել փորձող գոռոզ բյուզանդուհու մահը, եթե նույնիսկ դա թունավորում էր, Արշակի պատասխանն էր Կոստանդիոս կայսրին:

Դեպքերի նման զարգացմամբ խորացավ այն վիհը, որ արդեն առկա էր արքունիքի և հոգևորականության միջև: Եկեղեցու միակ հույսը Գնելն էր, որն արդեն հասցրել էր համախմբել հունասեր նախարարություններին, ովքեր եկեղեցու հայրերի հետ նրան էին տեսնում հայոց գահին: Մնում էր միայն որսալ Արշակին գահընկեց անելու հարմար պահը:

Մոտալուտ պատերազմի հոտը արևմտյան և պարսկական կողմնորոշման ուժերի միջև խիստ սրել էր հակասությունները: Արշակը փորձելով օգտագործել այս տրամադրություններն երկրի պետական շահերի համար՝ օտարամետ դիրքորորշում չուներ, դեպքերն ու իրադարձություններն ընկալում և գնահատում էր սթափ դատելով՝ երկու թշնամի կայսրություններից որևէ մեկի հետ կարճատև դաշինքը պայմանավորելով միայն Հայքի կոնկրետ շահի հետ:

Ժ

Արշակին իր կողմը գրավելու հսկայական ճիգ գործադրեց Շապուհը: 355թ. ցանկանալով ստուգել հայերի ուժն ու դիմադրական զորությունը, նա մեծ զորագնդով ասպատակեց Հայքի հարավային սահմանները[120]: Հայոց սահմանապահ զորքերի ակնթարթային ու հուժկու հարվածից հետո պարսիկներն իսկույն ետ վերադարձան, որից հետո Շապուհը Արշակին հրավիրեց Տիզբոն բարեկամության ու համագործակցության դաշն կնքելու: Հայոց աշխարհում շատ լավ գիտեին Շապուհի նենգ և երդմնազանց բնույթը. Տիրանի կուրացման պատմությունը դեռ չէր մոռացվել: Տիզբոն մեկնելու համար Արշակին հարկավոր էին լուրջ երաշխիքներ: Գործը գլուխ է բերվում Վասակ Մամիկոնյանի ավագ եղբայր Վարդանի օգնությամբ: Տայքի Մամիկոնյանների փորձառու և մեծ հարգանք վայելող նահապետը հայտնի էր պարսից արքունիքում մեծ կապերով. վայելում էր Շապուհի վստահությունը և պարսկամետ ուղղության առաջնորդն էր: Վարդանի հետ էր նաև Արշակի եղբորորդի Տիրիթը: Ոգևորված Արշակի ներքին քաղաքականությամբ, մասնավորապես, եկեղեցու հանդեպ կոշտ դիրքորոշումն ու արևմուտքին պատժելու մի քանի քայլերն ընդունելով իբր պարսկական հակման դրսևորում՝ Վարդանն ու կողմնակիցները ձեռնարկեցին հայոց և պարսից արքաների երկխոսության ստեղծմանը:

Ահա այս Վարդանն է, ում անմիջական միջնորդությամբ և ներկայացրած կոնկրետ ծրագրով Արշակը որոշեց մեկնել Տիզբոն: Արքային ուղեկցում էր Վասակ Մամիկոնյանը: Հայոց սպարապետի ներկայությունը Տիզբոնում խոսում է միայն մեկ բանի մասին. որոշվելու էին ռազմական բնույթի կարևոր հարցեր, բանակցելու էին գալիք պատերազմում հայոց և պարսից համագործակցության մասին:

---

[120] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, էջ 130:

Կնքվեց երկուստեք փոխշահավետ պայմանագիր, որով Արշակը պարտավորվեց առաջիկա պատերազմում օգնել պարսիկներին, փոխարենը՝ վերադարձվեցին հարավային մի շարք երկրամասեր, այդ թվում՝ Հայկական Միջագետքն ու Ատրպատականի հյուսիսային շրջանները[121]: Հայ-պարսկական դաշինքի կարևոր կետերից էր եկեղեցու հարցը: Հռոմեական տիրույթներին սահմանակից Պարսկաստանի շրջանները պատված էին քրիստոնեական համայնքների ցանցով, որոնք բուռն գործունեություն էին ծավալել արևմտյան բարքերի տարածման ուղղությամբ, ինչը չէր կարող չմտահոգել մազդեզանց կրոնը ամրապնդել փորձող Շապուհին: Երկու արքաները որոշում են պայքարել քրիստոնեական գործունեության դեմ: Սա նաև հռոմեական ոտնձգությունների դեմ բավականին լուրջ երաշխիք էր, և թույլ կտար հիմնովին թուլացնել Արևմուտքի ներկայությունը տարածաշրջանում[122]:

Այս համատեքստում անհասկանալիորեն Արշակը հանկարծ լքում է Տիզբոնը: Բուզանդը որոշակի լույս է սփռում Տիզբոնում ծավալված դեպքերի վրա: Արշակը Վասակի ուղեկցությամբ այցելում է Շապուհի հռչակավոր ձիանոցը: Հայոց արքայի հանդեպ անհարգալից վերաբերմունքից զայրացած Վասակը սրախողխող է անում Շապուհի գլխավոր ախոռապետին: Շապուհը հիացած հայոց սպարապետի տիրասիրությամբ և արիությամբ, նրանց այցի ընթացքում պատվում ու մեծ ուշադրության է արժանացնում Վասակին:

---

[121] Արշակի և Շապուհի մինչպատերազմյան հարաբերությունները շատ խառն ու հակասական են ներկայացված մատենագիրների մոտ: Շապուհի կողմից Արշակին մինչև Տիզբոն ընկած կալվածքների նվիրման տեղեկությունը վկայում է միայն իմ վարկածի օգտին (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ի.):

[122] Բուզանդի վարկածը՝ իբր Արշակի Տիզբոնից փախուստի պատճառով Շապուհը կոտորում է քրիստոնյաներին՝ սոսկ արտացոլումն է կնքված այս համաձայնության: Հենց այս դեպքերից հետո ավելի սրվեցին նաև պետություն-եկեղեցի հարաբերությունները:

Չնայած դրան, Վասակը նախանձելով եղբոր վայելած հարգանքին, համոզում է Արշակին փախչել Տիզբոնից[123]:

Արշակի փախուստի պատմությունն իհարկե հեքիաթ է: Կա մեկ այլ կարևոր հանգամանք: Շապուհն, ըստ ամենայնի, Վարդանի միջոցով փորձել է Վասակին գրավել իր կողմը՝ խոստանալով Հայքում եղբայրների համար գերագույն իշխանություն ապահովել: Վարդանը, որ Շապուհի ամենավստահելի մարդն էր Հայքում, վաղուց արդեն հայոց գահի հանդեպ հույսեր էր փայփայում: Վասակն, իհարկե, գիտեր խաղի կանոնները, և մինչև վերջ լսում է եղբոր ու Շապուհի խոստումները: Հայաստան վերադառնալուց կարճ ժամանակ անց Արշակին է ներկայանում Վարդանը՝ հանձնելով Շապուհի հաստատած հայ-պարսկական ռազմական դաշինքի հրովարտակը: Արշակին արդեն հայտնի էին Վարդանի խարդավանքները: Հայոց արքայի հրամանով Վասակը մեկնում է հայրենի Տայք՝ Վարդանին այցելության: Հենց այստեղ էլ, Տայքի Էրախանի անառիկ բերդում սպանելով ավագ եղբորը, Վասակը պատժում է նաև նրա դավադիր ծրագրին մասնակցած այլ իշխանների, այդ թվում՝ արքայազարմ Տիրիթին[124]:

Ինչևէ, հայ-պարսկական ռազմական համագործակցությունն արդեն կնքված էր: Հայոց աշխարհը պատրաստվում էր պատերազմի: Իսկ եկեղեցին՝ իշխանափոխության:

ԺԱ

Եկեղեցին շտապում էր: Հայոց աշխարհն արդեն բավականաչափ հեռացել էր արևմուտքից, և Արշակի ու Շապուհի

---

[123] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԶ.:

[124] Վարդանի մահը նշանակում էր պարսկամետ պարագլուխների պատիժ՝ արքային դավելու համար: Տիրիթը, որ ամենուր Վարդանի հետ էր, անմասն չէր նրա ծրագրից: Հաստատ է մեկ բան. Արշակին Շապուհի ձեռքը մատնելու մեղադրանքը Վարդանի հասցեին: (Հայոց պատմություն, ԺԸ.):

ռազմական դաշինքը չէր կարող չանհանգստացնել կղերական դիվանագետներին ու Բյուզանդիայում նրանց տերերին: Հայոց արքայի դեմ վաղուց արդեն դավ էր նյութվում, որն իրագործելու համար շուտով հարմար առիթ ներկայացավ:

358թ. հռոմեական զորքը հասավ Մծբին: Արշակը չմերժելով Շապուհին՝ անձամբ գլխավորեց հայոց զորքը և շտապեց պարսիկներին օգնության: Հայքի սահմաններից դուրս արշաված հայկական զորագնդերը արքայի, Վասակի ու Անդովկի գլխավորությամբ հասնում են Մծբին: Պարսից բանակը դեռ չէր ժամանել: Ռազմական խորհրդում որոշվեց, որ հաշվի առնելով հայոց ուժերի շահավետ դիրքն ու զորքի մարտական բարձր ոգին, պետք է ճակատամարտ սկսել առանց պարսիկների, զորապետները համոզում են Արշակին՝ կռվի հրաման տալ: Արշակը փայլուն զորավարական ձիրքով օժտված լինելով՝ չցանկացավ հակառակվել: Կար ևս մեկ պատճառ, որ նրան դրդում էր չսպասել պարսիկներին. անհրաժեշտ էր ցույց տալ ամբարտավան հռոմեացիներին, թե ինչ կարող են անել հայոց գնդերը մեն-մենակ՝ առանց պարսից օգնության: Կայսեր զորքը չէր սպասում միայնակ ճակատամարտելու հայերի որոշմանը, և կռիվն ընդունեց հոգեբանորեն անպատրաստ վիճակում: Ճակատամարտը երկար չտևեց. հուժկու գրոհով ճեղքելով հռոմեացիների կուռ շարքերն ու շփոթմունք առաջացնելով՝ հայոց գնդերը սկսեցին վճռական հարձակումը: Արդեն երկար ժամանակ Հայրենիքի սահմաններից դուրս սեփական արքայի համար արշավի չելած հայոց այրուձին սկսեց սարսափելի հունձքը: Կոտորածն ահավոր էր, կայսերական զորքերի խուճապն ու անասնական սարսափը՝ անպատմելի: Քչերն այդ օրը փրկվեցին հայոց սրի հարվածներից: Թողած հազարավոր դիեր ու հսկայական ռազմավար՝ հռոմեական զորքի մնացորդները ճողոպրեցին Մծբինից: Նման խայտառակ պարտություն կայսրը դեռ չէր տեսել[125]:

[125] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ի.:

Ուշացումով տեղ հասած պարսկական բանակի առջև ցնցող տեսարան էր բացվել: Շատ հաղթանակներ տարած Շապուհը չէր հավատում սեփական աչքերին: Կայսերական ընտիր գնդերի դիերով էր ծածկված ողջ հարթավայրը, իսկ հայոց զորքը, կազմ ու պատրաստ, սպասում էր դաշնակցի ժամանելուն: Հայ զենքի փայլուն հաղթանակն ապահովեց Հայկական Միջագետքի միավորումը Մեծ Հայքին: Արշակը տեր էր կանգնում դաշնագրով ամրագրված իրավունքներին: Արշակի բարեկամությունը որոնող Շապուհը նրան առաջարկեց կնության վերցնել աղջկան: Առաջարկը ցնցող էր և անսպասելի: Հայոց արքան, մերժելով Շապուհի փեսան դառնալու շոյիչ առաջարկը, խույս է տալիս Տիզբոն մեկնելու հրավերից: Վասակի ու Անդովկի խորհրդով, որոնք բացահայտել էին Արշակի մերժումից իրեն անարգված համարող Շապուհի նյութած դավը, հայոց արքան շտապում է Հայաստան:

Ըստ Բուզանդի, իբր թե հայոց արքան ողջ զորքով ու մեծամեծերով մեկնեց Տիզբոն՝ տոնելու իր և Շապուհի դստեր հարսանիքը: Անդովկը վախենալով, թե այս ամուսնությունը ստվեր կգցի Փառանձեմի անվանն ու դիրքին՝ որոշում է այն խափանել: Ուստի, կաշառելով Վասակին, հայոց բոլոր իշխաններին և մի պարսիկի, Արշակին խաբում են՝ իբր թե Շապուհն իրեն որոշել է սպանել: Դե Արշակն էլ, միանգամից վերցնում է իր զորքը և փախչում Տիզբոնից[126]:

Հայ-պարսկական դաշինքն այսքանով ավարտվեց: Շապուհը չէր կարող կուլ տալ քթի տակ փառավոր հաղթանակ շահած ու մեծամտաբար իրեն մերժած Արշակի արարքը: Մծբինի հաղթանակը տարածաշրջանում առանց պարսիկի խնդիրները լուծելու պատրաստակամության մասին Արշակի հայտն էր Շապուհին, ում այդպիսի հարևան պետք չէր: Վերադարձած Արշակին մեծ անակնկալ էր սպասվում. եկեղեցին ձեռքերը ծալած չէր նստել այս ողջ ընթացքում:

---

[126] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ի.:

ԺԲ

«Որովհետև դու քո տիրոջ Քրիստոսին դեմ դարձար, ուստի անպիտան ու անարգ դառնաս, ինչպես թափված ջուրը... Եվ այն կործանումը, որ մարգարեի բերանով ասվեց, կհասնի ձեր վրա, որ դուք՝ Արշակունյաց ցեղդ, կխմեք վերջին բաժակը, կխմեք, կհարբեք ու կկործանվեք, և այլևս չեք կանգնի...»[127]:

Ահա դարձյալ Ներսեսն է, որ ցեխ է թափում ողջ արքայատոհմի վրա: Զայրացած էր Ներսեսը, հուսահատ ու շփոթված: Ծրագիրն իրագործելու համար Արշակի մծբինյան արշավանքը Ներսեսին չափազանց նպաստավոր էր թվում: Ի՞նչ էր նրա ուզածը. մի խելոք արքայիկ, հլու-հնազանդ, Խոսրով Կոտակին արժանի ժառանգ, որ երկյուղած ու ամոթխած սրբորեն կկատարի հրահանգներն ու երկրից կջնջի անհնազանդ Հայկյաններին: Եվ որ շատ կարևոր էր. թագավոր, որ Հայոց աշխարհը սկուտեղի վրա կհանձներ Հռոմին: Խորաթափանց կաթողիկոսը գտել էր նմանին: Նրան փնտրել հարկավոր էլ չէր: Գնելի մասին է խոսքը՝ Արշակի եղբորորդու, որին մեր պատմիչներն այնքան քնքշորեն ու փաղաքշաբար «Գնել պատանյակ» են հորջորջում...

Արշակ-Գնել հարաբերություններին քննադիտական տեսանկյունից մոտենալու առաջին փորձն արել է Հրանտ Արմենը՝ փորձելով ցույց տալ, թե այնքան էլ «միամիտ պատանյակ» չէր Գնելը, ինչպես ներկայացնում է Բուզանդը[128]:

---

[127] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ.:

[128] «Չենք գիտեր, թե կայսրը երիտասարդ Գնելին այս բացառիկ պատիվ կընե քաղաքակա՞ն հաշիվներով, որպես ապագա հավանական հայ թագավորի մը, եթե ոչ խղճահարված անոր հայրը սպանել տալուն համար, ինչպես Խորենացին կգրե: Կփորձվինք ենթադրել, թե Կոստանդիոս քաղաքական նկատառումներով կառներ այս քայլը (Տես՝ Պապ Արշակունի. Երուսաղեմ, 1958, էջ 118-124; Փառանձեմ թագուհի, Վենետիկ, 1962, էջ 23-34):

Այնուամենայնիվ, Հրանդ Արմենը հաճախ հայտնվում է պատմիչների ստեղծած կենցաղային կրքերի տպավորության տակ՝ Արշակին ու Վասակին տալով բուզանդական, Գնելին՝ պարսկական կողմնորոշում, Տիրանին համարելով Գնելի հովանավորն ու դեպքերին շահագրգիռ կողմ: Անհիմն կերպով Արշակին և ժամանակակիցներին քաղաքական կասկածելի ուղղություն վերագրելու այս միտումն էլ հենց պատճառ է դարձել Գրիգորի տոհմին Արշակունիների հավատարիմ զինակիցներ ներկայացնելու նրա ձգտմանը[129]:

Լուրջ և հանգամանալից քննելով Բուզանդի և Խորենացու տեղեկությունները՝ Վ. Նալբանդյանը եզրահանգել է, որ այս պատմավեպն իր հիմքով ճշմարիտ դեպքերի վրա է հյուսված, սակայն, գունազարդվել և դարձել է անձնական կրքերով պայմանավորված հորինվածք՝ միայն Արշակին վարկաբեկելու և Ներսեսին աստվածացնելու նպատակով: Շատ ճիշտ նկատելով Վարդան-Տիրիթ, Գնել-Ներսես զույգերի հեռահար նպատակները, նա Արշակին համարում է հայոց պետականության նշանավոր դեմքերից մեկը, որի ուժեղ կամային հատկություններն ու հզոր, ազգային պետականություն ստեղծելու ճիգը դարձել են այն գլխավոր պատճառը, որը ստիպել է Ներսեսին և իր կողմնակիցներին՝ նրան անվանարկել և իբր անձնավորության, և իբր պետական գործչի[130]:

Պահն ավելի քան հարմար էր՝ դավադիրների գործողությունների համար: Երկրից բացակայում էին արքան, սպարապետն ու Անդովկը՝ մարդիկ, որոնց սոսկ ներկայությունն արդեն ստիպում էր զգաստանալ բոլոր չարամիտներին: Ներսեսը համախմբել էր հունասեր հոսանքի բոլոր ներկայացուցիչներին՝ ստեղծելով բավական պատկառելի ուժ: Սրանք, ըստ էության, Հայոց աշխարհում արդեն չունեին լուրջ հակա-

---

[129] Հրանտ Ք. Արմեն, Արշակունիք և Լուսավորչյաններ, ՊԲՀ, 1967, թ. 1:

[130] Նալբանդյան Վ., Գնել-Տիրիթյան վիպական ավանդության պատմական հիմքի հարցի շուրջ, ՊԲՀ, 1964, թ. 4:

կշիռ. սպանված էին պարսկամետ հոսանքի ամենաազդեցիկ պարագլուխներ Մամիկոնյան տոհմի Վարդան նահապետն ու արքազարմ Տիրիթը: Արքայի քաղաքական գիծը պաշտպանող մեծամեծները Վասակի ու Անդովկի գլխավորությամբ հայոց զենքի հաղթանակն էին ապահովում մարտադաշտերում:

Դավադիրներին ամենևին էլ չէր մտահոգում պահի լրջությունը. Պարսկաստանին ու Հռոմին ձեռնոց նետած և առաջին փորձությունները հաղթանակով ավարտած հայոց արքային այժմ, առավել քան երբևէ, երկրում անհրաժեշտ էր միասնություն և համաձայնություն: Բայց այդ ե՞րբ էր պատահել, որ հայոց պետականության խնդիրները հուզեին սեփական շահերը հետապնդող հատվածականներին...

Վերադառնալով պատերազմից, Արշակն իմանում է ցնցող նորությունը. Գնելը հաստատվել է Այրարատի արքունի Ոստանում: Ի՞նչ էր սա նշանակում: Բանն այն է, որ Այրարատում՝ Միջնաշխարհում, թեև հանդիպում ենք արքունի այս կամ այն գործակալություններում ծառայող իշխանական տներին տրված «պարգևականք» կամ ժառանգական կալվածքների, սակայն, այդ ժամանակ Այրարատն ամբողջությամբ հայ արքաների կալվածքն էր՝ Հայոց Ոստանը[131]:

Արքունի կալվածքներ կային և այլուր՝ Անգեղտանը, Ծոփքում, Տարոնում, Վանա լճի ավազանում, Ատրպատականում... Սրանք Ոստանի անբաժանելի մասն էին կազմում: Հինավուրց կարգի համաձայն, որն ամրագրված էր անհիշելի ժամանակներից, արքունի Ոստանում ապրելու իրավունք ուներ արքայազուններից միայն գահաժառանգը: Թեև Պատմահայրը վստահեցնում է, որ այս կարգը սահմանվել է հայոց Վաղարշակ արքայի կամքով, սակայն, ակնառու է, որ մեզանում հաստատվել էր վաղնջագույն ժամանակներից[132]:

---

[131] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 335:
[132] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 246-247:

Սկզբում արքայական ընտանիքի անդամներին արտաբնակեցնում էին Հաշտենից գավառում: Արտավազդ Ա սկսած արքայազուններին իբրև բնակության վայր հատկացվեցին նաև Աղիովիտ և Առբերանի գավառները: Այս գավառները գտնվում էին Վանա լճի հյուսիսային և արևելյան մասերում ու սահմանակից էին միմյանց: Սրանք նույնպես արքունի կալվածքներ էին, որոնց շեներից մաս էր հատկացվում արքայական ընտանիքի անդամներին, այստեղ ապրում էին արքունի ծախսերով և ուտեստով, համարվում ազնվագույնները հայ նախարարների մեջ, իսկ Արտավազդ Ա ողորմածությամբ՝ սկսեցին կրել նաև «Վասպուրական»՝ պատվականագույն և առավել թագավորազն տիտղոսը[133]: Արքունի, սակայն ոչ արքայի սեփականություն այս կալվածքները, որոնք ժառանգական իրավունքով հատկացված էին Վասպուրներին, հայտնի էին «Վասպուրական» ընդհանուր անվամբ:

Արքայազարմ ընտանիքներին հատկացված ուշադրությունը հետապնդում էր մեկ նպատակ՝ թագից ու Ոստանից մեկուսացում և արքունիքը խռովություններից ու գահակալական խժդժություններից զերծ պահում: Մահվան սպառնալիքով արգելված էր Վասպուր ազնվականների բնակությունը Ոստանում: Չնայած արքայի բացակայության դեպքում Վասպուրները ժառանգական օրենքով իրավասու էին գլխավորելու երկիրը, սակայն, խստորեն պահպանվում էր արքունիքից նրանց օտարման կարգը՝ հանուն գահաժառանգի իրավունքների անխախտության: Այն խախտողի վրա գործում էր պետական դավաճանի, դավադիրի դեմ կիրառվող պատիժը:

Այս հինավուրց կարգն է ահա, որ խախտել էր Մեծ Սեպուհ Գնելը: Նա այրել էր ետդարձի բոլոր կամուրջները: Այն խառնաշփոթ, հուզիչ մեկնությունները, իբրև թե անմեղ պատանին Այրարատ էր եկել պապի՝ Տիրանի խնդրանքով, ցնդաբանություն են: Եղելության իսկական դրդապատճառ-

[133] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., ԻԲ.:

ներն ու հիմնական մեղավորների անունները սքողելու նպատակով էլ հորինվեցին Տիրիթի ու Վարդանի քսու մատնության, Գնելի և Փառանձեմի, Արշակի դաժանության մասին պատմությունները: Այնինչ, ամեն ինչ շատ պարզ էր. Գնելը հանդգնել էր խախտել հայրենյաց կարգը, ձեռնոց նետել արքային: Նա թիկունքում ուներ եկեղեցու ու նրան հավատարիմ նախարարական տների հզոր աջակցությունը: Ավելին, Գնելը զինում էր իր շուրջը համախմբված Ներսեսի կողմնակիցներին՝ կայսերական միջոցներով: Կոստանդիոսի ձեռքից ստացած Հյուպատոսի մեծադղորդ տիտղոսն այսպես էր օգտագործում «Գնել պատանյակը»[134]: Սա պարզ դավադրությունից ավելին էր՝ պատերազմ էր հայոց արքայի դեմ հանուն գահի: Ահա թե ինչու, պատմիչներն, հետագա դարերում սրբագրվելով, թողել են հորինվածքների շարան, ամեն ինչ ներկայացնելով կենցաղային, անձնական մանր կրքերի քողի ներքո: Անգամ մրոտեցին հայոց թագուհու անունը՝ ներկայացնելով նախ որպես Գնելի կին, ապա կռվախնձոր՝ Արշակի ու Տիրիթի միջև: Օրմանյանը մինչև իսկ արքայորդի Պապին հայտարարում է Արշակի և Ոլիմպիադայի զավակ[135]:

Ընդհանրապես, ուսումնասիրողներից շատերին է խաճոողել Բուզանդի՝ հայ արքայական ընտանիքը վարկաբեկելուն միտված խառը պատմությունը: Ամեն բան, սակայն, տեղն է ընկնում, երբ տեսնում ենք, թե որքան շինծու և ակնհայտ նպատակաուղղված կեղծիք է պարունակում այս պատմությունը: Փառանձեմը Արշակի միակ և օրինական կինն էր:

Կղերական մատենագիրների խնդիրը մեկն էր. կոծկել այս պատմության գլխավոր հերոսի անունը: Իսկ գլխավոր հերոսն էր եկեղեցին Ներսեսի հովվապետությամբ: Տիրիթն ու Վարդանը վաղուց էին սպանվել Արշակի հրամանով՝ Շապուհի դավերին խառնվելու համար: Անդովկի դուստրն էլ

---

[134] Նալբանդյան Վ., նշվ. հոդվածը:

[135] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 83:

վաղուց արդեն հայոց թագուհին էր. Արքայորդի Պապն արդեն 7-8 տարեկան էր: Հայտնի չէ, թե երբ և ինչպես վախճանվեց Տիրանը, բայց արքայական անունը մրոտողներն անկասկած չէին խորշի դրանում մեղադրել հայոց արքային. Արշակին մեղադրեցին կույր հորը խեղդամահ անելու մեջ, իբրև թե Գնելին պաշտպանելու պատճառով[136]: Տիրանը չէր կարող մասնակցել Ներսեսի ու Գնելի լարած որոգայթներին: Կարծում եմ, հայոց արքային տապալելու ձախողված փորձից հետո դավադիրներն այդ ամենն արքունի ստոր կրքերի լույսի տակ ներկայացնելուց բացի խեղդամահ արեցին նաև կույր ծերունուն՝ դրանում Արշակի անունը ևս մեկ կեղտով մրոտելու համար՝ «հայրասպան»...

Ինչևէ, կռիվն սկսված էր, իսկ Արշակը գիտեր կռվելու արվեստը: Գնելը ձերբակալվում է և որպես պետական հանցագործ մահապատժի ենթարկվում: Արդարացի պատիժ են ստանում նաև նրա մերձավորները: Արքան փութկոտ քայլերով վերացնում է անկարգություններն ու կազմակերպիչներին: Ներսեսի համար սահմանված էր ամենաամոթալին. վտարում: Թեկուզ կղերական մատյաններում աքսորը ներկայացվեց իբրև սուրբ մարդու ինքնակամ հեռացում երկրի գործերից, իբրև վիրավորված ու դառնացած մարդու՝ արքունի բանակը հոժարակամ լքելու պատմություն, բայց տրամաբանությունն այլ է. նա Գնելի դավադրությունը կազմակերպելու և խրախուսելու, արքունիքի անունն արատավորելու, երկրի անդորրը խախտելու և բյուզանդական դավերին ընթացք տալու մեղադրանքով, խայտառակ կերպով հեռացվում է երկրից: Հեռանալուց առաջ միայն, չի մոռանում նզովել Արշակին.

- *«... Կենդանույն թագավորությունիցդ զրկվիս և չարչարանքներ կրես քո Տիրան հորից ավելի և դառն մահվամբ, մեծ նեղության մեջ կյանքդ վերջացնես ...»*[137]:

---

[136] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԻԲ.:

[137] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ.:

Նզովքի այս խոսքերը դարձան այն ուղեցույցը, որով կողմնորոշվեցին հետագա բոլոր պատմիչները Արշակի գործունեությունը գնահատելիս: Հայոց արքային անեծքը հանեց փառքի ճանապարհից և վերածեց անօրեն նզովյալի, հայրասպանի, եղբայրասպանի ու արդար պատժին դեմ-հանդիման գնացող դատապարտյալի:

Եվ արքան վերջնականապես համոզվելով, որ եկեղեցին երբեք չի կարող նեցուկ լինել երկրի հզորացման ճանապարհին, որ արքայականին գերազանցող տնտեսական զորությամբ այն միշտ փորձելու է խեղդել անկախ պետականություն կերտելու սերունդների հետագա բոլոր ձգտումները, անցավ վճռական գործողությունների. արքային հարկավոր էր սեփական ազգային նեցուկ, հիմնավոր, կայուն և հուսալի...

ԺԳ
ՄՈՐԹՎԱԾ ՀՈՒՅՍԵՐԻ ՔԱՂԱՔԸ. ԱՐՇԱԿԱՎԱՆ

... Քո ձեռների շինածները կավերվեն ու էլ չեն շինվի. նրանում բնակված բոլոր անօրենները միանգամայն կկոտորվեն ... Նրանք չեն շինվի և նրանց մեջ հավիտյան մարդ չի բնակվի[138]*...*

Հայոց նորաստեղծ մայրաքաղաքն այսպես էր օրհնվում եկեղեցու կողմից: Հայոց արքայի շինարարական գործունեությունն այսպես էր խրախուսում հոգևորականությունը:

Այրարատ նահանգի Կոգովիտ գավառում, Մասիսի հարավային լանջերին, տարածվում է ընդարձակ հովիտ: Այսօր այնտեղ ավերակներ են՝ ավերակներ, որ 16 դար շարունակ ոչ-ոք չհանդգնեց վերականգնել: Դրանք մնացորդներն են մեծ ու գեղեցիկ մի քաղաքի, որ պետք է դառնար հզոր Հայաստանի մի նոր Տիգրանակերտ, բայց չդարձավ: Ավելի ստույգ՝ չթողեցին: Կարճ տևեց հայոց նորակերտ քաղաքա-

[138] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԳ.:

մայրի կյանքը: Հռոմեացին ու պարսիկը չէ, որ ավերեցին այն, այլ հայը: Աշխարհում ամեն ինչ կարելի է վերակառուցել, միայն՝ ոչ հայի քանդածը, միայն՝ ոչ եկեղեցու ավերածը...

Արշակավան... այս անունը դարեր շարունակ խորհրդանշել է մի նոր Սոդոմ-Գոմոր, պիղծ ու խառնակ բնակավայր, որպիսին կարող էր կառուցել միայն «նզովյալ ու աստվածուրաց» Արշակը: 350-ականների վերջերին Հայոց արքան ձեռնարկեց նոր մայրաքաղաքի կառուցմանը: Առաջին հայացքից անսովոր ոչինչ չկար այստեղ. հզոր ու բարգավաճող տիրակալը կամենում է իր անունով քաղաք կառուցել, արքունիքը տեղափոխել այնտեղ և երկիրը կառավարել այնտեղից: Այսպես եղել է միշտ և ամենուր: Քաղաքի կառուցման աշխատանքներն ընթացան շատ արագ: Ոչ ոքի չէր մտահոգում արքայի նախաձեռնությունը: Բայց շուտով պարզվեց, որ նոր քաղաքամայրն ընդունելի չէ ոմանց համար: Պատճառները մի քանիսն էին. Արշակավանը կառուցվեց Պարսկաստանից դեպի Սև և Միջերկրական ծովերը տանող առևտրական մեծ ճանապարհների խաչմերուկում: Տարածքը սահմանակից էր Կամսարական տոհմի կալվածքներին: Կամսարական տոհմը նախապես հաստատված է եղել Երասխաձորում, որն այս տոհմի նահապետ Արշավիրի անունով՝ սկսեց կոչվել Արշարունիք: Հետագայում Կամսարականները տիրացան Շիրակին՝ ազդեցության տակ առնելով Արաքսի ուղղությամբ դեպի Բասեն ընկած տիրույթները և ժամանակի ընթացքում իշխանության տակ առան նաև Շիրակյաններին, Աբեղյաններին, Հավնունիներին, Գաբեղյաններին:[139] Բացի հողային-տնտեսական ազդեցիկ միջոցներից՝ Կամսարականներն ունեին ևս մեկ արտոնություն, կամ ավելի ճիշտ, օժտված էին մեկ այլ անգնահատելի առավելությամբ, որ հատուկ չէր մյուս ազնվական տոհմերին: Բանն այն է, որ սերված լինելով Կարենի Պահլավի տոհմից՝ սրանք Հայքում հայ Արշակունիների օրոք

[139] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 334-335:

կրում էին «Առաջին իշխան հայոց» տիտղոսը[140]: Դա առանձնահատուկ դերակատարություն էր տալիս այդ տոհմի նահապետին: Արքայի բացակայության դեպքում նա կարող էր ստանձնել երկրի ժամանակավոր իշխանությունը, ինչը տեսնում ենք Խոսրով Կոտակի մահից հետո, երբ կայսեր դուռը գնալուց առաջ, Վրթանեսը երկիրը վստահեց Արշավիր Կամսարականին: Գահնամակի ցուցակում Առաջին իշխանի բարձն ամենավերևում էր՝ մնացած նախարարություններից առանձին: Կամսարականներին բաժին հասած մեծ և հարուստ բնակավայրերից առանձնապես աչքի էր ընկնում Երվանդաշատը: Ամենահարուստ ու բարեբեր բնակավայրերից էր այն, որն իր հարմար դիրքով մեծ եկամուտ էր բերում Գրիգորի տոհմից հետո տնտեսապես ամենահզոր այս տոհմին:

Արշակավանը խլում էր Երվանդաշատից առևտրական շահերի կենտրոնի մենաշնորհը: Միայն սա արդեն մեծ հարված էր Կամսարականներին. միջազգային տարանցիկ առևտուրն արդեն լցվելու էր արքունի գանձարան: Կամսարական տոհմի թշնամական վերաբերմունքը նոր մայրաքաղաքի նկատմամբ արդեն ապահովված էր: Արշակավանը տնտեսապես հարվածում էր նաև Գրիգորի տոհմին, որը նույնպես հարուստ կալվածքներ ուներ այդ կողմերում: Մեծ Հայքի արքան, ով ժամանակի հզորագույն տիրակալներից էր, որքան էլ տարօրինակ է, դժվար էր լուծում նոր մայրաքաղաքի բնակեցման հարցը: Երկու ամենազորեղ ավատատիրական տոհմերը խանգարում էին իրենց կալվածքներին մոտ բնակավայր ցանկացողների հոսքը: Եվ արքան գտավ լուծումը. հատուկ հրովարտակով Արշակավանը հռչակեց բոլոր հարստահարվածների, կեղեքվածների ու զրկվածների օթևան: Այստեղ բնակվելով, ցանկացած հայ գտնվում էր արքայի հովանավորության ներքո: Դեպի Արշակավան հոսքն արագորեն

[140] Այս տիտղոսի ծագումն ու նշանակությունը լավագույնս ուսումնասիրել է Ա.Մուշեղյանը: (Տես՝ Մովսես Խորենացու դարը, էջ 324-328):

մեծացավ՝ գալիս էին եկեղեցու և նախարարների կալվածքներում ճորտի պես բանող գյուղացիներ, կղերականության սահմանած անասելի հարկերից կեղեքված ու ապրուստի միջոց չունեցող ընտանիքներ, վաշխառուական պարտքերից ստրկացած քաղաքացիներ: Իսկ ամենակարևոր հանգամանքի մասին, որը նոր մայրաքաղաքի հանդեպ եկեղեցու թշնամանքի գլխավոր պատճառն էր, լռում են պատմիչները՝ Արշակավան էին գալիս ազգային հավատքի թաքուն հետևորդները[141]: Նրանք կարող էին ազատորեն պաշտել իրենց աստվածներին, հայն այլևս ստիպված չէր մթության քողի տակ թաքուն երկրպագելու Արևին... Արշակավանը ազատության քաղաք էր: Այն վերահառնած պատկերն էր նախաքրիստոնեական Հայաստանի, ուր գործում էր բոլոր դավանանքների ազատության օրենքը, և որևէ մի կրոն չէր ճնշում մյուսներին, այն նախնյաց հավատքին հավատարիմ մնացած բոլոր հայորդիների քաղաքն էր: Բնակիչները մուծելու էին միայն պետական գանձարանի համար սահմանված հարկը: Նրանք անսահման սիրով ու նվիրվածությամբ էին լցված դեպի իրենց արքան: Դա այն հենարանն էր, որ Արշակին օգնելու էր երկրի ներքին կյանքը դեպի վերելք հասցնելու:

Արշակավանում արքունի պալատի շինարարությունը համընկավ Հայքից Ներսեսի վտարմանը: Եկեղեցին փոխանորդ նշանակեց Ներսեսի՝ մոլեռանդ կրոնախևությամբ, խառնակիչ բնավորությամբ ու նյութապաշտությամբ հայտնի, հավատարիմ տեղապահ Խադին, որ դեռ շատ չարիք պետք է նյութեր Հայոց պետության դեմ: Արշակը նրան պատվիրում է նոր մայրաքաղաքում կառուցված եկեղեցում սեղան կանգնեցնել: Ամբարտավան կղերականը մերժում է արքային, պատճառաբանելով նրանով, որ չի կարող առանց Ներսեսի

[141] Ասվածի լավագույն վկայությունը նախատիքի այն խոսքերն են, որ ըստ Բուզանդի, արտաբերել է Ներսեսը Արշակի հետ հանդիպման ժամանակ: (Տես՝ Հայոց պատմություն, ԺԳ.):

կամքի նման բան անել[142]: Արշակը՝ զայրացած Խաղի բութ համառությունից, նրան վտարում է արքունիքից, և կաթողիկոս նշանակում Շահակին՝ Աղբիանոսյան տոհմից[143]: Եվ ամենակարևորը. նրան չի ուղարկում Կեսարիա օծվելու: Պապը, հետագայում, լավ հասկանալով հոր արարքի ողջախոհությունը, նույնը կրկնելու էր: Արշակը փորձում էր վերացնել եկեղեցու կախումն արևմուտքից: Բարձրաստիճան հոգևորականներն, իհարկե, չեն ոգևորվում արքայի որոշումից. ձեռնադրությանը ներկա էին միայն փոքրաթիվ հոգևորականներ: Գրիգորի տոհմը բոյկոտեց հայոց արքային:

Արշակավանի շուրջ կրքերը թեժանում են: Արքայից դժգոհ նախարարները դիմում են Ներսեսի միջնորդությանը[144]: Իրականում, Կամսարականների, կողմնակից մյուս իշխանիկների և Գրիգորի տոհմին հավատարիմ կղերականների նախաձեռնությամբ Ներսեսը որպես պատվիրակ ներկայանում է հայոց արքային: Հարկ է նշել, որ նա Արշակին ներկայացրեց նաև բյուզանդական արքունիքի մոտեցումները:

---

[142] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԲ.:

[143] Օրմանյանը հանգամանորեն քննելով Ներսեսի ինքնության հետ կապված հակասությունները մատենագիրների մոտ, եզրահանգել է, որ իրականում հենց Փառենից հետո տեղապահ նշանակված Շահակն է, որ կրկին առաջ է քաշվում Արշակի կողմից, միայն թե, ըստ նրա՝ ոչ իբրև կաթողիկոս, այլ տեղապահ: Դա բացատրում է հիմնականում այն փաստով, որ Ներսեսը չէր վախճանվել, ուստի Շահակը չէր կարող կաթողիկոս ձեռնադրվել: Շահակի անձի հետ կապված նրա փաստարկներն հիմնավոր են, սակայն, կարծում եմ, այն, որ Ներսեսը դեռևս կենդանի էր, դա Արշակին չէր խանգարում՝ նրան փոխարինել Շահակով, հատկապես, երբ Բուզանդի մոտ հստակ նշվում են վերջինիս ձեռնադրող եպիսկոպոսների տվյալները (Տես՝ Ազգապատում, հտ. Ա, էջ 94: Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ.):

[144] Պատահական չէ, որ Խորենացին գրում է, թե հայ իշխաններն անգամ Շապուհին դիմեցին: Այդ քայլից առաջ է հենց, որ Ներսեսը գալիս է Արշակի հետ բանակցելու:

-«Ինչու՞ դու մոռացար տիրոջը...

Չէ՞ որ քո հայրն էլ նույնպիսի ամբարշտության պատճառով կորավ... Իսկ դու դեռ չհիշեցիր նրան, որ քո հոր մեղքերը չհիշեց և քեզ տվեց նրա տեղը, այսինքն՝ քո հոր թագն ու աթոռը...»[145]:

Ամբարտավան ոճը, որով Ներսեսն սկսեց առաքելությունը, հետևանք էր նրա, որ վտարված կաթողիկոսն արքայի հետ խոսում էր կայսեր անունից: Ուշադրություն դարձնենք սպառնալից ակնարկին: Արշակը մեղադրվում էր հոր պես «տիրոջը» մոռանալու, այսինքն՝ քրիստոնեական դավանանքից երես թեքելու, հայոց ազգային հավատքն արտոնելու մեջ: Արշակին ակնարկվում էր բյուզանդացոց օգնությամբ գահին տիրանալն ու այդ փաստը մոռանալը: Լուռ սպառնալիք կար և զգուշացում Ներսեսի խոսքերի մեջ: Արքան քամահրանքով ու զայրույթով է լսում միջնորդին: Նրան պարզ էր ու հասկանալի այն գլխավոր պատճառը, որ ստիպել էր Ներսեսին մոռանալ վտանգն ու թշնամությունը և ոտք դնել արքունիք: Որպես փոխզիջում առաջարկեց արքային քանդել քաղաքը, ցրել բնակիչներին, որից հետո եկեղեցու օրհնությամբ նույն տեղում կառուցել արդար ու շեն մի բնակավայր: Արշակը, բնականաբար, մերժում է Ներսեսի առաջարկները:

-«Վայ նրան, ով ազահությամբ խլում է այն, ինչ իրենը չէ...»,- անզոր կատաղությամբ նորից ու նորից սպառնալով, Ներսեսը դիմում է վերջին հնարին, փորձելով ահաբեկել արքային արտաքին միջամտությամբ.

-«...Լսիր ինչ որ քեզ ասում եմ և կատարիր, որպեսզի կարողանաս քեզ փրկել աստծու բարկությունից, և թշվառ Հայոց աշխարհն էլ քո պատճառով չկորչի, որովհետև ես տեսիլք տեսա, որ Հայոց կորստական աշխարհի համար կորուստ և կործանում է պատրաստվում գալ...»[146]:

---

[145] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԳ.:

[146] Նույն տեղում:

Իսկ նրա տեսիլքներն ու անեծքները, որպես կանոն, մաթեմատիկական ճշգրտությամբ միշտ էլ իրականանում էին: Տեսիլքն այդ Ներսեսը հաջողեցրել էր տեսնել Բյուզանդիայում: Դիվական զուգադիպությամբ նրա սպառնալիքներից ու հեռանալուց երեք օր հետո Արշակավանում հանկարծակի մահանում է 20 հազար ընտանիք. ախտանշանը՝ ժանտախտ, ավելի շուտ՝ ժանտախտ հիշեցնող անծանոթ հիվանդություն[147]:

Ահավոր այս դժբախտությանը գումարվում է ևս մեկը. Շապուհի ուղարկած մի մեծ զորագունդ մտնելով Հայաստան, գրավում է Դարանաղյաց Անի ամրոցն ու պղծելով հայոց արքաների տոհմական դամբարանը՝ տանում Արշակունիների ոսկորները[148]: Շապուհն ընդհամենը կատարել էր այն խնդրանքը, որ պատմիչը վերագրում է հայ նախարարներին. սրանք պարսիկին հրավիրել էին Հայք՝ իրենց արքայի վրա ազդելու: Շապուհն էլ, բնականաբար, շտապել էր՝ օգտվելով հայոց անմիաբանությունից, անպատիժ հարված հասցնել Արշակին՝ իրեն Մծբինի մատույցում անարգելու համար: Հայոց գնդերը հետապնդում են պարսկական զորքերին, ջարդում Միջագետքում և ետ խլում արքայական մասունքները: Միաժամանակ, հայոց սահմանին են մոտենում բյուզանդական զորքերը[149], սա արդեն Ներսեսի տեսիլքի երկրորդ մասն էր...

Գահակալման առաջին օրից արքան պատրաստվել էր պատերազմի. նա սպասում էր դրան, նախապատրաստում երկիրը, երբեմն կազմակերպում ավերիչ արշավանքներ: Հայ

---

[147] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԳ.:

[148] Բուզանդի մոտ տրամաբանական անհամապատասխանություն կա դեպքերը նկարագրելիս: Շապուհի արշավանքը նա կապում է Մեհրուժան Արծրունու հետ, որն անհավանական է: Խորենացին առավել ճշգրտորեն է ներկայացնում դեպքերը՝ ասելով, որ Արշակունյաց դամբարանի պղծումը եղել է Արշակավանի հետ կապված խժդժությունների պատճառով, հայոց կողմից՝ օտարներին դիմելուց հետո: (Տես՝ Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԻԷ.):

[149] Ըստ Պատմահոր հռոմեացիք եկել էին Շապուհին օգնելու (Նույնը, ԻԹ.):

զինվորը հոգեբանորեն պատրաստ էր՝ կռվելու պարսիկի ու հռոմեացու դեմ, արդեն սովոր էր նրանց դեմ հաղթանակնե-
րին: Եվ ահա, պատերազմի սպառնալիքը չոքել էր դռանը: Բայց հայոց իշխաններն ու եկեղեցին էին այս պատերազմի հրահրողները. Արշակը չէր սպասում դրան: Բյուզանդիան և Պարսկաստանը, օգտվելով Հայքում ծայր առած ներքին խառ-
նակություններից, անսալով եկեղեցու և նրա կամակատար-
ների ստորաքարշ հրավերներին, միաժամանակ շտապում էին պատժել Արշակին. իրականում, արդեն լուրջ սպառնալիք դարձած Հայքի հզորությունն է, որ պետք էր կործանել, թույլ չտալ, որ տարածաշրջանում մի նոր ինքնուրույն խաղացող հայտնվի: Դա բխում էր և Բյուզանդիայի, և Պարսկաստանի շահերից: Այստեղ նրանք, իրենց կամքից անկախ, դադարում էին հակառակորդներ լինելուց: Իսկ պահն ամենահարմարն էր. մինչ արքունի բանակն զբաղված էր Հայոց աշխարհ ներխուժած պարսից զորաբանակի մնացորդները սրբելով, նախարարները՝ Ներսեսի անմիջական գիտությամբ ու թող-
տվությամբ, եթե ոչ՝ նրա իսկ հրամանով, հարձակվում են հայոց նորակառույց, անպաշտպան մնացած մայրաքաղաքի վրա: Արշակավանը դեռ ուշքի չէր եկել համաճարակի հետև-
անքներից: Բայց, ինչպես գիտենք, քաղաքն անիծված էր ու պետք է կործանվեր: Սրի քաշվեցին հիմնահատակ ավերված քաղաքի բոլոր բնակիչներն՝ անխտիր: Ներսեսը, որ պատ-
միչների վկայությամբ չէր խորշում անգամ գողերի, ավա-
զակների ու խարդախների վերքերը դարմանելուց, դաժան-
որեն բնաջնջել տվեց հազարավոր հայ տներ. դրանք ոչ քրիստոնյաներ, նախնյաց հավատքը կրողներն էին. իսկ դա հանցանք էր, որ չէր ներվում: Նա վրա հասավ կոտորածի վերջին պահերին, ու հասցրեց փրկել գոնե խեղճ երեխանե-
րին, որովհետև արդար էր ու խղճով լի[150]: Այդ երեխաներն անպայման հետո կրոնավոր էին դառնալու:

---

[150] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գլուխ Գ., ԻԷ.:

Կործանվեց Արշակավանը: Եկեղեցու, պարսից ու բյուզանդական արքունիքների խարդավանքները տվեցին իրենց առաջին պտուղը. ազահությունից կուրացած հայ իշխաններն իրենց ձեռքերով հողին հավասարեցրին հայոց նորակերտ Ոստանը: Նրա հետ հողին հավասարեցվեց այն հզոր հիմքը, որ երկար տարիների ընթացքում ստեղծել էր հայոց արքան՝ ազգային միասնությունն ու ներքին կայունությունը:

Ներսեսը տոնում էր հաղթանակը: Հիմա նա կարող էր Արշակին թելադրել խաղի կանոնները: Հակառակ դեպքում, արքան ստիպված էր լինելու պատերազմել երկու տերությունների դեմ՝ միաժամանակ: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ դավաճան իշխաններն իրենց զորքերով չէին մասնակցելու այդ պատերազմին, և ավելին, շարժվելու էին միայն Ներսեսի հրամանով, ապա դժվար չէ պատկերացնել Արշակի դրությունը: Արքային հարկավոր էր ժամանակ շահել, և Արշակն ընդունեց Ներսեսի միջնորդությունը: Ներսեսը տարերքի մեջ էր: Արշակի առջև դրված պայմանները մի քանիսն էին. վերջ տալ եկեղեցու և մասնավորապես Ներսեսի հանդեպ հալածանքներին, ներել նախարարներին իրենց հանդուգն արարքը, հրաժարվել Արշակավանը վերականգնելու գաղափարից: Արշակն ընդունում է նաև պարսից դեմ համագործակցելու՝ Կոստանդիոս կայսեր առաջարկը:

ԺԴ

Այժմ Ներսեսը, միառժամանակ, կարող էր հանգիստ շունչ քաշել: Նրան վերջապես հաջողվեց՝ թեկուզ ժամանակավորապես, զսպել Արշակին: Այժմ հարկավոր էր վերականգնել եկեղեցու խարխլված հեղինակությունը: Նա ամբողջ պատմության ընթացքում մնալով ստվերում՝ կարողացավ ճիշտ ժամանակին հանդես գալ, իբրև հաշտարար: Դա արդեն, որոշ չափով բարձրացրեց նրա հեղինակությունը: Արքան նույնպես ժամանակ էր շահում՝ խարխլված հեղինակությունը

վերականգնելու, երկրի կարողություններն ի մի բերելու և գալիք պատերազմին լավագույնս պատրաստվելու համար: Շապուհն այլևս հայոց արքայի դաշնակիցը չէր: Նախարարական խժդժությունների արդյունքում Հայքի թագավորությունից պարսիկներն անջատեցին Հայկական Միջագետքը, ուստի, կամենար դա Արշակը, թե ոչ՝ տվյալ պահին միակ խելամիտ ելքը բյուզանդական կայսեր առաջարկն ընդունելն էր:

Մինչև 361թ. բոլոր կողմերը տենդորեն պատրաստվում էին պատերազմի: Շապուհը զբաղված էր պարսից տերության թիկունքն ամրապնդելու, ապստամբած իշխանություններին ու թագավորություններին հնազանդեցնելու գործով: Նա կենտրոնացնում էր ողջ զորությունը Բյուզանդիայի հետ առճակատման համար: Իմաստուն ու փորձառու Շապուհն, այս համատեքստում, շատ լավ էր հասկանում Արշակի բռնած դիրքը: Հայոց արքան չէր հրաժարվել հավակնություններից: Ավելին, Բյուզանդիայի հետ հաշտվելով, կրկին վերականգնեց ուժերը և դարձյալ մեծ սպառնալիք էր Շապուհի համար: Արիների առաջին գահը - ահա թե ինչին էր ձգտում Արշակը: Շապուհը տեսնում էր դա և անհանգստանալու հիմք ուներ. պարսից տերության մեջ քիչ չէին իշխանություններ, որոնք հայոց արքայի կոչով կհամախմբվեին ընդդեմ Շապուհի: Խոսրով Մեծից հետո պարսից տերությունը դեռևս այսպիսի վտանգավոր ախոյան չէր ունեցել: Արշակը ռազմական ու քաղաքական նախապատրաստությունների մեջ էր:

361թ. մահացավ Կոստանդիոս Բ: Նրան հաջորդած Հուլիանոսը, որը պատմության մեջ հայտնի է «ուրացող» մականունով, պետական մակարդակով վերականգնեց հեթանոսական կրոնի իրավունքները, վերացրեց եկեղեցիների արտոնությունները: Այս հանգամանքը չէր կարող չազդել Հայոց աշխարհի ներքին քաղաքական կյանքի վրա: Ներսեսը զրկվեց իր հովանավորից, որի շնորհիվ հանդուրժվում էր Արշակի կողմից: Այժմ արդեն հայոց արքայի ձեռքերն ազատ

էին: Արշակավանի անպատիժ կործանումը խարխլել էր արքունի հեղինակությունն ու էլ ավելի համարձակություն տվել եկեղեցուն և կողմնակիցներին: Վերահաս պատերազմից առաջ Արշակին հարկավոր էր նախ և առաջ ապահովել բացարձակ իշխանությունը երկրի ներսում: Պահը հարմար էր, և արքան անցավ կարգուկանոնի վերականգնմանը:

Հարկավոր էր պատժել սեփական երկրի դեմ օտար զորք բերողներին: Արշակն սկսեց Կամսարականներից: Արշակավանի կործանման հաշվին այս տոհմի հեղինակությունն ավելի էր բարձրացել: Հզոր Արշակի դեմ կատարած անպատիժ հանցանքը սրանց դարձրել էր առավել հանդուգն ու հավակնոտ: Արքայի հրամանով սպանվում է Արշավիր Կամսարականի եղբայր Ներսեհը, որն Արշավիրի մահից հետո ստանձնել էր տոհմի նահապետությունը: Մեծ էին Արշավիրի ծառայություններն հայոց պետականությանը: Տարիներ շարունակ Անդովկ իշխանի հետ միասին պայքարել էր հայոց գահի ամրապնդման համար: Ներսեհն եղբոր հակապատկերն էր՝ հավակնոտ ու ամբարտավան, Գրիգորի տոհմի կամակատարն ու արքունիքի երդվյալ թշնամին: Կամսարականների տոհմը հիմնովին բնաջնջվում է: Պատմիչները վկայում են, որ այս կոտորածից փրկվել է միայն Արշավիրի որդի Սպանդարատը, որը գժտված էր Ներսեհի հետ, կին էր առել Արշակունյաց տոհմից և բնակվում էր Հաշտենից գավառում[151]: Սպանդարատին մենք դեռ կտեսնենք Պապի բանակում՝ հանուն արքայի անձնվիրաբար մարտնչելիս: Կամսարական տոհմի բոլոր տիրույթները պետականացվում են: Արքունի տիրույթներին է միացվում Երվանդաշատը:

---

[151] Սա Խորենացու առավել խելամիտ բացատրությունն է Սպանդարատի կոտորածից զերծ մնալու մասին: Երիտասարդ իշխանը Արշակունյաց փեսա էր և ապրում էր կնոջը հատկացված ժառանգական կալվածքում: Բուզանդն, ըստ սովորության, նրան ներկայացնում է իբրև մի մանուկ, որը փրկվեց... կրկին Վասակի շնորհիվ:

Գահնամակում հանդիպում ենք հետաքրքիր փաստի, որը տարակարծության տեղիք է տվել. ցուցակի ամենավերևում իրար են միացված երկու մեծ տիտղոս-պաշտոններ՝ «Առաջին իշխան հայոց և մաղխազն»: Ի՞նչ է սա: Այս հանգամանքն անգամ վերագրվել է ցուցակի անճշտությանը: Հայտնի փաստերի զուգադրմամբ Ա. Մուշեղյանը տրամաբանորեն եզրահանգեց, որ երկու պաշտոնների միավորումն արտացոլում է 428թ. հետո տեղի ունեցած մի իրողություն. շնորհազուրկ Կամսարականներին հատուկ տիտղոսը պարսից արքան տվել է Հայկյան Խոռխոռունիներին[152]: Համաձայնվելով՝ համոզված եմ, որ Կամսարականներից այս տիտղոսը խլվել է ոչ թե 428թ. հետո, այլ հենց Արշակ Բ հրամանով՝ Արշակավանի դեպքերից հետո: Խոռխոռունյաց նահապետ Գարջույլ Մաղխազին շնորհվեց նաև «Առաջին իշխան հայոց» տիտղոսը, որով «երկրորդական գահն» Հայոց աշխարհում տրվեց Հայկյան ազնվատոհմիկներին: Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա Գահնամակի չարչրկված ժամանակի հարցը կարող է ետ դառնալ առնվազն մինչև 4-րդ դար՝ իհարկե, սահակյան փոփոխություններով: Կամսարականների բնաջնջումը սարսափելի հարված էր եկեղեցուն ու նրա կողմնակիցներին: Ներսեսը զրկվեց մարտնչող ուժից: Շիրակն ու Արշարունիքը Այրարատի ամենահարուստ ու շեն գավառներից էին: Եկեղեցին ու հունասերները զրկվեցին այդ անբավ հարստությունից. գավառները պետականացվեցին: Անխտիր պատժվեցին բոլոր այն նախարարները, ովքեր խառն էին Արշակավանի կործանման ու Մեծ Հայքի դեմ պարսկահունական զորքեր հրավիրելու գործին: Արքան չխնայեց ոչ ոքի, ցույց տվեց, որ Պետության ու Ազգի դեմ կատարված ցանկացած հանցագործություն պատժվում է դաժանորեն, որ ինքն էլի իր բարձրության վրա է, որ ինքն է Հայքի տերը: Կամսարականների բնաջնջումը նաև ազդանշան էր Ներսեսի

[152] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 32:

համար, ով իսկույն հասկացավ, թե ինչ է պետք անել: Նա թողեց ամեն ինչ ու փախավ՝ ըստ երևույթին, ոչ Բյուզանդիա, քանի որ այնտեղ էլ իրեն չէին սպասում: Հավանաբար թաքնվեց Հայոց աշխարհում՝ շարունակելով ընդհատակից ուղղորդել արքայի թշնամիներին: Արշակը չխնայեց նաև Արշակավանի կործանմանը ուղղակի մասնակցած եկեղեցականներին. պատժվեցին բոլորը: Փրկվում է միայն Խադը, որին արքան հրամայել էր քարկոծելով սպանել: Ապահունյաց տոհմից մի քանիսը փախցնում են նրան[153]: Արշակը կրկին առաջ է քաշում Աղբիանոսի տոհմից Շահակին: Սրանից հետո, մինչև Ներսեսի երկրորդ գալուստը, եկեղեցին հաշտ ու խաղաղ, արքունիքի հետ համերաշխ, նպաստելու էր երկրի ներքին բնականոն կյանքի վերականգնմանը:

Արշակը կրկին իր ձեռքում կենտրոնացրեց ողջ իշխանությունը: Հիմա նա էլի հզոր էր ու հաղթական՝ իր բանակի, իշխանների ու ազգի համար: Երկրի ներքին կայունությունը վերականգնվեց: Արշակն անցավ հայոց սահմանների ամրապնդման, ռազմական բարեփոխումների և ուժերի տեղաբաշխման գործին: Արքան պատրաստվում էր արշավանքի:

ԺԵ
ՊԱՏԵՐԱԶՄ

Իմն է այդ տեղը, ուր դու բազմել ես. վեր կաց այդ տեղից, որ ես բազմեմ, որովհետև մեր Ազգի տեղն այդ է եղել[154]...

Զայրույթի պահին Արշակի՝ Շապուհին ուղղված այս խոսքերը ուղղակի վկայությունն են մի բանի. Արշակը հավակնում էր «արքայից արքայի» տիտղոսի կամ տարածաշրջանային

---

[153] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԼԲ.: Խադի դուստրերն, ըստ Խորենացու, ամուսնացած էին Ապահունյաց սեպուհների հետ:

[154] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԴ.:

գերիշխանության: Մեր պատմագրության մեջ պահպանված է մի թյուր մոտեցում, ըստ որի, «խեղճուկրակ Հայաստանը» 363թ. մնաց միայնակ՝ ահեղ Պարսկաստանին դեմ-հանդիման, իսկ Արշակը հուսահատ ինքնապաշտպանական մարտեր էր մղում հզոր ախոյանի դեմ: Հայոց թագավորությունը միշտ ներկայացվել է որպես Հռոմի ու Սասանյանների միջև ձեռքից-ձեռք անցնող մի սատրապություն, իսկ հզոր ու կամային արքա Արշակը՝ խեղճուկրակ, սեփական երկրի ներսում իր հարցերը լուծել չկարողացող մի արքայիկ: Այս մոտեցումը, որ արդյունք է մեր մատենագիրների՝ հատկապես Բուզանդի, կանխակալ պատմությունների, չնչին տարբերություններով հիմնականում ընդհանուր է պատմաբանների մոտ: Հակառակը մատնանշող ցանկացած վկայություն դիտվել է, որպես առասպել կամ կեղծիք[155]: Սա, իհարկե, արդյունք է նաև ազգային թերարժեքության բարդույթի: Այնինչ, սկզբնաղբյուրները, որքան էլ ջանացել են մռայլ գույներով ներկայացնել ժամանակի հայոց տերերին, թողել են ուղղակի վկայություններ, որոնք պարզապես հարկավոր է տեսնել ու ընդունել:

Արշակը երկրի ներքին կյանքը կարգավորելուց հետո պատրաստվում էր վճռական պատերազմի: Թշնամին մեկն էր՝ Շապուհը, որ մինչև 363թ. մի քանի անգամ արդեն Հռոմի հետ հաշտություն կնքելու փորձ էր արել: Սասանյան Պարսկաստանն ու Արշակունյաց Հայքը պատրաստվում էին առանց Հռոմի մասնակցության ավարտին հասցնելու դինաստիական այն պայքարը, որ սկիզբ էր առել Արտաշիրի ու Խոսրով Մեծի օրերից: Արշակի ուժը նրան թույլ էր տալիս չճանաչելու Շապուհի գահակալական օրինականությունը: Արշակն

---

[155] Ըստ Հ. Մանանդյանի 363թ. ամոթալի դաշնագրի արդյունքում արքունիքում հուսալքություն էր տիրում: Նա համոզված պնդել է, թե բացառված էին Արշակի հարձակողական պատերազմները Պարսկաստանի դեմ: Թեպետ, ընդունում է, որ չորս տարի շարունակ Արշակը դիմադրել է Շապուհի հարձակումներին (Երկեր, հտ. Բ, էջ 184):

իր տոհմին էր տեսնում պարսկական գահին, և իր ողջ քաղաքականությունը տանում էր այդ ուղղությամբ: Հայոց արքայի շուրջն համախմբվեցին Պարսկաստանին ենթակա շատ իշխանություններ: Արշակը ոտքի հանեց վրաց, աղվանից և հոնաց աշխարհները, Կովկասի ու Պարսկաստանի արևելյան երկրների ցեղերին: Ստեղծվեց ռազմական դաշինք, որտեղ պատերազմի ու խաղաղության վճիռը կայացնելու էր հայոց արքան: Արշակն ամենայն բծախնդրությամբ ամրապնդեց հայոց սահմանները: Սյունյաց նահապետ Անդովկը նշանակվեց Տիգրանակերտի ու Աղձնիքի վերակացու: Այսպիսով, Արշակը հայոց հարավային դարբասները դրեց հուսալի ձեռքերում: Սպարապետ Վասակի գլխավորած բանակն իր նմանը չուներ աշխարհում: Սա պարզ սնապարծություն չէ, այլ բազմաթիվ փաստերի հիման վրա արված եզրակացություն: 120.000-ոց հայոց բանակի արքունի կամ Հայկական Գունդը, որի թիվն անցնում էր 65.000-ից, պատրաստ էր՝ ցանկացած պահի, անցնելու հեռավոր արշավանքների:

Եղիշեն և Փարպեցին խոսում են պարսից բանակի կազմում գոյություն ունեցած Մատեան գնդի մասին: Դա նույն «Անմահների գունդ» կոչված ստորաբաժանումն է, որը հիշատակվում է դեռ Գավգամելայի ճակատամարտում: Գնդի թվակազմը փոփոխության երբեք չէր ենթարկվում այն պատճառով, որ ճակատամարտում զոհված յուրաքանչյուր զինվորի փոխարեն՝ արդեն վաղօրոք պատրաստված էր նրա տեղը զբաղեցնողը: Անմահների գնդի կազմն, այսպիսով, երբեք չէր նվազում, և ոչ էլ՝ ավելանում: Ըստ Ն.Արզումանյանի նման ստորաբաժանում գոյություն է ունեցել նաև հայոց բանակում: Քննելով «Մատեան» բառի ուսումնասիրողների մոտ ընդունված սխալ մեկնաբանությունները, նա այն բխեցրել է միջին պարսկերենի «մաթակ-էգ ձի» բառից:[156] Սրանով, ինքնին,

[156] Արզումանյան Ն., Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող «Մատեան Գունդ» զորամասը, ՊԲՀ, 1973, թ. 2:

հայոց մոտ նման ստորաբաժանման գոյությունը ենթադրվում է իբրև պարսկական ազդեցություն: Մատեան Գունդը հենց հայերենով ստուգաբանվում է իբրև «մատակներից կազմված այրուձի»: Այն, որ հայոց բանակում անհիշելի ժամանակից գործածվել է մատակը, հետևում է նաև Ստրաբոնի վկայությունից՝ արքայական կոչվող 50.000-ոց մատակ ձիերի երամակի մասին[157]: Ըստ Արզումանյանի, այս ձիերն առաջին անգամ Հայկական Լեռնաշխարհում են օգտագործվել ռազմական նպատակներով: Նշեմ մի շարք պատճառներ՝ մատակի առավել դիմացկունությունը հովատակի համեմատ, նրա հանգիստ, անդյուրագրգիռ բնավորությունը և վարգի ընթացքում միզելու կարողությունը, այն դեպքում, երբ հովատակը միզելու համար պետք է կանգնի: Համոզված եմ, որ «Մատեան գունդ» ասելով, մատենագիրները պարսից համապատասխան ստորաբաժանումը կոչել են հայոց մեջ երբևէ գոյություն ունեցած Գնդի անվանումով, ինչի լավագույն ապացույցը Խոսրով Կոտակի օրոք գոյություն ունեցած Մատենիկ Գնդի մասին վկայությունն է: Մատեան Գունդը զուտ հայկական երևույթ է, որը հետագայում փոխ են առել պարսիկները: Դա հենց նույն Հայոց Գունդն է՝ հարձակողական պատերազմի համար նախատեսված անհաղթելի այրուձին, որը նույնպես համարվում էր արքայական, և գլխավորվում էր Մաղխազի կողմից: Եղել են նաև Հայոց Գունդը՝ Ոստանիկ գնդին նույնացնելու փորձեր, ինչը համոզիչ չէ: Փավստոսի նշած «Մատենիկ Գունդը» հենց այն արքունի գվարդիան է, որ մինչև Արշակ Բ կատարում էր արքայի թիկնազորի պարտականությունը և գլխավորվում էր Խոռխոռունյաց Մաղխազի կողմից: Արշակի և Վասակի նախաձեռնությամբ այն վերակազմավորվեց, և միաժամանակ, ընդլայնվեցին նաև նրա գործառույթները:

Հայոց Գունդը նախատեսված էր հարձակողական պատերազմների համար՝ խիստ հազվադեպ մի բան, նույնիսկ մեր

[157] Страбон. География. М., 1964, сс. 11-13, 7.

օրերում, երբ երկրի բանակի ուղիղ կեսը նախատեսված լինի հատուկ հարձակողական պատերազմների համար: Այն վերակազմավորված աշխարհահռչակ այրուձին էր՝ համալրված հատուկ գործողությունների համար նախատեսված մի քանի հետևակ ընտիր ստորաբաժանումներով, բացառապես Արշակի ու Վասակի տաղանդի ծնունդն էր, և արդեն մեկ անգամ չէ, որ հասցրել էր մահ ու սարսափ սփռել հռոմեացոց ու պարսից երկրներում: Նրա մասին դեռ նախանձոտ հիացմունքով պետք է խոսեր անգամ գոռոզ Շապուհը: Ինքնապաշտպանության խնդիրները հազիվհազ լուծող մի երկիր հազիվ թե կարողանար կամ կարիքն ունենար նման զորք պահելու: Բանակի մյուս մասը՝ մոտ 55.000 հետևազոր և այրուձի, կազմված էր նախարարական գնդերից ու աշխարհազորից[158]:

Հուլիանոս կայսրը համախմբելով իրեն դաշնակից բոլոր ուժերին՝ 363թ. արշավեց Պարսկաստան: Կայսրի ծրագիրը մեկն էր. թողնել պաշտպանողական մարտերը, որ մինչ այժմ վարվել էին նախորդների կողմից, անցնել հարձակողական գործողությունների և գրավելով պարսից մայրաքաղաքը՝ Սասանյան գահին նստեցնել Հռոմի դրածոյին: Արշակն օգտվելով հարմար պահից՝ անցավ հարձակման: Հաշվված շաբաթների ընթացքում Հայոց Գունդը անցնելով Մեծ Հայքի սահմանները, ներխուժում է Հյուսիսային Միջագետք[159]:

Ժամանակին շրջանառության մեջ դրվեց մտացածին մի փաստաթուղթ՝ Հուլիանոս Ուրացողի նամակն Արշակին, ով ներկայացված էր որպես խղճուկ սատրապ, որ ուղղակի

---

[158] Սա Հայկյան հզոր արքաների օրերի հայոց բանակի պատկերն է: Արշակին ու Վասակին լիովին հաջողվել էր վերականգնել հայ զինուժի նախկին զորությունը:

[159] Ըստ պայմանավորվածության, Արշակը պետք է վճռական պահին ներխուժեր բուն Միջագետք և Ասորեստան՝ միանալու Հուլիանոսին, ապահովելով նրա հաջող առաջխաղացումը կամ նահանջը՝ արշավանքի ձախողման դեպքում: (Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ. 179):

պարտավոր էր զորքով գնալ կայսերն օգնության: Ահա հռոմեացի եկեղեցական պատմիչի այս կեղծ նամակը.

«*Հայաստանի սատրապ Արշակին.*

Պատրաստվիր Արշակ, անմիջապես կռվի թշնամիների դեմ, զենք առ ձեռքդ՝ պարսից մոլեգնության դեմ: Մեր նախապատրաստության և ցանկության կետ նպատակն է երկուսից մեկը՝ կամ կատարել մեր պարտքը և մեռնել պարթևների երկրում, գործելով մեծամեծ սխրագործություններ և պատճառելով հակառակորդին ամեն հնարավոր չարիքներ, և կամ նրանց պարտության մատնելով աստվածների օգնությամբ՝ տուն վերադառնալ փառքով պսակված և բերել թշնամուց ռազմական ավար:

Արդ, թոթափիր քո անփութությունը, թող քո խաբեությունները: Մոռացիր այն երանելի հանգուցյալին, ինչպես և բարեազնիվ մարդկանց լիառատ հարստությունները՝ այն, որ առատորեն տալիս էր քեզ և քո նման բարբարոսներին մեղկ ու շռայլ Կոստանդիոսը: Նկատի ունեցիր, որ այժմ գործ ունես Հուլիանոսի հետ՝ բարձրագույն քրմապետի, Կեսարի, Օգոստոսի, աստվածների ու Մարսի սպասավորի, ֆրանկների ու բարբարոսների կործանողի և գաղղիացիների ու իտալացիների ազատարարի:

Թերևս դու որևէ ա՞յլ մտադրություն ունես: Ես գիտեմ, որ դու նենգամիտ ես, անարի զինվոր ես և պարծենկոտ, ինչպես ինձ այդ ցույց են տալիս ներկա անցքերը, որովհետև դու փորձում ես թաքցնել ու պահել քո մոտ հասարակական օգտի մի թշնամու և ուզում ես սպասել մինչև այն ժամանակ, երբ կպարզվի այս պատերազմի ելքը:

Աստվածների օգնությունը մեզ բավական է, որպեսզի ջախջախենք մեր թշնամիներին: Իսկ եթե ճակատագիրը, որի վճիռը աստվածների ցանկությունն է, այլ կերպ որոշի՝ ես կընդունեմ այն անվեհեր ու արիաբար: Իսկ դու իմացիր, որ պարսիկների ձեռքի զոհը կլինես, և քեզ հետ միասին իսպառ

կկործանվի նաև քո տունը և Հայաստանի թագավորությունը: Մծբին քաղաքը նույնպես հաղորդակից կլինի ձեր դժբախտությանը: Վաղուց ի վեր երկնքի աստվածները մեզ այդ հայտնի են արել»:

Ինչպես իրավացի նկատել է Մանանդյանը, Հուլիանոսն առնվազն խելացնոր պետք է լիներ՝ հիմնական դաշնակցին նման նամակ ուղարկելու համար: Կեղծիքը հին է, և նպատակ է ունեցել վարկաբեկելու «ուրացյալ» կայսրին[160]:

Ավելացնեմ, որ այն նպատակ է ունեցել վարկաբեկելու նաև Արշակին: Նամակի անվավեր ու կեղծ լինելու փաստն, իհարկե, ապացուցվեց: Բայց, որքան էլ զարմանալի է, այն արեց իր սև գործը. Արշակը պատմության մեջ մնաց իբրև Հուլիանոսին ընդառաջ վազող մի վասալ: Տրամաբանենք ինքներս:

Շապուհը լավ էր հասկանում, որ հայոց արքան առիթը բաց չի թողնելու՝ Հյուսիսային Միջագետքն ու Ատրպատականն ասպատակելու համար: Պարսից բանակի մի մեծ հատված Հայոց Գնդին էր սպասում Պարսկահայքի սահմաններին: Վասակը հուսախաբ արեց Շապուհին: Կարճ ժամանակ անց, Հյուսիսային Միջագետքն ամբողջությամբ գտնվում էր հայկական վերահսկողության տակ: Այդ նույն ժամանակ, Հուլիանոսի հռոմեական զորքերն անցնելով Տիգրիսն ու իրար ետևից գրավելով և ավարառելով պարսից քաղաքները, մոտեցան Տիզբոնին: Ճակատամարտում պարսից բանակը ջախջախվեց, բայց անառիկ Տիզբոնն անհասանելի էր հռոմեացիներին: Կայսրը հասկանալով, որ զուր տեղը ժամանակ է վատնում և հյուծում սեփական զորքերին՝ նահանջի հրաման տվեց: Հռոմեական զորքերը նահանջում էին: Պարսիկներն ամեն կերպ խանգարում էին նրանց ապահով ետդարձին: Կտրել էին կապի ու պարենամթերքների միջոցները, գիշերային անսպասելի հարձակումներով ուժասպառ էին անում կայսերական զորքը: Հայոց Գունդը, սակայն, որ ըստ պատ-

[160] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 179:

մաբանների, կոչված էր կռվելու հռոմեական լեգեոներների առջևից, հաստատուն կերպով հսկում էր Հյուսիսային Միջագետքի սահմանները և անվրդով հետևում հռոմեական նահանջին: Արշակ արքան վերցրել էր Միջագետքից իրեն հասանելիքը և ամենևին էլ միտք չուներ հռոմեական կասկածելի արշավանքին զոհելու հայ զինվորի կյանքը:

Պարսից հարձակումներից մեկի ժամանակ Հուլիանոսը սպանվեց: Նոր կայսր Հովիանոսը (363-64) Հռոմ վերադառնալու և դիրքն ամրապնդելու նպատակով շտապ հաշտություն կնքեց Շապուհի հետ: Երկուստեք կնքվեց մի պայմանագիր, որը հռոմեական պատմագրության մեջ մնացել է «ամոթալի» անվամբ. Հռոմն հրաժարվեց մինչ այդ տարածաշրջանում ունեցած բոլոր հավակնություններից: Պայմանագրում կար մի հետաքրքիր կետ, որը մինչև օրս տարբեր շահարկումների առիթ է տվել: Հռոմը պարտավորվում էր չխառնվել պարսից և հայոց միջև ծագելիք հետագա պատերազմին: Սա հիմք է տվել ենթադրելու, թե անիծյալ Հռոմն իր փոքրիկ դաշնակցին խաբելով՝ նրան հանձնեց Շապուհի ձեռքը: Ոմանք անգամ կարծիք են հայտնել, թե հայոց արքունիքում խուճապ էր սկսվել այս պայմանագրի հետևանքով: Այս ամենն, իհարկե, իրականությանն այնքան է մոտ, որքան հայոց արքային՝ կամազուրկ մի խամաճիկ ներկայացնելու փորձերը:

-*«…Թե կարող ես՝ հաղթիր նրան»*[161],- կայսեր այս խոսքերն, ինքնին, շատ բան են ասում: Շապուհին հարկավոր էր խաղաղեցնել բոլոր հակառակորդներին՝ հայոց արքայի դեմ պատերազմ վարելու համար: Իսկ պատերազմի մեկնարկն արդեն տվել էր Արշակը՝ գրավելով Հյուսիսային Միջագետքը: Այն, որ մոտալուտ պայքարը շատ լուրջ էր լինելու, հասկանում էին բոլորը: Պայքարի արդյունքում որոշվելու էր, թե ու՞մ հետ է Հռոմն այսուհետ լուծելու տարածաշրջանային նշանակության հարցերը: Հայոց արքունիքում վաղուց արդեն

[161] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԱ.:

հավատում էին միայն սեփական ուժերին, և «ամոթալի» հաշտության վրա նայում՝ իբրև մի իրողության, որը վերջապես թույլ կտար հայերին և պարսիկներին, առանց կողմնակի միջամտության չափելու միմյանց ուժերը:

ԺԶ

Այս լարված ամիսներին Հայոց աշխարհից Պարսկաստան անցնելով՝ Շապուհին իր ծառայություններն է առաջարկում Արծրունյաց տան նահապետ Մեհրուժանը: Եկեղեցական մատենագրությունը լի է նրա մասին զազրախոսություններով ու անեծքներով: Մեհրուժանը, ի թիվս «ուրացյալ», «ամբարիշտ» և այլ «պատվանունների», հետագայում, առանց բացառության, ներկայացվել է իբրև դավաճան, հայատյաց այր, որ բազում դժբախտություններ պատճառեց Արշակին ու Հայոց աշխարհին: Սակայն, հիմնավոր պատճառներ կան կարծելու, որ Արծրունյաց իշխանը եղել է Արշակի ամենահուսալի գործակալը Տիզբոնում: Գլխովին աղավաղված է ներկայացված նրա ողջ գործունեությունը: Պատճա՞ռը. մեկնաբանեմ: Բուզանդի հայհոյախառն տեղեկություններից եզրակացնում ենք, որ Մեհրուժանը ոչ թե ուրացել էր քրիստոնեությունը, այլ երբեք էլ քրիստոնյա չէր եղել: Շապուհի առջև իր մասին տված վկայության մեջ նա պարզ ասում է այդ մասին: Մեհրուժանը գէս էր պահում և ուներ կախարդի համբավ, այսինքն, նա ոչ միայն հին հավատքի կրողն էր, այլ նաև նրա բանեցնողը, և նրա միակ «մեղքն» այն է եղել, որ պայքարել է եկեղեցու դեմ[162]:

Մեհրուժանի ապստամբությունն հայոց արքայի դեմ շինծու էր, Արշակի սարքած խաղը, մոտավորապես նման այն ներկայացմանը, որ խաղացին Խոսրով Մեծի գլխին Արտաշիրն ու պարթև Անակը: Մեհրուժանը շահեց Շապուհի վստահու-

---

[162] Մեհրուժան Արծրունու կյանքի և գործունեության ելակետերին անդրադառնալիս օգտվել եմ Վ. Լալայանի հոդվածից՝ Մեհրուժան Արծրունի. Ազգային-Պետական գործիչներ, Ե., 2007:

թյունը. նրա հայրենի տոհմի մի ճյուղ կոտորվել էր Տիրանի հրամանով: Այսինքն, Մեհրուժանն արդեն առիթ ուներ դժգոհ լինելու Արշակունիներից: Դրան գումարած՝ Արշակավանի կործանման հետ կապված դեպքերն ու որ պակաս կարևոր չէ՝ նախարարական տների զսպման այն քաղաքականությունը, որ տանում էր Արշակը: Այսօր դժվար է ասել, ունե՞ր արդյոք Արշակը Շապուհին՝ Մեհրուժանի ձեռքով սպանելու հեռահար նպատակ, թե՞ ոչ: Սակայն ակնհայտ է մի իրողություն. Արծրունյաց իշխանի Տիզբոն մեկնելուց և Շապուհի վստահությանն արժանանալուց հետո հայոց արքունիքը ճշգրտորեն տեղեկացվում էր Շապուհի բոլոր քայլերի մասին:

Մեհրուժանին միացավ նաև Վահան Մամիկոնյանը: *«Այս դեմքն էլ՝ որպես «ուրացող և դավաճան», խնամքով թողնված է ստվերի մեջ: Բայց որ նա սովորական մի դեմք չէր՝ երևում է հենց այն ընդունելությունից, որ նա գտավ Շապուհի մոտ»*[163]: Մնալով Վասակի՝ հունասերների կուսակցության առաջնորդ լինելու կանխակալ կարծիքին, Լեոն գտնում է, թե Վահանը Վասակի հակառակորդն էր: Մինչդեռ, Վասակն ու Անդովկն եզակի ազնվականներից էին, ում միակ կողմնորոշումը Հայոց Պետությունն էր և Արքան: Հայոց սպարապետը զերծ էր քաղաքական որևէ տրամադրվածությունից: Դեպքերի ցանկացած դասավորվածության դեպքում՝ նա իր արքայի կողքին էր:

Վահան Մամիկոնյանը Մեհրուժանի աներն էր[164]: Նա Տայքից էր՝ Վարդանի և Վասակի եղբայրը[165]: Հնարավոր է, որ Վասակի ձեռքով Վարդանին պատժելուց հետո Արշակը Վահանին հանձնած լիներ Տայքի Մամիկոնյան տան նահապետությունը: Այսպիսով, զբաղեցնելով Վարդանի տեղը՝ նա միաժամանակ հայտնվեց պարսկամետ տրամադրությունների կիզակետում, փոխարինելով ավագ եղբորը: Վահանը նույն-

---

[163] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 467:

[164] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց Տան, էջ 82:

[165] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ծ.:

պես քրիստոնյա չէր, և այն մեղադրանքը, թե նա Շապուհի առաջ ուրացավ քրիստոնեությունը, պարզապես անհամոզիչ է: Տայքում և հարակից Խաղկտիքի լեռներում քրիստոնեությունը շատ ուշ արմատներ ձգեց[166]: Ամեն դեպքում Վարդանի, Վասակի և Բագոսի եղբայրը հազիվ թե խնամիանար հեթանոս Մեհրուժանին՝ չկիսելով նրա հավատքն ու գաղափարները: Հիշենք, որ Տարոնի՝ քաղաքական անցուդարձերում մաս չունեցող Մամիկոնյանները միշտ էլ եկեղեցու հավատարիմ կամակատարներն էին, և դժվար թե դեմ գնային իրենց տերերին:

Ինչպես Մեհրուժանը՝Վահանը նույնպես, առիթ ուներ Շապուհի առաջ Արշակից «դժգոհելու». Արշակը սպանել էր տվել նրա ավագ եղբորը: Շապուհը Վահանին խոստանում է հայոց սպարապետությունը: Հետագայում, ըստ պատմիչի, նա սպանվեց սեփական որդու՝ Գրիգորի տոհմին հավատարիմ Սամվելի ձեռքով, որը հոր սպանությունից հետո փախավ Տայք՝ Խաղկտիքի լեռները, այնտեղից էլ՝ ճողոպրեց հռոմեական տիրույթներ: Հավանական է, որ այս սպանությանն անմասն չի եղել նաև Վասակ սպարապետի որդի Մուշեղը՝ հորեղբոր ձեռքից Տայքի գահերեցությունը խլելու համար: Ամեն դեպքում, Սամվելի այս քայլով սկիզբ դրվեց Տայքի և Տարոնի Մամիկոնյանների մերձեցմանը՝ Մուշեղի գլխավորությամբ և Հայաստանյայց եկեղեցու օրհնությամբ:

Առայժմ, Մեհրուժանին ու Վահանին Տիզբոն ուղարկելով՝ Արշակն ավելի բարձրացրեց հայոց բանակի հակահետախուզության արդյունավետությունը: Մեհրուժանին Շապուհը խոստացավ Հայքի թագը, իսկ Վահանին՝ սպարապետության պաշտոնը: Երկուստեք կնքված համաձայնությանն ավելի համոզիչ տեսք տալու համար Վահանը հարկադրված ընդունեց Շապուհի առաջարկությունը. ամուսնացավ արքայից արքայի քրոջ՝ Որմիզդուխտի հետ: Մեհրուժանին դեռ կհանդիպենք Հայքի համար ամենածանր պահերին: Եվ ամենուր

---

[166] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 74:

նա միայն օգնել ու նպաստել է հայոց պետության բարձրացմանը: Այլ հարց է, որ ազգային հավատքի ջերմեռանդ պաշտպանությունն ու հակակղերական գործունեությունը հետագայում նրան դարձրին «դավաճան», «նզովյալ» ու «վատանուն»:

ԺԷ

Պատմիչները հիշատակում են քսանից ավելի մեծ ճակատամարտեր, որտեղ հայոց զորքերին անձամբ գլխավորել է Վասակ սպարապետը: Որոշ ճակատամարտերին, ըստ Փավստոսի, երկու կողմից զորքերը գլխավորել են Արշակն ու Շապուհը: Բնականաբար, ավելի քան չորս տարի տևած հայ-պարսկական պատերազմում անհաշիվ էին սահմանային նշանակության ընդհարումներն ու հետախուզական բնույթի արշավանքները: Հարկ եմ համարում անդրադառնալ մի քանի խոշոր ճակատամարտերի, որոնք լավագույնս են արտացոլում հայոց բանակի և նրա ղեկավարության մարտական կորովը, ինչպես նաև Արշակի որդեգրած մարտավարությունը՝ ողջ պատերազմի ընթացքում[167]:

«Ամոթալի» պայմանագրի կնքումից շատ չանցած, ինչպես և սպասվում էր, պատերազմական գործողությունները սկսվեցին հայոց և պարսից միջև: Առաջին ճակատամարտը տեղի ունեցավ Ատրպատականի Գանձակ քաղաքի մատույցներում՝ Թավրիզից հարավ ընկած շրջանում: Տիզբոնից հայ սահմանապահներին հայտնում են, որ պարսկական մի մեծ զորաբանակ արշավում է դեպի Հայաստան՝ Ատրպատականի ուղղությամբ: Վասակ սպարապետը՝ ոտքի հանելով Հայոց Գունդը, սրընթաց շարժվում է թշնամուն ընդառաջ: Երկու բանակները հանդիպում են Գանձակի մատույցներում: Թեպետ պարսկական բոլոր ուժերը դեռ չէին հասցրել միավորվել

[167] Այս և բոլոր խոշոր մարտերի նկարագրման համար՝ իբրև աղբյուր, օգտվել եմ նաև «Մեր Հաղթանակները» ժողովածուից: Տես՝ հտ. 2, Ե., 2009:

նույն տեղում, բայց ժամանածներն էլ արդեն քանակապես գերազանցում էին հայկական ուժերին: Չնայած դրան, Վասակը հարձակման հրաման է տալիս: Ճակատամարտի հենց սկզբից, հայոց այրուձին աննկարագրելի խուճապ է առաջացնում թշնամու շարքերում: Հայոց Գունդը տարերքի մեջ էր: Անխնա սրի են քաշում անասնական վախով համակված պարսից բյուրավոր զինվորների՝ սոսկալի սպանդ առաջացնելով թշնամու բանակում: Հաղթանակը կատարյալ էր և անգերագնահատելի: Վասակը չգոհացավ փառավոր հաղթանակով: Հայոց արքան պաշտպանվելու համար չէ, որ Հայքի սահմաններից դուրս էր ուղարկել զինվորներին: Արշակի հրամանով, Հայոց գունդը մի քանի ամիս շարունակ ասպատակում, ավարառում ու գերեվարում էր պարսից աշխարհը: Ատրպատականին սահմանակից պարսից քաղաքներն ու գավառները հրի ու սրի մատնելուց հետո, Վասակը առավել ուժեղացրեց սահմանապահ զորքերի դիրքերը՝ խստացնելով պետական սահմանի հսկողությունը:

Շուտով Տիզբոնից հայկական հետախուզությունը տեղեկացավ, որ Շապուհն անձամբ, հսկայական զորքով, արշավում է Հայաստան: Ստացված տեղեկատվության կատարյալ մանրամասնությունն ու զարմանալի ճշգրտությունը (անկասկած այն ուղարկել էր Մեհրուժան Արծրունին) թույլ տվեց Արշակին մշակել և իրագործել ռազմական բարդ ու հանճարեղ գործողություն, որը համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ նախադեպը չի ունեցել՝ մինչև 4-րդ դար: Հայոց արքայի զորավարական տաղանդն ու անձնական արիությունն, իրականում, ոչնչով չեն զիջել հանճարեղագույն զորավարներին:

Հայոց արքային տեղեկացնում են, որ Շապուհը բանակը բաժանելով երեք մասի՝ վճռել է Հայաստան ներխուժել երեք ուղղությամբ: Նման դեպքերում, սովորաբար, հակառակորդի անլիարժեք տեղեկացվածության պայմաններում հաղթանակն ապահովված էր: Սակայն, հայոց արքան վաղօրոք գիտեր ոչ

միայն պարսից բանակի երեք կողմից Հայք ներխուժելու ծրագրի, այլև՝ այդ զորասյուների ճշգրիտ երթուղիների մասին: Առաջին զորաբանակը Շապուհը վստահում է Հազարավուխտին, որն արշավում է Վանանդի ուղղությամբ: Երկրորդ զորաբանակը Անդիկանի գլխավորությամբ արշավում է Առբերանի գավառ: Զորքի երրորդ մասը, որ գլխավորում էր Շապուհը, շտապում է դեպի Այրարատ՝ երկրի սիրտը: Բոլոր զորաբանակներն էլ համալրված էին մարտական փղերով:

Արշակը զորքը բաժանեց երեք մասի: Առաջին զորաբանակը՝ սպարապետ Վասակի առաջնորդությամբ պետք է դիմավորեր Հազարավուխտին: Երկրորդի հրամանատար նշանակեց Վասակի եղբայր Բագոս Մամիկոնյանին, ով պետք է չափվեր Անդիկանի հետ: Արշակը ստանձնեց երրորդի առաջնորդությունը: Հայոց արքայի մշակած ծրագրի համաձայն, բոլոր երեք զորաբանակներն էլ տարբեր ուղղություններով անցնելով գրեթե հավասարաչափ տարածություն՝ միևնույն օրը պետք է բախվեին թշնամու զորախմբերի հետ: Հայոց աշխարհում միևնույն օրը պետք է տարվեր երեք հաղթանակ:

Սպարապետ Վասակ Մամիկոնյանը Հազարավուխտին հանդիպում է Վանանդ գավառի Երևյալ կոչված վայրում: Երկար արշավից հետո, առանց դադար առնելու, Վասակը հարձակման հրաման է տալիս: Հայոց այրուձին սրընթաց գրոհում է թշնամու կենտրոնական ուժերի վրա: Ճեղքելով պարսիկների մարտակարգը, հայկական զորասյուներն ստիպում են հակառակորդին անկանոն կերպով նահանջել: Ներդաշնակ համերաշխությամբ գործող հայոց զորքի բոլոր թևերի գրոհն այնքան ուժգին էր և անսպասելի, որ պարսիկները չեն հասցնում անգամ կռվի մեջ ներքաշել մարտական փղերին: Անկանոն նահանջը՝ հաշվված րոպեների ընթացքում, վեր է ածվում խուճապահար փախուստի: Հազարավուխտի զորաթևերը փախչում են մի քանի ուղղությամբ: Հայոց կողմից իրականացված հետապնդումն այնքան գրագետ էր և ճիշտ

կազմակերպված, որ պարսիկներն այդպես էլ, մինչև վերջ, չկարողացան միավորել իրենց անջատ ուժերն ու միասնական ճակատով դիմադրել Վասակի ուղարկած հետապնդող ջոկատներին: Հաղթանակը կատարյալ էր: Հազարավուխտի բանակից սահմանը կարողացան անցնել միայն չնչին փշրանքներ: Վասակի ձեռքն անցավ հսկայական ռազմավար, որի մեջ Բուզանդն հատկապես ընդգծում է մարտական փղերին[168]:

Միևնույն օրը հասնելով Առբերանի գավառ՝ Բագոսի գլխավորած զորաբանակը Անդիկանի զորքերին հանդիպում է Վանա լճի ափին գտնվող Առեստ ձկնորսական ավանում: Պարսիկներն արդեն հասցրել էին մարտական ճակատ կազմել և սպասում էին հայկական ուժերին: Հարձակումը սկսում են հայկական զորաթևերը: Հենց սկզբից հայոց այրուձին կարողանում է ճեղքել թշնամու ճակատային գիծն ու խառնել նրա մարտակարգը: Հրամանատարական դիտակետի ուղղությամբ կատաղի գրոհ ձեռնարկած հայկական մի զորախմբի հաջողվում է հասնել Անդիկանին և ճակատամարտի հենց սկզբում սպանել նրան: Սակայն, պարսից զորքը խուճապի չի մատնվում: Բագոսի զորաբանակին թվով մի քանի անգամ գերազանցող պարսիկները կարողանում են պահեստազորի օգնությամբ վերականգնել մարտական կարգը, կռվի մեջ ներքաշել թարմ ուժերի և մարտական փղերի զորամասով անցնել հակագրոհի: Բագոսը սուրը ձեռքին զինվորների առաջին շարքերում կասեցնում է թշնամու կատաղի հակագրոհը: Կռիվը տևում է մի քանի ժամ: Տեսնելով Անդիկանի մահից հետո պարսից հրամանատարությունը ստանձնած զորավարին, որը մարտական փղի վրա նստած ղեկավարում էր հակագրոհը՝ Բագոսը նետվում է նրան ընդառաջ: Մտնելով փղի տակ՝ նա սրով զարկում է փղին փորից, նրա հետ տապալելով և պարսից զորավարին: Հրամանատարի մահն այս անգամ ճակատագրական է լինում պարսիկների համար,

[168] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԲ.:

որոնք սկսում են նահանջել: Հայոց զորաթևերի ուժեղ հակագրոհն այդ նահանջը շուտով վերածում է փախուստի: Պարսկական զորքերի մնացորդները հետապնդվեցին մինչ սահման: Սակայն, այս փառահեղ հաղթությունը շատ ծանր նստեց հայոց վրա. Բագոսը չհասցրեց դուրս գալ փղի տակից: Ճակատամարտի հենց սկզբից սուրը ձեռքին՝ շարքային զինվորի հետ կողք-կողքի կռիվ տվող այս աննվեր զորավարն իր մահով շահեց սեփական զորքի հաղթանակը:

Եվ այսպես, Բագոսը, ով իր քայլով ապահովեց պարսկական բանակի կատարյալ ջախջախումը, ով առաջինն էր կռվի դաշտ մտնում և հաճախ, ձին թողած, պայքարում հետևակ զինվորի հետ կողք-կողքի, ում քաջության համբավը թնդում էր Հայքի սահմաններից շատ ու շատ հեռու... *«Ժողովուրդը Բագոս Մամիկոնյանի մասին հյուսել է հերոսապատումներ»*[169]: Ուր էր թե... Բագոսը մոռացվեց սերունդների կողմից: Նա չհերոսացվեց ու, բնականաբար, չդասվեց սրբերի շարքը: Որովհետև վանքերում է գրվել Հայոց պատմությունը: Լսենք Բուզանդին. *«Բագոսը... քաջության և արիության մեջ նմանը չուներ, բայց խելքի կողմից պակասավոր էր»*[170]: Ահա Բագոսի արարքի գնահատականը: Բագոսը խելքից պակասավոր էր, որովհետև հանուն հայոց պետականության հզորության պայքարում, նախապես փայլուն կերպով կազմակերպելով զորքի ղեկավարությունը՝ մեն-մենակ դուրս եկավ մարտական փղերի զորամասի դեմ՝ հայոց արքայի փառքին նվիրաբերելով իր կյանքը: Բագոսը Հայոց Պետականության կերտողն էր. այդպիսիք երբեք չեն հերոսացվել կղերական մատենագիրների կողմից: Հաղթական մարտերից հետո Վասակի և Բագոսի զորախմբերը դադար են տալիս հայոց սահմանների մոտ՝ սպասելով արքայի հետագա հրահանգներին:

---

[169] Մեր Հաղթանակները, հտ. 2, էջ 19:

[170] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԲ.:

Նույն օրը Արշակի զորաբանակը հասնում է Այրարատի Բասեն գավառ, ուր Ոսխա ավանի մոտ Շապուհը տեղաբաշխել էր հսկայաքանակ զորք: Դա Շապուհի մարտավարական մեծ սխալն էր, որն անփութացած իր բանակի քանակական գերազանցության պատճառով, կուտակել էր ուժերը փոքրիկ դաշտավայրում՝ կաշկանդելով սեփական զորքի ազատ գործողությունները: Արշակը սթափ գնահատական է տալիս իրավիճակին՝ մի քանի ժամ հետաձգելով հարձակումը: Գիշերն անփութորեն քնած պարսկական բանակն արթնանում է ահավոր դղրդյունից ու սոսկալի աղմուկ-աղաղակից: Արշակը զորաբանակի առաջին շարքերում ներխուժում է թշնամու ճամբար: Դժոխային աղմուկն ու հայերի անսպասելի հարձակումն անում են իրենց գործը. Շապուհի՝ մի քանի բյուրերով հաշվվող քնահարամ զորքն այդպես էլ չհասկացավ, թե ինչ է տեղի ունենում: Չկար մեկը, որ կազմակերպեր և մարտական կարգի բերեր ոչխարի հոտի վերածված զորքին: Պարսից զորքը մինչև վերջ էլ դիմադրություն ցույց չտվեց: Արշակը կազմակերպել էր մի սպանդ, որի նմանը Շապուհը երբեք չէր տեսել երկարատև գահակալության ողջ ընթացքում: Մինչև լույս հայոց զորքն անխնա կոտորում էր խելահեղ սարսափի մեջ դեսուդեն վազվզող պարսից բանակի լավագույն զորամասերին: Արևելքի հզոր տիրակալը մի կերպ հաջողեցնելով դուրս սպրդել այդ ջարդից՝ հազիվհազ նետվեց Պարսից աշխարհ:

Գիշերային հարձակման մարտավարությունը միշտ էլ ընդունված է եղել և հնարավորինս հաճախակի գործածվել է հին աշխարհի շատ զորավարների կողմից: Հայ ռազմական պատմությունը նույնպես լի է նման հարձակումներով: Բայց առաջին անգամ Արշակի օրոք էր, որ հայոց մեջ մշակվեց գիշերային հարձակումների ժամանակ բանակի բոլոր զորատեսակների ներդաշնակ մասնակցությունը: Շապուհի բանակի ջախջախմանը մասնակցում էին Հայոց Գնդի բոլոր զորատեսակները: Դրանում պարտական ենք Վասակ սպարապետին:

Տարիների տքնաջան աշխատանքի արդյունքում հայոց բանակը հրաշալի մարտարվեստ էր ցուցադրում նաև մթության քողի տակ կանոնավոր կերպով կռվելով, ինչպես դա կաներ ցերեկը: Ընդհանրապես, առանց վարանելու ասենք, որ Վասակ Մամիկոնյանը կատարելության նոր բարձունքների հասցրեց միջնադարյան հայոց բանակը, և ոչ միայն. համաշխարհային ռազմարվեստի պատմության մեջ ցայժմ տեղ գտած մարտավարական որոշ հնարքներ ծնունդ են առել հենց Արշակի ու Վասակի ժամանակների հայոց բանակում:

Հայոց արքայի սուրհանդակը հանդիպեց Վասակի ու Բազոսի հաղթական զորաբանակների ավետաբերներին՝ նրանց հաղորդելով արքայի կամքը. հայկական երեք զորաբանակները՝ երեք տարբեր ուղղություններով, պետք է ներխուժեին Պարսկաստան: Սարսափելի պարտությունից դեռ ուշքի չեկած Շապուհին հրամցվում էր նրա իսկ ծրագրած արշավանքի հայկական տարբերակը: Եվ հայ-պարսկական սահմանի երեք տարբեր հատվածներից սկսվեց հայկական զորախմբերի ավերիչ արշավանքը: Այս արշավանքն ահավոր կորուստներ պատճառեց Պարսից աշխարհին: Հայոց զորքերն ավերեցին ու կործանեցին հազարավոր շեն բնակավայրեր և հարուստ ավարով վերադարձան Հայրենիք:

Եթե 363թ. դեպի Հյուսիսային Միջագետք արշավանքով Արշակը ցույց տվեց հռոմեացիներին, որ այս պատերազմում հետապնդում է իր երկրի քաղաքական շահը և որ ամենևին էլ չի պատրաստվում այդ շահը զոհաբերել կայսերական զենքի հաղթանակին, ապա Գանձակի, Երևյալի, Առեստի ու Ոսխայի ճակատամարտերը հայ-պարսկական պատերազմի հենց սկզբում՝ հայոց արքայի պատասխանն էին հռոմեա-պարսկական «ամոթալի» պայմանագրին: Այդ հաղթանակներով արքան ցույց տվեց, որ իր մղած պատերազմում ինքը հուսահատ ինքնապաշտպանության չէ դուրս եկել, այլ ունի լուրջ մտադրություններ՝ հայոց գերիշխանությունն Արևել-

քում վերականգնելու ուղղությամբ: Իսկ որ Արշակի այդ մտադրություններն ամենևին էլ հիմնազուրկ չէին, ցույց է տալիս պատերազմի ողջ ընթացքն ու հայոց արքայի վարած՝ բացառապես հարձակողական մարտավարությունը:

ԺԸ

Շապուհը դեռ Արշակից ստացած վերքերն էր լիզում, երբ Վասակ սպարապետը հետը վերցնելով Հայոց Գունդը, դուրս եկավ արշավի: Ատրպատականից անցնելով հայ-պարսկական սահմանը՝ Հայոց Գունդը ներխուժեց Պարսկաստան: Արշակի հրամանով Վասակին օգնության շտապեցին նաև հոներն ու ալանները: Շապուհը, մեծ զորաբանակի գլուխն անցած, շտապեց կասեցնել հայոց առաջխաղացումը: Թավրիզի մատույցներում Հայոց Գունդը հոների ու ալանների աջակցությամբ հարձակվեց Շապուհի բանակի վրա:

Կայծակնային հարձակման մարտավարությունը, որ հատուկ էր Հայոց Գնդին, միշտ էլ շփոթության մեջ է գցել ամենափորձառու և ուժեղ բանակներին անգամ: Այս անգամ էլ տեղի ունեցավ նույնը: Հայոց այրուձիու շեշտակի հարվածներից գլուխները կորցրած պարսիկները իրար ետևից ընկնում էին թեթևազեն ու արագաշարժ հոների և ալանների, հայոց հետևակ և հեծյալ զորքի հարվածներից: Խուճապն ու շփոթությունն աննկարագրելի էին: Պարսիկներից քչերը փրկվեցին: Վասակի ձեռքում թողնելով արքունի հրամկազմը՝ Շապուհը ճողոպրելով մի կերպ ազատվեց գերվելու վտանգից: Հայոց Գունդը շարունակում է հաղթարշավը:

Նպատակն էր Ատրպատականի պարսկական մասի ամայացումն ու ավերումը: Կովկասի՝ ավարի սիրահար ցեղերը մինչև վերջ հաճույքով մասնակցեցին ասպատակությանը: Հիմնահատակ կործանվում էին քաղաքները: Գերիների հոսքը չէր դադարում դեպի Կովկաս և Հայք: Ավարով բեռնված անհամար քարավանները գիշեր ու զոր անցնում էին հայ-

պարսկական սահմանը: Հիմքից կործանեցին ողջ Ատրպատական երկիրն ու ամայացրին՝ սրի քաշելով երկրի բոլոր տղամարդկանց, շատերին էլ գերելով կամ ցրելով Պարսկաստանի խորքերը[171]:

Դա տրամաբանական ու ռազմավարական արդարացում ուներ. Ատրպատականը միշտ էլ հանդիսացել է այն երկիրը, որտեղից Հայոց աշխարհին ամեն րոպե ներխուժման վտանգ է սպառնացել: Ատրպատականի պարսից իշխանությունները հուր-հավիտյան եղել են Հայքի հակառակորդները: Վերադառնալով ամայացված երկրից՝ Վասակը երկար ժամանակ մնում է հայ-պարսկական սահմանին, ամրացնելով այդ տարածքների պաշտպանողական կետերը:

Հայ-պարսկական պատերազմի ընթացքում պատմիչները հիշատակում են երկու տասնյակից ավելի խոշոր ճակատամարտեր: Դրանց մասնակցած զորքերի ներկայացված թվերն, իհարկե, չափազանցված են:

Սակայն ուշագրավ է մի բան. հինգ տարի շարունակ Արշակն ու Շապուհը արշավել են միմյանց դեմ: Սա նշանակում է, որ հայոց ռազմական ուժը ոչ միայն չի թուլացել պատերազմի ժամանակ, այլև հայոց արքան ամեն կերպ ջանացել է պատերազմական գործողությունները վարել օտար հողի վրա: Սահմանային անհամար ընդհարումների ժամանակ, իհարկե, փոխեփոխ հաջողությամբ, մերթ պարսիկները, մերթ հայերը կարողացել են կարճատև ժամանակով ներխուժել ու ավերել միմյանց սահմանային շրջանները: Բայց խոշոր ճակատամարտերի ժամանակ հայոց սուրը երբեք պարտություն չի տեսել: Վասակ Մամիկոնյանի հայկական բանակը երբեք և ոչ մի տեղ ճակատամարտ տանուլ չի տվել:

Ընդհակառակը, մեկ անգամ չէ, որ երկրի սահմաններից արշավի դուրս եկած Հայոց Գնդի ձեռքից հազիվ է մահապուրծ փրկվել Շապուհը: Նման մի արշավի ժամանակ Հայոց

---

[171] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԵ.:

Գունդն անսպասելի հարձակումով գրավում է Թավրիզը: Վասակը Թավրիզի պալատում գտնում է Շապուհի մեծադիր պատկերը, հրապարակային նետաձգությամբ խոցոտում այն, և կրակի մատնելով միայն պալատը՝ դուրս է գալիս Թավրիզից, առանց քաղաքին որևէ այլ վնաս հասցնելու[172]:

Փոխադարձ արշավանքներից մեկի ժամանակ Շապուհն անձամբ գլխավորելով պարսից բանակը՝ մտնում է Մեծ Հայքի տարածք և մոտենում Տիգրանակերտի մատույցներին[173]: Իշխան Անդովկը, որ Արշակի կարգադրությամբ նշանակված էր քաղաքի վերակացու, Շապուհի պատգամախոսներին չի ընդունում և ցուցադրաբար պատրաստվում է կռվի: Հատկապես քաղաքի երկրորդ պաշարման հետ կապված ժամանակագրական հակասությունները հաշվի առնելով, չեմ բացառում, որ խոսքն այստեղ ոչ թե հայոց երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի մասին է, որը գտնվում էր Աղձնյաց նահանգում, այլ՝ Սյունիքում կամ Արցախում կառուցված համանուն քաղաքի:

Գազազած Շապուհը հարձակման հրաման է տալիս: Մի քանի օր շարունակ Տիգրանակերտի պաշտպանները դիմադրում են պարսից բազմահազարանոց զորքերին: Անդովկի կազմակերպած պաշտպանությունը հակագրոհներով անթերի էր: Մի քանի հազար դիակ թողնելով՝ Շապուհը ստիպված ետ է քաշվում: Մի քանի օր շունչ քաշելուց հետո արշավանքը վերսկսելու հրաման է արձակում: Սակայն, նրան համոզում են, որ Տիգրանակերտի պարիսպների տակ կրած պարտությունը բարոյալքված զորքին թույլ չի տա արշավելու դեպի

---

[172] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԹ.:

[173] Տիգրանակերտն, ըստ Խորենացու, պաշարվել է երկու անգամ: Երկրորդ անգամ հույն ռազմագերիների օգնությամբ Շապուհին հաջողվում է գրավել քաղաքը: Հնարավոր է, որ դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Աղձնիքի բդեշխի՝ հայոց միաբանությունից անջատվելու հետևանքով, Տիգրանակերտը փաստորեն հայտնվել է շրջապատման մեջ: Անդովկն այդ ժամանակ արդեն Սյունիքում էր:

Մեծ Հայքի խորքերը: Դրան գումարվում են առաջապահ լրտեսների հաղորդած տեղեկությունները, ըստ որոնց, հայոց ուժերն արդեն կազմ-պատրաստ սպասում են Շապուհին: Սա էլ ատամները կրճտացնելով ետ է քաշվում Տիզբոն՝ բավարարվելով սպառնալից նամակ Անդովկին ուղարկելով[174]:

Կա ուշագրավ մի հանգամանք, որին տեղին է անդրադառնալ: Դեպի Հայք պարսից արշավներին Վասակ Մամիկոնյանը հիմնականում հակադարձել է նախարարական զորքով: Հայոց Գունդը կռվի է դուրս եկել ծայրահեղ դեպքում կամ էլ միայն դեպի Պարսկաստան արշավների ժամանակ: Հայքում Վասակի մարտերը կրել են հիմնականում անսպասելի հարձակման բնույթ, որոնց շնորհիվ մի քանի անգամ սակավաթիվ ուժերով Վասակին հաջողվել է դուրս շպրտել թշնամուն: Պարսից արշավները շատ դեպքերում կասեցվել են դեռ Մեծ Հայքի սահմաններին չհասած և ավարտվել հայոց զորքի փոխհարձակումներով: Մանավանդ այն դեպքում, երբ պարսիկ զորավարներին դեպի Մեծ Հայք առաջնորդել է Մեհրուժան Արծրունին, թշնամու ճշգրիտ երթևեկությունը վաղօրոք հայտնի է պահվել Վասակին: Սին միամտությամբ պատմիչները փորձում են համոզել, թե այդ բոլոր ճակատամարտերի վերջում միայն «ամբարիշտ» Մեհրուժանը մի ձիով կարողացավ փախչել: Տարիներ շարունակ Մեհրուժանը հայտնած տեղեկություններով և արշավների դուրս եկած պարսիկ զորավարներին մոլորեցնելով անգնահատելի դեր է խաղացել հայոց զենքի հաղթանակներն ապահովելու գործում:

Իսկ պատերազմը կարծես միտք էլ չուներ ավարտվելու: Պատերազմասեր բնավորությամբ հայտնի Արշակը նորանոր հարձակումներ էր կազմակերպում դեպի Պարսկաստան:

---

[174] Մազդեզանց քաջ Շապուհ արքայից արքան՝ տիգրանակերտցիներին, որ այլևս չեն հիշվելու արյաց և անարյաց մեջ... (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, ԻԶ): Ուշագրավ կերպով այս խոսքերը լիովին համընկնում են Անդովկի և Շապուհի թշնամանքին:

Նրանից ետ չէր մնում և զառամյալ Շապուհը, որ երիտասարդական ավյունով շատ անգամ ինքն էր գլխավորում դեպի Հայք արշավները: Փոխադարձ հարձակումները հիմնականում կրում էին ավարառության և ասպատակության բնույթ և ավարտվում սահմանամերձ բնակավայրերի ավերումով ու գերեվարությամբ: Տարիներ շարունակ ձգձգվող մարտերը հյուծել էին երկու երկրների տնտեսությունները: Ավերվածամայացված էին և Պարսկաստանի, և Հայքի սահմանային գավառները: Շապուհի վիճակը բարդացել էր, քանզի Արշակը ոտքի էր հանել Սասանյան տիրապետությունից դժգոհ շատ իշխանությունների, որոնք ճանաչում էին հայոց արքայի գերիշխանությունը: Պատերազմը երկար ձգձգվելու դեպքում Շապուհին սպառնում էր երկրի ողջ տարածքում կենտրոնախույս շարժումների հզոր ալիք, որից հետո անհնար էր լինելու պետության միասնականության պահպանումը: Եվս մի փոքր, և նա ստիպված էր լինելու Արշակի հետ իր համար աննպաստ բանակցություններ սկսել: Հարկավոր էր գտնել մի լուծում, որը թույլ կտար պատերազմից դուրս գալ իր համար նպաստավոր պայմաններով՝ միաժամանակ, շահելով նաև Արշակի բարեկամությունը: Եվ խորամանկ ու բազմափորձ Շապուհը գտավ լուծման բանալին: Հայտնվեց այն անսպասելի դաշնակիցը, որին ամենաքիչն էր սպասում Շապուհը. Հայաստանյայց եկեղեցին: Ավելի ճիշտ, նրա ամենազորեղ և արքայական հավակնություններ ունեցող թևը՝ պարթև Գրիգորի տոհմը...

ԺԹ
ՓԼՈՒԶՈՒՄ

Իսկ ինչպիսին էր պատերազմական շրջանում Հայաստանի քաղաքական ներկապնակը: Արշակը հայոց բնիկ տոհմերից առաջ էր քաշել ընտրյալների խումբ, որոնց նպատակն էր անկախ ու հզոր Հայքի վերաստեղծումը: Այդ նպատակի

իրագործման համար, հայոց արքայի հետ նրանք իրականացրեցին մի շարք կարևոր ծրագրեր: Զսպելով նախարարների կենտրոնախույս տրամադրությունները՝ արքունիքի շուրջ կենտրոնացրեցին երկրի տնտեսական ու ռազմական բոլոր կարողությունները: Խստորեն սահմանափակվեցին նախարարական շատ արտոնություններ իրենց կալվածքներում: Այդ, իր հերթին, զգալիորեն բարելավեց շինականների կյանքը, որոնց ուսերից արքան թեթևացրել էր հարկային բեռը: Նախարարական զորքերը պետք է ծառայեին միայն և միայն հայոց արքունիքին, և պատերազմական այս շրջանում արքան, ըստ իր ցանկության և կամքի, հավատարիմ մարդկանցով էր փոխարինում այս կամ այն նախարարական տանը պատկանող գավառի ղեկավարումը: Արշակն ու իր կողմնակիցները Հայոց հողը չէին դիտում իբրև խոշոր հողատերերի միջև բաժանված ժառանգական կալվածքների խայտաբղետություն, այլ միասնական մի Հայրենիք, որ պատկանում է Ազգին և պաշտպանվում Պետության կողմից: Սա, բնականաբար, չէր կարող դուր գալ իրենց ախորժակը հարկադրաբար զսպած իշխաններին: Արշակը հիմնովին փոխել էր ազնվական տների միջև գոյություն ունեցող դիրքային աստիճանակարգը: Խոսքը հայոց տոհմերի ու գործակալությունների՝ Գահնամակով սահմանված կարգի մասին է: Արդեն նշել եմ, որ Գահնամակում տեղի ունեցող փոփոխությունները, սովորաբար, խիստ հազվադեպ էին: Արքան կարող էր ընդհանրապես ջնջել այս կամ այն տոհմի անունն այդ ցուցակից՝ պետական դավաճանության մեղադրանքով դրա ավագներին պատժելու դեպքում: Արքան կարող էր որևէ տոհմի բարձն (դիրքը) ավելի վեր քաշել մեկ կամ մի քանի աստիճան, եթե այն աչքի էր ընկել Հայրենիքի հանդեպ բարձր ծառայություններով, և հակառակը: Սովորաբար, արքունիքի շուրջ եռացող կյանքն անպայման իր հետքն էր թողնում Գահնամակի վրա. յուրաքանչյուր լուրջ փոփոխություն սկսվում էր այդ ցուցակից: Անակի տոհմի

հաղթարշավը Հայքում իրար խառնեց ամեն ինչ: Գրիգորի կամքով ու թելադրանքով Տրդատը հիմնովին փոխեց հայոց տերերի՝ Գահնամակով սահմանված դիրքերը: Այսինքն, գլխիվայր շրջվեցին երկրում մինչ այդ գործող օրենքներն ու ազդեցությունների ոլորտները: Նախկինում երբևէ աչքի չընկած շատ տոհմեր հայտնվեցին առաջինների ցուցակում: Միայն Գրիգորի հաղթարշավին օժանդակելն արդեն հիմք էր ստեղծում երկրի կարևոր գործակալությունները գլխավորելու համար: Այս ամենն ամրագրվում էր Գահնամակում և այլևս ենթակա չէր փոփոխման: Փոփոխություններն արդեն արված էին, և արված էին Գրիգորի կամքով ու Տրդատի վավերացմամբ:

Արշակը գլխիվայր փոխեց Անակի տոհմի համար սրբագրված կարգը: Ավելի շուտ, բերեց նախնական բնական տեսքին, երբ տոհմերն առաջ կամ ետ էին մղվում ըստ արժանիքների ու կարողությունների: Նա առաջ մղեց բուն հայկական ծագում ունեցող շատ տոհմերի, որոնցից ընտրված մարդկանց նշանակեց արքունի և զինվորական կարևորագույն պաշտոններում: Որևէ տոհմի ժառանգական կալվածքը համարվող գավառում արքան կարող էր կարևոր ռազմական նշանակության պաշտոններ շնորհել այլ տոհմից սերված իրեն հավատարիմ մարդկանց: Այսպես, Սյունյաց նահապետ Անդովկին նշանակեց Տիգրանակերտի վերակացու՝ առաջ բերելով Աղձնյաց բդեշխի թաքուն ոխակալությունը: Ընդհանրապես, Մեծ Հայքի ռազմավարական ամենակարևոր նշանակության բերդերն ու ամրոցները Արշակը վստահում էր Միսական տոհմից սերվածներին՝ Սյունյաց զինվորներին տեղակայելով ամենուր: Առաջ քաշվեցին Մարդպետական, Խոռխոռունյաց, Արծրունյաց նախարարական տները: Հայոց տոհմերի ու գործակալությունների միջև սահմանված փոխհարաբերություններն ու ազդեցության ոլորտները կարգավորող Գահնամակում՝ Արշակի օրոք առաջնային ցուցակում էին Մարդպետաց, Խոռխոռունյաց, Սյունյաց, Բագրատունյաց, Տայոց Մամիկոն-

յանների, Ռշտունյաց, Արծրունյաց, Գնունիների տոհմերը: Սրանք հինավուրց, ավանդաբար ուժեղ պետականամետ կողմնորոշում ունեցող տներն էին, որոնցով շեն էր Հայոց երկիրն ու ուժեղ՝ արքայական իշխանությունը: Այս փոփոխությունները բնական ու համոզիչ էին նաև նշյալ տոհմերի՝ արքունի բանակին տրվող մարտական ուժի համեմատաբար մեծ չափաբաժնով: Արշակը երկրի ներքին կյանքը կանոնավորել էր՝ ելնելով պետական շահերից: Սա դժգոհության ու թշնամության տեղիք էր տվել իշխանական շատ տների, որոնք միայն հարմար առիթի էին սպասում՝ հայոց արքայից իրենց վրեժը լուծելու: Ատամները կրճտացնելով՝ հարմար առիթի էր սպասում հատկապես պարթև Անակի տոհմը, որն, ի տարբերություն մյուսների, ձեռքերը ծալած չէր նստել:

Ի

Ներսեսի ճողոպրումից հետո կաթողիկոս նշանակված Շահակ Մանազկերտցին եկեղեցին տանում էր արքունական իշխանության հետ սերտ համագործակցության ճանապարհով: Երբեք հայոց թագավորների և կղերականների միջև այնպիսի համերաշխություն չի եղել, երբեք Հայաստանյայց եկեղեցին այնպես չի նպաստել պետականաշինության գործին, ինչպես այս կաթողիկոսի տարիներին: Շահակը հենց այս պատճառով էլ երբեք չհիշատակվեց եկեղեցու հայրապետների ցուցակում. կղերական մատենագիրների համար արքայի ծառան էր, ստրուկը՝ արհամարհելի մի անձ, ով պետական շահին ստորադասեց Անակի տոհմի իրավունքները[175]: Եկեղեցին զրկված էր տնտեսական ու քաղաքական այն բոլոր արտոնություններից, որոնք մինչ այդ սովոր էր ունենալ: Երկրից գանձվող հարկերը մտնում էին բացառապես պետ-

[175] «...և էր ըստրուկ ի ստրկաց արքունի»: Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ.:

ական գանձարան, արքունիքը դադարեցրել էր կղերական մակաբուծարանների ֆինանսավորումը: Եկեղեցու սպասավորները զբաղվում էին բացառապես իրենց ոլորտին վերաբերող գործերով: Եվ որ ամենասարսափելին էր Անակի տոհմի աչքերին, այդ ամենն ամենևին էլ չէր վրդովվեցնում Շահակին: Ընդհակառակը, թողած անեծքների ու չարագուշակ տեսիլքների այն գանձարանը, որով այդքան հարուստ էին Գրիգորի տոհմի հոգևոր շտեմարանները, «ապիկար» Շահակը զբաղված էր եկեղեցու ազգայնացմամբ: Եկեղեցին լցվել էր Աղբիանոսի տոհմի քրմական հետնորդներով, որոնք իրենց հետ բերում էին դեռևս չկորած շատ հին արժեքներ ու իմաստություններ՝ փրկելով դրանք հավիտյան մոռացումից և միաժամանակ, ազգային ձև ու բովանդակություն տալով բացարձակապես ապազգային այս հաստատությանը: Ազգային հոգևոր ու նյութական մշակույթը բերելով վանքեր՝ Շահակն ու տոհմակիցներն ապահովում էին հարազատ ցեղի հետ գալիք հայի գենետիկ կապի անխաթարությունը: Շահակի հովվապետության տարիները եզակի էին՝ եկեղեցու և արքայական իշխանության համերաշխության, և եկեղեցու՝ ազգայինի հանդեպ նախանձախնդիր հոգատարության առումով:

Անակի տոհմին ինչ, թե երկիրը պատերազմի մեջ է, թե ուժեղ արքա է պետք, իսկ արքային՝ հզոր հենարան, թե պետությունը կենաց ու մահու կռվի մեջ է, և թե այդ կռվում արքայի մահը՝ պետության մահն է: Անակի տոհմի սիրտն ի սկզբանե չի ցավացել «ազգ», «պետություն», «արքա» և նմանատիպ «ունայն» գաղափարների համար, դրան հետաքրքրողը նյութական շահն ու իշխանությունն էր, որոնց, իհարկե, միշտ էլ կարելի էր սրբագործել: Եվ հանուն այդ շահի, հանուն այդ իշխանության միայն Արշակին չէ, որ այդ տոհմը պատրաստ էր զոհաբերելու: Եվ Ներսեսը՝ Գրիգորի այդ մեծագույն ու անգերազանցելի հետնորդը, գործի անցավ:

ԻԱ

Ներսեսը երբեք էլ ձեռքները ծալած չէր նստել: Արքայի ու պետության դեմ դավադրությունների ծրագրավորողն ու հրահանգիչը, քաշվելով տոհմական տիրույթները, շրջում ու քարոզում էր Մեծ Հայքի բոլոր բնակավայրերում: Համախոհներ էր հավաքում, քարոզում իր տոհմի իրավունքները: Նա պատերազմի տարիներին ուշի-ուշով հետևելով Արշակի ու Շահակի միջև ձևավորված փոխհարաբերություններին՝ համալրում էր սեփական հավատակիցների շարքերը: Եթե Հուլիանոս կայսեր գահակալության տարիներին Ներսեսը խուսափում էր դուրս գալու Հայքից, ապա իրավիճակը փոխվեց 360-ականների կեսերից: Նորանշանակ Վաղես Բ կայսրը (364-378) թեպետ հակված էր արիանոսականության, այնուամենայնիվ, դիցապաշտ չէր, և հայոց նախկին կաթողիկոսի համար առավել անվտանգ հնարավորություններ ստեղծվեցին Բյուզանդիայի հետ ունեցած հին կապերը գործի դնելու համար: Մանավանդ, որ կայսրը ջանքեր չէր խնայում՝ հայոց գործերին միջամտելու համար: Բացահայտ միջամտել՝ առայժմ բյուզանդական արքունիքը չէր կարող. «ամոթալի պայմանագիրն» ուժի մեջ էր: Առայժմ պետք էր օգնել Ներսեսին՝ կրկին համախմբելու և ի մի բերելու հռոմեական կողմնորոշման նախարարների ուժերը: Սա արվում էր մեծ եռանդով: Իրենց բարեկեցությունն ու դիրքը միշտ էլ Հռոմի հետ պայմանավորած իշխաններն աստիճանաբար համախմբվեցին Անակի տոհմի շուրջ: Ներսեսը, սակայն, քաջ գիտակցում էր, որ ամենամեծ ցանկության դեպքում էլ՝ Վաղեսը չի կարող իրեն անմիջական օգնություն ցուցաբերել Հայքում: Այս շրջանում, խորամանկ պարթևին առավել անհրաժեշտ էր լեզու գտնել Շապուհի հետ: Պարսից արքան ինքն էր հոգնել փոփոխակի հաջողություններով ձգձգվող պատերազմից և հնար էր ման գալիս Արշակին տապալելու: Ուրեմն,

հարկավոր էր մեկ ընդհանուր հայտարար հայոց արքայի երկու ոխերիմ թշնամիների միջև: Ցանկությունը կար՝ դա Արշակի կործանումը տեսնելու հաճույքն էր: Գտնվեցին նաև համագործակցությունը խթանող գործոնները: Շապուհը, որ ընդհանրապես հայտնի էր քրիստոնյաների նկատմամբ խիստ քաղաքականությամբ, մի նոր թափով վերսկսեց իր երկրի տարածքում գործող եկեղեցիների դեմ հալածանքը: Սա Ներսեսի վրա ազդելու հզոր միջոց էր: Արշակին տապալել հնարավոր էր միայն Շապուհի օգնությամբ, բայց դեռ հայտնի չէր, թե արդյո՞ք Ներսեսի դիրքերը կամրապնդվեին Հայքում՝ դրանից հետո: Իսկ եթե պարսից արքան շարունակեր քրիստոնյաների ջարդը նաև այստե՞ղ: Կամ, որ ոչ պակաս մտահոգիչ էր, Շապուհին շատ ավելի ձեռնտու կլիներ եկեղեցու գլխին տեսնել ոչ թե Գրիգորի, այլ՝ Աղբիանոսի տոհմին, հայտնի իր հակահունական, Պարսկաստանի հանդեպ լոյալ դիրքորոշմամբ: Սրանք կենսական այն հարցերն էին, որ ամենից շատ էին մտահոգում Ներսեսին: Շապուհը գերազանց հասկանում էր Հայքում գոյություն ունեցող տարբեր կլանների հավակնությունները և պատրաստ էր դրանց բոլորին բավարարել՝ գոնե առայժմ, իր գերիշխանությանը սպառնացող Արշակին չեզոքացնելու համար: Եվ սկսվեցին գաղտնի բանակցություններ: Օրմանյանն ակնարկելով, թե այնուամենայնիվ, Շապուհի կողմից Ներսեսին տրվել են խոստումներ, իսկույն ավելացնում է, թե նա չի հավատացել դրանց անկեղծությանը[176]: Իհարկե, չի հավատացել: Ներսեսն ուներ նաև բյուզանդական տարբերակը, որը միշտ էլ կարող էր գործի դնել Արշակի տապալումից հետո, եթե Շապուհը գեթ չնչին չափով չկատարի խոստումները: Կարևորն այն է, որ բանակցություններ եղել են, իսկ դրանք անարդյունք չանցան:

Բացառված չէ, որ Ներսեսը Շապուհի հետ բանակցել է անուղղակի՝ նախարարների միջոցով: Իրար ետևից Պարսկ-

[176] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 101:

աստան էին մեկնում և Շապուհից պատիվներ ստանալով՝ վերադառնում հայ իշխանները. բոլոր նրանք, ովքեր դժգոհ էին Արշակի կաղրային քաղաքականությունից, ում վրդովվեցնում էր արքունիքի ուժեղ ձեռքի քաղաքականությունը, ում գավառներն ամենից շատ էին տուժում պատերազմի ավերածություններից[177]... տասնյակ նախարարական տներ Ներսեսի օրհնությամբ բռնել էին դավաճանության ճանապարհը: Հայոց արքան դեռ ողջ էր, հզոր ու ամենակարող, իսկ սրանք Շապուհից ակնկալում էին ապագա պարսկահպատակ Հայքում իրենց ունեցած նախկին դիրքերի ու արտոնությունների վերականգնում: Շապուհը խոստանում էր, երդումներ տալիս աջ ու ձախ: Նա արդեն այնքան էր լկտիացել, որ առանձին-առանձին իր մոտ եկող իշխանների հավատարմության երդումներն առնելուց և համապատասխան հրահանգներ տալուց հետո հրովարտակներ էր տալիս հայրենադավներին՝ Գահնամակով ամրագրված իրենց դիրքերի բարձրացման մասին: Նախարարական բարձերի հետ կապված ամոթալի սակարկությունն արտացոլվել է Շապուհի պալատում խնջույքի պատմության մեջ, ուր չնայած անձանց ու դեպքերի որոշ աղավաղմանը, պարզ ուրվագծվում է այն հիմնական ակնկալիքը, որ ունեին պարսից արքունիքից Հայոց արքայի թիկունքում սեփական խաղը սկսած դավադիրները:

Շապուհի պալատում խրախճանում են պարսից և հայոց ազնվականները: Արքան փառաբանում և մեծարում է ազգակիցներից յուրաքանչյուրին՝ ամեն մեկի համար գտնելով գովասանքի խոսքեր, ապա դիմելով հայ իշխաններին՝ պահանջում ներկայացնել իրենց ազնվական դիրքն ու պատիվը հիմնավորող վկայություններ, որպեսզի կարողանա յուրաքանչյուրին պատվել ըստ արժանավույն: Հակառակ դեպքում, նա սպառնում է պարսից ազնվականությանը շնորհել հայոց ողջ ունեցվածքը, պատիվներն ու ժառանգությունները: Երկար

[177] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ծ.:

խորհրդակցելուց հետո նախարարներն արքային են ներկայացնում սուրբ Գրիգորի գիրքը, որ Ագաթանգեղոս է կոչվում: Շապուհը կարդում է գիրքը, համբուրում և դնում աչքերին, գովասանքի երկար խոսքեր ասում: Ծանոթանալով այնտեղ ամրագրված հայ ազնվական 17 բարձերի ցուցակին՝ ըստ այդմ կարգավորում է յուրաքանչյուրի տեղը խրախճանքի սրահում: Անդովկին բաժին է ընկնում 14-րդ բարձը, և նա՝ մռայլ ու վիրավորված, չի օգտվում խնջույքի սեղանից, այլ միայն հետևում է խրախճանողներին[178]...

Պալատական հասարակ անցուդարձ հիշեցնող այս պատմությունն իրականում մեծ արժեք է ներկայացնում, քանի որ ցույց է տալիս այն հիմքը, ըստ որի էլ պետք է կարգավորվեր հետարշակյան Հայքի ազնվականության աստիճանակարգը: Անդովկի անունն, իհարկե, պատահական չէ նշված: Լինելով Շապուհի ամենառխերիմ թշնամին ու ատելին՝ նա բնականաբար, չէր էլ կարող ներկա գտնվել նման խնջույքի, մանավանդ զբաղված էր Տիգրանակերտը Շապուհից պաշտպանելով: Նրա անունը գործածվել է Շապուհի հանդեպ հետագա գործողությունները անձնական քինախնդրությունից բխեցնելու համար: Անդովկի անունը խորհրդանշական է ևս մեկ առումով. այն հայոց բնիկ տոհմերի հավաքական խորհրդանիշն է՝ տոհմեր, ում դիրքերը պետք է հետին պլան մղվեին Արշակից հետո: Հայոց աշխարհում ամենաբարձր պատիվներ ու ազդեցություն ունեցող Սիսական հինավուրց տոհմը մղվում էր ամենահետին պլան. համընկնում էին և Ներսեսի, և Շապուհի շահերը: Խնջույքի տեսարանն իրականում արտացոլումն է Արշակի ողբերգական կործանմանը նախորդած գիշատիչ պայքարի՝ հանուն պետական ունեցվածքի ու ազդեցության վերաբաշխման. ավանդական պետականամետ ու ազգայնական դիրքորոշում ունեցող ազնվական տները տեղը պետք

[178] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից Աշխարհի, Ե., 1969, Գիրք Բ., Ա.: Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, Թ.:

է զիջեին նրանց, ովքեր ի սկզբանե խաղալիք էին կղերական վերնախավի ձեռքում: Իսկ դիրքերն ու պատիվները Հայոց աշխարհում պետք է վերաբաշխվեին ի օգուտ Գրիգորի տոհմի ու անձամբ Ներսեսի քաղաքական շահի. սա է խորհրդանշում Ագաթանգեղոսի գիրքն այս պատմության մեջ:

Եվ այսպես, Արշակի թիկունքում սկսվեց մի սակարկություն հայոց անկախ պետականության գնի շուրջ. վաճառում էր պարթև Գրիգորի տոհմը: Շապուհը մեծ գին էր խոստանում, ուստի, Ներսեսի շուրջ կամաց-կամաց ձևավորվեց հայրենավաճառ փերեզակների մի ամբողջ բանակ:

ԻԲ

Քանի որ «սուրբ» Ներսեսն Արշակին անիծել էր, իսկ մենք գիտենք, որ «աստծու մարդու» անեծքներն իրագործվելու զարմանալի հատկություն ունեին, ապա անիծյալ արքան պետք է շուտափույթ կերպով պատժվեր: Դրանում նրան օգնողներ միշտ էլ կգտնվեին: 368թ. սկզբին Մեծ Հայքի նախարարներն ու գավառատերերը ժողովվեցին մի տեղ: Պատմիչը շեշտում է, որ բոլորը աղաչանքով գնում էին Ներսեսի մոտ: Կազմակերպվում էր Աշխարհաժողովի[179] պես մի բան, որը երբեք ինքնաբուխ չի գումարվել Հայոց աշխարհում: Որպես բարձրագույն խորհրդակցական ժողով՝ այն գումարվել է անհիշելի ժամանակներից և ներառել հայ իրականության բոլոր դասային ներկայացուցիչներին՝ արքայից սկսած մինչև ռամիկն ու շինականը: Այս հանգամանքը, ինչպես նաև՝ իրավասությունների ամենալայն շրջանակը, որ ունեցել է հայոց Աշխարհաժողովը, այն դարձնում են եզակի երևույթ՝ համաշխարհային իրականության մեջ: Սովորաբար, աշխարհ-

[179] Աշխարհաժողովի դերն ու գործառույթները ուսումնասիրել է Ա. Մովսիսյանը (տես՝ Աշխարհաժողով. հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովը՝ երկրի դասային համերաշխության երաշխավոր. «21-րդ Դար», 2006, թ. 3):

աժողովները հրավիրվում էին արքայի նախաձեռնությամբ: Սակայն, լինում էին նաև արտակարգ իրավիճակում հրավիրված Աշխարհաժողովներ: Սա հենց այդ դեպքերից էր: Ա. Մովսիսյանն եզրակացրել է, թե Աշխարհաժողովի նպատակն էր գահընկեց անել Արշակին: Այդ նպատակը ձախողվում է Ներսեսի միջամտության շնորհիվ: Արշակին գահընկեց անելու մասին, սակայն, Աշխարհաժողովում չի խոսվել: Ներսեսի մոտ հավաքվածներին հուզում էր մեկ հարց՝ իրենց զավառները Հայաստանից անջատելն ու Պարսկաստանի տիրապետության տակ անցնելը: Բուզանդի հաղորդածից միայն այս հետևությունն է բխում: Եվ հետո, Ներսեսի միջամտությունն Արշակի օգտին՝ առավել քան անհամոզիչ է ներկայացված պատմիչի մոտ: Աշխարհաժողովի մասնակիցներն ինքնաբուխ չէ, որ հավաքվել էին կաթողիկոսի մոտ: Նրանց հենց Ներսեսն էր հրավիրել: Հակառակ գունազարդ պատմություններին՝ Բուզանդը հնարավորություն է ընձեռնում հասկանալ ժողովի գումարման իմաստն ու Ներսեսի ճակատագրական դիրքը: Այսպես, գումարվեց յուրատեսակ մի Աշխարհաժողով՝ այն տարբերությամբ, որ այստեղ բացակայում էին արքան, սպարապետը, արքունի պաշտոնյաներն ու Հայոց Գունդը, գահին հավատարիմ իշխանները: Սրանք բոլորն էլ զբաղված էին պատերազմի հոգսերով: Ներսեսը հավաքել էր բոլորին՝ ով արդեն գեթ մեկ անգամ հասցրել էր օգտվել Շապուհի առատ կերակրատաշտից: Այստեղ այլևս չկային հունասերներ և պարսկասերներ: Տնտեսական կորուստն ու հարստության տենչը հաշտեցրել էին բոլորին: Այն, ինչ չկարողացավ անել և ոչ մի հայ արքա, կարճ ժամանակում հաջողվեց Ներսեսին. սեփական պետականությունը կործանելու մոլուցքը՝ նախկին երդվյալ թշնամիներին դարձրել էր ուխտակիցներ: Ժողովի թեման մեկն էր, ահա այն.

«Եթե Արշակ թագավորը կամք ունի Շապուհի հետ կռվելու՝ թող Վասակի և իր աներոջ՝ Անդովկի միջոցով

պատերազմի: Հայոց աշխարհից ոչ ոք, ոչ մի մարդ նրան չի գնա օգնության: Նա ուզում է՝ թող պատերազմի, չի ուզում՝ չպատերազմի, մեր պետքը չէ: Մենք նրան թողել ենք»[180]:

Այսպես խոսեցին հայոց տերերը: Հոգնած էին, վհատ, ուժասպառ: Ներկան անորոշ էր, իսկ գալիքի հանդեպ վառ հույսեր ունեին. Շապուհն էր վառել այդ հույսերը: Միայն թե Արշակը մնար լոկ Վասակի ու Անդովկի հույսին: Իսկ Ներսեսը գիշեր-ցերեկ մտածում էր Հայոց աշխարհի բարօրության մասին: Նա, ըստ Բուզանդի, խստիվ պատվիրեց հայոց տերերին ոչ մի դեպքում չմոռանալ Քրիստոսին և չպաշտել օտարի պիղծ կրոնը: Այսքանը միայն: Այսինքն, արեք ինչ ուզում եք, ծախեցեք ում ուզում եք, ծառայեք ում ուզում եք, միայն թե մնացեք քրիստոնյա: Ներսեսն արեց իր գործը. վերջին անգամ հայ իշխանները, նախարարներն ու կուսակալները ներկայացան Շապուհին՝ ճշտելու իրենց ապագան: Բավարարված պարսիկի տված հավաստիացումներից ու պատիվներից՝ յուրաքանչյուրը վերադառնալով իր տիրույթը՝ անմատչելի ամրություններով կտրում է իրեն Հայոց աշխարհից, փակում Միջնաշխարհի հետ կապող բոլոր ճամփաները և իրեն հայտարարում անկախ. անկախ՝ հայոց, այլ ոչ պարսից արքունիքից: Սարսափելի արագությամբ, առանց արյան, առանց պատերազմի, հայոց արքայի աչքերի առջև սեփական երկրից ծվեն-ծվեն պոկվում են պատառիկներ ու կցվում օտարին:

Առաջինն հայոց պետությունից առանձնացավ Աղձնիքը, որի բդեշխը՝ հսկայական պարիսպներ քաշելով Ձորա Պահակի մոտ, ողջ տոհմը, զորքն ու նահանգը դրեց Շապուհի հպատակության ներքո: Սրան հետևեց Գուգարքի բդեշխը, ապա՝ Կողբի, Գարդմանքի, Արցախի, Տմորիքի տերերը: Շապուհին հպատակություն հայտնեցին Ատրպատականի հայկական իշխանությունն ու Կասպից աշխարհը: Անձիտի ու Ծոփքի տերերն էլ անցան հռոմեական հպատակության ներքո: Հայոց արքայի

[180] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԱ.:

տիրապետությունն այլևս սահմանափակվեց Այրարատով, Տայքով ու Սյունիքով: Անգամ Այրարատի մանր ու մեծ իշխանիկներն էին անհնազանդության նշաններ ցույց տալիս[181]: Նման պայմաններում Անդովկը թողնելով Տիգրանակերտը, ուր արդեն օտար էր համարվում, անցավ Սյունիք: Հայոց արքան հարկադրված էր տարբեր շրջաններում, մասնավորապես, Աղձնիքի ու Ծոփքի անառիկ բերդերում պահվող արքունի գանձերն ամբարել Այրարատում: Այրարատ կանչվեցին նաև արքունիքին հավատարիմ մնացած զորաջոկատներն ու գործակալները: Անսպասելի, խելացնոր մի բան էր կատարվում Հայոց աշխարհում. ռազմի դաշտում պարտություն չկրած հայոց բանակը հալվեց ու անէացավ սպարապետի աչքերի առջև: Ամեն իշխան՝ առած իր գունդը, քաշվեց իր տուն՝ սպասելու Շապուհի հաղթարշավին: Սպարապետն ի զորու չէր պահելու անգամ Հայոց Գունդը, քանզի ստեղծված իրավիճակում անհնար էր լուծել զորքի սննդի հետ կապված խնդիրներն անգամ: Ցրվեց Հայոց Գունդը: Հայոց թագին հավատարիմ մնացած տարածքները պաշտպանելու համար արքունի տրամադրության տակ մնացած ուժը Անդովկի Սիսական գունդն էր, որին իշխանը ցրեց Արշակի տիրապետության տակ մնացած ամրոցներում: Սա է պատճառը, որ ավելի ուշ Միջնաշխարհով անցնող պարսից զորքին ամենուր դիմադրում էին սյունյաց զինվորները: Սա էր պատճառը, որ Շապուհն ամեն բերդ գրավելիս՝ հրամայում էր կոտորել Սիսական տան բոլոր արուներին[182]. երկիրը կրկին Անդովկն էր պահում:

Ասում են պարսկասերները կործանեցին Արշակին: Ո՛չ, հայոց պետականությունը կործանողն այն դավադիր համաձայնությունն էր, որ երկար բանակցություններից հետո կայացավ Գրիգորի տոհմի, պարսից արքունիքի ու հայ նախարարների միջև: Սա այն դեպքն էր, երբ արդեն չկային

---

[181] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ծ.:

[182] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԻԸ.:

հունասերներ և պարսկասերներ: Վերացել էին երկու ուղղությունների միջև տարաձայնությունները: Սեփական պետության կործանման ցանկությունը «մեծն պարթևի» շուրջ համախմբեց բոլորին: Գեթ մեկ ճակատամարտ չշահած Շապուհին մնում էր միայն ընդունել իրեն մատուցվող զոհը՝ Հայոց Պետականությունը, և Շապուհն ընդունեց:

ԻԳ

Դադարեցնելով մարտերը, Շապուհն Արշակին հրավիրեց Տիզբոն՝ հաշտության դաշն կնքելու պատրվակով: Արշակը, բնականաբար, մերժելով այդ առաջարկը՝ պատրաստվում է նոր արշավանքի: Այստեղ նա հասկացավ իր անելանելի դրությունը. Շապուհի դեմ պատերազմելու համար՝ նախ ստիպված էր լինելու պատերազմել իր ազգակիցների դեմ: Միջնաշխարհն օղակի մեջ առած հայոց նահանգների դեմ ոչինչ չէր կարող անել նա. պարսից սահմանն անհասանելի էր դարձել նրա համար: Շապուհը վերջին անգամ Արշակին հրավիրեց Տիզբոն: Իբր անկեղծ բարեկամության նշան, պարսից արքաների անխախտ երդման վկայությունը՝ վարազագիր մատանիով կնքված աղն ուղարկելով, նա սպառնաց՝ մերժման դեպքում վերսկսել պատերազմը: Շապուհի նենգ ու խարդախ բնույթին ծանոթ Արշակը լավ էր գիտակցում այդ երդման արժեքը: Նա գիտեր, որ սեփական երկրում այլևս իշխանություն չունեցող տիրակալի հետ բարեկամություն ոչ ոք չի անում՝ հատկապես իր հետ, որ տարիներ շարունակ նսեմացրել էր Շապուհի փառքը: Բոլորն էին հասկանում Հայոց աշխարհում, թե ինչ նպատակով է Արշակին կանչում Շապուհը: Պատմիչի խոսքերից ենթադրելի է, որ Արշակի ընդդիմադիրները կրկին Աշխարհաժողով են հրավիրվել: Հավաքվեցին երկրի տերերն ու որոշեցին. Շապուհի երդումը հուսալի է: Հայոց արքան, եթե չի ցանկանում երկիրը տանել

կորստի՝ պետք է անհապաղ գնա Տիզբոն[183]: Մինչդեռ, երկիրը վաղուց էր կործանվել. այն օրը, երբ Ներսեսի հրավերով նախարարները հավաքվեցին ժողովի: Եվ Արշակը գնաց: Սյունյաց մի բուռ քաջերի հույսին թողնելով որդուն և թագուհուն՝ շարժվեց դեպի անխուսափելի վախճանը: Կրկին նրա հետ էր սիրելի դայակը՝ հայոց սպարապետը, ով մահվան ճանապարհին անգամ մտքով իսկ չանցկացրեց մենակ թողնելու իր արքային: Վասակն ուղեկցում էր Արշակին, և Հայոց աշխարհը քար անտարբերությամբ բաժանվեց իր փառքը կարճ ժամանակում երկինք բարձրացրած այս երկու հսկաներից:

Ցնծության մեջ էր Ներսեսի բանակը: Վերջապես Շապուհը կգնահատի իրենց զոհաբերությունը, կարժանանան պարգևի: Բայց չարաչար սխալվում էին հայոց դավաճան տերերը՝ մահվան դուռն ուղարկելով իրենց արքային: Շատ շուտով կհասկանան, որ ընդամենը գործածված տիկնիկ էին Շապուհի, Ներսեսի ու Վաղեսի ձեռքերում: Բայց արդեն շատ ուշ կլինի:

Արշակն ընդմիշտ լքում էր իր երկիրը: Նա գիտեր դա: Բայց նա գիտեր ամենասարսափելին. իր հետ միասին Հայոց հողն ընդմիշտ հրաժեշտ էր տալիս Տիրակալի, Նվաճողի այն Ոգուն, որ մարդկությանն առավել հայտնի է Արամ, Տիգրան, Արշակ անուններով: Հայոց Պետականությունն այլևս երբեք չէր կարողանալու դուրս գալ հուսահատ պաշտպանվողի իր կարգավիճակից. արքայից արքաների երկրում անվերադարձ կերպով հաստատվել էր եկեղեցու տիրակալությունը…

ԻԴ
ԱՂԵՏ

Պատերազմի թատերաբեմն արդեն Հայոց աշխարհն էր: Անտեր մնացած երկրում անիշխանություն էր տիրում: Փառանձեմ թագուհին՝ ակամայից ստանձնելով արքունիքին

[183] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԳ.:

հավատարիմ մնացած զավառների պաշտպանության գործը, ժամ առաջ սպասում էր արհավիրքին: Եվ այն չուշացավ: Զիկ և Կարեն զորավարների գլխավորած պարսից հսկայական բանակը՝ մահ ու ավեր սփռելով, մտավ Հայաստան[184]: Առաջադրանք ունեին Զիկն ու Կարենը. Հայաստանը հպատակեցնելուց զատ Շապուհի տիրապետությունն այստեղ առավել ամրապնդելու նպատակով նրանք պետք է Տիզբոն ուղարկեին Արշակ արքային լքած և Շապուհի հպատակությունն ընդունած նախարարների կանանց և երեխաներին[185]: Սա էր այն բարձր դիրքն ու պատիվը, որ պարսից արքան արժանի համարեց շնորհել դավաճաններին: Նախատեսված էր արհեստավոր ու առևտրական ազգաբնակչության զանգվածային տեղահանումը դեպի Պարսկաստանի քաղաքներ: Շապուհը, որի նենգությունն ու ոխակալությունը հայտնի էին ողջ աշխարհին, հատուկ հրաման էր տվել գերեվարել ու Տիզբոն հասցնել Փառանձեմ թագուհուն՝ Արշակին նվաստացնելու և Անդովկ Սյունուց երեսնամյա վրեժը հանելու համար: Եվ պարսից զորքերը հեղեղի պես լցվեցին Հայոց աշխարհ: Շապուհի հանձնարարությամբ պարսից զորահրամանատարներին Հայաստան էին առաջնորդում Մեհրուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը: Նրանց հանձնարարված էր՝ ապահովել Զիկի և Կարենի առջև դրված խնդիրների լուծումը: Հայոց նախարարները սարսափի և շփոթության մեջ էին:

---

[184] Ամենայն հավանականությամբ, այս Զիկն ու Կարենը Հայաստան ուղարկված բանակի զորավարների տոհմանուններն են: Փավստոսը հիշատակում է մի քանի Զիկ, որոնք միշտ էլ ջախջախվել են Հայոց աշխարհում: Ամեն դեպքում, Արտագերսի առաջին պաշարման ժամանակ խայտառակ պարտություն կրած Զիկն ու Կարենը չպետք է երկրորդ անգամ էլ ուղարկվեին: Խոսքը կարող է միայն գնալ Զիկ և Կարեն տոհմերից սերված տարբեր զորավարների մասին: Ընդհանրապես, Զիկի և Կարենի տոհմերը պարսից հնագույն և պատվական տոհմերից էին (տես՝ Մուշեղյան Ա., նշվ. աշխ., էջ 256-273):

[185] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԼԴ.:

Փակված իրենց բերդերում, ցնծությամբ Արշակին դեպի կորուստ ճանապարհող այս ուխտադրուժներն ամենևին չէին սպասում դեպքերի նման զարգացման: Հիմա նրանք հարկադրված էին կամ մինչև վերջ հավատարիմ մնալ նոր տիրոջն ու պարսից արքունիք ուղարկել իրենց ընտանիքներին, կամ լքել հարազատ երկիրը: Հայքի տերերն ընտրեցին երկրորդ ճանապարհը. առաջին անգամ մեր պատմության մեջ Հայոց աշխարհից սկիզբ առավ զանգվածային գաղթը, որն առաջնորդում էին հայ իշխանները: Առած տոհմերն ու ունեցվածքը, տանելով ազատ բնակչության հոծ զանգվածներ՝ դեպի հռոմեական տարածքներ էին շարժվում Շապուհի արժանի վարձատրությունից խուսափող հայրենադավները: Նրանց հետ էին եկեղեցու սպասավորները: Ի տարբերություն ագահությունից հոգիները ծախած ազնվականության, Ներսեսը, բնականաբար, հաշվի առել էր դեպքերի նման զարգացում: Այժմ արդեն կարելի էր հեռու, անվտանգ տեղից բյուզանդական արքունիքի օժանդակությամբ պայքարել Հայաստանը հրի ու սրի մատնած Շապուհի դեմ: Ներսեսն առաջինների թվում ճողոպրեց երկրից:

Շապուհի առաջադրանքը Մեհրուժան Արծրունին վերցրեց իր վրա: Եվ իրականացրեց փայլուն հաջողությամբ, միայն թե՝ ոչ այնպես, ինչպես սպասում էին հայոց կղերական այրերը. Զիկի և Կարենի գրաված մարդաշատ և հարուստ քաղաքները դատարկվեցին... հրեաներից: Այո, մատենագիրների թվերը շատ խոսուն են: Ընդհանուր առմամբ, Վաղարշապատից, Զարեհավանից, Վանից, Զարիշատից, Երվանդաշատից, առևտրաշահ հայոց մյուս մեծ քաղաքներից տեղահանվեցին ու Պարսկաստանի խորքերն ուղարկվեցին շուրջ 200.000 հրեա ընտանիքներ՝ ահռելի մի թիվ, որ գոյացել էր մի քանի հարյուրամյակ առաջ Հայոց երկիր գաղթեցված հրեա գերիների սերունդներից[186]: Այս փաստից Հ. Մանանդյանը ենթադրել է, թե այս շրջանում հայերը փոքրամասնություն են

[186] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԼԵ.:

կազմել հայրենիքում[187]: Հայերը միշտ էլ բացարձակ մեծամասնություն են եղել. դա ապացուցված է հնագիտական, ազգագրական ու պատմական հազարավոր փաստերով: Ուղղակի, հատկապես քրիստոնեական աղանդավորների մուտքից հետո հրեաները խոշոր քաղաքներում հաստատվեցին ու բազմացան՝ հիմնականում պահպանելով փակ համայնքային կեցութաձևը: Ժողովրդական իմաստությունը մեզ է հասցրել տիպական լեգենդ՝ կապված Թադեոս առաքյալի անձի հետ: Վասպուրականի նահանգի Գնունյաց գավառը հնուց ի վեր հայտնի է իր գինեվետությամբ, պտղատու այգիներով, հարուստ, առատ բուսականությամբ ու բարեբեր կլիմայով: Այստեղ էր գտնվում Ալյուր կամ Այլուր հայաշատ և հացառատ գյուղը՝ առանձնահատուկ գեղեցիկ բնությամբ: Ավանդությունն ասում է, երբ Թադևոսը գալիս է այստեղ, հիանալով գյուղի բնությամբ, բացականչում է. «Այլ ու՞ր գնալ»: Ըստ այդ ավանդության, գյուղը կոչվել է Այլուր[188]:

Սա ընդհամենը մի լեգենդ է, բայց նրանում ամփոփված է հայ մարդու վերաբերմունքը՝ իր երկրում հաստատված հրեա զանգվածներին: Քրիստոնյա թե հուդայական՝ սրանց գալու հիմնական շարժառիթն եղել է Հայոց երկրի բարեբերությունը, տնտեսական, կլիմայական հրաշալի նախադրյալները: Սրանք հեշտացրին քրիստոնեական առաջին համայնքների մուտքը Հայոց աշխարհ և մինչև վերջ էլ մնացին պարթև Գրիգորի տոհմի բանակի լուրջ ֆինանսավորողներն ու քանակ ապահովողները: Ահա թե ինչու Մեհրուժան Արծրունին յուրովի ըմբռնելով տեղահանության՝ Շապուհի հրամանը, հատուկ սկսեց զբաղվել հրեական համայնքների հարցով: Նրա համար կարևոր չէր նրանց քրիստոնեական կամ հուդայական դավանանքը. պարսից աշխարհն էին քշվում անխտիր բոլորը: Թեև Բուզանդը հրեաների հետ մեկտեղ

---

[187] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 206:

[188] Ավետիսյան Կ., Հայրենագիտական էտյուդներ, Ե., 1979, էջ 181:

տալիս է նաև տեղահանված հայերի մասին թվեր, սակայն, Խորենացու մոտ ակնարկ անգամ չկա հայերի զանգվածային տեղահանության մասին: Բնականաբար, Մեհրուժանը չէր կարող խանգարել պարսից զորահրամանատարներին, և գրավյալ բնակավայրերից եղել են նաև հայերի գերեվարություններ: Ակներև է, որ Պարսկաստան քշված ընտանիքների հիմնական զանգվածները եղել են հրեաներ, և դա հատուկ կազմակերպված էր Մեհրուժանի կողմից: Սրանց հետ միասին նա տեղահանեց և կղերական գործիչներին: Սրանց աքսորելու պատրվակը մեկն էր՝ հարկերից խուսափելը: Մեհրուժանը դիմեց մինչ այդ չլսված մի քայլի. պարսից արքայի անունից հարկեր սահմանեց եկեղեցու վրա՝ քաջ գիտակցելով, սակայն, որ կղերականները երբեք չեն կիսի իրենց հարստությունը: Եվ սկսվեց որսը: Արքունի հարկերը թաքցնելու մեղադրանքով հրեա ընտանիքների հետ միասին Պարսկաստանի խորքերն էին քշվում հայոց ամենաբերրի գավառներում ձրիակերությամբ զբաղվող հարյուրավոր սևազգեստներ[189]: Մեհրուժանի նպատակը մեկն էր. առիթից օգտվելով երկիրը մաքրել հայոց պետականությունը կործանած վարակից:

Ներսեսն առած իր ոչխարներին ճողոպրեց Բյուզանդիա: Մեկը մյուսի ետևից ավերելով հայոց բնակավայրերը՝ պարսից զորքերը մոտեցան արքունի Ոստանին: Անդովկ իշխանը մի բուռ քաջերով պաշտպանում էր Սյունյաց դարբասները, պարսից զորքերի դեմ հուսահատ կռիվներ էին մղվում նաև Տայքում: Փառանձեմ թագուհու իշխանության տակ մնացած ամրոցները հուսահատորեն պաշտպանվում էին Սիսական գնդի մարտիկների կողմից: Հայոց թագուհին, հետը վերցնելով արքայազն Պապին, 11.000 զինվորների և նրանց ընտանիքներին՝ փակվեց Արտագերս ամրոցում՝ սպասելով պարսից զորքերի գալստյանը: Այն իրեն երկար սպասեցնել չտվեց:

---

[189] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԼԶ.:

ԻԵ

Արտագերս...

Վեհատեսիլ ամրոցը վեր էր խոյանում Արշարունյաց գավառում: Գավառը, որ Հայոց աշխարհի ամենահարուստ ու բարեկեցիկ շրջաններից էր, նախկինում պատկանել էր Կամսարականներին: Հիմա արդեն այն կցված էր արքունի Ոստանին և Արշակ արքայի հրամանով ծառայում էր իբրև համբարանոց՝ Արտագերս ամրոցի համար: Հայոց արքան այս ամրոցը կառուցելուց չէր էլ մտածում անգամ, թե գավառից տարիներ շարունակ այստեղ ամբարվող սննդի ու զինամթերքի պաշարները մի օր այնքան պետք են գալու իր երկրին, որդուն ու թագուհուն: Արտագերսը բնականից ամուր և անառիկ դիրք ուներ: Զուր չէ, որ հայոց արքան այստեղ էր կենտրոնացրել պետական գանձարանի մի մասը: Պատահական չէր նաև այն, որ 11.000 քաջերի գլուխն անցած հայոց թագուհին օրհասական ժամին ընտրեց հենց այս բերդը: 368թ. վերջերին ամրոցը պաշարվեց պարսկական զորքերով: Ահռելի բանակը, գրավելով շրջակա բոլոր ամրություններն ու տարածքները, օղակի մեջ առավ հայոց արքունիքին ապաստան տված Արտագերսը:

Արտագերսի պաշտպանությունը հայոց պատմության ամենահերոսական էջերից է. հայոց թագուհու գլխավորած մարտիկները քաջության հրաշքներ գործեցին՝ մինչև վերջին շունչը կռվելով ու ամրոցի պարիսպների տակ պահելով թշնամու հսկայական բանակին: Շատ արքաներ ու զորավարներ կնախանձեին այն կամքին ու արիությանը, որ դրսևորեց հայոց թագուհին՝ պաշարման երկար ու ձիգ ամիսների ընթացքում: Ամբողջ ձմեռ պարսկական բանակն անցկացրեց ամրոցի շրջակա գավառներն ասպատակելով ու թալանելով: Թագուհու պաշտպանները հանգիստ չէին տալիս թշնամուն: Փոքրիկ, արագընթաց ջոկատներով դուրս գալով ամրոցից՝ կայծակնային գրոհներով շփոթ էին առաջացնում պարսից

առաջապահ դիրքերում, նորանոր զոհեր պատճառելով հակառակորդին: Առաջին ձնհալների հետ, պարսկական զորքը սկսեց իր գրոհները: Դրանք ստացան պարբերական բնույթ և կրկնվում էին համարյա ամեն օր: Արտագերսի պաշտպանները հուժկու հակահարվածներով հօդս էին ցնդեցնում ամրոցը գրավելու պարսիկների բոլոր փորձերը: Թագուհին ոչ մի տեղից օգնության հույս չուներ: Հայրը՝ Անդովկ Սյունին, փակված էր Սյունիքում՝ թշնամական զորքերի կողմից կտրված ողջ աշխարհից: Հայքի բոլոր շրջաններում արդեն տեր ու տնօրինություն էին անում պարսկական զորքերը: Ողջ Հայքի հայացքն էր ուղղված Արտագերսին, ասես այնտեղից էր գալու հայոց փրկությունը: Թագուհին իրավունք չուներ ընկճվելու: Ամրոցում էր գտնվում հայոց ապագա Տերը՝ Պապ արքայորդին: Հարկավոր էր ամեն գնով պահպանել պատանի արքայազնի կյանքը՝ հանուն Հայքի ապագա վերածնունդի: Եվ թագուհին պայքարում էր: Ամրոցի հերոս պաշտպանները չգիտեին, թե որտեղի՞ց է գալու իրենց փրկությունը: Եվ կգա՞ արդյոք: Հայոց աշխարհից մնացել էր միայն մի Արտագերս և մի հեռավոր Սյունիք: Երկուսն էլ օգնության կարիք ունեին և երկուսն էլ՝ միմյանց անհասանելի...

Պարսից բանակի հերթական հուժկու գրոհը մեծ դժվարությամբ ետ մղվեց արտագերսցիների կողմից: Զոհերը շատ էին, վիրավորներն՝ առավել ևս: Ամրոցում դրությունը գնալով սպառնալի էր դառնում: Վերջանում էին սննդի պաշարները: Մեհրուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի նախաձեռնությամբ Զիկ և Կարեն զորավարները վերջիններիս ուղարկում են թագուհու հետ բանակցելու: Մեհրուժանին հանձնարարված էր թագուհուն ներկայացնել երկրում տիրող իսկական պատկերը, ահաբեկել Շապուհի զայրույթով և, օգտվելով մարդկանց վրա ազդելու մոգական իր արվեստից, համոզել բացելու բերդի դռները: Առաջին հայացքից անչափ խառնիճաղանջ ու իրար հակասող պատմությունները պատգամա-

վորության մասին իրականում միտված են եղել ստվեր ձգել հայ իշխանների անվան ու պատվի վրա. դրանում շահագրգռված էին և հռոմեական տարեգիր Ամմիանոսը և կղերական հայազգի պատմիչները:

Հանգամանալից վերլուծեմ այն շփոթը, որ առաջացել է մատենագիրների միմյանց հակասող տեղեկություններում: Ամմիանոսն Արտագերսի պաշարման պատմության մեջ գործածում է «Գղակ և Արտավան» անունները: Ներքինի Գղակն, ըստ նրա, ցեղապետ էր, իսկ Արտավանը՝ զորավար: Ըստ Ամմիանոսի, սակայն, Զիկի և Կարենի փոխարեն սրանց էր ուղարկել Շապուհը՝ ամրոցը գրավելու: Փավստոսի մոտ Գղակի և Արտավանի մասին խոսք չկա. այստեղ ամրոցը պաշարում են Զիկն ու Կարենը: Խորենացին նշում է միայն Մեհրուժանի ու Վահանի անունները: Իրականում, ամրոցը պաշարվել է երկու անգամ[190]. առաջին պաշարման դեպքում պարսից բանակի հրամանատարներն են եղել Զիկը և Կարենը: Մեհրուժանն ու Վահանը, ինչպես արդեն նշել եմ, առաջնորդել են զորքին: Մեհրուժանը ցեղապետ էր, իսկ Վահանը՝ Մամիկոնյան զորավարական տոհմից: Ըստ Ամմիանոսի, Գղակը կանանց վրա ազդելու մոգական հատկություն ուներ. մարդկանց վրա ազդելու մոգական հատկությամբ հայտնի էր Մեհրուժանը: Շփոթի պատճառը Փավստոսի հիշատակած երկու մարդպետներն են՝ Հայրը և Գղակը: Հաշվի առնելով այս և էական մի շարք այլ նմանություններ Վ. Լալայանն արել է մի հետևություն. Ամմիանոսի հիշատակած Գղակն ու Արտավանը՝ նույն Մեհրուժանն ու Վահանն են[191]: Ավելացնեմ միայն, որ ամրոցը պաշարվել է ոչ թե նրանց կողմից, ինչպես նշում է հռոմեացի պատմիչը, այլ՝ Զիկի և Կարենի: Ընդհանրապես, երբեք ընդունված չի եղել, որ որևէ ամրոցի պաշարումն իրականացնող երկու գլխավոր

---

[190] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 203:

[191] Լալայան Վ., Մեհրուժան Արծրունի:

հրամանատարներ մտնեն պաշարվածների մոտ բանակցությունների. այդ գործի համար միշտ էլ եղել են հատուկ ընտրված բանագնացներ: Զիկը և Կարենն, ինչպես արդեն նշել էի, ամրոց ուղարկեցին Մեհրուժանին ու Վահանին:

Մեհրուժան Արծրունին, վերցնելով Վահան Մամիկոնյանին, մտավ ամրոց: Թագուհին տեղյակ էր այն դերի մասին, որ Արշակի կողմից վերապահված էր Արծրունյաց իշխանին: Շատ արագ ծանոթանալով ամրոցում տիրող վիճակին՝ Մեհրուժանը թագուհուց խնդրեց ռազմական խորհուրդ հրավիրել: Նա ամրոցի պաշտպաններին մանրամասն ներկայացրեց պարսից բանակի դիրքային թուլություններն ու հարձակման ամենահարմար տարբերակները: Թագուհու հետ պայմանավորվելով հարձակման կոնկրետ պահի մասին՝ իշխանները դուրս են գալիս ամրոցից և ներկայանում պարսից հրամանատարությանը. պարսիկները ցնծության մեջ էին: Մեհրուժանը ներկայացնելով այն թշվառ վիճակը, որում գտնվում էին պաշարվածները՝ ասել էր, թե թագուհին երկու օր ժամանակ է խնդրել՝ անձնատուր լինելու համար: Զգուշության բոլոր կանոնները մոռացած պարսից բանակը հանգիստ մրափում էր Արտագերսի շուրջ, երբ Մեհրուժանի նշած ժամին բացվեցին ամրոցի դռները: Բերդապահ զորքը ներխուժեց թշնամու բանակ: Սոսկալի կոտորածի արդյունքում քչերը փրկվեցին: Պարսից ահռելի բանակի մնացորդները ցիրուցան եղան տարբեր ուղղություններով[192]: Մեհրուժանը և Վահանը շտապեցին Տիզբոն՝ Շապուհին անձամբ տեղեկացնելու Զիկի և Կարենի ապիկարության մասին: Հայոց թագուհու հաղթանակը կատարյալ էր: Վերացել էր ամրոցի պաշարումը, պարսից բանակի հետքն անգամ չէր մնացել Ոստանում: Թագուհին շտապում էր համալրել ամրոցի պաշարները, վերականգնել զորքի նվազած թիվը. ավելին նա չէր կարող, Շապուհը երկար սպասեցնել չէր տալու: Հարկավոր էր ժամ առաջ

[192] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 203:

վերականգնել ուժերը, օգտվել ժամանակավոր ազատությունից և փրկել գահաժառանգի կյանքը. հայոց թագուհուն հարկավոր էր մի փոքր ժամանակ: Եվ այդ ժամանակը նրան տրվեց Սյունիքից՝ Անդովկ մեծ իշխանի կողմից...

ԻԶ

Սյունյաց տերերի նախապատիվ գահակալությունն՝ այս մոխրի հետ թող ցած թափվի, այնպես էլ՝ նրանց կյանքն ու մտադրությունները[193]...

Շապուհ արքայի հրամանով յուրաքանչյուր ոք՝ ով մտնում էր արքունի պալատ, պետք է ծեծեր այնտեղ դրված մոխրով լի սանդը և պարտադիր արտասաներ նզովքի այս խոսքերը: Արքայի երկարատև կյանքի ընթացքում դեռ ոչ ոք չէր կարողացել անարգանքի ու անպատվության այնպիսի հարված հասցնել իրեն, ինչպես դա համարձակվեց անել Սյունյաց նահապետ Անդովկը:

Երեսուն տարուց ի վեր, Անդովկի մասին ակնարկն անգամ ցասում էր արթնացնում արքայի սրտում: Անդովկը շատ է խանգարել արքային: Հպարտ Սյունեցին խելացի էր, իմաստուն մի այր, տաղանդաշատ ու արի մի զորավար, որի նմաններին քիչ էր տեսել Շապուհը: Հիմա Անդովկն, ըստ երևույթին, ընկճված էր, և դա ուրախացնում էր Շապուհին: Փակված Սյունիքում, կորցրած դարերով ժառանգած դիրքն ու բարձը հայոց Գահնամակում, իշխանը չէր կարողանում անգամ օգնել պաշարման մեջ գտնվող դստերը: Շապուհին ինչ, թե Զիկին ու Կարենին դիմագրավող փոքրաթիվ հեծելազորայինները Անդովկի քաջերն են: Դրանք քիչ են, աննշան՝ իր ահռելի բանակի դիմաց: Շապուհը հանգիստ էր: Ու չգիտես, թե ինչու, որ Չարքի դրդմամբ, հանկարծ պայթեց պատերազմի լուրը. խազարները, անցնելով Ճորա Պահակը, ներխուժել են

[193] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն:

Պարսկաստան[194]: Անսպասելի էր դա արքայի համար. սովորաբար, այս վաչկատունները միշտ էլ օգտվել են պարսից արքաների պարտություններից՝ անպատիժ ասպատակությամբ հեղեղելով Պարսկաստանը: Բայց հիմա, երբ հնազանդեցված են ինքնիշխանության ձգտող բոլոր ցեղերը, երբ ծնկի է բերված անգամ քուշանաց հզոր իշխանությունը, երբ նվաճվում է երեկվա հզոր Հայքը... Այո, սա անսպասելի էր արքայի համար: Առավել վրդովվեցուցիչ էր, որ քոչվորների հարձակումը համընկավ Արտագերսի տակ իր երկու ապիկար զորավարների խայտառակ պարտությանը: Շապուհը շտապ զորք է հավաքում: Հայաստանում ոչնչացած բանակի մնացորդները քիչ էին ավարառուներին դիմագրավելու համար: Շապուհը զորք էր պահանջում բոլոր հպատակներից: Ուղարկեցին բոլորը: Պարսից հսկայական տերության բոլոր անկյուններից իրենց գնդերն էին առաջնորդում Շապուհի մոտ տարբեր ազգերի իշխաններն ու ցեղապետները. Զորահավաք էր, և բոլորը շտապում էին իրենց լավագույնս դրսևորել նրա առջև՝ խազարների դեմ կռվին: Հայոց օրհասական այդ ժամին, երբ Փառանձեմ թագուհին փոքրիկ ջոկատներին համալրում էր փնտրում հայ իշխաններից, Հայքում ծվարած նախարարներն իրենց գնդերն ուղարկեցին Շապուհին: Ժամանակավորապես թողած Հայաստանը նվաճելու խնդիրը՝ Շապուհը շտապեց խազարներին ընդառաջ:

Զինվոր չուղարկեց միայն Անդովկը: Սյունյաց իշխանն անգամ չպատասխանեց իր զորքով ներկայանալու՝ Շապուհի պահանջին: Ընդհանրապես, Տիկին Փառանձեմի համար խիստ նպաստավոր այս ասպատակությունն այնքան էլ անսպասելի չէր Անդովկի համար: Եթե նկատի ունենանք, որ հնուց ի վեր Սիսական ու Աղվանից իշխանությունները սերտ կապերի մեջ էին Ճորա պահակից այն կողմ բնակվող ցեղապետների հետ, նաև հաշվի առնելով Անդովկի հռչակն ու պատիվը,

[194] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, Գիրք Բ., Ա.:

ապա այնքան էլ դժվար չի լինի հասկանալ, թե ում էր հատկապես ձեռնտու խազարների արշավանքը: Այս ցեղերը պատրաստ էին՝ ոչ քիչ գումարների դիմաց, ցանկացած պահի անցնելու Ճորա Պահակը:

Անդովկ իշխանը, որ ողջ կյանքն էր դրել հայոց գահի ամրության համար, հիմա տեսնում էր այդ գահի կործանումը: Պատանեկան տարիներից սուրը ձեռքից դեն չգցած իշխանն անցել էր ճակատագրի բոլոր փորձությունները, ու միշտ էլ քաղաքական, ռազմական ցանկացած դժվարության ժամանակ՝ մեն-մենակ ստանձնել էր երկրի հանդեպ պատասխանատվությունը: Անդովկը հայոց պետության զինվորն էր, քուրմը և իշխանը՝ միաժամանակ: Անդովկը միշտ էլ այնտեղ էր, որտեղ վճռվում էր հայոց բախտը: Իշխանից ազդվում էին բոլորը: Նրան չէին սիրում եկեղեցականները. ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ Սյունիքի լեռներում ծաղկում ու հարատևում է հայոց հին հավատքը, որ իշխանը քամահրում է կանացիազգեստներին: Բոլորին էր երկրում հայտնի Անդովկի վաղեմի ընկերությունը՝ հանուն արքայի ու պետության ոչ մեկ անգամ Գրիգորի տոհմի դեմ ծառացած Հայր Մարդպետի հետ բոլորին էր հայտնի նրա անսահման նվիրվածությունն ու պաշտամունքի հասնող հարգանքը Հայոց Թագի հանդեպ: Շատերն էին հիշում Հուսիկի գանահարումը Բնաբերդում, Գրիգոր պարթևի աշակերտ Դանիելի մահը՝ դաժան, բայց արդարացի: Շատերն էին հիշում դավաճան նախարարների պատիժներն ու ոչ մեկ անգամ հայոց պաշտպանության գործն ուսերին վերցրած իշխանի սխրանքները. Անդովկը միշտ էլ արքաների կողքին էր՝ նրանց պաշտպանության առաջին դիրքերում: Նա այն հազվագյուտ այրերից էր, որոնց սոսկ ներկայությունը ուժ ու համարձակություն է տալիս զորքին, արքային, ազգին: Անդովկը հզոր էր, քաջ և իմաստուն, հպարտ ու պատվախնդիր: Նախնյաց հավատքով ու արժեքներով էլ դաստիարակել էր դստերը՝ Փառանձեմ թագուհուն: Արքայի

կամքով, դաստիարակում ու կրթում էր նաև գահաժառանգ Պապին: Անդովկը, որ ջանք ու եռանդ չխնայեց Արշակի գահակալության համար, հիմա՝ արքայի Տիզբոն մեկնելուց հետո, այն միակ ազնվականն էր, ով քնում ու զարթնում էր Ցեղին հասցրած անարգանքի ամոթը վերացնելու մտքով: Մինչ եկեղեցու հայրերի գլխավորությամբ հայոց մեծ ու փոքր նախարարական տները զբաղված էին տերեր փնտրելով, Սյունյաց իշխանն, սրտում անշեջ պահած արքայի ու փեսայի կորստյան ցավը, միայնակ էր մնացել:

Անդովկը Սիսական Գնդից առանձնացրեց 1700 ընտիր հեծելազորային և մտավ Պարսկաստան: Հասնելով Տիզբոնի մատույցներին, գունդը թողնում է ծածուկ մի տեղ, փոքրիկ ջոկատով մոտենում պարիսպներին: Իմանալով, որ Սիսական Անդովկն է, որը գնում է Շապուհին օգնության, պահակազորն ուրախությամբ ներս է թողնում Սյունյաց ջոկատին: Գիշերը սպանվում են գլխավոր դարբասները հսկող պահակները, բացվում են քաղաքի դռները, և հռչակավոր Սիսական գունդը մտնում է արքայանիստ քաղաք: Տիզբոնը հայերի ձեռքում էր: Անդովկի հրամանով ավերվում են Շապուհի պալատն ու ազնվական թաղամասը, իշխանների տներն ու միջնաբերդը: Պալատից դուրս են հանում արքայական գանձարանը: Այն ամենը, ինչ հիշեցրել է Սասանյանների փառքն ու հզորությունը՝ բարձում են քաղաքից հավաքված գրաստների վրա: Հսկայական քարավանը, Սիսական գնդի ուղեկցությամբ, շարժվում է դեպի Հայք[195]: Տիզբոնն ավերված էր ու անարգված: Շապուհը նման անպատվություն դեռ չէր ստացել: Այն, ինչ չկարողացան անել հռոմեական լեգեոնները, արեց Անդովկը՝ մի բուռ քաջերով: Պարսից արքաների փառքն ու պատիվն էր, որ Տիզբոնի գանձերի հետ միասին Անդովկը թաղեց Ծղուկ գավառում՝ Շաղատի վանքի նկուղներում ու թաքնարաններում, հրամայելով վանքը ծածկել հողի տակ:

---

[195] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, Գիրք Բ., Ա.:

Անդովկը գիտեր, թե ինչ է սպասվում իրեն: Բայց նա գնաց այդ քայլին, որովհետև պետք էր ցույց տալ Շապուհին, որ հայոց արքայի տմարդի գերեվարումը չի ներվում երբեք, որ Հայոց հողում միշտ էլ կան ու մնալու են հրաշքի ընդունակ արի զինվորներ, որ ստորաքարշությամբ պարսից արքայի ոտքերն համբուրող նախարարները չեն հայոց տերերը, այլ մի բուռ այս քաջերը, որոնք ամեն պահի ընդունակ են պատժել ազգի արժանապատվությունը ոտնահարողին:

Անդովկը գիտեր, որ Շապուհը երբեք չի ների իրեն, և պատրաստվում էր նրան դիմավորելու: Նրա հրամանով Սյունիքի գավառներից Բաղաբերդում հավաքվեցին սննդի, ռազմամթերքի բոլոր պաշարները: Այրվեց ու ավերվեց այն ամենն, ինչ կարող էր պարսից բանակին ծառայել. Սյունիքն ամայացավ: Սյունեցիները լքեցին իրենց բնակավայրերն ու Անդովկի հրամանով անցան հարևան նահանգներ: Շապուհին սպասում էին ամայի ու անմարդաբնակ բնակավայրերն ու մի բուռ զինվորներ՝ փակված Բաղաբերդ անառիկ ամրոցում...

369թ. աշնանը գազազած Շապուհի բանակը մի քանի ուղղություններով մտավ Հայաստան: Պարսից զորքերն իրար հետևից գրավելով ու ավարառելով հայոց բնակավայրերը, տարբեր կողմերից մոտենում էին արքունի Ուստանին ու Սյունիքին: Գրավվեց Տիգրանակերտը, որի պարիսպների տակ, ոչ շատ վաղուց, Անդովկը սարսափելի ջարդ էր տվել Շապուհին: Գերեվարելով քաղաքների ու բերդերի բնակիչ-ներին՝ արքան հրամայում էր կոտորել բոլոր սյունեցիներին, որոնք ցրված հայոց բերդերում՝ կանգնած էին դրանց պաշտ-պանության առաջին դիրքերում: Ամենուր, որտեղով անցնում էին պարսից զորքերը՝ հանդիպում էին Անդովկի զինվորների կատաղի դիմադրությանը: Պարսից հսկայական զորաբանակը մտավ Սյունիք: Ավերված բնակավայրերն ու ամայի գավառ-ները չարագույժ լռությամբ էին դիմավորում թալանի ու ավարառության եկած զինվորներին: Բաղաբերդը պաշարվեց:

Ամրոցը գրավել հնարավոր էր միայն բնակիչներին սովի մատնելով: Սակայն Անդովկը ամբողջ նահանգի պաշարներն էր հավաքել այստեղ: Մինչդեռ, պարսից բանակը սոված էր. շուրջ բոլորն ամայի տարածքներ էին, և այդ ահռելի զորքին կերակրելու համար չկար ոչինչ: Երեք հզոր հարձակում եղավ ամրոցի դեմ: Երեք անգամ էլ Անդովկը սարսափելի ջարդ տվեց Շապուհի զորքին: Սպանվեց նաև սպարապետը: Զորավարների խնդրանքով Շապուհը հրամայեց թողնել Սյունիքը[196]: Բաղաբերդի պատերի տակ տված հսկայական կորուստներ, թողած Սասանյանների հարստությունն ու փառքը՝ այդպես էլ Անդովկին պարտության չմատնած պարսիկները շարժվեցին դեպի Ոստան. այնտեղ էին Անդովկի դուստրն ու թոռը՝ հայոց թագուհին և գահաժառանգը:

Ըստ Ամմիանոսի՝ Արտագերսի առաջին պաշարման արդյունքում ջախջախելով պարսից զորքերին, Փառանձեմը հասցրեց Բյուզանդիա ուղարկել Պապ արքայորդուն[197]: Այն, որ Պապն իրոք եղել է Բյուզանդիայում՝ վկայում են նաև հայ պատմիչները, թեպետ փոքր ինչ աղավաղելով փաստերն ու ժամանակը: Պապին ապահով Բյուզանդիա ուղարկել հնարավոր էր միայն ազատության մի քանի ամիսների ընթացքում, որ Փառանձեմին տրվել էր առաջին հաղթանակից հետո: Այդ ամիսները նա օգտագործեց համալրելու համար զորքը և պաշարները, ուժեղացրեց Այրարատի Դարույնք ամրոցի պաշտպանությունը, ուր Արշակը պահ էր տվել գանձարանի պատկառելի մասը: Հերոս թագուհին օրհասական այդ ժամին մտածում էր հայոց պետության վաղվա մասին:

Պարսից բանակի անհաջող գրոհներից հետո Անդովկն անցնում է Բյուզանդիա[198]: Նա գիտեր, որ քանի ողջ է Շապուհը, իր տոհմն այլևս չի կարող հանգիստ ապրել Հայքում, որ քանի

---

[196] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, Գիրք Բ., Ա.:

[197] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 196:

[198] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից, Գիրք Բ., Ա.:

Հայքում է Շապուհը միշտ էլ փնտրելու է իր գանձերն ու ամեն հարմար առիթով ասպատակելու է Սյունիքը: Անդովկը պետք է մեկներ: Նրա և Պապ արքայորդու Հայքից դուրս գալու դրդապատճառների ու ժամանակի մեջ մեծ կապ կա: Ժամանակագրորեն դրանք համընկնում են: Թողնելով պարսից արքունիքից բերված ողջ հարստությունը Շաղատի վանքի գաղտնարաններում՝ Անդովկը վերցնելով որդուն անցնում է դստեր՝ Փառանձեմ թագուհու մոտ: Իշխանը չէր կարող հենց այնպես հեռանալ, երբ հայոց թագուհին իր օգնության կարիքն էր զգում: Ողջ կյանքը հայոց պետականությանը նվիրաբերած հպարտ իշխանը չէր կարող հիմա լքել ծանր դրության մեջ գտնվող դստերը: Բայց թագուհու կամքն այլ էր. Պապ արքայորդին պետք է անվտանգ մեկներ Բյուզանդիա՝ Շապուհի ձեռքը չընկնելու համար: Հայոց թագուհին Անդովկից բացի ուրիշ ոչ ոքի չէր կարող վստահել որդու ճակատագիրը: Եվ Անդովկը մեկնեց: Հետն առնելով Պապին ու Բաբիկին՝ որդուն, Սյունյաց վեհաշուք նահապետն ընդմիշտ հեռացավ Հայոց աշխարհից: Պարսկական զորքերը մտան Ուստան: Տիկին Փառանձեմը կրկին փակվեց Արտագերսում: Սկսվեց ամրոցի երկրորդ պաշարումը...

ԻԷ

Մի սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ, զի նոյն աւետարանն ածէ զԱրշակ արքայ ի ծունկս քո[199]:

Տիզբոնի եկեղեցու երեց Մարիի այս խոսքերը իրականում ցույց են տալիս Արշակի պարտության բուն պատճառը: Այո, հայոց արքան ու Հայկական Պետականությունը դարձան եկեղեցու խարդավանքի զոհերը: Աշխարհաժողովը գիտեր, թե ուր է ուղարկում իր արքային. և ուղարկեց: Արշակին Տիզբոնից այլևս ոչ մի հրաշք չէր կարող ետ բերել: Բուզանդը

[199] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ.:

Արշակի հանդեպ կրոնական իր ողջ ատելությամբ հանդերձ, հիանալի մի այլաբանությամբ, որ վերցված է ժողովրդական պատումներից, ակամայից ամբողջացնում է հայոց այդ հզոր թագավորի իրական պատկերը.

Շապուհը հրավիրեց մոգերին ու քաղդեացի աստղագուշակներին խորհրդակցելու, թե ինչպես վարվի Արշակի հետ:

- *«Բերել տուր Հայաստանից երկու բեռ հող և մի ման ջուր»,*- հուշում են քաղդեացիները,- *«խորանիդ մի մասում շաղ տուր հայկական հողն ու ջուրը, այնուհետև՝ շրջիր նրա հետ: Եթե ոտքը դնելով իր Հայրենիքի հողի վրա՝ քեզ հետ խոսի նույն ձևով, ինչպես խոսում է խորանիդ բնական մասում, ապա հավատարիմ դաշնակիցդ կլինի: Իսկ եթե ոչ, ապա տուն դառնալուն պես՝ կնորոգի քեզ հետ հին թշնամությունը»*[200]:

Այդպես էլ վարվեց Շապուհը: Պարսից հողի վրա ճեմելիս Արշակը՝ հնազանդ ճակատագրին, խոստովանեց այն չարիքները, որ հասցրել էր պարսից, ընդունեց պարտությունն ու Շապուհի՝ իր հետ իբրև պարտվածի վարվելու իրավունքը: Բայց երբ հայոց արքայի ոտքը դիպչում էր խորանում շաղ տրված հայկական հողին, զարմանալի մի փոփոխություն էր տեղի ունենում նրա հետ. Արշակը դառնում էր նախկին հպարտ ու տիրական արքան և արհամարհանքով նետում Շապուհին.

- *«Հեռու ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը... որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք»*[201]:

Շապուհի դեմ Արշակի պատերազմի բուն իմաստը բացահայտող խոսքեր են սրանք, որ ակամայից ներկայացնում է պատմիչը: Փորձությունը կրկնվում է մի քանի անգամ: Հայոց հողի վրա ամեն անգամ ոտք դնելիս՝ Արշակն ավելի խիստ ու

---

[200] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ.:

[201] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԴ.:

պահանջկոտ է դառնում Շապուհի նկատմամբ: Ապա, պարսից արքան ընթրիք է տալիս, ուր, արհամարհելով ընդունված կարգը, որի համաձայն հայոց արքան պետք է բազմեր իր կողքին՝ հավասար բարձրության վրա, հրամայում է Արշակի թախտը պատրաստել իրենից ներքև, ուր շաղ էր տրված Հայոց աշխարհից բերված հողը: Արշակը նստում է խոժոռված, ապա տեղից վեր թռչելով՝ ասում հայտնի խոսքերը.

-«Իմս է այդ տեղը, որտեղ դու բազմել ես, վեր կաց այդ տեղից, որ ես բազմեմ, որովհետև մեր Ազգի տեղն այդ է եղել: Իսկ եթե ես իմ աշխարհը դառնամ՝ քեզանից մեծ վրեժներ կպահանջեմ»[202]:

Իբրև պատմական իրականության գեղարվեստական գունավորում՝ այս պատմությունը խորը չի քննարկվել: Լավագույն դեպքում, այն համարվել է մի առասպել, որի նպատակն է ցույց տալ հայրենի հողի ուժն ու զորությունը: Իրականում, հրաշալի այս այլաբանությունը շատ խորհուրդներ է պարունակում, և առավել լուրջ մոտեցում է պահանջում: Խնդիրը միայն այն չէ, որ Արշակի համարձակ ու հանդուգն խոսքերով, պատմիչը բացահայտել է Հայքի քաղաքական նկրտումներն ու արքայի կորցրած հնարավորությունների իսկական արժեքը: Մինչև օրս, ոչ ոքի չի հետաքրքրել այն հարցը, թե Արշակին հող ու ջրով փորձելու պատճառն արդյո՞ք կապված չէր հայոց արքայի կրոնական պատկանելության հետ: Արդյո՞ք այդ հողի ու ջրի վրա ուխտ կապելու կամ միմյանց անկեղծությունը փորձելու սովորությունը հատուկ չէր նաև հայոց ազգային հավատքը դավանող արքաներին, և Արշակը, ցանկանար դա, թե ոչ՝ չէր կարող ստել այդ սրբազան արարողության պահին: Կա նաև մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր խորհուրդ. Հայոց մեջ եղել են արքաներ, որոնք իրենց հզորությամբ ու փառքով առավել հայտնի են եղել աշխարհին, քան Արշակը: Ունեցել ենք տիրակալներ, որոնց առջև ծունկ էին

[202] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԴ.:

խոնարհում Աքեմենյան արքաները: Բայց հայոց փառքն ու հզորությունը երկինք հասցրած և ոչ մի տիրակալ երբևէ այնպես չի նույնացվել իր Ազգին, Տեսակին՝ ինչպես Արշակը: Արշակը մեր Տեսակի գենետիկ հիշողության մեջ նույնացվել է Հայի էությանը. Արշակը նույն ինքը հայ ազգն է՝ սեփական հողի վրա հպարտ, տիրական ու նախնյաց փառքին հետամուտ, օտարության մեջ, ուրիշի հողում՝ խեղճ ու շփոթված, նվաստացած ու կորցրած սեփական արժեքի հպարտ գիտակցությունը: Ցանկացե՞լ է արդյոք պատմիչը մեզ հասցնել այդ խորհուրդը, թե՞ պարզապես միամտորեն փոխանցել է Գողթան երգիչներից լսածը. Դժվար է ասել: Բայց դրանով նա փրկել է մեր հիշողության կարևոր մի մասը. հարգանք նրան: Շապուհի մոտ այլևս կասկած չէր թողնում Արշակի վտանգավորությունն ու թշնամանքը:

Արշակ արքան շղթայակապ տարվեց Անդմըշն բերդը, որին նաև Անհուշ են ասում[203]. առհավետ շղթայվեց և մոռացության գիրկը նետվեց հայոց պետականության փառքն ու թռիչքը: Հայ Ազգի հզորության ու մեծագործության կամքը բանտարկվեց՝ ավետարանի օրհնությամբ:

Հայոց աշխարհում արհավիրհք էր...

ԻԸ

Բայց որովհետև աստծու բարկությունը Արշակի վրա էր, ամրոցի մարդիկ չկամեցան սպասել մինչև Պապից լուր գար, այլ կամովին, առանց բռնության, անձնատուր եղան[204]:

Ախ, այդ նզովքը, որ տարաբախտ արքայի կյանքն ու գործը խորտակելուց հետո անգամ, հետապնդում էր նաև նրա նվիրյալներին: Արտագերսի հերոս պաշտպանների մասին է խոսքը: Ի՞նչ էր իրականում տեղի ունենում ամրոցում:

---

[203] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԴ.:

[204] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԼԵ.:

Արտագերսում եռուզեռ էր: Ամրոցի պաշտպանները՝ ոգևորված իրենց առաջին հաջողությունից, վստահ իրենց ուժերին, լի էին պայքարելու և իրենց թագուհուն պաշտպանելու վճռականությամբ: Ամրոցի ամբարները դարձյալ լի էին սննդի անհրաժեշտ պաշարներով: Սյունյաց աշխարհն ու Անդովկ իշխանին հրաժեշտ տված նրա մարտիկներով էին համալրվել արտագերսցիների շարքերը՝ մարտիկներ, որոնք Տիզբոնն էին գրավել, որոնք Շապուհի բանակն էին թաղել Բաղաբերդի պատերի տակ, և որոնց համար ամենևին էլ սարսափելի չէր օտարի զորությունը: Այս համալրումը նոր լիցք հաղորդեց ամրոցի պաշտպաններին: Արտագերսի պարիսպների տակ կռիվները չէին դադարում: Նախորդից ավելի մեծաթիվ պարսկական բանակը ոչ մի կերպ չէր կարողանում հասնել նպատակին. պաշտպանությունն ուժեղ էր և վարվում էր մեծ հմտությամբ: Թագուհուն հավատարիմ զորապետները գիտեին իրենց գործը:

Չնայած պարսիկների աչալրջությանը, թագուհին, այնուամենայնիվ, կարողանում էր կապ պահպանել արտաքին աշխարհի հետ: Արդեն հաճախակի էր դարձել Բյուզանդիայից ժամանող բանբերների մուտքը Արտագերս[205]: Թագուհին օգնություն էր խնդրում կայսրից: Բանբերները խոստումներ էին բերում և հույսեր: Արքունիքից հորդորում էին մի փոքր էլ դիմանալ: Պապը հայտնում էր, որ շուտով կհասնի օգնության: Եվ թագուհին՝ հուսադրելով ինքն իրեն, հույս տալով իր հերոսներին՝ դիմանում էր, պայքարում ու սպասում:

Պատմագրության մեջ ընդունված ու ամրագրված մի համոզմունք կա. Վաղես կայսրը, հետամուտ լինելով Մեծ Հայքում հռոմեական ազդեցության վերականգնմանը, և մանավանդ տեսնելով, որ Շապուհը տեր ու տնօրինություն է անում այնտեղ, որոշեց Պապին հռոմեական լեգեոնի օժանդակությամբ ուղարկել Հայաստան: Հարց է առաջանում. բյուզանդա-

[205] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԵ.:

կան արքունիքն ինչու՞ հենց սկզբից չարեց դա, երբ բանտարկվեց Արշակը, երբ նախարարական տներն ու եկեղեցականներն իրենց տոհմերով սկսեցին քոչել դեպի կայսերական տիրույթներ, երբ պաշարվեց Արտագերսը: Ի՞նչ է, այդ ժամանակ կայսրը չէ՞ր տեսնում, որ Հայաստանում վերջնականապես կորցնում է ազդեցությունը, թե՞ իբր, օգնելով Հայաստանին՝ Վաղեսը կխախտեր «ամոթալի հաշտության» երեսնամյա պայմանագիրը[206]: Բայց, այնուամենայնիվ, զորք ուղարկե՞ց Հայաստան, օգնե՞ց Պապին՝ հաստատվելու հոր գահին, խախտե՞ց պայմանագիրը՝ թե՞ ոչ: Ապա, ինչու՞ ուշացումով...

Պապին ուղարկելուց հետո ամիսներ շարունակ թագուհին օգնություն էր սպասում: Պապին խոստանում էին, և նա էլ մորն էր հուսադրում: Եվ թագուհին սպասում էր: Նա չգիտեր, որ գործին խառնված է Ներսեսը, որն ինքն է օգնություն խնդրել կայսրից, և օգնությունն անպայման գալու է, բայց, միայն այն բանից հետո, երբ… Արտագերսն ընկնի: Ներսեսը հուսադրում էր Պապին և հորդորում սպասել. կայսերը ժամանակ է պետք արքայորդուն օգնական ուժեր տրամադրելու: Բնատուր խելքով օժտված Պապը լավ էր հասկանում ամեն ինչ: Նա գիտեր, որ հորը մահվան դուռ հասցրած պարթևը բյուզանդական զորքի օգնությամբ փորձում է եկեղեցու իշխանությունը հաստատել երկրում: Պապը լավ էր հասկանում, որ ինքը Ներսեսի ու կայսեր համար շատ հարմար է, որպես հայոց գահի թեկնածու՝ դեռ խակ մի պատանյակ, ով ամբողջովին կառավարելի կլինի կաթողիկոսի և, հասկանալի է, բյուզանդական արքունիքի կողմից: Նա գիտեր, որ կայսրն օգնական զորք է տալու միայն մոր կործանումից հետո. հպարտ Արշակի՝ նույնքան հպարտ ու հայրենանվեր կինը ոչ մի դեպքում չէր թողնի երկիրն ու որդուն՝ Ներսեսի ու կայսեր ազդեցության տակ: Անդովկի հեթանոս դուստրը, որ որդուն էլ դաստիարակել էր նախնյաց հավատքով՝ նոր վտանգ ու

[206] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 196-197:

խոչնդոտ էր լինելու Ներսեսի և Բյուզանդիայի համար: Ուստի, նա պետք է կործանվեր: Պետք է ընկներ Արտագերսը: Նրա ավերակների տակ պետք է մնային մոտ մեկ բյուրի հասնող Սյունյաց մարտիկները, որոնց հետ անպարտելի էր թագուհին, և որոնք ոչ ոքի չէին հանձնի Պապին: Ներսեսն ու կայսրը սպասում էին այս կործանմանը՝ Փառանձեմ թագուհու մահվանը, որից հետո միայն, մխիթարելով ու խղճալով խեղճ պատանուն, կտանեին նրան Հայաստան ու ողորմածորեն կբազմեցնեին հոր գահին: Պապը հավիտյանս հավիտենից շնորհակալ կլիներ մեծն Ներսեսին ու նրա տերերին, և նրանց ստրուկը կդառնար ընդմիշտ:

Ինչպե՞ս կարելի է բացատրել սպարապետ Վասակի որդի Մուշեղի գործողությունները, որ իջնելով Տայքի անմատչելի լեռներից, սեպուհական վաշտերի գլուխն անցած՝ փոխանակ շարժվելու դեպի Դարույնք և Արտագերս, շտապեց Բյուզանդիա՝ իբրև թե կայսերն ու Ներսեսին խնդրելու, որ Պապին ուղարկեն Հայաստան[207]: Հայոց գահի համար կյանքը զոհած հերոս սպարապետի որդին, որի քաջության ու ասպետական անձնվիրության մասին դարեր շարունակ առասպելներ են հյուսվել հայոց մեջ, որի անունը արիության ու հերոսության խորհրդանիշ է եղել մեզանում, մի՞թե չէր գիտակցում, որ պարզապես պարտավոր է առաջին հերթին թագուհուն օգնելու, որ իր վաշտերը՝ աննպատակ թափառելու փոխարեն, Արտագերսը պաշարողներին պետք է հարվածեին թիկունքից: Մուշեղը տաղանդաշատ զորավար էր, և նրանից գերազանց ոչ ոք չէր տիրապետում ռազմական արվեստին: Պարզապես նրան հրամայված էր սպասել: Հրամայված էր հ այոց զինվորության գլուխն անցած, փոխանակ կռվելու և փրկելու արքայի մորը՝ կայսեր դռան առջև վիզը ծռած սպա սել հռոմեական լեգեոններին: Եվ հրամայված էր Ներսեսի կողմից: Անցել էին Վասակի ժամանակները: Տայեցի քաջերն այլևս

[207] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ա.:

եկեղեցու ծառաներն էին: Պապը լավ էր հասկանում սա և անզորությունից ատամները սեղմած՝ սպասում էր:

Թագուհին չգիտեր ոչինչ, հավատում էր որդու ավետաբերներին և հուսավառված կռվում: Կռվում էին նրա հետ միասին հայոց քաջերն ու Արտագերսի պատերի տակ թաղում բերդը կործանված տեսնելու թշնամիների երազանքները: Հայոց թագուհին անպարտ էր. Պապի հնարավոր վերադարձի լուրը տարածվել էր ողջ երկրում, և շատ նահանգներում արդեն խմորումներ էին սկսվում պարսկական ուժերի դեմ: Հարկավոր էր ևս մի փոքր էլ դիմանալ, և պարսկական բանակը ետ կքաշվեր Արտագերսից: Թագուհու պաշտպանները դիմանում էին և ամեն օր հարյուրավոր դիակներ փոռում ամրոցի պարիսպների տակ:

Բայց, «որովհետև աստծու բարկությունը Արշակի վրա էր», տեղի ունեցավ երկար սպասված հրաշքը. պաշարման 14-րդ ամսում պարսկական հերթական գրոհը հաջողությամբ ետ մղելուց հետո, Արտագերսի պաշտպանները նշում էին հաղթանակն ու խրախճանում: Թագուհին հրամայել էր սեղաններ պատրաստել զինվորներին հյուրասիրելու համար: Բայց կատարվեց անսպասելին. թագուհու աչքի առաջ իրար ետևից հենց սեղանների վրա սկսեցին մեռնել իր զինվորները: Թունավորում էր ժանտախտի նշաններով[208]: Ծանո՞թ է պատմությունը, ոչինչ չի՞ հիշեցնում Արշակավանի ժանտախտը թունավորման նշաններով, որ «սուրբ մարդու» անեծքից երեք օր չանցած՝ որպես աստվածային պատուհաս, իջավ հեթանոս քաղաքի գլխին: Այն ժամանակ համաճարակը խլեց մոտ 20 հազար մարդու կյանք: Զուգադիպությու՞ն է սա, թե՞ ոչ: Պատահականությու՞ն. պատմության մեջ պատահականություններ չեն լինում: Արտագերսը չնայած պաշարմանը, մատչելի էր Բյուզանդիայից եկող սուրհանդակների համար: Իսկ այցերը դառնում էին ավելի ու ավելի հաճախ-

[208] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԾԵ.:

ակի: Լուրեր էին ուղարկում Պապը, Ներսեսը: Լուրեր էին գալիս Հայքի նահանգներից: Պատվիրատուն ամրոցից դուրս էր գտնվում, իսկ թունավորողն արքունիքից էր՝ թագուհու մերձավոր շրջապատից:

Մեկ ամսվա ընթացքում համաճարակը խլեց 11.000 զինվորի և 6.000 կնոջ կյանք[209]: Ամրոցն այլևս անպաշտպան էր: Հյուծված ու հիվանդ թագուհին՝ համաճարակից դեռ ողջ մնացած արքունի հատուկենտ ծառայողների և նաժիշտների հետ, մնաց միայնակ: Այս ամենին հաջորդեց Մարդպետաց տոհմի նահապետի այցելությունը թագուհուն: Արշակի գերությունից հետո սա այն նախարարներից էր, որ մտել էր պարսից ծառայության տակ: Իր արքային լքած նախարարներից էր սա: Շապուհը սրան էր հանձնել Մարդպետաց տոհմի ավագությունը: Նրան ուղարկել էին պարսիկները՝ թագուհու վրա ճնշում գործադրելու նպատակով: Նա թագուհուն և ողջ մնացած արքունականներին առաջարկեց հանձնվել՝ չարախնդությամբ ու անթաքույց լկտիությամբ, անպատվորեն խոսելով թագուհու և Արշակունյաց տոհմի հասցեին: Եվ հեռացավ՝ պարսիկներին տանելով ամրոցի ամայեցման լուրը: Հուսահատ ու հիվանդ թագուհուն այլևս ոչինչ չէր կարող փրկել, և թագուհին բացեց ամրոցի դարբասները: Մի քանի օր շարունակ պարսից զորքը ամրոցից կրում և դուրս էր հանում հայոց արքունի գանձերը: Թագուհուն և ողջ մնացած գերիներին սպասում էր Շապուհը՝ երջանիկ, որ վերջապես կարողանալու է հանել տասնամյակների վրեժը՝ Արշակից ու Անդովկից: Բայց թագուհին հիվանդ էր, և Տիզբոն չէր հասնի: Մայրաքաղաքի ճանապարհին՝ Ասորեստանում, դաժանաբար սպանեցին հայոց թագուհուն: Նկարագրելով թագուհուն տանջամահ անելու հորինված ու այլանդակ մի պատմություն՝ Բուզ-

---

[209] Հնարավոր է, որ Արտագերսի պաշտպանների և համաճարակից մահացածների թիվը՝ հաշվի առնելով Բուզանդի հակումը դեպի ամեն տեսակի չափազանցություն, ուռճացված լինեն:

անդը հորթային հրճվանքով ավարտում է. *«Այսպես սատկեց Տիկին Փառանձեմը»*[210]:

Խորենացուն լսենք, թեպետ չեմ բացառում հետագա գրաքննության միջամտությունը նրա մատյանում.

«Նրանց գերի վերցրին՝ Տիկին Փառանձեմի և գանձերի հետ միասին, տարան Ասորեստան և այնտեղ սայլի ցցի վրա վարսելով՝ սատկեցրեցին»[211]:

Փառանձեմը, որ ամուսնու կորստից հետո ստանձնեց երկրի պաշտպանության գործը, որ Հայոց Պետականության համար փրկեց ու անվնաս պահեց Պապ արքայորդուն՝ Արտաշերսի առաջին պաշարումից հետո մի քանի ամիս շարունակ ազատ էր և կարող էր ցանկացած պահի լքել երկիրը: Ամրոցի պաշարման օրերին անգամ կարող էր գաղտնի ելքերով դուրս գալ ամրոցից: Բայց չարեց, չցանկացավ լքել նվիրյալներին, մնաց, կռվեց ու պարտվեց, որովհետև նզովք կար Արշակի վրա: Ցանկացած այլ ժողովուրդ կսրբացներ և սերնդե սերունդ կպաշտեր նման թագուհուն: Բայց կղերական միտքն ու քարոզչությունը մուր ու ցեխ թափեցին նրա անվան վրա:

Հորինվածք ու ատելությունից կուրացած կրոնախև մոլագարի սրտահովանք է Բյուզանդի այլանդակ պատմությունը հայոց թագուհու մահվան մասին: Թագուհուն սպանեցին դաժանաբար, այդ մասին նշում է նաև Խորենացին[212]: Գրիգորի տան պատմիչը պատվիրատուների հոգևոր կերպարն է լոկ պատկերել՝ հայոց թագուհու ողբերգական մահն անասնաբար ներկայացնելով: Այլ կերպ անհնար է հասկանալ հերոս թագուհու մահը ցնծացող հայ մարդուն:

---

[210] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն:

[211] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԼԵ.:

[212] Խորենացու և Ամմիանոսի մոտ թագուհու մահվան մասին Բուզանդի այլանդակ երևակայությանը համապատասխան ակնարկ անգամ չկան:

ԻԹ

... Զի ցայժմ ես քեզ արիւծ էի, և արդ՝ աղուէս[213]*...*

Ոչինչ այնքան տպավորիչ չի բնութագրում հայ զինվորության ողբալի վիճակը, որքան Շապուհին ուղղված սպարապետ Վասակի այս խոսքերը: Արշակի բանտարկությունից հետո հերթը Վասակինն էր: Եվ ահա պարսից արքայի առջև են կանգնեցնում հայոց երբեմնի ահեղ սպարապետին:

-«Աղվես, դու՞ էիր այն խանգարողը, որ այսքան չարչարանք պատճառեցիր մեզ. դու՞ էիր արիներին այսքան տարիներ կոտորողը: Եվ ի՞նչ ես անելու. աղվեսի մահով եմ քեզ սպանելու»:

Որքան հպարտ, նույնքան էլ ողբերգական է Վասակի պատասխանը. իր ռազմական հզորությունը, Հայոց փառապանծ Գունդը կորցրած զորավարի ափսոսանքի ու վշտի խորհուրդն է ամփոփված այդ պատասխանում.

-«... Քանի դեռ Վասակն էի՝ ես հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուսը՝ մեկ այլ լեռան. ցանկանայի աջ ոտքիս հենվել՝ աջակողմյան լեռը գետնին կճզմեի, ցանկանայի ձախ ոտքիս հենվել՝ ձախակողմյան լեռը գետնին կճզմեի»:

-«Լավ, թույլ տուր ինձ գիտենալ, ովքե՞ր էին ճզմածդ լեռները»,- հարցնում է Շապուհը:

- «Մեկը դու էիր, մյուսը՝ հունաց թագավորը...»:

Երբեմնի սարսափազդու հայոց բանակի հռչակավոր սպարապետը, որ տարիներ շարունակ իր արքայի և պետության հանդեպ հարգանք ու ահ էր սփռում տարածաշրջանում, այժմ արքային կորցնելուց հետո անօգ ու անպաշտպան կանգնած էր Շապուհի առջև՝ սպասելով նրա վճռին: Շապուհը տեղյակ էր արքային ու սպարապետին իրար կապող թելերի

---

[213] Վասակի և Արշակի վախճանը նկարագրող պատմությունները քաղված են Բուզանդից (տես՝ Հայոց Պատմություն. ԾԴ, Է):

մասին: Դեռ պատանեկությունից Արշակի դայակությունը ստանձնած Վասակը երբեք չէր լքել իր տիրոջը, երբեք չէր ներել նրան ուղղված ամենաչնչին վիրավորանքն անգամ: Արշակի ողջ կյանքն էր անցել Վասակի աչքերի դիմաց: Շապուհը, առավել քան որևէ մեկը, գիտեր այդ մասին:

Հայոց սպարապետը մորթազերծ արվեց. խոտով լցրեցին Վասակի մարմինը և տարան Անդմըշն բերդ՝ դնելով շղթա-յակապ Արշակի դիմաց: Առավել մեծ պատիժ հայոց արքան չէր կարող ստանալ: Օրեր, ամիսներ, տարիներ շարունակ նրա աչքերի առջև էր մնալու Վասակը՝ հայոց սպարապետը, հայոց զորության մարմնավորողն ու ռազմի հոգին: Այժմ նա, իր ստեղծած ու փայփայած Հայոց Գնդի նման, անշունչ ու անկենդան անշարժացել էր իր արքայի՝ հայոց կործանված փառքի ստվերի առջև:

Արշակ արքային հավիտյանս ընկերակցեց հայոց գլխատված զինվորականության մորթազերծ ուրվականը...

Լ

Դստեր մահից հետո երկար չապրեց իշխան Անդովկը: Հայրենի երկրից հեռու, բյուզանդական տիրույթներում բնակ-վող իշխանն ուներ այն ամենն, ինչ կերազեր կայսրերի երկրում ապաստանած ցանկացած հայ նախարար՝ պատիվ, ազդեց-ություն, կալվածքներ. կայսրը նրան արժանացրեց «պատրի-կաց պատրիկ» ամենաբարձր տիտղոսին: Բայց Անդովկին հարկավոր չէին այդ ամենը: Մահից առաջ, իշխանը որդուն պատվիրեց թողնել Բյուզանդիայում ամեն ինչ, գնալ Հայոց աշխարհ և տիրանալով Սյունիքի հարազատ իշխանությանը՝ հաստատվել այնտեղ[214]: Մեռավ Անդովկը՝ այր, ով Հայոց Պետականության հզորության համար արեց ամեն ինչ, ով

[214] Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից, Գիրք Բ., Ա.: Տես նաև՝ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, Թ.:

ողջ կյանքը դրեց հարազատ տոհմը Հայոց Գահին առավել-ագույնս ծառայեցնելու համար: Դարձավ լեգենդ ու առասպել իր նախնու՝ Հայկյան արի Սիսակի նման:

Գալիքի մտավորականները դեռ կգրեն Հայոց պատվի ու արիության վարքականոնները: Եվ այնտեղից լույսի նման ճառագելու է Սիսական հպարտ Անդովկի կերպարը. անսանձ արիություն, ծագման ու տեսակի գիտակցությունից բխող հպարտ արժանապատվություն և հայրենապաշտություն: Այս որակներն են, որ Հայկից ժառանգություն ստացած հեթանոս իշխանը անաղարտ կերպով փոխանցեց հետնորդներին՝ Փառանձեմին, Պապին, Բաբիկին, Վասակին[215]...

ԼԱ

Վայ ինձ Արշակայ. այս ես և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս[216]:

Դրաստամատին ծանոթ ենք Տիրան արքայի տարիներից: Անգեղտան իշխանն էր՝ Բնաբեղի և Անգեղ բերդի արքունի գանձերը հսկող Մարդպետունին: Տիրանի տարիներից մինչև Արշակ արքայի վերջին օրերը, Դրաստամատ մարդպետը հավատարմությամբ ծառայեց հայոց արքունիքին՝ հոգատար խնամքով պահպանելով ու հարստացնելով արքունի գանձ-արանն ու կալվածքներն իրեն վստահված գավառներում: Զիկ և Կարեն զորապետների արշավի ժամանակ Դրաստամատը չլքեց Հայաստանը: Անգեղտան նախարարը, որ հայտնել էր հպատակությունը Շապուհին, մենակ թողեց Դրաստամատին: Արքունի բերդերն ու այնտեղ ամբարված հարստության պահպանումը՝ միայնակ մնացած մարդպետի ուժերից վեր էր: Մեկը մյուսի ետևից հայոց բերդերը գրավող պարսիկներին, ի վերջո, հաջողվեց գերել նաև Դրաստամատին. Մարդպետին

---

[215] Վասակ Սյունին Անդովկի թոռն էր՝ Բաբիկի որդին և Պապի զարմիկը:
[216] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Է.:

տարան Պարսկաստան, ուր նա ազատ էր գերի քշված մյուս ազնվականների պես, բայց պարտավոր էր մասնակցել պարսից արքայի բոլոր պատերազմներին:

Պապի գահակալության սկզբում շարունակվող հայ-պարսկական պատերազմներն ընդհատվեցին քուշանների՝ Շապուհի դեմ ապստամբության պատճառով: Ապստամբների դեմ ուղարկված բանակում էին նաև շատ հայ նախարարներ՝ իրենց զորքերով: Այստեղ էր նաև Դրաստամատը: Ճակատամարտերից մեկում պարսիկները չարաչար պարտություն կրեցին և լիակատար ոչնչացումից փրկվեցին միայն Դրաստամատի արիության և հնարամտության շնորհիվ:

Շապուհը Մարդպետաց իշխանին կանչում է պալատ և խոստանում մեծ պարգև՝ այն ամենն, ինչ դուրս կգա նրա շուրթերից: Եվ Դրաստամատը, ումից խլվել էր հայրենի իշխանությունը Հայքում, ով զրկվել էր կալվածքներից ու պաշտոնից, ով Հայաստան ոտք դնելու իրավունքն անգամ չուներ... Նա, ի զարմանս բոլոր ներկաների, Շապուհից խնդրեց մեկ օրով տեսակցություն՝ Անհուշ բերդում պահվող իր արքայի հետ: Զարմացած էին ներկաները. նման հանդգնություն չէին սպասում նրանից: Ապշած էր ինքը՝ Շապուհը. պարսից դարավոր կարգի համաձայն, Անհուշ բերդում պահվող կալանավորի անունը ոչ ոք չպետք է հիշեր: Դաժան մահ էր սպասվում նրան, ով արքային կհիշեցներ նրա մասին: Անհուշ բերդը մոռացության բերդն էր, և Դրաստամատն արժանի էր ամենախիստ պատժի: Շապուհը չէր սպասում նման տիրասիրություն: Արդեն որերորդ անգամ Արշակը մեկեն բարձրանում էր նրա աչքին. Վասակը սպանեց պարսից ախոռապետին՝ իր արքայի պատիվը պաշտպանելու համար, Անդովկը խելացնոր արկածախնդրության գնաց՝ իր արքայի վրեժը լուծելու համար, Հայոց Գունդը կռվում է՝ Արշակի անունը շուրթերին, իսկ հիմա՝ Դրաստամատը... Ոչ մի արքա երբեք չի ունեցել նման պաշտամունք: Եվ Շապուհը

դեմ գնալով հայրենի կարգին, Դրաստամատին տեսակցություն թույլատրեց Արշակի հետ[217]:

Նստած է Արշակը փոքրիկ խցում՝ շղթաներից ազատված, սեղանի առջև: Իր դիմաց Վասակն է՝ հայոց մորթազերծ սպարապետը, որ ակնապիշ հետևում է խցում տիրող տարօրինակ աղմուկին: Գինի է ըմպում Արշակը և լսում: Լսում է Դրաստամատին: Խոսում է Դրաստամատը, լալիս և ծիծաղում: Պատմում է այսքան տարիներ հայոց գլխին անցածն ու եկածը: Լսում են նրան Արշակն ու Վասակը: Դրաստամատը պատմում է հերոս արտագերսցիների մասին, թե ինչպես փրկեցին իրենց Պապ արքայորդուն. ժպտում են հայոց արքան ու սպարապետը: Դրաստամատը պատմում է, թե ինչպես միայնակ մնաց Տիկին Փառանձեմը, թե ինչպես լքվեց բոլորի կողմից: Հայոց թագուհու մահն է պատմում Դրաստամատը, զինվորության քայքայումն ու երկրի գլխին իջած արհավիրքները. մռայլվում են արքան ու սպարապետը: Ապա պատմում է Անդովկի վրեժը, Պապի գալուստն ու Շապուհի պարտությունները: Դրաստամատը խոսում է հայոց հողերի միավորման մասին, Վասակի ստեղծած Գնդի նոր ծննդի մասին: Պատմում է, թե ինչպես է Պապը պատժում Արշակին լքած իշխաններին: Պատմում է, թե ինչպես, կրկին ծաղկում է Հայաստան երկիրը. ուրախ են ու գոհ արքան ու սպարապետը: Դրաստամատը խոսում է, անվերջ խոսում...

Գոհ էր Արշակը, հպարտ, որ որդին իր գործն է շարունակում: Ուրախ էր, որ իզուր չանցավ իր կյանքը: Հիմա կարող էր հանգիստ հեռանալ. ապրում է իր գործը, ոտքի են կանգնում իր Հայքն ու իր Ազգը: Լսում էր Արշակը Դրաստամատին ու մռայլվում. հիմա որդին իր կարիքն է զգում՝ իր խորհուրդների, փորձի և վճռականության: Լիներ ազատ, ապրեր Ոստանում՝ իր Տիրան հոր տանը և օգներ որդուն...

---

[217] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Է.:

«-Վայ ինձ Արշակիս, որտեղից ու՞ր ընկա, և ի՞նչ օրի հասա»,- հուսահատ կանչով վերցրեց դանակը սեղանից, նայեց մի վերջին անգամ Դրաստամատին և սպարապետին, կարդաց նրանց աչքերի լուռ համաձայնությունը և վերջ տվեց թշվառ կյանքին: Իր արքային միացավ նաև Դրաստամատը՝ հայոց վերջին Մարդպետը, որ պատվով ու ազնվությամբ ծառայել է իր արքային:

ԼԲ

Ցավալի, ամոթալի մի իրողություն կա, որ չենք նկատել. մեզ հայտնի չեն մեր արքաների շիրիմները, մենք երբեք չենք խնկում նրանց հիշատակը: Պատահականությու՞ն է սա, թե՞ դիտավորություն: Անթիվ-անհամար կրոնավորների շիրիմներով են զարդարված մեր սրբարաններն ու ավերակները, և ոչ մի արքա, ոչ մի պետական գործիչ: Սա չէ՞ պատճառը, որ արքայասիրությունն ու ազնվական վարք ու բարքը աստիճանաբար լքեցին Հայոց աշխարհը: Արշակների շիրիմներին այցելելիս, չէ՞ որ ապրելու էինք այն վեհ հպարտությունը, որ Տե՛ր ենք եղել, Տիրակա՛ն ու Հզո՛ր:

Մեռավ Արշակը՝ լքված ու նզովված ամենքից: Նրա հետ մեռավ զորավոր այն ուժը, որ հազարամյակներ շարունակ Հայկական Լեռնաշխարհի սահմաններից դուրս էր ժայթքում աշխարհասասան բանակներ: Այլևս երբեք Հայաստանը չի պայքարելու իր գերիշխանությունը տարածաշրջանում հաստատելու համար, այլևս երբեք հայոց այրուձին դուրս չի նետվելու արշավանքների՝ իր արքայի գահն ամրացնելու համար: Հայաստանը վերածվեց ինքնապաշտպանվող ու օտար նվաճողների դեմ հազիվհազ մաքառող մի երկրի: Նվաճող ու հնազանդեցնող զորությունը, որ ժառանգված էր նաև Արշակին՝ նզովվեց ու խարանվեց եկեղեցու կողմից:

Մի վերջին անգամ հոր գործը փորձեց ավարտին հասցնել արժանավոր ժառանգ Պապը: Նրան տրված չէր, սակայն,

խաղաղ ու հանգիստ գահակալություն: Երիտասարդ արքան շատ դժվարություններ պետք է հաղթահարեր: Իսկ առայժմ, Հայոց աշխարհում կրկին տեր ու տնօրինություն էր անում Ներսեսը՝ հույսով, որ պատանի Պապը, հակառակ ժառանգության, լինելու է մի ձեռնասուն արքայիկ:

Իսկ Պապի ստացած ժառանգությունը Տիրակալի ոգին էր:

Այն ոգին, որ նզովված էր եկեղեցու կողմից...

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ
ԴԻՎԱՀԱՐՆԵՐ.
ՎԵՐՋԻՆ ՏԻՐԱԿԱԼԸ

Շապուհ Երկարակյացի փռած ավերակներն էր ժառանգություն ստանում այս թագավորն իր հայր Արշակից և հանդես էր բերում կամքի ուժ, վճռականություն և պետական ուժեղ շինարարություն[218]*...*

Մեծ Հայքի և ոչ մի արքա իր գահակալության սկզբում հարկադրված չի եղել անցնելու անհաղթահարելի թվացող այնպիսի դժվարին ճանապարհ, ինչպես արեց Պապը: Ոչ մի հայ արքայի բաժին չընկավ՝ ոչնչից վերահառնել հայոց պետականությունը, կարճ ժամանակահատվածում միավորել իր շուրջն այն ամենն ու բոլորին, որ կարող էր նպաստել հզոր երկրի կայացմանը: Եվ կարճատև կյանքի յուրաքանչյուր օր՝ պայքարել ոչնչից վերածնված այդ պետականության գոյության համար: Դա էր վիճակված Պապին՝ Արշակի և Փառանձեմի ժառանգին, ով տարիքին համեմատ՝ բավականին վաղ ուսերին վերցրեց Հայրենիքի ու Ազգի ճակատագրի հանդեպ ծանր և սրբազան պատասխանատվությունը:

Ուր էր, թե շրջապատն ու միջավայրը թույլ տային պատանի արքային ավարտին հասցնելու սկսած գործը. գուցե բոլորովին այլ լիներ հայոց պետականության ճակատագիրը:

Ա

370 թվական. Հայոց աշխարհում ձմեռ էր: Շապուհը, նվաճելով Հայաստանը, ետ էր քաշվել Պարսկաստան՝ գրավված բերդաքաղաքներում թողնելով պարսկական կայազորներ: Մեծ Հայքի թագավորությունից անջատված հայ նախարարներն ու կուսակալները, մտնելով Շապուհի ծառայության

[218] Լեո, Հայ կղերական դիվանագիտություն, էջ 34:

տակ, իրենց իշխանությունները վեր էին ածել մանր արքայությունների՝ ուր տեր ու տնօրինություն էին անում պարսկական վերակացուներն ու ... եկեղեցին: Այո, Հայաստանյայց առաքելական եկեղեցին ամենաքիչը տուժվեց պարսկական այս արշավանքից: Չնայած տասնյակ և հարյուրավոր կրոնական երևելի գործիչների աքսորին, եկեղեցական թեմերն առաջվա պես կանգուն ու բարգավաճ էին: Եկեղեցին միշտ էլ կարողանում էր կրած մարդկային կորուստներն առավելագույնս օգտագործել՝ սեփական դիրքերն ու հեղինակությունն էլ ավելի ամրապնդելու համար: Պատմիչների թողած այն տեղեկությունները, որ հայոց քաղաքներում տեղադրված էին ատրուշաններ, իհարկե, համապատասխանում են իրականությանը: Բայց այդ քաղաքներում տեղակայված էին պարսիկ զինվորներ: Միջնաշխարհում նստող Զիկ և Կարեն զորավարներն երկիրը վերահսկում էին իրենց շուրջ համախմբված պարսիկ ազնվականների օգնությամբ, և հասկանալի էր ատրուշանների ու զրադաշտական մոգերի առկայությունը Հայաստանում: Թեպետ, ինչպես Արշակ արքայի ձերբակալությունից հետո Հայաստան ներխուժած պարսիկ զորահրամանատարներին, այնպես էլ՝ Արտագերսի երկրորդ պաշարման ժամանակ Հայոց երկիրն ավերող իր իշխաններին Շապուհը հրամայել էր ձերբակալել ու տանջել հայ նախարարների ընտանիքներն ու կանանց, սակայն, մեր մատենագիրների կողմից՝ հավատափոխության հարկադրանքը, որպես դրա բուն պատճառ ներկայացնելը, մտացածին է: Իշխանական կանանց գերելով՝ Շապուհը փորձում էր իր մոտ բերել տալ այն նախարարներին, ովքեր, թողնելով իրենց ընտանիքները՝ փախել էին բյուզանդական տիրույթներ: Ասվածի պարզ վկայությունն է այն, որ հետագայում, ճակատամարտերից մեկի ժամանակ, հայ հասարակ մի զինվոր, չանսալով Համազասպ Մամիկոնյանի հրամանին, անպատիժ կերպով սպանում է վիրավոր Գարեգին Ռշտու-

նուն՝ սոսկ նրա համար, որ սա թողել էր իր կին Համազասպուհուն և փախել[219]: Եկեղեցին, իհարկե, փորձել է Համազասպուհու և մյուս հայ իշխանուհիների գերությունն ու մահը կապել Մեհրուժանի անվան հետ՝ մոռանալով, որ Արծրունյաց իշխանն իրավասու չէր սպանելու Շապուհի հրամանով գերեվարվածներին[220]:

Մեհրուժանի անվան շահարկումը միայն նպատակ է ունեցել հիմնավորելու գերիների՝ հանուն հավատքի նահատակվելու թեզը: Այն կարելի է նախադեպ համարել 450-ական թվականների ապստամբության կրոնականացման, որ օդի պես անհրաժեշտ էր եկեղեցուն՝ քրիստոնեական հավատքին մի նոր փայլ ու սրբության զգացում ավելացնելու համար: Սա է պատճառը, որ պարսկական ներխուժումների մասին խոսելիս, մեր պատմիչները երբեք չեն մոռացել ողբաձայն աղաղակելու՝ իբր համատարած հավատափոխության պարտադրանքների մասին: Օրմանյանը նույնիսկ ափսոսում է, որ եկեղեցին տիկին Համազասպուհուն չի դասել սրբերի շարքը[221]: Իսկ առավել բարոյական չէ՞ր լինի, արդյոք, հրապարակավ քերել պարսավանքի ու նզովքի այն մուրը, որ դարեր շարունակ եկեղեցին քսել է իր հավատքի հետ որևէ կապ չունեցող հայ արքաների, թագուհիների ու իշխանների երեսին:

Համազասպուհին և իր բախտակից ազնվազարմ մյուս տիկնայք սպանվեցին, որովհետև լքվել էին «ազնվական» կոչվող իրենց ամուսինների կողմից և հանձնված էին թշնամու ողորմածությանը: Շապուհը, կրկնում եմ, չէր պատրաստվում նվաճված երկրից իսպառ վերացնել այն ուժը, որն իրեն ձեռք մեկնեց ամենադժվարին պահին, և որը, ինչպես բազմիցս արդեն համոզվել էր փորձառու արքան, այսուհետ էլ կանգ

---

[219] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԷ.:

[220] Լալայան Վ., Մեհրուժան Արծրունի, Դարձ, 2001, թ. 22; նաև տես՝ Ազգային-Պետական Գործիչներ, Ե., 2007:

[221] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 105:

չէր առնի ոչ մի բանի առջև՝ սեփական կրոնապետությունը Հայոց աշխարհում ամրապնդելու համար: Եկեղեցին ծաղկում էր և պարսիկ վերակացուներին զուգահեռ շարունակում հավաքել իր բաժին հարկը՝ հայոց գավառներից:

Հուսալքված էր Հայոց աշխարհը: Արտագերսի անկումից ու Սյունյաց աշխարհի ամայացումից հետո, մի քանի՝ թվով աննշան բերդեր էին շարունակում դիմադրել պարսից ասպատակություններին: Դրանցից էր Կոգովիտի Դարոյնք բերդը, ուր ժամանակին Տիկին Փառանձեմը հասցրեց թաքցնել արքունի գանձարանի մի մասը: Իրենց լեռներում ծվարած իշխաններն, հիմնականում, սպասում էին ինչ որ մի հրաշքի: Ասպետ Բագարատի որդին միայն՝ Սմբատը, իր շուրջը համախմբելով արիության ու ազնվական վարք ու բարքի մասին մոռացած հայ իշխանների որդիներին, գավառից գավառ անցնելով, ջանում էր կրկին երկրում բորբոքել դիմադրության կրակը: Մուշեղ Մամիկոնյանը՝ Վասակի որդին, ինչպես արդեն նշել եմ, դեռևս Արտագերսի պաշարման օրերին, իր հավաքած ջոկատներով, Ներսեսի ու կայսերական արքունիքի հրամանին էր սպասում՝ ռազմական գործողություններ սկսելու համար: Եվ հրամանն իջավ: Կատարվել էր այն, ինչին այդպես սպասում էին արևմուտքում: Արտագերսն ընկած էր, թագուհին՝ սպանված, Սյունյաց տոհմը՝ ցրված ու թուլացած: Այժմ կարելի էր անցնել գործի: Վերջապես, Վաղես կայսրը որոշեց արքայազն Պապին ուղարկել Հայաստան:

Բ

Պապի Հայաստան ուղարկվելու ժամանակի ու պայմանների վերաբերյալ խառն ու հակասական կարծիքներ կան պատմագրության մեջ: Ուսումնասիրողների մեծ մասը՝ հիմք ընդունելով Ամմիանոսի թողած տեղեկությունները, կարծում են, թե Վաղեսը Պապին Հայաստան է ուղարկել 369թ. գարնանը՝ դեռևս Արտագերսի պաշտպանության ամիսներին:

Դեպքերի հաջորդականությունն, ըստ Ամմիանոսի, այսպիսին է. Գղակի և Արտավանի՝ հռոմեական արքունիքի հետ բանակցությունների արդյունքում, կայսեր կողմից Պապը Հայաստան է ուղարկվում Տերենտիոս զորավարի հետ միասին՝ միայն մի փոքրիկ ջոկատի օգնությամբ: Տերենտիոսին հրամայված էր Պապին հաստատել հոր գահին, առանց նրան թագադրելու: Այսպիսով, իբրև թե, կայսրը ցանկանում էր չխախտել հռոմեա-պարսկական՝ «ամոթալի պայմանագրով» ստանձնված պարտավորությունները: Այնուհետև, Շապուհի հարձակումից և Արտագերսի անկումից հետո, սարսափահար Վրաստան ապաստանած Պապի, Գղակի ու Արտավանի խնդրանքով, կայսրն արդեն Տերենտիոսին օգնական է ուղարկում Ադդէ կոմսին՝ 12 հռոմեական լեգեոններով, որոնց օգնությամբ էլ իբր Պապն ամրապնդում է իր թագավորությունը[222]:

Նախ, այստեղ այնքան էլ պարզ չէ, թե առանց զորքի՝ միայն մի փոքրիկ ջոկատի օգնությամբ, ինչպե՞ս էր Պապը հաստատվելու գահին: Դա այն դեպքում, երբ պարսից ահռելի բանակի մի մասը շրջապատել էր Արտագերսը, իսկ մյուս մասը՝ մահ ու ավեր էր սփռում Մեծ Հայքի մնացած նահանգներում: Եվ հետո, բավականին շինծու է այն պնդումը, թե իբր Վաղես կայսեր՝ Պապին զորք չտրամադրելը, պայմանավորված էր հռոմեա-պարսկական դաշնագրի առկայությամբ: Իսկ ի՞նչ է, հայոց գահաժառանգին հռոմեացի զորավարի և զինված զորաջոկատի հետ Հայաստան ուղարկելն ու նրան օգնություն ցուցաբերելու հրամանը՝ այդ դաշնագրի խախտում չէ՞ր:

Չգիտես ինչու, պատմաբաններն անտեսում կամ պակաս արժանահավատ են համարվում հայ պատմիչների թողած տեղեկություններն այս մասին: Մասնավորապես, Փավստոսի և Խորենացու մոտ հստակ նշվում է, որ Պապ արքան Հայաստան է ուղարկվել Արտագերսի անկումից հետո միայն: Հակասությունները երկու պատմիչների մոտ հետևյալում են.

---

[222] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 194-228:

ըստ Փավստոսի, Պապը Հայաստան է ժամանում միայն այն բանից հետո, երբ Մուշեղ Մամիկոնյանը, հավաքելով իր ջոկատներն ու հայ ազնվականներին, գնում է կայսեր դուռը՝ օգնություն խնդրելու: Պապը Հայաստան է ուղարկվում Տերենտիոսի և Ադդէ կոմսի հետ միասին՝ հռոմեական ահռելի զորքի ուղեկցությամբ[223]: Խորենացին կայսեր հետ բանակցությունները վերագրում է Ներսեսին, որն իր հետ վերցնելով բոլոր հայ նախարարներին, գնաց և ետ բերեց Պապին Հայաստան: Պապին, ըստ պատմահոր, ուղեկցում էր Տերենտիոսը՝ մեծ զորքով[224]:

Առավել արժանահավատ և տրամաբանական են հայ պատմիչների բերած տեղեկությունները: Գաղտնիք չէ լատին պատմագիրներին հատուկ միտումը՝ ամեն կերպ բարձրացնել հռոմեական կայսրերի արժեքը: Դա արվում էր հիմնականում օտար ազգերի գործիչներին վարկաբեկելու, նրանց արժեքն ու գործը նսեմացնելու հաշվին: Ամմիանոսի մոտ, մասնավորապես, դա բավականին նկատելի է: Նա բացահայտ արհամարհական և գոռոզ թեթևամտությամբ կարող է հայոց արքաների գործունեության շարժառիթները բխեցնել ճղճիմ ագահությունից ու արծաթասիրությունից, բոլորովին անտեսել հայոց զենքի գործոնն՝ այն դեպքում, երբ տարիներ շարունակ, թե հռոմեական, և թե պարսկական արքունիքները ձգտել են շահել Հայքի բարեկամությունը: Չնայած, ընդհանուր առմամբ, Ամմիանոսը դրական է արտահայտվում Պապի հասցեին, սակայն, պարզ նկատելի է նրա ձգտումը՝ ամեն կերպ արդարացնել հայոց օրհասական պահին կայսեր անտարբերությունը, ինչպես նաև՝ ցույց տալ, թե առանց հռոմեական օգնության՝ Պապը երբեք չէր կարողանա վերականգնել Հայքի պետականությունը:

---

[223] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ա.:

[224] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, ԼԶ.:

Ինչ վերաբերվում է կայսեր հետ բանակցություններ վարելուն, ապա դա արվել է Ներսեսի կողմից: Այն, որ Ներսեսն այդ ամբողջ շրջանում գտնվում էր Հայաստանից դուրս և սպասում էր իր ժամին՝ կասկածից վեր է: Մուշեղ Մամիկոնյանն, ինչպես դեռ կտեսնենք, մի պարզ խաղալիք էր նրա ձեռքին: Այս առումով, առավել արժանահավատ են Խորենացու տեղեկությունները, ով չնայած եկեղեցական հետագա խիստ գրաքննությանը, փորձել է հնարավորինս անաչառ ներկայացնել դեպքերն ու դրանց հետևանքները:

Եվ այսպես, Պապը՝ Տերենտիոս և Ադդէ զորավարների, Ներսեսի և Մուշեղի ուղեկցությամբ, մտավ Հայաստան: 18-20 տարեկան արքան իր տրամադրության տակ ուներ հռոմեական ոչ մեծաթիվ մի զորամաս, Մուշեղ Մամիկոնյանի հավաքած մոտ 10 հազարանոց զորաբանակը և Սմբատ Բագրատունու գունդը՝ բաղկացած հիմնականում նախարարական տոհմերի պատանի ժառանգներից: Հայոց աշխարհը երկար էր սպասել Պապի գալուստին:

Գ
ԱՋԱՏԱԳՐՈՒՄ

Պապի մուտքն Հայոց աշխարհ նշանավորվեց մի շարք մարտերով: Երիտասարդ արքան ստիպված էր ամեն քայլափոխի բախվել երկրին տիրացած պարսից զորաջոկատների հետ: Դեպի Այրարատ նրա ճանապարհը դժվար էր և երկար: Հենց Դարանաղի գավառում հայ-հռոմեական զորքերի դեմ է դուրս գալիս պարսից առաջապահ զորախումբը: Ջախջախելով և փախուստի մատնելով թշնամուն՝ Պապի բանակը շարժվում է առաջ: Գրավելով և հպատակեցնելով ճանապարհին ընկած մի շարք բերդեր ու բնակավայրեր՝ արքային ուղեկցող զորքը վերջապես հասավ Միջնաշխարհ: Այստեղ Պապի դեմ դուրս եկավ արդեն Հայքում տեղակայված պարսկական հիմնական զորաբանակը՝ Ձիկի և Կարենի գլխավոր-

ությամբ: Ճակատամարտում սպանվում են Զիկն ու Կարենը, նրանց զորքը փախուստի է դիմում, և մինչև Ատրպատականի Գանձակ քաղաք հայկական գնդերը նրանց հետապնդելով՝ վերականգնում են Մեծ Հայքի հարավ-արևելյան սահմանները: Պապը տիրանում է Դարույնք բերդին, ուր պահված էր պետական գանձարանի մի զգալի մասը: Բերդի պաշտպանները կարողացան մինչև վերջ դիմակայել թշնամուն և իրենց արքային հանձնել իր հասանելիքը: Այս հանգամանքը մեծ նշանակություն ուներ ոչնչից սկսող արքայի համար[225]:

Պապին ուղեկցող հռոմեական վաշտերն իսկույն տեղավորվում են հայոց սահմանային ամրություններում՝ Պապին թողնելով երկիրը պարսիկներից մաքրելու գործը[226]:

Իսկ արքունի բանակը դեռ շատ փոքրաթիվ էր: Գործելով հիմնականում մի քանի խմբերով և տարբեր ուղղություններով՝ հայկական զորաջոկատները, մեկը մյուսի ետևից գրավում էին երկրի կենտրոնական գավառներն ու դուրս քշում այնտեղից պարսկական կայազորներին: Ազատագրական այս գործողություններում մեծ էր Մուշեղ Մամիկոնյանի ներդրումը: Վասակ Մամիկոնյանի որդին՝ ռազմական ու կազմակերպչական ընդունակություններով, մեծ ծառայություններ մատուցեց հայոց արքային: Սակայն, բոլորովին անհիմն է Բուզանդի շրջանառության դրած և պատմաբանների համար մինչև օրս անհերքելի ճշմարտություն համարվող այն տեղեկությունը, թե Մուշեղը հայոց բանակի սպարապետն էր այդ շրջանում: Ամենևին էլ ոչ: Գրիգորի տոհմի պատմիչի խոսքերը հալած յուղի տեղ ընդունելու պատճառներից մեկն էլ, թերևս այն է, որ Մուշեղի հայրը Վասակն էր: Իրականում, Մուշեղ Մամիկոնյանը երբեք չի գլխավորել հայոց բանակը: Դրա պատճառները մի քանիսն էին: Նախ, Պապը չէր վստահում Մուշեղին՝

---

[225] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ա.:

[226] Հռոմեական վաշտերը տեղակայվում են Եռանդում և Բախշիում՝ հայոց արևմտյան սահմանային բնակավայրերում՝ Ծոփքի տարածքում:

սկզբնական շրջանում լոկ այն բանի համար, որ վերջինս կուրորեն հետևելով կայսեր և Ներսեսի հրահանգներին՝ թողեց հայոց թագուհուն և երկիրը մեն-մենակ և երբեք օգնության չշտապեց պաշարվածներին: Այս բանը նրան Պապը չէր կարող ներել: Արքան լավ էր հասկանում, որ Մուշեղը Ներսեսի կամակատարն է և իր կողքին է այնքան ժամանակ, քանի դեռ դա հաճո կթվա Գրիգորի տոհմին: Հասկանում էր, բայց առայժմ ոչինչ չէր կարող անել: Դեռ երերուն էր Պապի գահը, և Ներսեսին ու իր կողմնակիցներին այսքան շուտ չէր կարելի ատամներ ցույց տալ: Հարկավոր էր դեռ իրապես հաստատվել հայրենի գահին: Պապի կողքին էին հավատարիմ Գնել Անձևացին, Սպանդարատ Կամսարականը, ասպետ Սմբատ Բագրատունին, որին էլ կարծում եմ՝ ոչ առանց հիմքի, Խորենացին հիշատակում է, որպես սպարապետ[227]: Այդ շրջանում միանգամայն տրամաբանական է, որ մինչև վերջ Հայոց երկրում մնացած և պայքարը շարունակող ասպետ Սմբատին էլ Պապը պետք է վստահեր իր բանակի հրամանատարությունը: Հատկապես այն դեպքում, երբ իր զորավարական հմտությամբ նա, ինչպես դեռ կտեսնենք, չէր զիջում ոչ ոքի: Հայոց զորքն այս շրջանում բաժանված էր տարբեր մասերի, որոնց գլխավորում էին Մուշեղը, Գնելը, Սպանդարատը, Սմբատը: Ընդհանուր հրամանատարը, սակայն, Սմբատն էր: Ուշագրավ է նաև Փավստոսի տեղեկությունն այն մասին, թե Պապի հրամանով Մուշեղը հիմնականում մնում էր հայոց սահմանային շրջաններում, հսկելով Ատրպատականի գիծը[228]:

---

[227] Խորենացու վկայությունը Սմբատ Բագրատունու սպարապետության գործակալությունը վարելու մասին ընդունել է նաև Թովմա Արծրունին: Չամչյանը նույնպես Պապի օրոք հայոց սպարապետ է համարում Սմբատին (տես՝ Հայոց Պատմություն, Գլուխ Խ., ԽԹ.):

[228] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ա., Բ.:

Դ

Մինչ Պապը զբաղված էր բանակաշինությամբ և պետության հիմքերի վերականգնմամբ, նրան զուգահեռ, ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Ներսեսը: Նա հիմա նորից կաթողիկոս էր՝ «աստծու և կայսեր մարդը» Հայոց աշխարհում, և օգտվելով Պապի երերուն վիճակից, կրկին ձեռնամուխ էր եղել Հայքը վանականացնելու «աստվածահաճո» գործին: Իր տարերքի մեջ էր Ներսեսը: Պապը դեռ պատանի էր, և ինչպես բոլորին էր թվում՝ անսահման նվիրված և երախտապարտ Ներսեսին: Ոչ ոք, իհարկե, չէր հարցրել Պապի կամքը՝ եռանդուն պարթևին կրկին կաթողիկոսական գահին հաստատելուց առաջ: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Սա այն պարտադիր պայմաններից մեկն էր, առանց որի կայսրը երբեք բաց չէր թողնի Պապին: Իսկ հայոց արքայի առջև դրված պայմանները շատ էին: Հռոմին հարկավոր էր անվերապահ հսկողություն Մեծ Հայքի վրա, որն էլ, ինչպես դեռ կտեսնենք, փայլուն կերպով իրականացնում էր Մուշեղը: Հռոմին հարկավոր էր իր սեփական աչքը Հայոց աշխարհում, որը Գրիգորի տոհմն էր՝ Ներսեսի գլխավորությամբ: Պապը պարտավոր էր երկիրը կառավարել այնպես, «որ հորը չնմանվի, որ գործերը համապատասխանեն քրիստոնեական հավատքին»[229]: Եվ Ներսեսը՝ գոհ, որ Պապն այլ ելք առայժմ չունենալով՝ լուռ զբաղված է երկիրը պարսիկներից մաքրելով, ավելի ու ավելի էր առաջանում իր հավակնությունների մեջ:

Տարերային արագությամբ սկսեցին վերականգնվել վերջին տարիներին ավերված վանքերն ու կրոնական այլ հաստատությունները: Մի նոր՝ մինչ այդ չտեսնված ծավալ ստացավ անկելանոցների, ուրկանոցների և բարեգործական այլ հաստատությունների շինարարությունը: Ներսեսն արդեն դուրս էր գալիս զուտ իր տոհմական կալվածքներից և բուռն գործու-

[229] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԼԸ.:

նեություն էր ծավալել հենց Այրարատում: Մնկի պես աճող կուսանոցներ, զինծառայությունից խուսափող երիտասարդ հոգևորականներ, պետության և ազգի հյութերը քամող բարեգործական բազմապիսի հաստատություններ, և այս ամենին զուգահեռ՝ հարկային գիշատիչ մի քաղաքականություն, որ վարում էր Ներսեսի գլխավորած եկեղեցին: Կաթողիկոսն անշեղորեն գնում էր իր ճանապարհով՝ երկիրը վերածել հռոմեական մի դաստակերտի, որի միակ իշխանությունը լինելու էր եկեղեցին, իսկ ազգային իդեալը՝ քրիստոնեությունը:

Ոչ ոք առայժմ չէր կարող կանգնել Ներսեսի ճանապարհին:

Ե

Հերմակաձին թող գինի խմի...

Պարսից արքունիքը, բնականաբար, չէր կարող հրաժարվել Հայաստանը ձեռքից բաց թողնելու մտքից: Պապը սպասում էր Շապուհի արշավանքներին և տենդորեն պատրաստվում բախման: 371թ. տեղի է ունենում առաջին մեծ բախումը հայերի և պարսիկների միջև: Շապուհը հսկայական բանակով մտնում է Ատրպատական՝ ամրանալով Թավրիզում: Փավստոսի վկայությամբ, պարսկական մի առանձին գունդ՝ Մեհրուժան Արծրունու գլխավորությամբ, առանձնանում է նրանից[230]: Այս ուշագրավ տեղեկությունը երբեք ուշադրության չի արժանացվել ուսումնասիրողների կողմից: Մեհրուժանն առաջին անգամ չէ, որ պարսից արշավանքների ժամանակ ստանձնում էր առաջապահ-հետախույզի կամ բանագնացի պարտավորությունը: Ըստ երևույթին, այս անգամ էլ տեղի է ունեցել նույնատիպ մի բան: Մեհրուժանին վստահված գունդն, իրականում, նրա սեփական զորաջոկատն էր, որի առկայությունը փաստվում է նաև Արծրունյաց իշխանի մասին հետագա տեղեկություններով: Ինչպես արդեն գիտենք, Ատրպատականի սահմանը հսկվում

[230] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Բ.:

էր Մուշեղ Մամիկոնյանի կողմից: Մուշեղի տրամադրության տակ Պապը դրել էր 40.000-ոց լավ կազմակերպված մի բանակ: Դա հայոց հարավ-արևելյան ուղղությամբ գործող մարտական ուժն էր, որն այդ շրջանում վստահված էր Մուշեղ Մամիկոնյանին: Եվ ահա, Մեհրուժան Արծրունին, գնդով անցնելով սահմանը՝ մտնում է Հայաստան: Ենթադրել, թե այդ անցումը կարող էր աննկատ մնալ Մուշեղի կողմից՝ պարզապես անհավանական է: Ի՞նչն է այդ դեպքում պատճառը, որ Արծրունյաց իշխանն, առանց տատանվելու, դիմում է նման քայլի: Ավելին, Հայոց հողում նրա գնդի հետ կապված որևէ խնդիր կամ միջադեպ չի առաջանում: Եվ որ պակաս կարևոր չէ, այդ անցումից հետո կայացած հայ-պարսկական ընդհարմանը Մեհրուժանի անձը չի հիշատակվում: Նրա գնդի՝ Հայաստան ոտք դնելուն պես, նույն օրն իսկ, Մուշեղ Մամիկոնյանն, ընտրելով իր զորաբանակից միայն հեծելազորը, ներխուժում է Ատրպատական՝ սակայն, բոլորովին այլ՝ գաղտնի ճանապարհով: Սրա մասին է վկայում այն փաստը, որ հարձակվելով Թավրիզի մատույցներում ամրացած պարսից բանակի վրա՝ նա հանկարծակիի է բերում Շապուհին: Մինչև Թավրիզ ընկած ճանապարհն հայոց հեծելազորն անցել էր աննկատ: Սա կարող էր տեղի ունենալ միայն Հայոց երկիր անվախորեն մտած և անվնաս դուրս եկած Մեհրուժանի շնորհիվ: Պապը դեռևս Արտագերսի պաշարումից էր տեղյակ Արծրունյաց իշխանի դերին և միայն լսելով չէ, որ գիտեր, թե ինչ փայլուն հնարամտությամբ և համարձակությամբ է նա կատարում պարտավորությունները: Մեհրուժանից ստացված տեղեկությունների արժանահավատությանը նա չէր կարող կասկածել: Եվ ահա, Մեհրուժանի՝ հայոց սահմանը հատելուն պես, արդեն համապատասխան հրահանգներ ստացած Մուշեղը նրա հետ միասին կազմում է Թավրիզ արշավելու հանդուգն ծրագիրը:

Հետախուզության պատրվակով առանձնացած գնդից թարմ լուրերի սպասումով՝ մրափում էր Շապուհի բանակը, երբ ասես որոտն՝ անամպ երկնքից, Թավրիզի վրա պայթեց հայոց հեծելազորի բարձրացրած զարհուրելի աղմուկ-աղաղակը: Մուշեղի այրուձին սկսել էր հունձքը: Սարսափից խելացնոր պարսից զինվորներն այդպես էլ չհասկացան, թե ինչ է կատարվում: Զառամյալ Շապուհը միայն մեկ բան է հասցնում՝ կազմակերպել շուտափույթ փախուստ: Թավրիզում թողնելով բանակի մեծագույն մասը, փոքրաթիվ վաշտերի հետ բռնում է Տիզբոնի ճանապարհը: Այս ճանապարհին միայն նրան է միանում Մեհրուժանը՝ իբրև թե մազապուրծ փախած Մուշեղի հայաստանյան զորքերից: Մուշեղին հաջողվել էր ձեռքը գցել պարսից ազնվականության՝ Շապուհի հետ Թավրիզ եկած 600 ներկայացուցիչների: Դրանք հայտնի տոհմերի ավագներ էին և բանակի նշանավոր զորապետներ: Մուշեղի ձեռքն է անցնում նաև մաշկավարզանը՝ արքայից արքայի կանանոցը, տիկնանց տիկնոջ հետ միասին: Շապուհն իր փառքն ու պատիվն էր թողել Թավրիզում: Փայլուն իրականացված այս արշավը, թվում է, թե պետք է ուրախացներ հայոց արքային: Պապին, սակայն, վիճակված չէր վայելելու իր զորավարի տարած հաղթության բերկրանքը: 350թ., Ոսխայի ճակատամարտում, Անդովկ Սյունուն և Արշավիր Կամսարականին հաջողվել էր գերել պարսից արքայի կանանոցը: Թե ինչպես օգտագործեցին նրանք այդ հաղթաթուղթը՝ մենք արդեն գիտենք. Շապուհն ազատ արձակեց գերված Տիրանին և ճանաչեց Արշակի գահակալական իրավունքները: Պատմությունը կրկնվում էր՝ այս անգամ, սակայն, հայոց համար էլ ավելի նպաստավոր պայմաններում: Պապն իր երկրում էր՝ հոր գահին, և մեծ հաջողությամբ ու արտասովոր արագությամբ վերականգնում էր հայոց մարտական զորությունը: Ի՞նչ ստացավ հայոց արքան Մուշեղի ձեռքն անցած այդքան կարևոր ավարից. պարսից 600 ազնվականների՝ խոտ-

ով լցված մորթերը: Այո, քաջարի Մամիկոնյանը մորթազերծ արված իր հոր վրեժն էր լուծում: Միայն թե, ըստ երևույթին, չցանկանալով ահավոր պարտությունից դառնացած Շապուհի սրտին ևս մի նոր վիշտ ավելացնել, նրա մորթված իշխաններին՝ իբրև նվեր, Պապին էր ուղարկել: Իսկ տիկնանց տիկինն ու բոլոր հարճերը, մեծ պատիվներով ու թիկնազորի հսկողությամբ՝ անվնաս հասնում են Տիզբոն[231]:

Շապուհը ցնցված էր: Ապշած էր և Պապը: Ի՞նչ նպատակով և ո՞ր իրավունքով էր հայոց հարավ-արևելյան բանակի հրամանատարն այդպես վարվում՝ դժվար է գուշակել: Ունե՞ր արդյոք իրավունք՝ որևիցէ մի երկրի զորապետ, առանց իր թագավորի կամքի, սեփական հայեցողությամբ տնօրինելու այդքան թանկարժեք գերիների ճակատագիրը: Ասում են, իր հոր վրեժն էր լուծում Մուշեղը: Բայց սա հենց այն դեպքն է, երբ վրեժը լավագույն խորհրդատուն չէ: Վրեժի իրավունք ուներ նաև Պապը, ում մայրը դաժանաբար սպանվել էր աքսորի ճանապարհին, ում լավագույն իշխանների կանանց ու աղջիկներին լլկել ու բռնաբարել էին պարսիկները: Արքայի հայրը դեռ ողջ էր՝ փակված Անհուշ բերդում[232]: Գերության մեջ էին Արշակից հետո Տիզբոն տարված մեծաթիվ հայ ազնվականներ: Ինչեր միայն չէր կարող կորզել Պապը՝ 600 պարսիկ նահապետների և արքայական կանանոցի դիմաց: Մուշեղի քայլն իրոք կարող էր դիտվել՝ իբրև վրեժից կուրացած մարդու արարք և հասկացվել արքայի կողմից, եթե նա մորթազերծ արվածներին ուղարկեր Շապուհին: Բայց ոչ, Մուշեղը մարտահրավեր նետեց միաժամանակ երկու տիրակալի՝ հասկացնելով, որ այս խաղում իրեն հետաքրքրողն իր

---

231 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Բ.:

232 Այն, որ Արշակը դեռ ողջ էր Պապի թագավորելու ժամանակ, հետևում է Գանձակի ճակատամարտից հետո Հայոց Գնդի մասին Շապուհի խոսքերից (տես՝ Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն. Ե): Արշակն ինքնասպան է եղել, ըստ երևույթին, 371թ. վերջերին:

տոհմի շահերն են, և որ իր համար չկան մշտական թշնամիներ և հավերժ տերեր: Շապուհն իսկույն հասկացավ իրեն ուղղված Մուշեղի ակնարկը. *«Ճերմակաձին գինի արբցէ».* սա նրա ողջույնի և ապագա փոխըմբռնման խոսքն էր՝ հղված Վասակի որդուն: Թավրիզից առաքված հսկայական ռազմավարի և մորթազերծ դիերի հետ միասին արքունի Ոստան մտավ ահավոր լուրը՝ Մուշեղն ակնկալիք ունի Շապուհից[233]:

Պապը դեռևս չէր կարող հրապարակայնորեն պատժել Հռոմի և Ներսեսի սիրելիին: Բայց թողնել հանդուգն Մամիկոնյանին՝ շարունակելու իր գործը, արքան չէր ցանկանում: Ամենայն հավանականությամբ հենց այս ժամանակ Մուշեղը ետ է կանչվում Ատրպատականի սահմանից: Արքան այստեղ է ուղարկում Դղակ մարդպետին՝ Ոստանիկ ասպարակիրների մի գնդով, հսկելու հայոց սահմանն Ատրպատականում[234], ուր նաև գտնվում էին արքունի կալվածքները: Հարավ-արևելյան ուղղության զորքն, ամենայն հավանականությամբ, հենց այս ժամանակ էլ բաժանվում է հարավային և արևելյան մասերի, որոնցից արևելյանը հանձնվում է Գնել Անձևացուն, ով էլ մինչև վերջ հավատարմությամբ կատարում է պարտավորությունները: Մուշեղի դեմ Պապն առայժմ ոչինչ չի ձեռնարկում: Մամիկոնյան իշխանը քաշվում է Տարոն: Առաջին անգամ այս շրջանում է, որ Տայքի Մամիկոնյաններին Էրիխանի ամրոցի փոխարեն, հանդիպում ենք Ողականում: Հենց Մուշեղին էլ հաջողվել էր Վահան Մամիկոնյանի սպանությունից հետո Ներսեսի օժանդակությամբ տիրանալ տոհմային ճյուղերի ընդհանուր նահապետությանը: Թեպետ, կարճ ժամանակ անց, այն փոխարինվեց Տարոնի ճյուղի նախագահությամբ, սակայն Տայքն ու Տարոնն արդեն գտնվում էին սերտ-

---

[233] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, Բ.:

[234] Բուզանդը այլ կերպ է ներկայացնում այս փոփոխությունը, ասելով, թե Մուշեղն ու Տերենտիոսը Դղակին թողեցին սահմանապահ, իսկ իրենք շարժվեցին Հայաստան Պապի մոտ (Տես՝ Հայոց Պատմություն, Զ.):

աճման մեջ և այսուհետ լինելու էին իրար միացած մեկ միասնական տոհմի ձեռքում: Մուշեղի ծառայություններին իբրև փոխհատուցում՝ Պապը նրան նվիրել էր բազմաթիվ գյուղեր ու դաստակերներ[235]: Սա հենց Տարոնի Մամիկոնյան տունը Մուշեղին հանձնելու մասին ակնարկ է, որը տեղի է ունեցել Պապի՝ Հայաստան ոտք դնելու առաջին իսկ պահերից: Սա նրան ներկայացված կարևոր նախապայմաններից մեկն էր:

Մուշեղը սպասում էր: Նա բավականին լավ էր ճանաչում արքային և գիտեր, որ գլխավոր փորձությունը դեռ առջևում է: Թե ո՞ր կողմից այն կգա՝ առայժմ անհայտ էր: Սակայն այն, որ Պապը երկար սպասել չէր տալու՝ Մուշեղը համոզված էր:

Պետական ավանդույթներով ու օրենքներով ապրող ցանկացած այլ մի երկրում, Մամիկոնյան Մուշեղի՝ վերը նշված գործողությունները, եթե նույնիսկ չպատժվեին ժամանակին, սերունդներին կներկայացվեին իբրև ազգավնաս, հայրենյաց շահն արհամարհող մի արարք՝ պետական դավաճանությանն համազոր: Իսկ ինչպե՞ս ենք մենք այսօր ընկալում այդ արարքը: Ի՞նչ է ավանդվել մեզ և լվացել մեր ուղեղները 1700 տարի շարունակ: Կարդանք և խորհենք այս հարցի շուրջ.

«Շապուհի գերված կանանոցի նկատմամբ սպարապետի ցուցաբերած քրիստոնեական մարդասիրությունը Արևելքի արքայից արքային նետված մարտահրավեր էր՝ ապտակ, որին նա չէր կարողանալու պատասխանել»[236]: Այսպես միայն՝ քրիստոնեական մարդասիրություն, որ ապտակի պես այսուհետ ուղղվելու էր դեպի թշնամին, բայց հարվածը՝ միշտ դիպչելու էր մեր պետականության ողնաշարին:

Վեհանձն Մամիկոնյանի «մարդասիրական այդ ապտակից» այդպես էլ «ուշքի չեկած» Արևելքի արքայից արքան, կարճ ժամանակ անց, Պապի դեմ ձեռնարկում է Սասանյանների տերության կողմից երբևիցէ իրականացված ամենամեծ

---

[235] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.:

[236] Մեր Հաղթանակները, հտ. Բ, էջ 31:

արշավանքներից մեկը[237]: Հսկայական տերության բոլոր ծայրերից սկսվում է զորահավաքը: Պապը, սակայն, սպասում էր դեպքերի նման զարգացման:

Զ

371թ. գարնանը ավելի քան 100.000-ոց պարսկական բանակը մտնում է Ատրպատական: Ահռելի զորքը համալրված էր Տիզբոնին հարկատու բոլոր հպատակ երկրներից հավաքված գնդերով: Այստեղ էին և լեզգիների, և Աղվանքի թագավորները: Իր բանակի հետ Ատրպատական ժամանած Շապուհի հետ էր և Մեհրուժան Արծրունին: Դրանիկ գնդով մնալով Թավրիզում՝ Շապուհը ողջ այդ բանակն ուղարկում է Հայաստան: Երկու հիմնական մոտեցում կա այն հարցին, թե ով էր գլխավորում պարսկական բանակն այդ արշավանքի ժամանակ: Ուսումնասիրողների մի մասը հակված է պարսկական այդ բանակի հրամանատարի դերում տեսնել Մեհրուժան Արծրունուն՝ հիմնվելով Խորենացու այն տեղեկության վրա, թե Շապուհը հրամայեց, որ պարսից ամբողջ զորքը Մեհրուժանի հետ Հայաստան գնա՝ պատերազմի: Բազմաթիվ արշավանքների ժամանակ պատմիչների կողմից Մեհրուժանի անվան հիշատակումը՝ իբրև զորքերի առաջնորդի, նշանակել է մեկ բան՝ առաջնորդող, այլ ոչ հրամանատար: Մեհրուժանն այս անգամ ևս, ինչպես նախկին պատերազմներում, ստանձնել էր պարսից զորահրամանատարի խորհրդատուի, զորքին առաջնորդողի դերը: Որոշ ուսումնասիրողներ էլ աղվանից արքա Ուռնայրին են համարում այս բանակի հրամանատար՝ Բուզանդի մոտ պահպանված մի վկայության թյուրըմբռնումից: Այսպես, Թավրիզում զորահանդեսում Ուռնայրը մոտենում է Շապուհին և նրա մոտ գտնվող բոլոր մեծամեծների ներկայությամբ՝ նվեր խնդրում իր համար: Պարծենկոտ աղվանացու խնդրած նվերը՝ Պապի կողմից

[237] Մեր Հաղթանակները, հտ. Բ, էջ 34:

վերակազմված հռչակավոր Հայոց Գունդն էր: Այսինքն, Ուռնայրը ցանկանում է առաջիկա ճակատամարտում իր զորքը դասավորել Հայոց Գնդին դեմ-դիմաց՝ շողոքորթելով, թե պարսից զորքին վայել չէ կռվել նրանց դեմ[238]:

Այս դիպվածն ունի իր ենթատեքստը: Օգտվելով Արշակի ողբերգական կործանումից հետո հայոց թագավորության օրհասական վիճակից՝ աղվանները զավթել էին Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մի շարք գավառներ: Երկիրն ընդարձակելով հայոց հաշվին՝ Ուռնայրը հավակնում էր վերջ տալ այն դարավոր գերիշխանությանը, որ Հայքն ուներ Աղվանքի և Վիրքի վրա, ու Աղվանքը բարձրացնել կարևորությամբ՝ պարսից համար առաջին երկրի կարգավիճակի: Ուռնայրը հույս ուներ ցույց տալ աղվանից գնդերի մարտական գերազանցությունը՝ Արշակի տարիներին անպարտ և անհաղթահարելի համարվող Հայոց Գնդի նկատմամբ: Շապուհը բավարարում է այդ խնդրանքը, հրամայելով նրան՝ մարտակարգը դասավորել Հայոց Գնդի դեմ: Խոսքն այստեղ ոչ թե բանակի հրամանատարության, այլ՝ առաջիկա ճակատամարտում մարտական մի թև ղեկավարելու մասին է: Թյուրիմացության պատճառներից գլխավորը Հայոց Գունդը հայկական բանակի հետ նույնացնելն է եղել: Անչափ վրդովվում է Շապուհին շրջապատած մեծամեծների շքախմբում գտնվող Մեհրուժան Արծրունին՝ այն աստիճան, որ չկարողանալով տանել Ուռնայրի լպիրշությունը, հեգնում է նրան արքունի ողջ ավագանու և Շապուհի ներկայությամբ. *«Դու գազը գրկեցիր, և զարմանալի կլինի, եթե այն ժողովել կարողանաս»*[239]:

---

[238] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, Դ.: (Կամ լիցի քեզ, արանց քաջ, զի և ինձ պարգև հրաման տացես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէն ելից իմով գնդովս նահատակ: Զի Արեաց գնդին պատեհ և դիպան ելանել զօրացն Յունաց, իսկ ես իմով գնդաւս Հայոց իշխանացն ելից):

[239] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.:

Իր Հայրենիքի մարտական փառքին նախանձախնդիր ազնվականի խոցված հպարտությունն է խոսում այս տողերում: Փավստոսի վկայությամբ սուրհանդակի միջոցով Մեհրուժանը լուր է ուղարկում Մուշեղ Մամիկոնյանին՝ հայտնելով, որ առաջիկա մարտում իր դեմ ճակատողը աղվանից զորքն է լինելու[240]: Այստեղ, իհարկե, անճշտություն կա: Ամեն բան Մուշեղի անձով պայմանավորող պատմիչը, բնականաբար, նրան է հասցեագրել Արծրունյաց իշխանի ուղերձը: Սակայն, Հայոց Գունդը գլխավորում էր Մաղխազության Մեծ Իշխան Խոռխոռունյաց տերը, այլ ոչ՝ Մամիկոնյան իշխանները: Եվ որ ամենակարևորն է, մինչև վերջին պահը կասկածի տակ էր Մուշեղի մասնակցությունը կռվին: Պապն ընդհանրապես չէր վստահում նրան: Մեհրուժանն, իրականում, լուր է ուղարկում Պապին՝ հայտնելով ռազմական խորհրդում որոշված առաջիկա արշավանքի ուղղության և կայանալիք բախման դեպքում՝ պարսից զորքերի դասավորության հնարավոր տարբերակների մասին: Չմոռանանք, որ Մեհրուժանը Շապուհի խորհրդատուն էր և հայկական արշավանքների դեպքում՝ բանակն ու հրամանատարին առաջնորդողը:

Ուռնայրի և Մեհրուժանի մասին վարկածներն անհիմն են: Աշխարհակալ պարսից տերության՝ հզոր ու մարտական հարուստ անցյալ ունեցող զորքերը փառահեղ հրամանատարների պակաս երբեք չեն ունեցել: Հնագույն ժամանակներից, Պարսկաստանում մեծ հռչակ են վայելել փառաբանված Պահլավ Ասպահապետները: Սրանք Միհրան Պահլավի տոհմից էին, որ հետագայում խնամիանալով Սասանյան արքաներին, արքայադուստր Կոշմի անունով՝ կոչվում էին

---

[240] Սա Մեհրուժանի անձի և գործունեության հետ կապված այն բազմաթիվ վկայություններից մեկն է, ուր Բուզանդը, Արծրունյաց իշխանի հայրենասիրությունն ու ազնվական կերտվածքն ապացուցող վարքը փորձել է բացատրել նախանձի, չարության և խորամանկության տեսանկյունից:

նաև Կոշմյաններ[241]: Այս տոհմի ժառանգական պաշտոնն էր ասպահապետությունը (սպարապետություն), և Շապուհը որևէ հիմք չուներ նման մի արշավանք իր սպարապետի փոխարեն՝ այլոց վստահելու[242]: Թավրիզում թողնելով Շապուհին՝ պարսից բանակը շարժվեց դեպի հայոց Միջնաշխարհ:

Պապը լրջորեն նախապատրաստված էր: Ավելի քան 90.000-ոց հայկական բանակը զորաժողով անցկացրեց Բագավանում: Հայերին են միանում նաև սահմանապահ ամրոցներում տեղակայված բյուզանդական վաշտերը[243]: Բագավանի մատույցներում՝ Նպատ լեռան ստորոտին փռված Ձիրավի դաշտում, հայոց արքան կազմակերպում է զորքի մարտակարգը: Կենտրոնական ճակատը գլխավորում է Սպանդարատ Կամսարականը: Նրա գնդերին դեմ-դիմաց պարսից բանակի կենտրոնական ճակատն էր պահում լեզգի Շերգիրն իր արագաշարժ, թեթևազեն հեծյալներով: Ձախ թևը զբաղեցնում է սպարապետ Սմբատ Բագրատունու սեպուհական այրուձին, որի ետևում կանգնած էին հռոմեական վահանակիր լեգեոներները: Համապատասխանաբար, պարսիկներն այս ուղղությամբ էին դասավորել իրենց հեծելազորը, որի ճակատային գիծը զբաղեցնում էր պարսիկ պատանիներից կազմված հեծյալ գունդը: Հայոց բանակի աջ թևը գլխավորում էր Առաջին իշխան մաղխազ Գարջույլ Խոռխոռունին՝ գլխավորելով Հայոց փառապանծ Գունդը: Նրա դիմաց մարտաշարք էր կազմել ամբարտավան Ուռնայրը՝ աղվանական գնդերով: Պարսից զորքերի հրամանատարական դիտակետը՝ ուր, ասպահապետի հետ միասին, գտնվում էր Մեհրուժանը,

---

[241] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 256-274:

[242] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Գլուխ երկրորդ:

[243] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.: Ուշագրավ է, որ Ձիրավի ճակատամարտում իբրև պարսից բանակի սպարապետ Մ. Չամչյանը հիշատակում է Կարենին: Ըստ երևույթին, դա Կարեն տոհմից որևէ մեկն էր: (Տես՝ Հայոց Պատմություն, հտ. Ա, Գլուխ Բ., Խ.. ԽԹ.):

տեղակայված էր թիկունքում: Հայոց կողմից, ճակատամարտը սկզբից մինչև վերջ, գլխավորել է Պապը՝ Նպատ լեռան գագաթին գտնվող դիտակետից[244]: Վաղօրոք տեղեկացված լինելով թշնամու ուժերի հնարավոր այս դասավորության մասին՝ արքան նախապես ծրագրել էր մարտի ողջ ընթացքը:

Մարտը սկսվելուց առաջ իր զենքն ու տոհմանշանները Ներսեսի մոտ է բերում Մուշեղը: Ներսեսն արքայի հետ էր՝ Նպատի դիտարանում: Մինչ քահանայապետը պատրաստվում էր օրհնելու իր սիրեցյալի սուրը՝ Պապը խստիվ արգելում է Մուշեղին իջնելու մարտադաշտ: Պատճառը՝ պարսիկների հետ նրա բանակցությունների մասին կասկածներն են[245]: Ավելի մեծ անարգանք հայ զորավարի համար չէր կարող լինել: Մամիկոնյան իշխանը դիմում է Ներսեսին՝ խնդրելով բարեխոսել արքայի առջև: Համառ խնդրանքներից հետո Պապը վերջապես թույլատրում է Մուշեղին մասնակցել կռվին՝ միայն, հանդիսավոր կերպով երդվեցնելուց հետո: Եվ քաջարի զորավարը, ծնկի իջնելով արքայի առջև՝ արտասանում է իր նշանավոր խոսքերը. *«Ես կապրեմ ու կմեռնեմ քեզ համար, ինչպես իմ նախնիները՝ քո նախնիների: Ինչպես իմ հայրը քո հոր՝ Արշակի, ես էլ նույնպես կմեռնեմ քեզ համար, միայն թե չարախոս մարդկանց չլսես»*[246]: Մենք դեռ կտեսնենք, թե հերոս Վասակի որդին ինչպես պահեց իր ուխտը: Արքան, ամեն դեպքում, Մուշեղին՝ Մամիկոնյան գնդով, տեղ է հատկացնում զորքի աջ թևում՝ Հայոց Գնդի հարևանությամբ. այդպես իրեն առավել հանգիստ կզգար:

---

[244] Մեր Հաղթանակները, հտ. Բ, էջ 34-40:

[245] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.: «Դա այն Մուշեղն է, որ պարսից Շապուհ թագավորի կանանց ազատ արձակեց՝ ժանվարներով ու պահապան վաշտով: Այն էլ եմ լսել, որ պարսիկների հետ բանակցություններ է վարում: Թող նա մարտի չմտնի»:

[246] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.:

Թե ինչ կարևոր նշանակություն ուներ ճակատամարտը Պապի և ընդհանրապես ոտքի կանգնելու փորձեր անող հայոց պետականության համար, պարզ երևում է սրբազան այն ոգևորությունից, որով Պատմահայրը նկարագրում է այն: Նույնիսկ բնության տարերքներն էին օգնության հասել հայ արքային:

Եվ այսպես, ճակատամարտն սկսվեց: Խորենացին ներկայացրել է անչափ հետաքրքիր մի իրողություն, որը եզակի է համաշխարհային ռազմի պատմության մեջ: Խոսքը երկու հակառակորդ բանակների հրամանատարության նախաձեռնած մրցության մասին է՝ մրցություն, ուր պետք է չափվեին հայ և պարսիկ պատանիները[247]:

Մարտն սկսվում է հայ պատանի ազնվականներից կազմված այրուձիու ասպարեզ դուրս գալով: Առջևում սպարապետ Սմբատ Բագրատունին էր: Նրանց դեմ իսկույն դուրս է գալիս պարսիկ պատանիների հեծելագունդը: Մրցությունն սկսվեց: Դա ուժերի չափման ստուգատես էր՝ երկու պետությունների ռազմական գալիքը կանխորոշող մրցույթի պես մի բան: Երկու բանակներն առանց միջամտելու, շունչները պահած, հետևում էին իրենց պատանիներին: Շեշտակի հարձակումներն ու նույնքան արագ կազմակերպված նահանջներն այն հիմնական հնարքներն էին, որոնք օգտագործվում էին: Միմյանց գրոհող պատանիները կռվում էին մեկ-մեկուն արժանի քաջությամբ և պատրաստվածությամբ: Հայոց այրուձիու գերազանցությունն երևան եկավ հենց առաջին իսկ նահանջի ժամանակ: Շեշտակի վարգով հետապնդող պարսիկներից դեպի հայոց բանակի զորաշարքերը շտապող հայ պատանիներին սպասում էին հռոմեական վահանակիրների լեգեոնները: Ահա բացվում են վահանապատ շարքերը, և հայ պատանիներն անհետանում են կրկին փակված պարսպի ետևում՝ նետերի տարափ տեղալով շփոթված հակառակորդի

[247] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԼԷ.:

վրա: Փոքր-ինչ շունչ քաշելով՝ պատանիները դուրս էին գալիս վահանների ետևից և կրկին մտնում մարտադաշտ: Նահանջելու հերթն, այժմ, պարսիկներինն էր, որն ուղեկցվում էր մեծ կորուստներով: Պատանի հեծյալներին ոչ մի կերպ չէր հաջողվում կազմակերպված հասնել իրենց զորքերին: Պարսկական մարտաշարքերի առաջապահ գծի մոտ միշտ խառնաշփոթ և արյունահեղ կոտորած էր լինում, երբ հերթական անգամ հայ պատանիները հասնում էին իրենց բանակի շարքերում խցկվել փորձող հակառակորդին:

Ստուգարքն ավարտվեց: Հսկայական կորուստներ կրելով՝ պարսից սեպուհները վերադասավորվեցին իրենց հատկացված գծում: Սմբատի ստեղծած այրուձին անմրցելի էր:

Հենց սկզբից պարզ դարձավ, որ պարսից բանակի ամենաթույլ օղակը Ուռնայրի գլխավորած աջ թևն էր: Հայոց Գնդի և Մուշեղի վաշտերի միաժամանակյա անկասելի գրոհին՝ Ուռնայրի աղվաններն ու նրանց թիկունքում շարված պարսից գնդերը չկարողացան դիմակայել: Աջ թևն անընդհատ համալրում էր ստանում պահեստի ուժերից: Ձախ թևում, հռոմեական լեգեոներները մարտին ակտիվորեն չէին մասնակցում՝ մինչև վերջ կատարելով Սմբատի գլխավորած այրուձիու համար պատվարի իրենց դերը: Վճռական բեկումը, սակայն, սկսվեց կենտրոնական ճակատից: Ճեղքելով լեզգիների կազմած պաշտպանական գիծը՝ Սպանդարատ Կամսարականին հաջողվում է խորանալ հակառակորդի բանակի մեջ, և Շերգիր թագավորի հետ մենամարտում՝ սպանել նրան: Շերգիրի մահն անասելի խուճապ առաջացրեց: Լեզգիներն սկսեցին անկանոն փախուստը, որն էլ վարակիչ եղավ ողջ զորքի համար: Ահռելի կորուստների գնով, պարսիկները կարողացան քիչ թե շատ կարգի բերել իրենց շարքերը և բռնել նահանջի ուղին: Հայոց զորքերը նրանց հետապնդեցին մինչև Ատրպատականի սահմանը: Նահանջողներին հետապնդելիս, Մուշեղին հաջողվում է մենամարտի դուրս գալ

Ուռնայրի դեմ: Առանց մեծ դժվարության վիրավորելով և զինաթափելով նրան՝ Մամիկոնյան իշխանը, սակայն, չի սպանում նրան, և ոչ էլ բերում Պապի մոտ: Հայոց հյուսիս-արևելքը զավթած թշնամուն նա բաց է թողնում: Հետագայում, Պապի առաջ արդարանալով, Մուշեղն ասում է, թե ինքը չէր կարող սպանել կամ գերել թագակիր մարդուն[248]: Իսկ մենամարտել նրա հետ և վիրավորել՝ պարզվում է, կարող էր:

Ձիրավի ճակատամարտում Մեհրուժանը չի սպանվել: Հակառակ Խորենացու հաղորդած տեղեկություններին, համաձայն որոնց, Սմբատ Բագրատունին շիկացած երկաթով սպանում է իշխանին, հետագա բոլոր վկայությունները ցույց են տալիս, որ «ուրացյալ» իշխանը դեռ երկար տարիներ ողջ էր և աշխատում էր հօգուտ հայոց արքունիքի:

Ինչևէ, հաղթանակը կատարյալ էր և շատ կարևոր՝ Պապի համար: Կարևոր՝ իր ռազմական նշանակությամբ: Նորաստեղծ հայկական բանակը Շապուհին ցույց տվեց իր զորությունն ու արքային և պետականությունը պահպանելու անդրդվելի հաստատակամությունը: Ընդունված է այն կարծիքը, որ Ձիրավից հետո պարսից արքունիքը հրաժարվեց Հայաստանը զենքի ուժով հպատակեցնելու մտքից[249]: Սակայն, դա այդպես չէ: Շապուհին էլ ավելի մեծ փաստարկ էր հարկավոր՝ Պապին իրապես գնահատելու համար: Եվ այդ հնարավորությունը նրան շուտով ընձեռնվեց:

Է

Երանի՜, որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրացն ...

Իր տերության փառքն ու զորությունը երկինք բարձրացրած աշխարհակալ արքայի այս խոսքերը՝ լավագույն

---

[248] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.:

[249] Մեր Հաղթանակները, հտ. Բ., էջ 34-40:

գնահատականն են այն մեծ աշխատանքի, որ այդքան կարճ ժամանակամիջոցում հասցրել էր անել Պապը: Նախանձոտ այս հիացմունքի առարկան այս անգամ Հայոց Գունդն էր:

Ձիրավի ճակատամարտից մի քանի ամիս անց հայոց արքունիքը լուր է ստանում, որ Շապուհը մեծ զորաբանակով պատրաստվում է արշավել Հայաստան: Պարսկական բանակը սահմանն անցնելու էր Ատրպատականից: Ըստ Փավստոսի, լուրը Մուշեղին առաքել էր Ուռնայր թագավորը՝ իբրև շնորհակալություն, իր կյանքը խնայելու դիմաց[250]: Եթե դա այդպես է, ապա աղվանից արքան վերջնականապես հրաժարվելով Պապի հետ մրցելու մտքից՝ փորձում էր խուսափել նրա առաջիկա վրեժից: Պարսից արշավանքին Ուռնայրի զորքերը չմասնակցեցին: Արշավանքն, ըստ լուրերի, գլխավորելու էր անձամբ Շապուհը: Սակայն, մոտենալով Գանձակին՝ Շապուհն ապշում է. վաղորոք հայ-պարսկական սահմանն անցնելով, կազմ-պատրաստ իրեն էր սպասում 90.000-ոց հայկական բանակը՝ սպարապետ Սմբատ Բագրատունու գլխավորությամբ: Պապն այստեղ չէր ուղարկել միայն 40.000-ոց Ոստանիկ զորքը: Այստեղ էր Հայոց Գունդը, հայ նախարարների գնդերը: Այստեղ էր Մուշեղ Մամիկոնյանի հեծյալ գունդը: Հայոց զորքերին էր միացել նաև Տերենտիոսը: Ճակատամարտը կայացավ հենց Գանձակի մատույցներում: Այս մարտին հայ ուսումնասիրողները չեն անդրադարձել՝ համարելով վիպական պատմություն՝ բերված Փավստոսի կողմից: Ավելին, անգամ հայ ռազմարվեստի պատմության մեջ տեղ չի գտել Գանձակի կռվի նկարագրումը: Մինչդեռ, այն չափազանց ուսանելի է ոչ միայն մարտավարական, այլև՝ հայ զինվորի հոգեբանական դաստիարակության տեսանկյունից:

Մարտն սկսեցին երկու կողմերը՝ միաժամանակ: Կռվողներն անզիջում էին և մեծաթիվ զոհեր էին խլում իրարից: Իր բնույթով դասական այդ մարտն ընթանում էր ժամանակակից

---

[250] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե.:

մարտարվեստի ընդունված կանոնների համաձայն: Հայոց բանակի առավելությունը, սակայն, այն նորամուծությունն էր, որ պարսիկներին ցուցադրվեց դեռևս Ձիրավի դաշտում: Խոսքը՝ հոգնած վաշտերին պատսպարող վահանակիրների մասին է: Սակայն, եթե Ձիրավի դաշտում այդ դերը ստանձնել էին բյուզանդացիք, ապա այստեղ՝ Գանձակում, նրանց էր միացել նաև հայ ասպարակիրների մի գունդ: Հաշվված ամիսների ընթացքում հաջողվել էր այս մարտավարությունն արմատավորել հայոց բանակում: Ուժասպառ պարսիկների դեմ կռվում էին՝ իրենց վահանակիրների թիկունքում իրար փոխարինող հայկական առույգ գնդերը: Պատերազմելու այս ձևը հատուկ չէր պարսիկներին և շատ էր դժվարացնում նրանց կացությունը: Ամեն դեպքում, երկու կողմերն էլ անզիջում էին, և դեռևս վաղ էր գուշակել կռվի ելքի մասին: Եվ ահա, մարտադաշտ է մտնում Հայոց Գունդը:

Արշակի և Վասակի ջանքերի ծնունդ այս զորաբանակը, որ իր արքայի կորստին զուգահեռ զրկվեց խնամքից ու ցրվեց երկրով մեկ՝ այժմ, Պապի կամքով, կրկին վերակազմավորվել էր: Հիանալիորեն սպառազինված, նախորդների մարտական ավանդույթները յուրացրած և նույն՝ զուտ հարձակողական մարտավարության համար նախատեսված Հայոց Գունդը, կարճ ժամանակում կրկին նախկին բարձրության վրա էր և վայելում էր հայոց արքայի հատուկ ուշադրությունը: Հայոց Գունդը Շապուհի դեմ չէր ուղարկվել ճակատամարտելու: Այն Ատրպատական էր եկել՝ կատարելու սրբազան արարողության, հեթանոս զոհաբերության մի ծես, որը երբեք չջնջվեց Շապուհի հիշողությունից:

Մաղխազ Խոռխոռունու առաջնորդությամբ, փոթորկալից գրոհով մխրճվելով թշնամու շարքերի մեջ, Հայոց Գունդն սկսեց իր սարսափելի՝ մինչ այդ չտեսնված ու չլսված հունձքը: Դասական մարտի որևէ կանոնի չենթարկվող մի կռիվ էր սա: Գլխատում էին իրենց դիմացն ելած յուրաքանչյուր

պարսիկի և կտրված գլուխը նետելով պարսից շարքերի մեջ՝ միահամուռ գոռում.

- Ա՛ռ քեզ, քա՛ջ Արշակ:

Առանց շտապելու, հանդիսավոր կերպով, մորթում էին ոտքի տակ ընկած թշնամու զինվորին և անկենդան մարմինը նետելով ձիերի ոտքերի տակ՝ ձայնում.

- Մատա՛ղ եղիր մեր Արշակ թագավորին[251]:

Յուրաքանչյուր մորթված ու գլխատված զինվորի դիմաց ողջ Գնդի միահամուռ, խելացնորության հասցնող կանչը քարացրել էր կյանքում շատ զարհուրանքներ տեսած Շապուհին: Մինչ հայոց զորքի մյուս թևերը համառ ու անզիջում մարտով, քայլ առ քայլ ամրապնդում էին իրենց դիրքերը, Հայոց Գունդը կայծակի պես կտրել-անցնելով պարսից զորքերի միջով՝ ասես չէր կռվում, այլ ընտրելով իր զոհերին՝ մատաղում էր նրանց Արշակ արքային: Խոռխոռունյաց Վահագնազարմ իշխանն այստեղ էր ուղարկվել՝ Արշակի պատվին սրբազան զոհաբերության ծեսն ի կատար ածելու համար: Հաշվված րոպեների ընթացքում, Շապուհի՝ անկամ հոտի վերածված զինվորները, ցնորված հայացքներով փախչում էին՝ անկանոն, ուր աչքները կտրի: Պարսից զորքը մտածում էր միայն այդ մղձավանջից ազատվելու մասին: Իսկ Հայոց Գունդը տարերքի մեջ էր: Մոլեգին մի հավատով, սահմռկեցուցիչ վստահությամբ, գլխատում էին ու մորթում՝ ռազմադաշտը վերածելով սպանդանոցի: Ասես Վահագնի՝ մարտի իջած քաջքերն էին զվարճանում՝ մորթված թշնամու գլուխները համրելով: Կրակ ու բոց էր թափվում այդ Գնդից, և բոլորի առջևից, հանդարտ վարգով ընթանում էր պատերազմասեր Արշակը՝ հետագայում սա էր հիշելու միայն պարսից արքան: Արշա՛կն էր կռվում Շապուհի դեմ, և Հայոց Գունդը գնում էր Նրա՛ ետևից: Սա Արշակի՝ Շապուհի դեմ երբևիցէ տարած մեծագույն հաղթանակն էր:

---

[251] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե.:

Իր անասելի քաջությամբ հրաշքներ էր գործում և Մուշեղի գունդը, որ դարձյալ կռվում էր Հայոց Գնդի հետ կողք-կողքի: Սա է պատճառը, որ Մուշեղին՝ ամենուր սպարապետի դերում ներկայացնող Բուզանդը, միաժամանակ, ամեն կերպ ձգտել է Հայոց Գունդը կապել նրա գնդի հետ՝ շփոթության մեջ ձգելով հետագա բոլոր պատմաբաններին: Մուշեղի մոլեգնած գնդի մասին խոսելիս՝ հետագայում, Շապուհն այն համեմատելու է եղեգների միջով անցնող հրդեհի բոցի հետ[252]: Այո, Վասակի որդին իր քաջությամբ և ռազմական տաղանդով, հոր արժանի զավակն էր:

Կանցնեն հաշվված օրեր, և փոքրաթիվ զինվորներով մազապուրծ Տիզբոն հասած Շապուհը կխոսի Գանձակի ճակատամարտից մնացած անջնջելի տպավորության մասին.

«Հայոց Գնդի միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա եմ զարմացած. որովհետև այսքան տարի է, որ նրանց տեր Արշակը կորած է իրենց համար... գտնվում է Անդմըշն բերդում, Խուժաստան երկրում, բայց նրանք՝ իրենց սիրուց, այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր, կամ իրենց հետ Գնդի մեջ է գտնվում՝ իբրև պատերազմի գլուխ կանգնած, և իրենք նրա առաջ՝ նրան են ծառայում: Այո, երանի նրան, որ Հայոց Գնդի տերն է՝ այդպիսի տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի»[253]:

Հայոց Գունդը ռազմադաշտ ուղարկելով՝ Պապը ցանկացել էր Շապուհին հասկացնել, որ նրա դեմ կռվողն Արշակն է՝ նրա արյունն ու ոգին, և որ անհնար է կռվել ռազմադաշտն՝ իբրև զոհասեղան ընկալող իր զինվորների դեմ: Շապուհը հասկացավ, որ իր նախկին ամեհի հակառակորդի արժանի

---

[252] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե.: «Եւ կամ մոլեկան գունդն մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց ի գնդէն ելանիցէր և ի նշանացն, իբրև ի հուրն հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց ընդ եղէգն»:

[253] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե.:

ժառանգն է իր դիմաց: Վկան՝ Հայոց Գունդն ու հավերժ թագակիր Արշակը, որին ողջ կյանքում էր նախանձել Շապուհը:

Գանձակի ճակատամարտը մնաց պատմության լուսանցքներում: Երբեք չհաղորդակցվեցինք նրա խորհուրդներին: Բոլորովին այլ սկզբունքներ ձևավորեցին հաղթանակի և պարտության մասին հայ զինվորի ըմբռնումները: Գուցե բոլորովին այլ հոգեբանությամբ դաստիարակվեին հայ սերունդները, եթե ավարայրների և նվարսակների փոխարեն՝ «սրբազան» ու «ազգային» համարվեին Գանձակի նման ճակատամարտերը: Այլ կլիներ հայ մարդու ըմբռնումը տիրասիրության, թագի պաշտամունքի, մեռնելու և մեռցնելու արվեստի մասին: Այլ կլինեին բարոյական հաղթանակների մասին մեր պատկերացումները: Իսկ բարոյական հաղթանակները կերտվում են միայն այն դեպքում, երբ իր Ցեղի Մեծ Ոգուն, Գերագույն իր Էությանը հաղորդակից զինվորը՝ ռազմադաշտ է մտնում ոչ թե կռվելու, հաղթել-պարտվելու կամ առավել ևս՝ նահատակվելու, այլ իր նախնիների հասանելիքը՝ նրանց վերադարձնելու կամքով: Արդյունքում՝ սարսափ ու մղձավանջ թշնամու շարքերում: Արդյունքում՝ կաթվածահար անող մի հիշողություն, որը երկար ժամանակ չի լքում ամենառազմատենչ ոսոխին անգամ: Արդյունքում՝ Արշակ արքայի թագը, որ Գանձակի ճակատամարտից հետո Շապուհը «մեծահոգաբար» ուղարկեց Պապին...

Ը

Անզիջում պայքարը վերջապես տվեց իր արդյունքները: Դաժան մարտերի արդյունքում Պապին հաջողվեց Շապուհին պարտադրել իր կամքը: Պարսից արքունիքը վերջնականապես հրաժարվեց Հայաստանի դեմ սուր ճոճելու մտքից: Ավելին, Շապուհը ճանաչեց Պապի գահակալական իրավունքները, սակայն, առայժմ ձեռնպահ էր մնում հայոց արքայի հետ որևէ երկխոսություն սկսելու մտքից: Շապուհը սպասում էր:

Զառամյալ տիրակալը լավ էր պատկերացնում, թե ինչ հնարավոր զարգացումներ են սպասվում տարածաշրջանում, լավ էր ճանաչում Հռոմի ավանդական քաղաքականությունն ու հասկանում էր կայսերական պալատի՝ Պապից ունեցած ակնկալիքները: Շապուհը մեկ անգամ չէ, որ գործ էր ունեցել Ներսեսի հետ և տեղյակ էր նրա հավակնությունների ու խորամանկության մասին: Պապը համարվում էր Հռոմի դրածոն, և կայսրը Ներսեսի ու նրա կամակատարների, Հայաստանում իր զորապետների միջոցով ձգտելու էր հնարավորինս արագ Մեծ Հայքը վերածել կայսերական մի հենակետի՝ ընդդեմ Սասանյան տիրակալների: Բայց Շապուհը՝ Արշակի անհաշտ ու ոխերիմ թշնամին, սկսել էր ճանաչել նաև Պապին: Կազմակերպչական և ռազմավարական արտակարգ ունակությունները, որ երիտասարդ արքան ցույց տվեց վերջին մեկ տարվա ընթացքում, արտասովոր էին նրա տարիքի համար: Հասկանալ իրեն ստորաքարշորեն քծնողների իրական դերն ու մտադրությունները, սառնասրտորեն, արժանավայել հպարտությամբ կրել իրեն կրծող ցավն ու ատելությունը, հազարավոր թշնամիների միջից ընտրել հատուկենտ նվիրյալներին՝ դա տրված չէր ամենքին: Դեռևս ծծկեր հասակից Իրանի գահին հաստատված Շապուհը, որը միայն իր սիրասուն մոր աննկուն կամքի, անսահման հոգատարության ու դաստիարակության շնորհիվ կարողացավ իր մեջ զարգացնել ժամանակի մեծ տիրակալին բնորոշ եզակի ձիրք ու տաղանդ և, դառնալով չափահաս, իր աներևակայելի խորամտությամբ ու համարձակությամբ հաջողեց իր շուրջն համախմբել Իրանի բոլոր ազդեցիկ ուժերին՝ չէր կարող չհարգել Պապին: Կկարողանա՞ արդյոք Պապը ամուր հաստատվել հոր գահին, կհաջողվի՞ նրան ճեղքել իրեն շրջապատող օղակը՝ այն ժամանակ պարսից արքունիքը չի հապաղի նրան բարեկամություն առաջարկելու: Իսկ այն, որ Պապը նման մտադրություն ուներ՝ Շապուհը տեսնում էր և գնահատում: Արքայից

արքան զգում էր, որ հարկադրված չի լինելու երկար սպասել: Փորձառու տիրակալը չէր սխալվում:

Թ

Պարսկական արքունիքի կողմից ճանաչվելուց հետո Պապը ձեռնարկեց Մեծ Հայքի պետական սահմանների վերականգնման գործին: Թեև Շապուհի արշավանքներին դիմագրավելուն զուգընթաց, հայոց զորքերը հասցրեցին մաքրել երկիրը պարսկական կայազորներից, սակայն, անելու դեռ շատ բան կար: Հարևան Վիրքն ու Աղվանքը, անիշխանության տարիներին, հասցրել էին խլել Մեծ Հայքի հյուսիսային և արևելյան բազմաթիվ գավառներ: Քիչ չէին Արշակին լքած և իրենց աշխարհներով՝ պարսկական կամ բյուզանդական հպատակություն ընդունած հայ նախարարները: Պապի թագավորությունը սահմանափակվում էր Այրարատով և նրան հարակից նահանգներով: Հիմա, արտաքին հարձակումներից ապահով հայոց արքունիքը՝ օգտվելով նաև Պարսկաստանում ծայր առած խմորումներից, զարկ տվեց Հայրենիքի սահմանների ամբողջականացման գործին: Հայրենի հողերի միավորումն իրականացվում էր արտասովոր արագությամբ, և դրան մասնակցում էին բոլոր իշխաններն առանց բացառության:

Կարճ ժամանակամիջոցում գրավվեցին Մեծ Ծոփքն ու Փայտակարանը, Նոշիրականը, Աղձնիքն ու Կորդուքը[254]: Խիստ պատիժների էին նթարկվում այն գավառների ու նահանգների տերերը, ովքեր ժամանակին վայելելով Արշակի վստահությունը, վճռական պահին ոչ միայն լքել էին նրան, այլ նաև՝ մտել օտարի ծառայության տակ: Այսպես, գրավելով Փայտակարան նահանգը՝ Պապի զորքերը գլխատում են տեղի գավառապետերին, տեղերում նշանակում արքունի վերակացուպաշտոնյաներ, իսկ մնացած իշխաններից պատանդներ

[254] Պապի կողմից հայկական հողերի ազատագրման մանրամասն նկարագրությունը տրված է Բուզանդի մոտ (Հայոց պատմություն, Ը.):

վերցնում: Ձերբակալում են Աղձնիքի բդեշխին, որն Արշակին լքողներից առաջինն էր: Նրա աչքի առջև սպանում են իր կանանց, որդիներին գերեվարում, իսկ նահանգում կարգում արքունի հավատարիմ պաշտոնյաներ: Գրավում և հնազանդեցնում են Տմորիքն ու Արցախը՝ այս տեղերն էլ հանձնելով վստահելի մարդկանց: Սրի են քաշվում Անձիտի և շրջակա գավառների տերերը, որոնք մտել էին բյուզանդական հպատակության տակ: Մտնելով Ատրպատական՝ զորքն ավերում է շատ գավառներ և գրավում հայոց թագավորների կալվածքն այս երկրամասում: Վերադարձվում է նաև Անգեղտունը, որն ինչպես գիտենք, նույնպես արքունի Ոստան էր: Հայոց զորքերը նույնիսկ մտան Մարաստան, որն Արշակի օրոք հարկատու էր Մեծ Հայքին: Գերիներ ու պատանդներ վերցնելով այստեղից՝ երկիրը կրկին դարձնում են հարկատու:

Առանձնահատուկ վերաբերմունքի են արժանանում Վիրքն ու Աղվանքը: Ուռնայր թագավորը՝ սոսկալի ջարդ կրելուց հետո, հարկադրված է լինում ոչ միայն ետ վերադարձնել Ուտիքը, Շակաշենը, Գարդմանքը, Կողթն ու սրանց շուրջ գտնվող տասնյակ գավառներ, այլ տալիս է նաև մեծ թվով պատանդներ և հարկատու դառնում Պապին: Կուր գետը կրկին դառնում է Մեծ Հայքի և Աղվանքի սահմանը:

Առավել տպավորիչ էր հայոց զորամասերի վրացական արշավանքը: Հաշվված օրերի ընթացքում նվաճվում է ողջ Վիրքը: Սրի են քաշվում վրաց բոլոր ազնվական տոհմերն ու նախարարները: Խաչ է հանվում Փառավազյան տոհմը: Վիրքից ետ է խլվում Գուգարքի նահանգը, որի բոլոր նախարարները գլխատվում են՝ իրենց գավառները կամովին «դարավոր եղբայրներին» հանձնելու համար: Գլխատվում է Գուգարաց բդեշխը: Կոտորում են նրա ցեղի բոլոր արուներին: Վիրքի և Հայքի հին սահմանը՝ Կուրը, վերականգնվում է:

Տուրք տալով այն թյուր կարծիքին, թե իբր «ամոթալի դաշնագրի» կնքմամբ Արշակի արքունիքը գտնվում էր խուճապի

մեջ, Մանանդյանը կարծում է, թե Պապը չէր կարող նվաճել հայոց հարավային գավառներից մի քանիսը, քանի որ դրանք, ըստ պայմանագրի, կայսրը տվել էր Շապուհին: Նախ, այդ գավառներն ամենևին էլ կայսրինը չէին՝ որևէ մեկին նվիրելու համար: Եվ հետո, Արշակը թքած ուներ այդ լրբենի պայմանագրի վրա, և տարիներ շարունակ փշրվել էին Շապուհի ատամները հայոց հարավային դարբասներին: Այդ գավառների տերերն ապստամբել էին Արշակից և պարսից հովանու տակ անցել: Պապը զենքով էր ապացուցել իրեն հասանելիքին տեր կանգնելու իրավունքը, և Ձիրավ ու Գանձակ տեսած Շապուհը, որ այժմ զբաղված էր արևելյան պատերազմներով, ամենևին էլ միտք չուներ Բյուզանդիային հայ-պարսկական՝ կասկածելի ելքով պատերազմից բերկրանք ապրելու հաճույքը պարգևել: Եվս մի կարևոր հանգամանք. այդ գավառների միացման գործը սկսվել էր Պապի՝ Հայաստան մուտք գործելու պահից, երբ երկրից վտարվում էին պարսկական կայազորները: Հայոց հարավային մի շարք տարածքներ մաքրվել էին մինչև պարսից վերջին երկու արշավանքները: Այնպես որ, Շապուհը փորձեց զենքի ուժով զսպել Պապի ախորժակը՝ բայց դա նրա մոտ չստացվեց: Իսկ հիմա, Պապը վերցնում էր այն, ինչի իրավունքն արդեն վաստակել էր: Վաստակաշատ պատմաբանը նույն պատճառաբանությամբ անհնար է համարում նաև Պապի կողմից Մեծ Ծոփքի և Անձիտի գրավումը՝ նշելով, որ Շապուհը դրանք զիջել էր Բյուզանդիային[255]:

Կրկնում եմ, զիջված էին ոչինչ չունեցող Շապուհի կողմից, իսկ Բյուզանդիան չէր հասցրել վերցնել: Կրկին այստեղի նախարարներն էին, որ կամովին դարձան կայսերն հարկատու: Սակայն, չմոռանանք մի փաստ. Հայոց աշխարհ՝ Պապի հաղթական մուտքը սկսվեց Բարձր Հայքի և Մեծ Ծոփքի գավառներից: Այստեղից սկսվեց հայոց հողերի միավորումը: Ամենապարզ ապացույցն այն բանի, որ այս գավառները

[255] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ., էջ 214:

Պապի տիրապետության տակ էին՝ այն է, որ 374թ. Պապը Վաղեսից պահանջում է իրեն հանձնել Ուռհան, Կեսարիան և Գամիրքի տասը քաղաքներ: Եվ անում էր դա պատերազմի սպառնալիքով: Միթե՞ Մեծ Ծոփքն ու Անձիտը թողած՝ հայոց արքան կմտածեր Գամիրքի մասին: Միայն Հայրենիքի բնական սահմաններն ամբողջացնելուց հետո են մտածում ազդեցության ավանդական ոլորտները ետ բերելու և սեփական ազգակիցներով բնակեցված հարևան նահանգներին տիրանալու մասին: Մեծ Ծոփքն ու Անգեղտունը Պապինն էին արդեն նրա Եփրատն անցնելու պահից: Այլ բան է, որ հայոց զորքերի հետ մեկտեղ՝ այս շրջաններում տեղակայված էին բյուզանդական լեգեոններ:

Ժ

Եվ այսպես, մեկ տարուց քիչ ավելի ժամանակահատվածում, երիտասարդ արքային հաջողվեց վերականգնել Հայոց Հայրենիքի բնական սահմանները. հայոց պետությունը կրկին ընդգրկում էր Հայկական ողջ Լեռնաշխարհը: Պապի թագավորության հարկատուներն էին Աղվանքը, Վիրքը, Ադիաբենեն և Մարաստանը: Այդքան կարճ շրջանում հասնել նման փայլուն հաջողության՝ չէր հաջողվել, դեռևս, ոչնչից սկսող և ոչ մի արքայի: Սա արդյունքն էր Պապի կազմակերպչական մեծ ընդունակությունների, անհողդողդ կամքի և քաղաքական հասունության: Սա արդյունքն էր նրա ռազմական հանճարի և բարոյական բարձր արժանիքների, որոնցով հենց պայմանավորված էին՝ երկու տարուց էլ կարճ ժամանակում, հայոց ռազմական հզորության վերականգնման գործում ունեցած նրա հաջողությունները: Պապը ստեղծել էր իր ժամանակի լավագույն բանակներից մեկը: Դրա նախադրյալներն, իհարկե, նա արդեն ուներ: Արշակի և Վասակի հարուստ փորձը չէր մոռացվել: Սակայն, Պապը հարկադրված էր պատերազմների միջև ընկած սուղ ժամանակահատվածում համոզել, ստիպել

հայ իշխաններին՝ երկիրը զորքով, զենքով և ուտեստով ապահովելու: Եվ նա չէր զլանում: Գահակալության առաջին իսկ օրերից, արքան շրջում էր գավառից գավառ, հորդորում և ստիպում, սպառնում և համոզում: Առաջին հաղթանակները Պապի մոտ բերեցին բազմաթիվ տատանվողների: Եվ սկսվեց համախմբումը: Արդեն Ձիրավի ճակատամարտում տեսնում ենք կանոնավոր, լավ սպառազինված, մարտական հրաշալի պատրաստվածությամբ 90.000-ոց հայկական բանակ[256]: Ձիրա-վից հաշվված ամիսներ անց Գանձակի մոտ Շապուհի դեմ Պապի ուղարկած զորքերի թիվը կրկին 90.000 է[257]: Պատմիչը շեշտում է, որ այստեղ էր եկել հայոց ողջ զորքը՝ չհաշված ասպարակիրներին: Դրանք, ինչպես արդեն գիտենք, արքունի Ոստանի պահապան զորքերն էին՝ բաղկացած չորս գնդից, յուրաքանչյուրը՝ մեկ բյուրավոր (10.000 զինվոր): Ոստանիկ ասպարակիրները հսկում էին արքունի կալվածքներն ու ունեցվածքը երկրի ողջ տարածքում: Պատերազմի ժամանակ Ոստանիկ զորքը ղեկավարում էր Հայր Մարդպետը: Այսպի-սով, 90.000-ոց կանոնավոր, մշտական բանակից բացի, Պապն ուներ նաև 40.000-ոց հրաշալի կազմակերպված, Հայկյան մեծատոհմիկներից սերված ասպարակիրների գունդ, որին, ուշադրություն դարձնենք, արքան հարկ չէր համարել ուղարկելու Գանձակ: Պապը վստահ էր 90.000-ոց իր բանակի վրա: Նախկին բարձրության վրա էր Մաղխազական Հայոց Գունդը, որ կրկին դարձել էր հայոց թշնամիների նախանձի, սարսափի ու հիացմունքի առարկան: Ավելորդ է ասել, թե հսկայական, գերմարդկային ինչ ջանքեր էին պահանջվել Պապից՝ հազիվ երկու տարվա ընթացքում, հայոց պետությունը ռազմական նման զորությամբ պատսպարելու համար: 130.000-ոց կանոնավոր, մշտական բանակ. սա Արշակունյաց

---

[256] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.:

[257] Նույն տեղում, Ե.: Այս տվյալներն հիմնականում ընդունելի են համարվում ուսումնասիրողների կողմից:

հարստության ամենափառավոր՝ Խոսրով Մեծի և Արշակ Բ ժամանակներին հարիր մարտական ուժն էր՝ հազիվ 20-ամյա Պապի հանճարի ծնունդը:

Մանրամասն նկարագրելով հայոց պետությունից պոկված՝ Հայկական Լեռնաշխարհի յուրաքանչյուր հատվածի վերատիրման գործընթացը, Բուզանդն ամենայն լրջությամբ փորձում է համոզել, թե հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն էր այս ամենի հեղինակն ու իրագործողը: Մուշեղն ամենուր է. նա գրավում է Փայտակարանը, անցնում Ծոփք, գրոհում Կորդուքի վրա, մտնում Վիրք՝ և այսպես շարունակ: Հազարամյակների պատմություն ունեցող հայոց բանակը, որ Պապի օրոք չէր զիջում Արշակունյաց հարստության և ոչ մի արքայի զինված ուժերին, պարզվում է՝ զուրկ էր այլ զորավարներից: Միայն Մուշեղն էր Պապի հույսը: Որքան էլ, որ այսօր զավեշտալի թվա Բուզանդի այս կողմնապահությունը, արժե անդրադառնալ այս թեմային, քանզի կղերական պատմիչի տողերն իրենց աներևակայելի ազդեցությունն են թողել համեմատաբար անաչառ նույնիսկ այնպիսի պատմաբանի վրա՝ ինչպիսին է Լեոն: Լսենք մեծ երախտավորին. *«Այդպիսի մի մարդ իրավունք ուներ Արտաշեսի և Տիգրան Մեծի շարքում դնել իրեն, բայց մնաց մի համեստ սպարապետ, իր անձը դրեց իր թագավորի, իր աշխարհի շինության, իր եկեղեցու, իր եղբայրների և քույրերի ապահովության վրա»*[258]:

Հատկանշական է, որ Բուզանդին Մամիկոնյանների տոհմային պատմիչ համարող Լեոն, որն իրոք հետաքրքիր, մինչ այդ եղած կարծրատիպերի մեջ չտեղավորվող կռահումներ և եզրահանգումներ է անում վերլուծություններում, այնուամենայնիվ, չի կարողացել ամբողջովին ձերբազատվել կղերական մատենագրության միակողմանի վկայությունների ազդեցությունից: Այն, որ Մուշեղը չէր հայոց սպարապետը՝ դա փաստ է: Սակայն, մինչև Պապի ստեղծած պաշտպանա-

[258] Լեո, Երկեր, հտ. Ա., էջ 481:

կան համակարգի ամբողջական նկարագրին անդրադառնալը, կարդանք, այնուամենայնիվ, «քաջ և քրիստոսասեր սպարապետին» նվիրված ձոնը, որ Լեոյին չէ միայն դյութել.

«Հայոց քաջ զորավարն ու սպարապետը իր ողջ կյանքում լի էր նախանձախնդրությամբ. նա հավատարմությամբ և արդար աշխատանքով, միշտ ջանասիրությամբ աշխատում էր Հայոց աշխարհի և թագավորության համար: Գիշեր ու ցերեկ նա աշխատանքի մեջ էր. նա ճիգ էր թափում, պատերազմներ էր մղում, թույլ չէր տալիս, որ թեկուզ մի կորու չափ հող Հայոց աշխարհի սահմաններից խլվի: Մուշեղ սպարապետն իր կյանքը դրել էր աշխարհի, քաջության անվան, իր բնիկ տերերի, աշխարհի բնակիչների համար, քրիստոնեական հավատքի, աստծուն հավատացող և Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի համար, եկեղեցիների, նրանց նվիրված սպասների, Քրիստոսի վկայարանների, աստծու ուխտի համար, քույրերի և եղբայրների, մերձավոր տոհմակիցների, մտերիմ բարեկամների համար: Նա կյանքը դրել էր աշխարհի համար, իր կյանքին չէր խնայում, իր կյանքի բոլոր օրերում նա աշխատում էր իր բնիկ Արշակունի տերերի համար»[259]:

Դեռ կհամոզվենք, որ «փոքր-ինչ» չափազանցված են Արշակունի բնիկ տերերի և հայոց թագավորության համար զորավար Մուշեղի մեռնելու պատրաստակամության մասին հոգեցունց տողերը: Այնուամենայնիվ, այս ներբողը նույնիսկ կարողացել է որոշ ուսումնասիրողների մոտ ծնել այն միտքը, թե դրա տողատակերում ամփոփված է դասական հայ զինվորի պատվո վարքականոնը:

Մանրամասն տեղեկություններ չեն հասել Պապի ստեղծած հայոց պաշտպանական համակարգի կառուցվածքի մասին, սակայն, եղած փոքրաթիվ վկայությունների համադրումը թույլ է տալիս ենթադրել, որ այն չպետք է, որ շատ տարբերվեր Արշակի ստեղծածից: Անշեղորեն գործում էր

[259] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ի.:

զորավարական չորս ուղղությունների սկզբունքը: Հայոց բանակը բաժանված էր չորս մասի, որոնցից յուրաքանչյուրը գործում էր կոնկրետ ուղղությամբ: Արևելյան զորքերը վստահված էին Գնել Անձևացուն: Սկզբնապես դրանք Մուշեղ Մամիկոնյանի տրամադրության տակ էին: Մուշեղը հսկում էր Ատրպատականի սահմանը՝ հայոց հարավ-արևելյան մի կարևոր հատված: Հայտնի դեպքերից հետո, երբ Մուշեղն անցավ Տարոն, Ատրպատականի սահմանին թողնելով Դղակ անունով մարդպետին, Պապը վերջինիս տրամադրեց Ոստանիկ ասպարակիրների մեկ գունդ՝ 10.000 զինվոր:

Մնացած զորքն արդեն գործում էր զուտ արևելյան ուղղությամբ: Հարավային զորքերը, ենթադրելի է, պետք է, որ վստահված լինեին Ռշտունիներին, որոնք ավանդաբար վարելով այս ուղղության հրամանատարությունը, միաժամանակ, Զորանամակի մեզ հասած ցուցակում, ընդգրկված են Մեծ Հայքի «Հարավային դռան» զորախմբի մեջ:

Արևմտյան ուղղության զորքի հրամանատարն էր Մուշեղ Մամիկոնյանը, որի հետագա ողջ գործունությունը սերտորեն առնչվում է այս ուղղությամբ տեղակայված բյուզանդական կայազորների հետ: Հյուսիսային ուղղությունը վարում էր Սպանդարատ Կամսարականը, որի տոհմը Զորանամակում այս ուղղության խմբում երկրորդ տեղում էր՝ Գուգարաց բդեշխից հետո: Վրացական արշավանքն ու Գուգարաց բդեշխի պատիժն իրականացվեց նրա հրամանատարությամբ:

Խորենացու և Թովմա Արծրունու վկայությունները հիմք են տալիս պնդելու, որ բոլոր չորս ուղղությունների գլխավոր հրամանատարն էր սպարապետ Սմբատ Բագրատունին:

Բյուզանդական զորքի տեղակայումը Հայքի արևմտյան սահմանային ամրոցներում միակ թույլ կետն էր, որ ուներ Պապի ստեղծած ռազմական հզոր համակարգը: Սակայն, հասկանալի պատճառներով, ռազմական ճանապարհով լուծել այս խնդիրը նա չէր կարող: Ժամանակ էր հարկավոր, տքնա-

ջան աշխատանք՝ բյուզանդական ներկայությունից Հայոց աշխարհն ազատելու քաղաքական նպաստավոր պայմաններ ստեղծելու համար: Դա լինելու էր Պապի քաղաքականության առանցքային ուղղություններից մեկը: Նախկինի պես գործում էր չորս կուսակալությունների՝ բդեշխների համակարգը: Պատժելով Արշակին դավաճանած բդեշխներին՝ Պապը Գուգարքում, Փայտակարանում, Աղձնիքում և Ծոփքում նշանակեց նոր՝ իրեն հավատարիմ մարդկանց: Ընդ որում, նա վերջ դրեց բդեշխների՝ ժառանգաբար կուսակալությունը շարունակելու կարգին: Հայոց սահմանները ժառանգաբար վերահսկող բդեշխները վերածվել էին տեղական արքայիկների և ցանկացած պահի կարող էին վճռել երկրի բախտը: Պապն այս պաշտոնը դարձրեց նշանակովի: Հենց այս են վկայում Բուզանդի անընդհատ հիշեցումներն այն մասին, թե ինչպես, դավաճանած կուսակալներին պատժելուց հետո, Պապը տեղերում թողնում էր «վերակացուս եւ ոստիկանս»[260]: Սա եզակի երևույթ է՝ այդ շրջանի հայոց ներքաղաքական կյանքում. ավատատիրական կարգերի բուռն ծաղկման շրջանում, արքան հաստատուն կերպով երկրի բոլոր ծայրագավառները դարձնում էր բացառապես պետական սեփականություն: Այս հանգամանքն, անկասկած, Հայոց աշխարհի վրա պետական ուժեղ հսկողության երաշխիքներ էր տալիս:

Մեծ Հայքի թագավորության տարածքային ամբողջականությունը վերականգնելուց հետո Պապին և իր զինակիցներին հաջողվեց ստեղծել ռազմական հզոր, կենտրոնացված մի համակարգ, որը հնարավորություն էր տալիս պետական հովանու տակ առնել հայրենի հողի յուրաքանչյուր հատվածը: Այս ուժն էր ահա այն հիմքը, որը վստահություն էր ներշնչում Պապին՝ առանց վախենալու արտաքին միջամտությունից, զարկ տալ պետական շինարարությանը, ուժեղ, կենտրոնա-

[260] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ը.-ԺԹ.:

ձիգ համակարգի ստեղծմանն ու վարչական և տնտեսական փոփոխություններին: Արքան այստեղ անելիքներ շատ ուներ...

ԺԱ

Պապը ... ցույց էր տալիս անընչասեր բարք և ապրում էր առատաբար:

Ամենագարշելի ախտերի և զարհուրելի մեղքերի մեջ մեղադրված արքային այսպես է բնութագրել Պատմահայրը[261]: Ընդհամենը մեկ տող՝ հայ մատենագրության մեջ առկա պախարակումների և ամբաստանությունների օվկիանում: Սակայն այդ տողը ցույց է տալիս Խորենացու իրական վերաբերմունքը Պապի հանդեպ՝ հակառակ ժամանակի հարկադրանքով գրված կամ հետագա խմբագիրների կողմից ավելացված մեղադրականներին:

Պետության ներքին կյանքի կարգավորումը երիտասարդ արքան սկսեց նախարարական տներից և գործակալություններից՝ այնպես, ինչպես իր հայրը: Արժանին մատուցվեց բոլոր նրանց, ովքեր դույզն ինչ մասնակցել էին Պապի սկսած շարժմանը: Այսպես, Սպանդարատը, որ Կամսարականների տոհմի կոտորածից փրկված միակ շառավիղն էր, ետ ստացավ իր տոհմի նախկին կալվածքներ Շիրակն ու Արշարունիքը: Ընդ որում, Խորենացին շեշտում է, որ Պապն այդ կալվածքները նրան վերադարձրեց ոչ թե նրա համար, որ «*իր հայր Արշակը ազահությունից խլել էր անիրավաբար»,* այլ զուտ՝ Սպանդարատի մատուցած ծառայությունների համար, իբրև պարգև[262]: Սպանդարատն ստացավ այն ամենը, ինչ իր

---

[261] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԷԸ.:

[262] Ըստ Պատմահոր վկայության, հետագայում, Արշակ Գ մահից հետո, Արևմտյան Հայաստանի հայ նախարարների առաջնորդն էր Սպանդարատի որդի Գազավոնը, որին կայսրը տվել էր ստրատելատի պաշտոնը: Ըստ երևույթին, դա խոսում է բյուզանդացիների կողմից «Առաջին հայոց» իշխանի տիտղոսը Կամսարականներին վերադարձնելու մասին (տես՝ Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԽԶ.):

տոհմը կորցրել էր Ներսեհ Կամսարականի ստոր հանցանքի պատճառով: Պապը Կամսարականներին չվերադարձրեց մեկ բան միայն՝ Առաջին հայոց իշխանի տիտղոսը: Արշակն այն շնորհել էր Խոռխոռունիներին: Արքան չփոխեց հոր որոշումը:

Առատորեն պարգևատրվեց Սմբատ Բագրատունին: Ամենածանր պահին երկիրը չլքած և հայոց թագուհուն պայքարում մենակ չթողած քաջ ասպետին արքան ոչ միայն վստահեց հայոց բանակի հրամանատարությունը, այլև իբրև տոհմական ժառանգություն, Բագրատունյաց զարմերին նվիրեց արքունի Ոստանի Կոգովիտ գավառը՝ Դարույնք նշանավոր բերդով, ուր ամբարված պետական գանձարանն անվնաս հասել էր Պապին՝ նաև Սմբատի շնորհիվ: Անդրադառնալով, որ Դարոյնքն արդեն Բագրատունիների կալվածքն էր ու տոհմական հանգստարանը, Ադոնցը տարակուսել է, թե ե՞րբ է Արշակունյաց Ոստանն անցել նրանց ձեռքը: Ըստ իս, հենց Պապն է Բագրատունիներին նվիրել Կոգովիտ գավառը[263]:

Ի տարբերություն Արշակի, ով գահակալման սկզբում հարկադրված էր սիրաշահել հայ նախարարներին՝ անգամ նրանց, որոնք լքել էին իր Տիրան հորը՝ Պապն ամենայն խստությամբ պատժում էր թույլ տրված ցանկացած զանցանք: Մամիկոնյան Մուշեղն առայժմ միակ իշխանն էր, որ չնայած արքայի անվստահությանն ու երկրով մեկ շրջող լուրերին, մնում էր անպատիժ և դեռ ավելին՝ հաջողեցրել էր ստանալ Տայքի և Տարոնի տոհմերի ընդհանուր գահերեցությունը: Դրա համար նա պարտական էր, իհարկե, Ներսեսին և իր բացահայտ հովանավոր Տերենտիոսին: Սակայն, Պապը հարկադրված լինելով առժամանակ հանգիստ թողնել նրան, այնուամենայնիվ, արևմտյան զորքի զորավարին պահում էր լարված սպասման մեջ՝ ստիպելով նրան, կատարելու իր կամքը:

Ամենանշանավոր այրն հայոց արքունիքում, որ ստացավ իր պատիժը, Հայր Մարդպետն էր, ով Արտագերսի վերջին

[263] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 340-341:

օրերին, Տիկին Փառանձեմի ամենածանր կացության ժամանակ, Շապուհի ցուցումով մտավ ամրոց և անվայել կեցվածքով ու սպառնալիքներով՝ հուսահատության դուռը հասցրեց առանց այն էլ հիվանդ ու միայնակ մնացած թագուհուն: Նա էր, որ դուրս գալով ամրոցից՝ արտագերսցիների օրհասական վիճակի մասին լուրը տարավ Շապուհին: Մինչ Պապը զբաղված էր երկիրը վերամիավորելու գործով՝ Հայր Մարդպետն անպատիժ ապրում էր Դվինում, շրջում արքունի կալվածքներում՝ համարելով, որ արքան տեղյակ չէ իր արարքից:

Տարոնի Ողական ամրոցում էր Մուշեղը, երբ հասավ արքայի հրամանը. ձերբակալել և չարաչար մահով սպանել թագուհուն վիրավորած և Արտագերսը թշնամուն մատնած դավաճանին: Եվ Մուշեղը, որ օր-օրի սպասում էր Պապի հետ ստեղծված լարված հարաբերությունների հանգուցալուծմանը՝ թեթևացած շունչ քաշեց. արքան փորձում է իրեն և միաժամանակ հասկացնում, որ ոչինչ չի մոռացել, և յուրաքանչյուր ոք՝ վաղ թե ուշ, ստանալու է արժանին: Հայր Մարդպետը Տարոնում էր, ստուգայցի էր ելել արքունի՝ այս կողմերի կալվածքներում, երբ Ողականից եկած սուրհանդակը բերեց Մամիկոնյան նահապետի հրավերը. Մուշեղը ցանկանում էր մեծարել ամենազոր գործակալին:

Առաջարկից շոյված Հայրն ամենայն շուքով մտավ Ողական: Ամրոցի դռները հազիվ էին փակվել, երբ Մամիկոնյան զինվորները՝ հարձակվելով դավաճանի վրա, կոպտորեն քարշ տվեցին Մուշեղի մոտ: Արքան պահանջել էր չարաչար մահ, իսկ Մամիկոնյաններին անծանոթ չէր սպանելու արվեստը: Մերկացրեցին Հայր Մարդպետին, ձեռքերը կապեցին ծնկներից ներքև և տարան Եփրատ: Ձմեռ էր, և թշվառականը գիշերն անցկացրեց Եփրատի սառույցի վրա: Առավոտյան Հայր Մարդպետին գտան սառած. գլխուղեղը՝ սառնամանիքի պատճառով քթից դուրս էր թափվել: Նրա փոխարեն, Պապը Մարդպետական գործակալությունը հանձնեց Դգղակին՝ ով

Արշակի օրոք, Ներսեսի դավով սպանված Հայր Մարդպետից հետո, վարել էր նույն պաշտոնը[264]:

Մուշեղն հիմա առավել հանգիստ էր զգում իրեն: Վտանգը կարծես հեռացել էր: Արքայի հրամանը կատարված էր ճշգրտությամբ: Պապն, ըստ երևույթին, կսկսի վստահել իրեն: Սակայն, տեղի ունեցավ մի իրադարձություն, որին Մուշեղն ամենաքիչն էր սպասում: Ինչպես հիշում ենք, Ատրպատականի սահմանից Մուշեղին ետ կանչելուց հետո, Պապն այստեղ թողեց Դղակ մարդպետին՝ Ոստանիկ մեկ գնդով հսկելու Ատրպատականի արքունի կալվածքները: Մինչև Գնել Անձևացու՝ արևելյան զորքերի հրամանատար նշանակվելը, Դղակն առնչվում էր Մուշեղի հետ: Մուշեղը մեղադրվում էր պարսիկների հետ թաքուն բանակցություններ վարելու մեջ, իսկ այդ գործում՝ օգնական պետք է ունենար: Դղակը լավագույն թեկնածուն էր. ենթարկվելով Շապուհի կամակատար նախկին Հայր Մարդպետին և երկար տարիներ ծառայելով Ատրպատականի արքունի կալվածքներում՝ նա բնականաբար, կապեր ուներ Տիզբոնում: Մուշեղը ետ կանչվեց, սակայն Ատրպատականում թողեց իր վստահելի մարդուն՝ Դղակին: Եվ ահա, Հայր Մարդպետին պատժելուց շատ չանցած, Ատրպատականի սահմանից արքունիք է հասնում անսպասելի լուրը. Դղակը բանակցությունների մեջ է Շապուհի հետ: Ո՞րն էր բանակցությունների նյութը՝ դժվար է ասել: Բուզանդը ներկայացնում է, իբր մարդպետը՝ մեծ գանձի դիմաց, խոստացել էր Շապուհի ձեռքը մատնել Պապին, Տերենտիոսին և Մուշեղին: Իհարկե, Տերենտիոսի և Մուշեղի անուններն այստեղ գործածվել են մի շարժառիթով՝ կոծկել բանակցություններին Մուշեղի մասնակցության փաստը: Սակայն, կասկածելի է նաև այն, թե Դղակը ցանկացել է Պապին մատնել Շապուհի ձեռքը: Կարծում եմ, մարդպետը, մի կողմից շարունակում էր Մուշեղի սկսած բանակցությունները, մյուս

[264] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Գ.:

կողմից՝ ապահովում իրեն Հայոց աշխարհը պարսկական ազդեցության տակ գցելու դեպքում: Այդ սակարկությունների մասին լուրը արքային ուղարկեց Գնել Անձևացին: Բուզանդի բնագիրը սխալ է թարգմանված. «Բայց այլ մեծամեծ նախարարք, որ էին առ նմա, գաղտ ազդ առնէին թագաւորին Պապայ, Գնէլն՝ տէր գաւառին անձևացեաց, և այլք, որ էին անդ մնացեալ» հատվածը՝ Ստ. Մալխասյանցը թարգմանել է հետևյալ կերպ. «Բայց մյուս մեծամեծ նախարարները, որ նրա մոտ էին, Գնելը և Անձևացյաց գավառի տերը և ուրիշները, որ մնացել էին այնտեղ՝ գաղտնապես (այս դավը) իմաց էին տալիս Պապ թագավորին»: Տպավորություն է ստեղծվում, թե Գնելն ու Անձևացյաց գավառի տերը տարբեր անձնավորություններ են: Ճիշտ թարգմանությունն այս է. «Բայց նրա մոտ եղած մյուս մեծամեծ նախարարները՝ Անձևացյաց գավառի տեր Գնելն ու այնտեղ մնացած այլոք, գաղտնի լուր ուղարկեցին Պապ թագավորին»:

Եվ ահա, արքան հրամայում է Դղակին արքունի կալվածքների հսկողությունը հանձնել արևելյան բանակի զորապետ Գնելին, և շտապ ներկայանալ արքունիք՝ հայ-պարսկական առաջիկա բանակցությունների շուրջ խորհրդակցելու նպատակով: Դղակը ներկայանում է արքային: Ընթրիքի ժամանակ Պապն՝ անձամբ համոզվելով մարդպետի պարսկական անթաքույց տրամադրվածության մեջ, կայացնում է իր վճիռը: Դղակին սպանում են արքունի հանդերձատանը՝ կրկին արքայի մոտ շտապելու ճանապարհին: Լուրը կայծակի պես տարածվեց ողջ երկրով. Ատրպատականի մարդպետի գլուխը՝ նիզակին ցցված, կանգնեցված է արքունի հրապարակում՝ ի տես ամենքի[265]: Սա չարագույժ մի նախազգուշացում էր բոլոր նրանց, ովքեր երբևէ կհամարձակվեին արքայի թիկունքում շփվել օտար տիրակալների հետ:

---

[265] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Զ.:

Նա՝ ում ուղղված էր այս ակնարկը, վերջնականապես հրաժարվեց երկու օտար տերերի միջև ծանրութեթև անելու մտքից և ընտրեց հռոմեական կուսակցությունը՝ դառնալով նրա ամենահեղինակավոր և ազդեցիկ պարագլուխը:

ԺԲ
ԴԻՎԱՀԱՐԸ

Եւ այսպէս, դիւոք վարեալ, որք ի նման էին բնակեալ զամենայն աւուրս կենաց իւրոց:

«Իսկ Պապ թագավորը, երբ դեռ նոր ծնված երեխա էր, նրա անօրեն Փառանձեմ մայրը նրան դևերին նվիրեց, ուստի և նա տղայությունից ի վեր լի էր դևերով: Որովհետև նա միշտ դևերի կամքն էր կատարում, ուստի և չէր կամենում բժշկվել, այլ միշտ իր անձը վարժեցնում էր դևերով, և դևերը կախարդությամբ երևում էին նրա վրա, և ամեն մարդ բաց աչքով տեսնում էր նրա վրա դևերին: Որովհետև, երբ մարդիկ ամեն օր գալիս էին թագավորին բարի լույս ողջունելու՝ տեսնում էին, որ դևերն օձերի կերպարանքով դուրս էին գալիս Պապ թագավորի ծոցից և փաթաթվում նրա ուսերին: Բոլոր տեսնողները վախենում էին մոտ գնալ, իսկ նա այդ մարդկանց պատասխանում էր և ասում, թե «Մի վախենաք, սրանք իմն են»...

Նրա մեջ բույն էին դրել մեծ քանակությամբ դևեր ու միշտ երևում էին այն մարդկանց, որոնք գալիս էին թագավորին տեսնելու. բայց երբ Ներսես հայրապետը կամ Խաղ սուրբ եպիսկոպոսը մտնում էին թագավորի մոտ, դևերը չիք էին դառնում, աներևութանում էին...»[266]:

Արտավազդ արքայի անձի շուրջ հյուսված լեգենդներն հիշեցնող այս խոսքերը, որ Բուզանդն ամենայն լրջությամբ հրամցնում է մեզ՝ ատելավառ կղերականի բորբոքված ուղեղի

[266] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԲ.:

արգասիքը չէին միայն: Այս խոսքերի տակ Պապի աշխարհայացքի, կրոնական պատկանելության մասին ակնարկ կա թաքնված: Բուզանդն օդից չի վերցրել դևերի հետ շփվելու և նրանց նվիրված լինելու Պապին ուղղված մեղադրանքները: Կախարդանքների և մոգության մեծ գիտակի համարում ուներ Պապը նաև հարևան երկրներում: Ի՞նչն էր այս ամենի պատճառը, ո՞րն էր այն հիմքը, որին հենվելով, երիտասարդ արքային մեղադրում էին իր ժամանակի համար ծանրագույն՝ մահվան դատապարտելի մեղքերի մեջ: Մանանդյանն, օրինակ, դա բացատրում է հեթանոսների հանդեպ նրա հանդուրժողականությամբ[267]: Դա, իհարկե, այդպես է, միայն, ավելացնեմ, որ Պապն ինքը՝ քրիստոնյա չէր:

Ինչպես գիտենք, դևեր ասելով, քրիստոնյա քարոզիչն ու մատենագիրն ի նկատի է ունեցել դիցերին և քրմերին: Պապի հասցեին ուղղված ակնարկն առավել պարզ է դառնում, երբ Բուզանդը շեշտում է, թե «անօրեն» Փառանձեմն էր նրան նվիրել դևերին: Սյունյաց Անդովկի դուստրը, որ դաստիարակված ու կրթված էր նախնյաց հավատքով ու բարքերով, որդուն էլ մեծացրեց նույն ոգով: Այո, Պապը հայոց հավատքի հետևորդն էր, և Բուզանդի խոսքերից դատելով՝ հենց քրմերից էր ստացել իր հոգևոր սնունդը: Ուշագրավ մի շարք տեղեկություններ, որոնց դեռ անդրադարձ կարվի, ցույց են տալիս, որ նա սոսկ համակրողը չէր նախնյաց կրոնի, այլ կատարելապես տիրապետում էր հինավուրց շատ գաղտնիքների: Հակառակ կերպ չէր էլ կարող լինել: Արշակի և Փառանձեմի որդին՝ մեծացած հոր արքունիքում, դաստիարակված՝ մոր, պապի, Հայր Մարդպետի անմիջական հսկողության ներքո, մանկուց շրջապատված էր զուտ ազգային վարք ու բարքով ապրող մարդկանցով: Գողթան երգերն էին օրորել նրան, հայոց առասպելներն ու ավանդույթներն էին սնել նրա հոգին ու երևակայությունը: Որքան աճում էր

[267] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ., էջ 216:

Պապը, այնքան ավելի լուրջ կերպարանք էր ստանում նրա կրթությունը: Բնականոն կյանքով էր նա ապրում նաև թագադրվելուց հետո՝ շրջապատված իր դավանակիցներով: Իսկ «դներն»՝ այլաբանորեն, քրմական հետնորդներն էին, որոնք Պապից քաջալերված, սկսել էին կրկին երևալ արքունիքում:

Նոր կրոնին արքան ծանոթ էր մանկուց: Մեկ անգամ չէ, որ լսել էր սրտաճմլիկ պատմություններ «հրաշապատում» ավերումների, կոտորածների և ոչնչացումի մասին: Անձամբ էր տեսել «ամենամարդասեր այդ կրոնի» թողած հետքերը՝ արքայամերժություն, դավ, նզովք և ժանտախտ, արդյունքում՝ ամեն անգամ ոչնչից սկսող, հոգեվարող մի պետություն:

Սխալ է, սակայն, ենթադրել, թե Պապը նպատակ ուներ արմատախիլ անել քրիստոնեությունն ու եկեղեցին Հայոց աշխարհից: Ոչ, արքան միամիտ չէր, լավ էր սերտել իր նախորդների փորձը և հասկանում էր, որ առնվազն տղայություն է նման բան փորձելը: Երկիրը դեռ ուշքի չէր եկել 301թ. արյունոտ կրոնափոխությունից: Այլ էր Պապի նպատակը. հարվածել եկեղեցու տնտեսական հզորությանը, զրկել նրան երկրի վարչական և քաղաքական բոլոր լծակներից և արտոնել հայոց հավատքի ազատությունը: Միայն այդ դեպքում, երբ եկեղեցին այլևս կզրկվի խարազանող ուժից, հայ մարդը՝ առանց ահի, կվերադառնա իր էությունից բխող դավանանքին: Միայն այն դեպքում, երբ Գրիգորի տոհմը ցած կգլորվի ավատատիրական հզորության բարձունքներից՝ հայ ազնվականությունը վերջնականապես երես կթեքի նրանից: Պապը լավ էր հասկանում, թե որն է «երկնային այն սերը», որով կղերական հայրերն իրենց գավազանի շուրջ պտտեցնում էին մեծատոհմիկ իշխաններին՝ հող, կալվածքներ և անսահման հարստություն: Այս ամենը կորցնելուց հետո միայն եկեղեցին հնարավորություն կընձեռներ հայ արքաներին՝ լավագույնս լուծել կենտրոնաձիգ, ուժեղ պետություն ստեղծելու բազմիցս ձախողված ծրագիրը:

Հասունացել էր արքայի և քահանայապետի բախման պահը: Նրանց հարաբերությունները, որ հենց սկզբից էլ հիմնված էին երկուստեք սառը հաշվարկի վրա՝ օր-օրի առավել լարված տեսք էին ստանում: Ներսեսն օգտվելով արշավների պատճառով Պապի զբաղվածությունից՝ առանց որևէ խոչնդոտի կարգի էր բերում այն ամենն, ինչ չէր կարողացել ավարտին հասցնել Արշակի օրոք, այժմ, հայկական հողերի ազատագրումից հետո, կանգնած էր իր ստեղծած հզոր կայսրությունը կորցնելու վտանգի առջև: Հիմա, ամբողջովին պետության ներքին խնդիրներով զբաղված Պապն անճանաչելիորեն փոխվել էր: Ներսեսն այն ժամանակ էլ հասկանում էր, որ արտաքին սիրալիրության և հարգանքի ներքո մի մեծ ատելություն ու արհամարհանք է թաքցնում արքան իր հանդեպ: Պատերազմ էր, և երկրին հարկավոր էր բոլոր ուժերի միասնություն, Պապին անհրաժեշտ էր բյուզանդական լեգեոնների՝ առնվազն չեզոքությունը: Այդ ամենն, իհարկե, ի չիք կդառնար, եթե Պապը հենց սկզբից հակառակվեր Ներսեսին: Հիմա, պետության ռազմական ուժը վերականգնելուց և իրեն հավատարիմ զինակիցներով շրջապատելուց հետո, Պապն այլևս Ներսեսի կարիքը չուներ: Ավելին, զորեղ քահանայապետն անհագուրդ ախորժակով խանգարում էր արքունիքի առջև դրած նպատակների իրականացմանը: Սա հասկանում էր Ներսեսը և փորձում ազդել արքայի վրա: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ Պապը սկսեց բացահայտ ցույց տալ իր կրոնական համոզմունքները: Արքունիքը ստացել էր Տիրանի և Արշակի օրերի կերպարանքը: Արքան բացահայտորեն արհամարհում էր եկեղեցական կարգերն ու կղերականներին: Դվինը եռում էր հեթանոսական կենսախինդ աշխուժությամբ: Ողջ մայրաքաղաքն էր վարակվել արքայի օրինակով: Եթե սկզբնապես «դևերն» ի չիք էին դառնում՝ Ներսեսին ու Խադին տեսնելով, ապա այժմ, Պապը որոշեց բացահայտ թույլատրել նրանց ելումուտն

արքունիք: Ոստանը լցվեց քրմական հետնորդներով: Ներսեսը փորձում էր խրատել հանդուգն արքային[268]:

Հանդիմանում էր նրան, փորձում ահաբեկել վերջին դատաստանի հավիտենական պատիժներով, սպառնում ու նախատում: Պապն ամենածանր խոսքերով էր պատասխանում, թշնամաբար հակառակվում՝ «իր տունն այրողին»[269]: Բանն հասավ այնտեղ, որ Ներսեսն արգելեց արքային՝ մտնել եկեղեցի: Պատասխանն արհամարհանքն էր. Պապն առանց այդ էլ եկեղեցի չէր հաճախում: Եվ ահա, երկրի բոլոր ծայրագավառներում կայծակի պես տարածվեց արքայի հրամանը. Հայոց աշխարհում այսուհետև դավանանքի ազատություն է: Ամեն հայ կարող է ազատորեն պաշտել իր աստվածներին: Դա նշանակում էր մեկ բան. ազգային հավատքի արտոնություն: Եկեղեցին, քահանայապետն ու իր տոհմը մոլեգին կատաղության մեջ էին: Բայց արդեն շատ ուշ էր: Պապի հրամանն աներևակայելի ազդեցություն թողեց հայոց մեջ: Երկիրը ցնծում էր: Հատուկ հրամանով, արքան ի չիք դարձրեց Աշտիշատի ժողովում անցկացրած՝ Ներսեսի շատ օրենքներ: Աստվածների պաշտամունքն անցկացվում էր օրը ցերեկով՝ առանց ահի և հետապնդման սարսափի[270]:

Հայ մարդը վերադառնում էր ակունքներին: Հայոց աշխարհում մեհյաններ էին կառուցում: Ավելին, երկրում բարձրացավ հակաեկեղեցական հզոր ալիք: Սպառնալիքներով ու վարչա-տնտեսական հարկադրանքներով երկրում արմատավորված եկեղեցական կարգերն այդպես էլ չկարողացան ապահովել հայի սերն ու նվիրվածությունը: Մահվան սպառ-

---

[268] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԳ.:

[269] Ձիրավի ճակատամարտում Պապն ասում է Ներսեսին. «Դու իմ տունս քանդեցիր, ինձ վառեցիր...»: (Բուզանդ, Հայոց պատմություն, Դ.:):

[270] Ազգային հավատքի վերահաստմանն ուղղված Պապի միջոցառումները Բուզանդը կցել է Ներսեսի մահից հետո նրա տնտեսա-եկեղեցական բարեփոխումների նկարագրմանը (Հայոց պատմություն, ԼԱ.):

նալիքով արգելված նախնյաց հավատքն անթեղվեց նրա սրտում և հարմար ժամի էր սպասում՝ ցույց տալու, որ նոր կրոնը տեղ չունի այստեղ: Եվ ժամն եկել էր: «Սուրբ Ներսեսն» ու «երանելի Խաղը», որոնց տեսքից միայն անէանում էին Պապի «դևերը», հիմա իրենք էին խուսափում մարդաշատ հրապարակներից: Գրիգորի տոհմի համար դարձյալ ծանր, վտանգավոր ժամանակներ էին ստեղծվել Հայոց աշխարհում:

Այս ամենին գումարվեց Ներսեսի հանկարծակի մահը: Ըստ պատմիչների, Պապի մոտ՝ ընթրիքի ժամանակ, նա թունավորվում է: Քահանայապետի գինուն թույն խառնելով՝ արքան նրան ուղարկում է այն աշխարհ: Այսօր արդեն հիմնավոր հերքված է թունավորման վարկածը: Բուզանդի նկարագրած նշանները հանգեցնում են այն եզրակացության, որ քահանայապետը տառապել է թոքերի անբուժելի հիվանդությամբ: Ճոխ ընթրիքն ու անապակ գինու հանդեպ սերն արագացրին նրա մահը: Ներսեսը գիտեր իր ախտորոշման մասին, այդ իսկ պատճառով հրաժարվում է իրեն հրամցված հակաթույնից[271]: Անչափ հետաքրքիր է այս առումով Օրմանյանի դիտողությունը, որ եթե Ներսեսը գիտեր իր թունավորման մասին և հրաժարվեց իրեն մատուցված հակաթույնից՝ ապա նա անձնասպան է: Իսկ դա այնքան էլ չի համապատասխանում «սուրբ քահանայապետի»՝ ընդունված կերպարին: Օրմանյանն, իհարկե, անչափ հեռու է գնում վերլուծության մեջ, համարելով, որ *«բռնութիւնք եւ սպանութիւնք օտար էին Պապի բնաւորութենէն, եւ արդէն ալ վատասերած եւ կնամարդի եւ խենէշ անձերու բնական չեն այսպիսի խժդժութիւնք, եւ ինչ որ ուրիշի վրայ չէր ըրած, հայրապետի վրայ ընելու համարձակութիւն չէր ունենար»*[272]:

Ընդհանրապես, Պապի՝ Հայոց երկրի հզորությանն ուղղված հետագա բոլոր գործողությունները նա դնում է կասկածի

---

[271] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԴ.:

[272] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 110-112:

տակ՝ առաջնորդվելով Բուզանդի զազրախոսություններից ստացած տպավորություններով: Ինչևէ, Ներսեսի մահը, որը տեղի է ունեցել 373թ. հուլիսի 25-ին[273], սպանության հետևանք չէր: Դա գիտեր քահանայապետը, և գիտեին նաև իր մերձավորները: Մահվանից առաջ, ժամեր շարունակ, նա խոսում է, աղոթում, պատմում իր տեսիլքների մասին: Իրեն հակաթույն առաջարկողներին կարող էր հայտնել, որ ինքը թունավորված չէ: Բայց ոչ. լավ գիտակցելով, թե իր մահն ինչ զորեղ զենք կարող է դառնալ սեփական տոհմի ձեռքերում՝ Գրիգորի ծոռը մահվանից առաջ գթասրտաբար աստծուց ներում է հայցում իրեն սպանող արքայի մեղքերի համար: Չմոռացավ նաև հատուկ օրհնել Մուշեղին և նրա տոհմը:

Եթե դեպքերի ընդհանուր համատեքստում դիտենք այս ամենը, ապա Ներսեսի վախճանը Լեոյից դժվար թե հնարավոր լինի դիպուկ բնորոշել. *«Ներսեսը, որ սովորել էր տեսնել ամեն ինչ՝ խոնարհված իր միապետական կամքի առաջ, չկարողացավ տանել Պապի հարվածները և մեռավ»*[274]: Սակայն իսկական հարվածները Ներսեսին՝ արդեն հետմահու, դեռ առջևում էին:

Ներսեսի մարմինն ամփոփվեց Եկեղյաց գավառում՝ Թիլ ավանի տոհմական գերեզմանում[275]: Հուղարկավորությանը ներկա էր և Պապը՝ մռայլ ու մտածկոտ. արքան հասկանում

---

[273] Ըստ Օրմանյանի հաշվարկի (Ազգապատում, հտ. Ա, էջ 110-112):

[274] Լեո, Հայ Կղերական Դիվանագիտություն, էջ 35:

[275] Օրմանյանը կարծում է, որ Ներսեսի մարմինը Թիլ ավանում ամփոփելու գլխավոր պատճառն այն է, որ այնտեղ էր հանգչում նաև նրա վաղամեռիկ կինը՝ Մամիկոնյան իշխանուհի Սանդուխտը: Նրա մահից հետո, թողնելով դեռևս մանուկ Սահակին իր մորական պապի տոհմի խնամքին Տարոնի Մամիկոնյան տանը, Ներսեսն անցել էր Կեսարիա կրթություն ստանալու: Միայն այնտեղից վերադառնալուց և Արշակ արքայի սենեկապետի պաշտոնում հաստատվելուց հետո է, որ Ներսեսն սկսում է զբաղվել իր որդու խնամքով՝ նրան ուղարկելով Բյուզանդիա կրթություն ստանալու (Ազգապատում, հտ. Ա., էջ 111):

էր, որ այս մահը եկեղեցին վերագրելու է իրեն՝ հատկապես հիմա, երբ ինքը դեռ նոր էր սկսում կղերական հաստատություններն առողջացնելու իր ծրագիրը: Պապը չէր սխալվում:

Գրիգորի տոհմական դամբարանը Թորդանում էր, և բացի նրա Արիստակես որդուց, բոլոր քահանայապետերն այնտեղ էին թաղված:

ԺԲ

Իսկ այնտեղ - կիսամեռ ընկած, ժամերի հյուրընկալ բակում,
Կիները՝ շների նման, ցկնում են ամեն իրիկուն:
Ցկնում են ժամերից նայող գթառատ աստծու համար
Քոստ հիսուսներ հայու՝ հիսուսներ հիվանդ, հիմար...

Իսկ ժամերի հյուրընկալ բակում անհիշելի ժամանակներից էին բազմանում պորտաբուծությունն ու ախտավոր ձրիակերությունը՝ դեռ Պապից էլ առաջ: Ներսեսն իրավամբ համարվում է հայրն ու բարեկարգողն ամեն տեսակ վանական ապաստարանների ու բարեգործական հիմնարկների: Նրա մահվանից անմիջապես հետո Պապն անցավ այդ հաստատությունների վերացման գործին: Արժե անդրադառնալ դրանցից յուրաքանչյուրին՝ մանրամասնորեն:

Նախ և առաջ, արքայի հրամանով փակվում են Ներսեսի հիմնած օտարանոցներն ու հիվանդանոցները[276]: Այստեղ, աշխարհի բոլոր ծայրերից հավաքված մուրացիկների, նեղվածների և թափառաշրջիկների մի իսկական դրախտ էր ձևավորվել: Քահանայապետի հրամանով Հայոց աշխարհում յուրաքանչյուր ոք պարտավոր էր ապահովել այս հիմնարկություններն ուտեստով: Յուրաքանչյուր շեն և գյուղ ուներ իր օտարանոց-հիվանդանոցը, ուր նշանակված էին նույնիսկ վերակացու վանականներ: Եվ արքայական հրովարտակով

[276] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԱ.:

բոլոր այս թշվառներն ու թափառաշրջիկները բռնեցին հետ-դարձի ճամփան՝ այնտեղ, որտեղից եկել էին Հայոց երկիր:

Այնուհետև, արքան անցնում է անկելանոցներին և ուրկանոցներին: Բորոտների, պորտաբույծ մուրացիկների, աշխատանքից խուսափող ձրիակերների այս կացարաններն իսկական չարիք էին դարձել հայոց գավառների համար: Բոլորն էին պարտավոր ուտեստով ու դարմաններով ապահովել սրանց գոյությունը: Ձրիակերություն և ծուլություն՝ ահա թե ինչն էր ծաղկում այդ որջերում: Ներսեսը նույնիսկ հավատարիմ եկեղեցականների էր նշանակել այդ հիմնարկությունների վրա. «աստծու երկյուղով ապրող» պորտաբույծների մի ամբողջ դասակարգ՝ շինականի հացը ձրիաբար ուտելու և իրենց վստահված մուրացիկների, հանցագործների, թափառաշրջիկների և բորոտների հետ միասին՝ Քրիստոսի գալստյանն ու հավիտենական դատաստանին սպասելու համար: Իսկ այն չուշացավ. միայն թե, այս անգամ, երկնային հրեշտակներն ունեին արքունի զինվորների կերպարանք: Բոլոր առողջ և աշխատունակ տղամարդկանց քշեցին պետական աշխատանքների և զինվորական պարտադիր ծառայության: Այլևս արգելված էր հացի և դարմանների միջոցով հարկ գանձել ժողովրդից:

Յուրաքանչյուր գավառ և ավան ուներ իր կուսանոցները: Բուզանդի խոսքերով, այստեղ էին հավաքված տվյալ գավառի հավատացյալ կույսերը՝ «աղոթքներով և պահեցողությամբ» զբաղվելու համար: Սակայն, այնքան էլ կամավոր չէր այն սկզբունքը, որով այստեղ էին ժողովում կույսերին: Պարզվում է, Ներսեսի հրամանով, պարսպապատվել էին բոլոր կուսանոցներն անխտիր՝ առևանգումներից ապահով լինելու պատրվակով: Ուրեմն, լինում էին և առևանգումներ, փախուստի դեպքեր: Իր ագահությամբ և հարկային անողոք քաղաքականությամբ բոլոր դարերում աչքի ընկած հայ կղերը, չի բացառվում, որ ծանր պարտքերի տակ կքած ընտանիքներից՝

չմարած տուրքերի տեղ խլում էր կույս աղջիկներ, միաժամանակ, չվերացնելով հարկն ու տուրքը: Այո, կուսանոցներում փակվածների ծախսը և ուտեստը պարտավոր էին հոգալ նրանց ընտանիքներն ու գավառի իշխանները: Կուսանոցների հարևանությամբ գործում էին նաև այրիների, այսպես կոչված, ապաստաններ: Պապը փակել տվեց այդ ամենը՝ կույսերին ուղարկելով հայրական օջախներ, իսկ այրիներին՝ արտոնելով ամուսնության իրավունք: Այս փաստն է ահա, որ Բուզանդն անվանում է «պիղծ խառնակություն»[277]:

Այս ամենին զուգահեռ կրկին թույլատրվում են Աշտիշատի որոշումներով արգելված մի շարք սովորույթներ՝ մահացածների վրա լացուկոծ անելը, ամուսնալուծությունն ու այրի կամ ամուսնալուծված կնոջ հետ ամուսնանալը, և այլն: Հայաստանյայց առաքելական եկեղեցին հարված հարվածի ետևից էր ստանում: Բայց եթե այս ամենը հեղինազրկում էին նրան, «անարգում եկեղեցու և հայր եպիսկոպոսների պատիվը», ապա արքան նախատեսել էր ամենաուժգին հարվածը՝ այն, որը գալիս էր խորտակելու եկեղեցու տնտեսական հզորությունն ու սասանելու Գրիգորի տոհմի ավատական կայսրության հիմքը: Հայաստանյայց առաքելական եկեղեցին դեռ երբեք նման վտանգի առջև չէր կանգնել...

ԺԳ

Տրդատ Գ կողմից՝ Գրիգորին և իր տոհմին շռայլորեն ընծայված գավառները դեռևս բոլորը չէին, ինչ արեց «սուրբ արքան» պարթև Անակի ժառանգների համար: Հատուկ հրովարտակով եկեղեցին դասում է «ազատաց տոհմի կարգը»[278]: Իսկ դա նշանակում էր, որ եկեղեցին և նրա հովվապետները ոչ միայն ժառանգաբար կարող էին տնօրինել իրենց գույքն ու կալվածքները, այլև՝ ազատվում էին բոլոր տեսակի հար-

---

[277] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԱ.:

[278] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ծան. 49:

կերից և ստանում զինվորական ուժ պահելու իրավունք: Այսպիսով, ազատների կարգին դասված, այսինքն՝ ազնվականության շարքերը համալրած եպիսկոպոսների ու վանականների բանակը հնարավորություն ստացավ առանց պետության հանդեպ որևէ պարտավորության ուռճանալ և բազմանալ սնկի պես: Եթե իշխանական ամենազորեղ տոհմերն անգամ հստակ ամրագրված և նույնիսկ ամենամեծ պարտավորություններն ունեին պետության հանդեպ, ապա եկեղեցին ինքն էր որոշում իր բաժին պատասխանատվության չափը: Իսկ պատկերացնել եկեղեցին առանց Գրիգորի տոհմի՝ պարզապես անհնար է: Տեսնենք, թե ի՞նչ լրացուցիչ արտոնություններ ունեին նորաթուխ այս «ազատները» մինչև Պապը:

Բանն այն է, որ Տրդատի հրամանով յուրաքանչյուր ավանում և գյուղում շինականից խլվում էին հողաբաժիններ և տրվում տեղական հոգևորականությանը՝ իբրև «խոստակ», ժառանգական օգտագործման իրավունքով: Ավելի պարզ լինելու համար նշեմ, որ ավաններում յուրաքանչյուր հոգևորականի տրվում էր յոթ ծխի հողաբաժին, այսինքն, քահանան և իր կինը տիրում էին յոթ ընտանիքի համար նախատեսված հողի: Գյուղերում հոգևորականն ու իր կինը ստանում էին չորս ծխի հողաբաժին: Ինչպես նշվեց, այս հողերի վրա նրանց իշխանությունը ժառանգական էր: Սակայն, ժառանգության այս կարգը խիստ պայմանական էր, քանզի գերագույն սեփականության իրավունքն այդ կալվածքների վրա պատկանում էր եկեղեցուն, և նրա գերագույն իշխանությունը՝ ցանկացած պահի, բանադրելով մանր հոգևորականին, իրավասու էր խլելու նրան տրված հողաբաժինը[279]: Պատկերացնել միայն կարելի է, թե ինչպես յոթ կամ չորս ծխի տեր կղերի հետ միասին, այդ կալվածքներում բարգավաճում էին նրա բազմաթիվ ազգականները՝ թեև զուրկ հոգևոր կոչումից,

[279] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ծան. 49: Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԱ.: Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 341-359:

սակայն, պետական ծառայությունից ազատվածության և ապահարկության օրենքով պատսպարված: Ազատների տոհմի կարգը դասված եկեղեցին, այսպիսով, ոչ միայն տիրում էր կոնկրետ գավառների, այլև՝ յուրաքանչյուր գյուղում ուներ ամենամեծ բաժին հողը, և այդ ամենով հանդերձ՝ ենթակա չէր պետությանը: Դրան գումարած, տասնամյակների ընթացքում իրեն հնազանդեցրած մանր ու մեծ նախարարությունների մի բանակ, և ամբողջական կդառնա Հայաստանյայց եկեղեցու՝ իբրև երկրի ամենահզոր ավատատիրոջ, ընդհանուր նկարագիրը: Արդեն Պապի օրոք Գրիգորի տոհմը հասցրել էր իր տնտեսական զորությամբ գերազանցել արքունիքին:

Պետական ամեն մի մեծ նախաձեռնություն դատապարտված էր ձախողման, եթե չլինեին այդ տոհմի և իր ղեկավարած հիմնարկության համաձայնությունը: Երկրի տնտեսությունից ստացված եկամտի առյուծի բաժինն ամբարվում էր վանքերում և եպիսկոպոսների տոհմական կալվածքներում: Շինականն ու քաղաքացին պարտավոր էին ոչ միայն երկրին զինվոր տալ, հարկեր վճարել արքունիքին ու հողատեր ազնվականությանը, այլև՝ եկեղեցուն: Ընդ որում, հարկերի ծանրության չափով ոչինչ չէր կարող հավասարվել եկեղեցուն տրվածին: Ահա տնտեսական և վարչա-քաղաքական հզորություն ապահովող այն հիմքը, որ ունեին սևազգեստները: Եվ Պապն հարվածեց այդ հիմքին: Նման ցնցում Հայաստանյայց եկեղեցին երբևէ չէր տեսել: Արքայի հրամանով եկեղեցուց՝ հօգուտ պետության, խլվեց նրան տրված յոթ ծխի հողաբաժնից հինգը[280]: Այսինքն, պետականացնելով յոթից հինգը, Պապը մնացած երկու բաժին հողում թողնում է մեկ երեց և մեկ քահանա՝ յուրաքանչյուրին մեկ ծխի հող: Զրիակերների մնացած խումբը համալրեց արքունի զորքերի և հարկադիր աշխատանքի տարվածների խրոխտ կոհորտան: Այդպիսով, քահանան ու երեցը զրկվեցին նույնիսկ իրենց թողնված

[280] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, ԼԱ.:

ծխերը ժառանգաբար ազգականներին թողնելու հնարավորությունից: Դրանք այլևս նախատեսված էին միայն այդ պաշտոնը կրողների համար: Հաշվված օրերի ընթացքում, պետությանն անցավ եկեղեցական հողերի առյուծի բաժինը: Հնգապատիկ նվազեցվեց հոգևորականների թիվը, իսկ հարկային պարտավորությունը տարածվեց բոլորի վրա: Սա դեռ բավական չէր՝ եկեղեցին զրկվեց շինականից հարկ գանձելու իրավունքից: Վերացան պտղին ու տասանորդը, որ իսկական աղետ էին ողջ աշխարհի համար: Հունձքի ու բերքահավաքի օրերին վանքերից հատուկ հարկահավաքներ էին շրջում գյուղերում՝ շինականից հավաքելու իր բերք ու բարիքի մի մասը: Դա, իհարկե, կոչվում էր «կամավոր նվիրատվություն»: Հայտնի է, որ վանական եկամուտների առյուծի բաժինը կուտակվում էր այս տուրքերից: Հատկանշական է, որ եկեղեցին հատուկ չէր սահմանել դրանց չափն ու քանակը. այն ուղիղ համեմատական էր հարկատուի բարեպաշտությանն ու հարկահավաքի ճարպկությանը:[281] Եվ հիմա ցնծում էր շինականը: Արյունքրտինքով վաստակած ապրուստի մեծ մասն այլևս իրենն էր: Ավելին, արքայի հրամանով շինականն ազատվում էր մինչ այդ իր վրա բարձված բոլոր տեսակի վաշխառուական պարտքերից, որոնք կուտակվելով տարեց-տարի՝ նրան կատարյալ կախման մեջ էին դրել վանական և աշխարհիկ հողատերերից: Հայն այլևս եկեղեցուն ոչինչ չուներ տալու[282]:

Այսպես ահա. եկեղեցուն տեղափոխելով հարկային դաշտ և զրկելով նրան հարկահավաքության իրավունքից՝ Պապը մեկ ակնթարթում անիմաստ դարձրեց ազատների շարքում դասված լինելու նրա կարգավիճակը: Այժմ արդեն ոչինչ չկար, որ հիշեցներ Գրիգորի տոհմի նախկին մեծությունը: Մյուս կողմից, սրտացավորեն օգնելով կղերական

[281] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ծան. 197:

[282] Եկեղեցական արտոնությունների և դրանց դեմ հայ արքաների պայքարը մանրամասն վերլուծել է Հ. Մանանդյանը (Երկեր, հտ. Բ, Գլ. 17):

հայրերին՝ ձերբազատվելու մամոնայի խեղդող կապանքներից, Պապը նրանց հնարավորություն էր ընձեռնում՝ էլ ավելի թեթև խղճով ու վառ հույսերով պատրաստվելու աստծո հավիտենական արքայությանը: Այդպիսի հույսեր սնազգեստներն՝ առավել քան երբևէ, կարող էին տածել, մանավանդ, որ այդ արքայության ճանապարհին նրանց այսուհետ ուղեկցելու էին միայն և միայն հայազարմ եպիսկոպոսներ: Այո, շնչահեղձ լինող ճարպակալած կղերին նյութապաշտության ճահճից դուրս բերելուն զուգընթաց՝ Պապն սկսեց եկեղեցին մաքրել օտարածին տարրերից և ըստ պետական հայեցողության՝ վերաբաշխել հոգևոր պաշտոնները:

ԺԴ

Այժմ, մի փոքր հիշենք՝ դեռ Տիրան արքայի ժամանակներից մեզ ծանոթ երկու կրոնավորներին: Ասորի Դանիելի խայտառակ մահվան օրը երազում իրենց ուսուցչին տեսած աշակերտների մասին է խոսքը՝ Շաղիտայի և Եպիփանի: Սրանք համոզելով բոլորին, թե Դանիելն իրենց երևալով՝ ցանկություն է հայտնել թաղվելու Հացյաց դրախտում, հաջողեցրին այդ սրբավայրը հավիտյանս հավիտենից «սեփականաշնորհել» խեղդամահ արված ծերուկին: Դեռ պատանի էին Շաղիտան և Եպիփանը, երբ նրանց երազում հայտնվեց Դանիելը: Մինչև իրենց ուսուցչի մահը, նրանք ապրում ու ճգնում էին լեռներում, վարում անապատականի կյանք և հմտանում մեծամեծ հրաշքներ գործելու մեջ: Բուզանդը վկայում է, որ սրանք հրեշտակաբարո վարք ունեին և ճանաչված էին ողջ Հայոց աշխարհում: Ավելացնեմ, որ երկուսն էլ անգերազանցելի էին՝ հատկապես զանազան խայտաբղետ, մարգարեական երազներ տեսնելու բնագավառում: Մտերիմ ընկերներ էին ասորի Շաղիտան և հույն Եպիփանը ու արժանի հետևորդներ իրենց երբեմնի հզոր ուսուցչի: Դանիելի մահից հետո սրանք շարունակեցին ապրել ճգնավորի կյան-

քով՝ մարդկանցից հեռու, աշխարհի լավին ու վատին անտեղյակ: Կաթողիկոսական աթոռին Ներսեսի հայտնվելուց հետո, սակայն, ամեն ինչ փոխվեց: Հիմա արդեն նրանք եկեղեցական վերակացուներ էին՝ տեսուչներ, և մեծ հեղինակություն ունեին եկեղեցում: Շաղիտան բնակվում էր Եկեղյաց գավառի սահմանագլխին, Բյուրակն-Մնձուրյան լեռներից մեկի՝ Առյուծ լեռան վրա, այնտեղ ճգնում էր և պարբերաբար իջնում Եկեղիք՝ վերահսկելու գավառի հոգևոր կյանքի վայրիվերումները: Եպիփանը բնակվում ու ճգնում էր Երիզայից ոչ հեռու գտնվող Մեծ Լեռան վրա՝ աստվածների մեհյանների տեղում, «Անահտական Գահ» կոչված վայրում[283]: Ծաղկում էին ասորա-հունական բարքերն ու լեզուն Երիզայում և Եկեղիքում՝ այս երկուսի շնորհիվ, որոնց անսահման իշխանություն էր տվել Ներսեսն իր տոհմական կալվածքներում:

Եվ ահա, Ներսեսի մահվան պահին՝ օրը ցերեկով, Անահտական Գահին բազմած Եպիփանը, բաց աչքերով տեսնում է իր քահանայապետին՝ դեպի երկինք սլանալիս, բնականաբար, հրեշտակների մի պատկառելի զորագնդի ուղեկցությամբ: Զարմանալի զուգադիպությամբ՝ ինչպես և սպասվում էր, նույն պահին, միևնույն տեսիլքը երևում է ասորի Շաղիտային՝ Առյուծ լեռան վրա:

Միամիտ Եպիփանը՝ կարծելով, թե սուրբ մարդու մարմինն օրը ցերեկով հրեշտակները փախցրին երկինք, խուճապահար լքում է Անահտական Գահը և իջնում Եկեղյաց գավառ՝ տեղի ճարպակալած վանականներին իր զարհուրելի տեսքով մի քիչ էլ երկնային գործերի մասին մտորել ստիպելու համար: Այնտեղ, սակայն, վանականները բացատրում են, որ Ներսեսին չեն գողացել, այլ ինքն է իր կամքով սլացել երկինք, և Եպիփանը՝ փոքր-ինչ սփոփված, հասնում է Թիլ ավան ու շտապում դեպի հուղարկավորության վայրը: Շաղիտան, սակայն, ըստ երևույթին, նման հարցերում առա-

[283] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԵ.:

վել փորձված էր և իսկույն հասկանում է, որ ինքը տեսնում է մահացած Ներսեսին: Ուստի, առանց ավելորդ խուճապի, թողնելով Առյուծ լեռը՝ նույնպես շտապում է դեպի Թիլ և սգո թափորին հասնում Եպիփանի հետ միաժամանակ: Եվ սկսվում է ներկայացումը: Երկու սրբերը սրբազան երկյուղածությամբ սկսում են հավաքվածներին պատմել միմյանցից անկախ տեսած հրաշքի մասին՝ հուղարկավորությունը վերածելով «աստծու մարդու» փառաբանման մի արարողության[284]: Սկսվում էր Ներսեսի սրբացման և նրա կյանքը խլողների դիվացման գործընթացը:

Բավական է հիշեցնել, որ Ներսեսի անձն առանձնահատուկ համարում ունի Հայաստանյայց եկեղեցու շարքերում: Նրա հիշատակը տոնվում է Գրիգորի մյուս որդիներից և թոռներից առանձին և փառավորված է հիասքանչ շարականներով: Եվ վերջապես, եկեղեցուն մատուցած անգերագնահատելի ծառայությունների համար Ներսեսին շնորհված է «Մեծ» տիտղոսը: Այսքանից հետո, այնքան էլ դժվար չէ պատկերացնել «աստծու մարդու» դեմ դուրս եկած Արշակի և Պապի աննախանձելի համբավը՝ ստեղծված Գրիգորի տոհմի ձեռնասուն մատենագիրների ջանքերով:

Հուղարկավորությունից անմիջապես հետո ասորի Շաղիտան և հույն Եպիփանը ընդմիշտ լքեցին իրենց շնորհված վայրերը: Պապի համար Անահտական Գահն ու Առյուծ լեռն ավելի խոր իմաստ ունեին՝ ասորի Դանիելի դաստիարակած ճամարտակներին թողնելու համար: Եպիփանը՝ քաշվելով Մեծ Ծոփք, մի գեղեցիկ օր հարկադրված եղավ ընդմիշտ լքել Հայոց աշխարհը՝ հետը տանելով ևս 500 կրոնավոր-անապատականների[285]: Ասորի Շաղիտան ապաստանեց Կորդվաց լեռներում՝ շարունակելով զբաղվել «խոտաճարակությամբ»: Մի օր էլ, լուր տարածվեց, թե սուրբ մարդը խեղդվել է

[284] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԵ.:

[285] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԷ.:

Կորդուքի գետում՝ թեև ողջ կյանքում ջրերի վրայով քայլող մարդու համբավ էր վայելել[286]: Ըստ երևույթին, գետակում բնակվող չարաճճի Նհանգներն այդպես էլ չհասկացան, որ օրվա մեջ մի քանի անգամ ջրերի վրայով սահմանն անցնող և ետ վերադարձող «սուրբը» մաքսանենգ չէ, և ոչ էլ՝ լրտես:

Այս երկուսի վախճանը, որ հետևեց Ներսեսի մահվանն ու Պապի բարեփոխումներին, ընդհանուր ուրվապատկերն է եկեղեցին օտար տարրերից մաքրելու արքայի քաղաքական-ության: Կղերական մատենագրության սերմանած սուտն է, թե «դիվահար արքան» փորձում էր արմատախիլ անել քրիս-տոնեությունը: Պապը ցանկանում էր ընդհամենը պետութ-յան մեջ տեսնել զուտ իրենց դավանաբանական խնդիրներով զբաղվող կրոնական հաստատություններ, որոնք պետք է ղեկավարվեին բացառապես հայերի կողմից:

Ուշագրավ փաստ, որը գուցե հետաքրքրի իմ կարծիքի հակառակորդներին: Հայքի հարավ-արևմտյան կողմերում բազմացած միայնակյացների ու վանական տեսուչների մեծ մասը ժամանակին աշակերտել էին ասորի Դանիելին և հիմ-նականում ունեին ասորական կամ հունական ծագում: Շաղիտայի և Եպիփանի հետ միասին սրանք մաղվեցին Հայ-քից: Միակ անապատական-ճգնավորը, ում աշակերտներով հանդերձ ձեռք չտվեց Պապը՝ Սլկունի Գինդն էր Տարոնից: Սլկունյաց հինավուրց տոհմի այս շառավիղը հայտնի էր ողջ Տարոնում: Նա անապատականների և միայնակյացների տեսուչն էր, նաև վանքերի վերակացուն, և համարվում է հայ վանականության հայրը: Գինդը բնակվում էր Եփրատի ակունքների մոտ՝ Ոսկիք կոչված ժայռածերպերում:

Բուզանդը տալիս է Գինդի աշակերտների անունները. Վաչակ, Արտույտ, Մարախ, Մուշեղ, Տրդատ... Զուտ հայա-զարմ, հազարամյա սրբազան քարայրներում մտախոյանք-ներով կատարելության ձգտող, հոգին, մարմինն ու միտքը

---

[286] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԶ.:

մարզող և ենթակա վանքերում հայոց հազարամյա աստվածային իմաստությունները տարածող կրոնավորներ, որոնց վարդապետ սուրբ Գինդը մինչև կյանքի վերջը գլխավորեց հայոց անապատական-միայնակյացների եղբայրությունը[287]:

Օրմանյանը ցավ է հայտնել, որ հայ վանականության հայրը չի դասվել եկեղեցու սրբերի շարքին, անգամ հիշելի չէ անունը. *«Գինդ Սլկունին, իբր բուն հայազգի եւ իբր հայ վանականութեան նախահայր՝ արժանի էր տօնելի, գոնէ յիշատակելի ըլլալու, սակայն անոր անունը Յայսմաւուրքի իսկ անցած չէ»*[288]: Նա այս հանգամանքը համարում է արդյունք այն բանի, որ հայոց մեջ հնուց ի վեր սովորություն է՝ ազգակիցների փոխարեն օտարներին նախապատվություն տալը:

Իրավացի է երախտաշատ գիտնական-արքեպիսկոպոսը, սակայն, անտեսել է չնչին մանրուք. եկեղեցին արմատավորեց օտար ընկեցիկներին սրբացնելու և խնկարկելու սովորությունը: Աբրահամներին, հակոբներին ու մովսեսներին ազգը չէ, որ սրբացրել է: Թեոդոսն ու Կոստանդիանոսը եկեղեցու կամքով են դասվել սրբերի շարքում: Շարքը երկար կարելի է թվարկել, և ամենևին էլ հարկ չկա հայ ազգի հավաքական բնավորությանը վերագրել յուրայիններին արհամարհելու ձգտումը: Թերարժեքության բարդույթն է դա, որ Հայոց աշխարհում արմատներ ձգելու պահից սկսած՝ օտարին ծառայող եկեղեցու շնորհիվ, դարերի ընթացքում պատվաստվեց մեր սրտում[289]: Գինդը չի սրբացվել նրա համար՝ ինչ պատճառով չեն սրբացվել և Կոմիտասն ու Խրիմյան կաթողիկոսը:

---

[287] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԶ.:

[288] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 112-113:

[289] Մ. Լալայանը հարց է բարձրացնում. «Արդյո՞ք ազգային թերարժեքության բարդույթի կրողներից չէ Հայ եկեղեցին, որի մերձավոր սրբերից միայն Գրիգոր պարթևն է սրբացված հույն և հռոմեական եկեղեցիների կողմից, իսկ ինքը՝ պարտավորվել է սրբացնել նրանց բազմաթիվ երևելիների»: (Հայ եկեղեցին և մենք. «Ազգ և Դավանանք», Ե., 1996)

Ներսեսի գործակիցներից միակը Կարնեցի Խաղն է, որի ստույգ վախճանը հայտնի չէ: Թեպետ Հայսմավուրքում նրա մահվան պատճառ է համարվում Արշակը, որ հրամայել էր քարկոծելով սպանել, սակայն, համարվում է, որ Խաղը դեռ ողջ էր Պապի օրոք: Օրմանյանը ենթադրում է, որ Խաղը մեռել է Ներսեսից ոչ շատ առաջ[290]: Դա այնքան էլ անհավանական չէ: Հաշվի առնելով Ներսեսի մահվանը նախորդած հակաեկեղեցական բռնկումները, Բուզանդի ակնարկը՝ «սուրբ հայրերի» հանդեպ Պապի թշնամության մասին, ինչպես նաև, Հայսմավուրքում՝ քարկոծումը իբրև Խաղի մահվան պատճառ նշվելը, անչափ հավանական է, որ Պապն ավարտին է հասցրել այն, ինչ չէր հաջողվել Արշակին: Կարծում եմ, բացառված չէ, որ այս անգամ Ապահունյաց տոհմի խնամիները չէին հանդգնել փրկել երանելի պոռոտախոսին՝ քարերի տարափից:

Պապի ջանքերը տվեցին ցանկալի արդյունքներ. պետությունը կազդուրվում էր, բանակը համալրվում: Թեթևացել էր շինականի հոգսը: Եկեղեցին՝ զբաղված ինքնամաքրման գործընթացով, դեռ երկար ժամանակ չէր կարողանալու խառնվել պետության գործերին: Եկեղեցին մղվել էր երկրորդ պլան: Վերակենդանանում էին ազգային արժեքները, հայոց ազգային հավատն էր արթնացել շեներում ուքաղաքներում:

«Հայկական ծայրագավառները ետ խլող երիտասարդ թագավորին վայել մի մեծագործություն էր այս ներքին բարեկարգությունը, որ սակայն, սաղմնային դրության մեջ մնաց՝ շնորհիվ այն հանգամանքի, որ զրկված եկեղեցականությունը դավով պատասխանեց թագավորի գործերին»[291]: Սա Լեոյի կարծիքն է: Դիպուկ է ասված, հատկապես, եթե հիշենք Բուզանդի նետած թունախառն ակնարկը. *«Եւ զայն ոչ ածէր զմտաւ, թէ զանձն կորուսանէ»*[292]:

---

[290] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 112-113:

[291] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 483:

[292] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԱ.:

Ավելի պարզ՝ Գրիգորի տոհմը, լքված ու զրկված, գահավիժած իր բարձունքից, այժմ գործում էր ընդհատակից, համախմբած հավատարիմ իշխանների՝ հռոմեական կուսակցության պարագլուխներին: Բոլորից գաղտնի քննարկվում էին բոլոր հնարավոր տարբերակները՝ իր գահին օր-օրի ամրապնդվող «դիվահարին» կանգնեցնելու համար: Փորձվել է ներկայացնել, թե բյուզանդական կայազորների հրամանատար Տերենտիոսն, իր կողմը գրավելով Պապից դժգոհ կղերականներին և նախարարներին՝ սկսեց դավ նյութել նրա դեմ[293]: Սակայն, ամեն ինչ ճիշտ հակառակն էր: Օգտվելով բանսարկություններ թխելու և խարդավանքներ հյուսելու Տերենտիոսի վարպետությունից՝ ասպարեզից դուրս շպրտված հոգևոր հայրերն ու նրանց համախոհները խորամանկ բյուզանդացուն քաշեցին խաղի մեջ: Սա էլ հենց դարձավ գլխավոր գործիքը՝ Պապի դեմ ուղղված շարժման ձեռքերում[294]: Եվ Հայքից Բյուզանդիոն սկիզբ առավ բանսարկությունների ու մատնությունների մի շղթա՝ ուղղված Վաղեսին: Դավին անտեղյակ, երիտասարդ արքան օր-օրի ավելի ու ավելի էր զորացնում իր Հայրենիքը:

ԺԵ

«*Աստծու սրբի արյունն անմեղ տեղը թափվեց: Այսուհետև ես չեմ կարող թշնամու դեմ գնալ կամ մեկի դեմ նիզակ բանեցնել: Որովհետև գիտեմ, որ աստված մեզ ձեռքիցը թողեց: Մենք լքված ենք և չենք կարողանա գլուխներս վեր բարձրացնել: Ես գիտեմ, որ այսուհետև հաջողություն էլ չի լինելու Հայոց աշխարհի թշնամիների դեմ, որովհետև մեր հաջողությունը նրա աղոթքից էր, որ մեռավ, և նրա տոհմի*»[295]:

Մուշեղն է սա՝ Վասակի որդին, Մամիկոնյան նահապետն ու արևմտյան զորքերի հրամանատարը: Հռոմեական կուս-

---

[293] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 118:

[294] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 483:

[295] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Լ.:

ակցության բողոքի ձայնն է, որ բարձրացնում է Բուզանդը՝ Մուշեղի բերանով: Դժգոհ էին Ներսեսին կողմնակիցները և թեպետ չէին համարձակվում ընդվզել, սակայն, համառ լուրերը, թե Գրիգորի տոհմին ասպարեզից հեռացնելով՝ արքան նպատակ ունի վերացնել քրիստոնեության հետքերն ու թշնամանալ կայսեր հետ, հանգիստ չէին տալիս ոչ-ոքի: Ուշադրություն դարձնենք Մուշեղի խոսքերին. Հայոց աշխարհի հաջողությունները սևազգեստների աղոթքների հետ կապող զորավարն ակնարկում է դժգոհության բուն պատճառը՝ Գրիգորի տոհմի գահավիժումը հայոց քաղաքական երկնակամարից: Առանց Ներսեսի և տոհմի աղոթքների ոչինչ էր Մուշեղը: Եվ այս խոսքերն արտասանողը հերոս Վասակի որդին է: Առաջին անգամ այս շրջանում է, որ սկիզբ է դրվում Մամիկոնյան տոհմի նոր՝ հոգևոր այլասերման ենթարկված գործիչների փաղանգին, ձևավորված Տայքի և Տարոնի ճյուղերի գրկախառնումից: Մուշեղի խոսքերն ոչ այլ ինչ են, եթե ոչ հրաժարում ծառայությունից: Մամիկոնյան զորավարը, պատճառ բերելով «աստծու սրբի» անմեղ արյունն ու նրա տոհմի աղոթքի պակասից՝ առաջացած ահավոր գլխապտույտը, իսկ իրականում՝ դժգոհ Պապի ներքին քաղաքականությունից, հրաժարվեց զինվորական պարտավորություններից և ամփոփվելով Տարոնում՝ այդքան սիրելի տոհմին կից, սկսեց ուշի-ուշով հետևել հետագա զարգացումներին: Միաժամանակ, թույլ չտվեց դժգոհության և ոչ մի ցույց գաղափարակից իշխանների կողմից: Հռոմեական կուսակցությունը՝ արտաքուստ հարմարված Պապի նորամուծություններին, չէր լքում արքունիքը, այլ համբերատար սպասում էր Բյուզանդիա հղված նամակների պատասխաններին:

Իսկ Պապն, այդ ընթացքում, հասկանալով, որ սարսափելի հարվածից դեռ ուշքի չեկած Հայաստանյայց եկեղեցուն անգլուխ թողնելը հավասարազոր է այդ հաստատությունը ձեռքից բաց թողնելուն, առաջ է քաշում Մանազկերտցի

Շահակի թեկնածությունը՝ նույն Շահակի, որ Արշակի օրոք արդեն փոխարինել էր Ներսեսին[296]: Ասել, թե այլ թեկնածուներ չկային՝ այնքան էլ ճիշտ չի լինի: Բյուզանդիայում էր գտնվում Ներսեսի որդին՝ Սահակը, որին, սակայն, Պապը հարկ չհամարեց հոր տեղն առաջարկելու: Այդ քաղաքականությունը շարունակվեց նաև Պապից հետո: Սահակը շատ ուշ զբաղեցրեց քահանայապետական աթոռը[297]: Գրիգորի տոհմն, ըստ երևույթին, միայն Պապին չէ, որ հոգնեցրել էր:

Օգտվելով Կեսարիայի աթոռակալ Բարսեղ Մեծի՝ Գամիրքի մյուս եպիսկոպոսների հետ ծայր աստիճան լարված հարաբերություններից, Պապն արգելում է Աղբիանոսյան Շահակի ձեռնադրումը Կեսարիո մետրոպոլիտի ձեռքով: Դա, բնականաբար, առաջ բերեց աներևակայելի մի ցասում՝ Կեսարիո մետրոպոլիտի և Հայաստանում հռոմեական կայսրության խամաճիկների մոտ: Բուռն է նաև Բուզանդի ցասումը՝ Պապի ինքնագլուխ որոշման դեմ: Շահակը, որ Պատմահոր մոտ ներկայացված է մի քանի հակիրճ բառերով և ոչ բացասական կողմից, Բուզանդի բուռն հարձակումների թիրախն է դարձել. չէր համարձակվում հանդիմանել արքային, որովհետև երկչոտ էր և համակերպվող, որովհետև իր

---

[296] Ըստ Բուզանդի Ներսեսի հաջորդ կաթողիկոսը Հուսիկն է՝ Աղբիանոսյան տոհմից: Խորենացին տալիս է Սահակ անունը: Քննելով այս հակասություններն ու համեմատելով գոյություն ունեցած՝ 15-ից ավելի կաթողիկոսական ցուցակների հետ, Օրմանյանը ցույց է տվել, որ այս կաթողիկոսը նույն ինքը՝ Արշակի օրոք Ներսեսի տեղը զբաղեցրած Շահակ Մանազկերտցին է: (Ազգապատում, հտ. Ա, էջ 114):

[297] Պապի կողմից Սահակին անտեսելու պատճառն, ըստ Օրմանյանի այն է, թե 25-ամյա երիտասարդին Բյուզանդիայից բերելու համար ժամանակ կպահանջվեր, այնինչ, հանգամանքները ստիպում էին, որ նոր կաթողիկոսի հարցն արագ լուծվեր: Պապին հարկավոր չէր Գրիգորի տոհմի ժառանգական աթոռակալությունը: Աղբիանոսյան տոհմը նրա համար չարյաց փոքրագույնն էր: Սահակը քահանայապետ դարձավ միայն 387թ.: (Ազգապատում, հտ. Ա, էջ 114):

պատվին արժանացել էր միայն նրա կամքով[298]: Արդեն գիտենք, թե մոլեռանդ կղերականի համար ինչ է նշանակում կատարյալ հոգևորական՝ նա, ով գիշեր ու զօր խանգարում ու պախարակում է թագավորին՝ արժեզրկելով նրա արած ցանկացած գործը: Շահակը, որ Արշակի հետ կարողացել էր հաշտ և խաղաղ հարաբերություններ հաստատել՝ զբաղվելով միայն եկեղեցու ինքնամաքրմամբ և նրանում ազգային տարրի բարձրացմամբ, այժմ Պապի առաջարկով ձեռնադրվելով կաթողիկոս՝ նույն եռանդով ու նվիրումով շարունակեց իր գործը: Նրա ձեռնադրմամբ սկիզբ դրվեց Աղբիանոսյան տոհմի քահանայապետերի հաջորդական աթոռակալությանը: Շահակին հաջորդեցին Զավենը, Շահակն ու Ասպուրակեսը, որոնց ջանքերով հենց՝ եկեղեցի ներմուծվեցին ազգային շատ տարրեր[299]:

ԺԶ
ԿՌԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԶՈՀԸ[300]

Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան,
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...

Վերջապես Շապուհ Բ հասկացավ, որ զուր չէին երիտասարդ արքայից իր ակնկալիքները: Հռոմի վասալ՝ Պապը չդարձավ, և չէր էլ պատրաստվում դառնալու: Բոլոր այն ներքին փոփոխությունները, որ նա անցկացրեց Հայոց աշխարհում՝ Շապուհին բերում էին մի մտքի. Հռոմի դեմ առաջիկա պայքարում հայոց թագավորությունը հուսալի և

---

298 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԻԹ.:

299 Շահակին հաջորդած այս երեք քահանայապետերի հասցեին նույն հետևողականությամբ Փավստոսը շարունակել է փնովումների շարանը՝ այն դեպքում, երբ Խորենացին բացասական ոչինչ չի գրել:

300 Լեոյի բնորոշումն է, ով արևմտամոլությունը համարել է Հայաստանյայց եկեղեցու կուռք, որի ամենանշանավոր զոհը Պապն էր (Հայ Կղերական դիվանագիտություն, էջ 34):

հզոր դաշնակից կարող է լինել: Պապն, իր հերթին, շարժվելով առողջ տրամաբանությամբ և գիտակցելով, որ պետական շահը պահանջում է հզոր հարևանի հետ համագործակցություն՝ ընդդեմ արևմտյան նվաճողականության, դեմ չէր պարսից արքունիքի հետ բանակցություններ սկսելուն: Սկսվեց դեսպանական փոխայցելությունների փուլը, որը չէր կարող վրիպել հռոմեական կուսակցության աչքերից[301]: Մանանդյանը հավատ չի ընծայել Շապուհի հետ Պապի բանակցությունների մասին Բուզանդի պատմածին: Պատճառն այն է, որ Ամմիանոսի մոտ բացակայում են նման տեղեկություններ: Թեպետ, մեկ այլ տեղում, հնարավոր է համարել, որ Պապը կարող էր Շապուհի հետ լեզու գտնելու փորձեր արած լինել[302]: Այս առումով, տեղին է հիշեցնել Ամմիանոսի այն վկայությունը, որ իմանալով Պապի մահվան մասին՝ Շապուհը շատ վշտացավ[303]: Սա շատ խոսուն վկայություն է՝ երկու թագավորների միջև սկսված երկխոսության մասին: Միաժամանակ, կայսերն հղված Տերենտիանոսի նամակներում էլ, ի թիվս այլ «հանցանքների», Պապը մեղադրվում էր Շապուհի հետ բարեկամություն հաստատելու մեջ:

Նամակներն ավելի շատացան: Դրությունը վերջնական սրվեց, երբ Պապը Տերենտիոսից պահանջեց դուրս բերել իր կայազորները հայոց արևմտյան շրջաններում տեղակայված բերդերից: Դա արդեն լցրեց համբերության բաժակը: Խորամանկ բյուզանդացին ժամանակ խնդրելով էլ ավելի է շտապեցնում կայսերը՝ Պապին մեղադրելով ամենաբազմապիսի մեղքերի մեջ: Տերենտիոսին, իրենց հերթին, շտապեցնում էին Պապից դժգոհ հոգևորականներն ու ազատանին:

Եվ ահա, Վաղեսի սուրհանդակը հայոց արքային է բերում հրավերը: Պապը հրավիրվում էր Տարսոն՝ կարևոր խորհրդ-

---

301 Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, ԼԲ.:

302 Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 221:

303 Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 229:

ակցության: 300 ընտիր հեծյալ նիզակակիրների ուղեկցությամբ արքան ճանապարհ է ընկնում[304]: Տարսոնում, սակայն, Պապը հայտնվեց մի տեսակ պատվավոր գերության մեջ: Մի քանի օր շարունակ Վաղեսը լռություն է պահպանում՝ խուսափելով նրա հետ հանդիպումից: Վերջապես, Պապին ստույգ տեղեկություն է հասնում, որ Տերենտիոսի խնդրանքով կայսրը պատրաստվում է նոր թագավոր ուղարկել Հայաստան: Ամեն ինչ պարզ էր: Սեպաձև դասավորելով հեծյալ ջոկատը՝ Պապը գիշերով նետվում է կայազորի վրա և հաջողությամբ դուրս ելնում Տարսոնից: Դեռ քաղաքի մատույցներում նրան հասնելով՝ Տարսոնի գավառապետն աղաչում է ետ դառնալ, ասելով, թե Վաղեսը պատրաստ է ընդունել: Արքայի զայրացած թիկնապահներից հազիվ ազատելով գլուխը՝ գավառապետը ձեռնունայն ետ է դառնում: Վաղեսն իսկույն զորախումբ է ուղարկում Պապի ետևից, որին մեծ անախորժություն էր սպասվում: Անսպասելի ետ դարձած հայկական ջոկատը Պապի առաջնորդությամբ անակնկալ կերպով հայտնվում է հռոմեացիների առջև: Նետերի տարափը, որ հայ զինվորներն արձակում էին ապշեցուցիչ ճշգրտությամբ, վնաս չէր պատճառում ոչ մի զինվորի՝ սև ամպի պես պատելով հռոմեական զորագնդի չորս բոլորը: Դա անասելի սարսափ է առաջ բերում հռոմների շարքերում: Նման արվեստ գոռոզ հռոմեացին դեռ երբեք չէր տեսել: Կայսերական զինվորների խուճապահար փախուստից հետո, հայոց արքան զինվորներով շարունակեց ճանապարհը դեպի դուն: Մեծ դժվարությամբ անցնելով Եփրատը՝ Պապն արդեն ապահով էր զգում, և հոգնած խումբը կանգ է առնում հանգստանալու: Վաղեսի հրամանով հայոց արքային հետապնդելու էր ուղարկվել թեթևազեն նետաձիգների 1000 հոգանոց զորախումբ Դանիել կոմսի և Բարզի-

---

[304] Պապի՝ Ամմիանոսի նկարագրած տարսոնյան ուղևորության պատմությունը մանրամասն վերլուծել է Հ. Մանանդյանը (Երկեր, հտ. Բ, էջ 217-20): Դեպքերին անդրադարձել է նաև Լեոն (Երկեր, հտ. Ա, էջ 483-85):

մեր տրիբունի հրամանատարությամբ: Սրանք, ի տարբերություն Պապի, շատ լավ ծանոթ էին տեղանքին, և փախստականներին շրջանցելով ամենակարճ ճանապարհով՝ շուտով կտրեցին Հայաստան տանող երկու ճանապարհները, որոնցից մեկով պետք է պարտադիր անցներ Պապը: Դարանակալած հռոմեացիներն անվրդով սպասում էին նրա գալուստին: Դիպվածը, սակայն, փրկում է Պապին: Պատահական մի ուղևոր, Հայոց աշխարհից գալիս տեսնում է երկու ճանապարհները փակած զինվորներին: Խուսափելով նրանցից՝ նա բռնում է մացառուտներով պատված, քչերին միայն հայտնի կածան, և շատ չանցած՝ հայտնվում դաղար առած հայկական ջոկատի ճամբարում: Ուղևորին իսկույն տանում են Պապի մոտ: Մանրամասն տեղեկանալով դարանակալած զինվորների դիրքի մասին՝ Պապն իսկույն կողմնորոշվում է: Ոչ ոքի չմատնելով վտանգի մեծության փաստը, արքան մեկական զինվոր է ուղարկում աջ և ձախ ճանապարհներով, պատվիրելով նրանց՝ Հայաստան մտնելուն պես, առաջիկա գյուղում օթևան պատրաստել: Զինվորները, բնականաբար, հայտնվում են դարանակալ հռոմեացիների ձեռքում: Դանիելն ու Բարզիմերը ցնծության մեջ էին: Յուրաքանչյուրը դարանում մի քանի օր շարունակ սպասում էր Պապին, ով անցնելով գաղտնի կածանը մտել էր Հայաստան: Երկրում արդեն բացահայտ խոսվում էր Պապի գերության մասին: Ցնծում էին արքայի թշնամիները, և խանդավառված՝ Տերենտիոսի հետ սպասում էին նոր թագավորի գալստյանը: Եվ ահա, միանգամայն հանկարծակի հայտնվեց Պապը: Հենց առաջին գյուղում ժողովուրդը ցնծությամբ ընդունեց իր արքային: Լուրը տարածվեց երկրով մեկ: Դեպի Միջնաշխարհ տանող ճանապարհը արքան անցավ ոգևորված ազգակիցների ցնծալից ողջույնների ներքո: Պապի փոխարեն Վաղեսի կամակատարին սպասող դավաղիրների խումբը դեպքերի նման շրջադարձ երբեք չէր սպասում:

ԺԷ

Իսկ հայ երկրի դժբախտությունն այն էր, որ անազնվության ձեռքից ընկնողը մի երիտասարդ, եռանդուն և մեծագործ թագավոր էր, որ մեծ հույսեր էր տալիս և որի նման շինարար ու կարգավորող ուժին անչափ կարոտ էր կեղեքվող հայրենիքը[305]:

Ամոթահար Դանիել կոմսի և Բարզիմերի զորախումբը, ետ դառնալով կայսեր դուռը, ենթարկվեց խայտառակ ծաղրուծանակի: Պախարակումներին ու ծաղրանքներին վերջ տալու համար, ձախողակները կայսեր դիմաց երդում տալով՝ համոզում էին բոլորին, թե ոչ ոք չէր կարող հաջողության հասնել Պապի դեմ գնալիս: Եվ բյուզանդական արքունիքում սկսեցին խոսել այն մասին, թե Արշակի որդին կախարդ է, տիրապետում է Կիրկեայի հմայական արվեստին, կարողանում է խավարով ու մշուշով պատել թշնամու զորքերը: Պապը նույնիսկ այլափոխում է իր և սեփական զինվորների կերպարանքը: Հավատացնում էին կայսրին, որ եթե Պապը ողջ-առողջ վերադառնա Հայաստան՝ մեծ չարիքներ կպատճառի կայսրությանը: Ահա թե ինչ համարում ուներ երիտասարդ արքան[306]: Չմոռանանք, որ կախարդության, մոգության և հմայական արվեստի կատարյալ գիտակ էր համարվում նաև Մեհրուժանը, ով պատերազմներում անխոցելի մարտիկի համբավ էր վայելում[307]: Պապը՝ Արծրունյաց իշխանի պես, ոչ միայն դաստիարակվել էր նախնյաց հավատքով, այլ նաև՝ կատարելապես տիրապետում էր քրմական շատ գաղտնիքների: Թեև բոլորն են միահամուռ մի հարցում, որ Վաղեսը շատ դյուրահավատ էր և չափազանց լուրջ էր վերաբերվում նման կարգի հարցերին, սակայն, ենթադրել, թե Պապի բախտն

---

[305] Լեո, Երկեր, հտ. Ա, էջ 486:

[306] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 219:

[307] Լալայան Վ., Մեհրուժան Արծրունի, Դարձ, 2001, մարտ, թ. 22:

էին վճռում այդ ասեկոսեները՝ սխալ է[308]: Մեծ միամտություն չէր պահանջվում կայսրից՝ հասկանալու, որ իր նենգաբար կազմակերպած դավը հավիտյանս թշնամացնելու էր երկու պետություններին: Եվ իսկապես, հասնելով երկիր՝ արքան անցավ վճռական գործողությունների: Վերջնագիր է ուղարկում Տերենտիոսին՝ երկիրն իր ներկայությունից ազատելու համար[309]: Դրան հետևում է Պապի դեսպանների առաքումը Բյուզանդիա՝ Վաղեսի մոտ, Պապի պահանջը փոխանցելու. *«Կեսարիայի հետ՝ ուրիշ տասը քաղաք ևս մերն են եղել, ետ տուր. Ուռհա քաղաքն էլ մեր նախնիներն են շինել՝ ուստի, եթե չես ուզում, որ խռովություն ծագի մեր մեջ՝ ետ տուր. հակառակ դեպքում, մեծ պատերազմ կծագի մեր մեջ»*[310]: Իսկ պատերազմ կայսրը չէր ուզում: Դեռ չէին մոռացել Պապի հոր ասպատակությունները Փոքր Ասիայի հռոմեական գավառներում: Իսկ այս հանդուգն Արշակունին սկսել էր գերազանցել հորն՝ իր զորությամբ: Ոչ, միայն ոչ պատերազմ:

Գրեթե բոլոր պատմաբանները կասկածի տակ են առել Պապի պահանջի հավաստիությունը: Օրմանյանի կարծիքը կաղապարված է իր դավանակիցների հերյուրանքներով: Հոգեբանական «փայլուն» վերլուծությամբ նա համոզում է, որ ցոփ ու խենեշ կենցաղով ապրող պատանին չէր կարող

---

[308] Լեոն գրում է. «Այս ծաղրաշարժ սուտը դժբախտ թագավորի վիճակն էր վճռում: Վաղեսը, լինելով սաստիկ նախապաշարված մարդ, վախենում էր կախարդներից և այժմ հավատաց, թե հայոց թագավորն՝ ազատվելով հալածանքից, ամեն տեսակ դժբախտություն պիտի բերե իր գլուխը: Ուստի վճռեց օր առաջ վերացնել Պապին...» (Երկեր, հտ. Ա, էջ 485): Այսինքն, Պապն իրոք ունեցել է հինավուրց մոգական գաղտնիքներին կատարելապես տիրապետողի համարում:

[309] Խորենացին այս փաստը ներկայացրել է քիչ այլ կերպ: Ըստ նրա, օգտվելով նրանից, որ կայսրը զբաղված է ապստամբ շարժումները ճնշելով, Պապը հալածում է Տերենտիոսին (Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԼԹ.):

[310] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԲ.:

մտածել նման բաների մասին. *«Պապի անձնդիր կենցաղին բոլորովին անյարմար, եւ հիմնովին սուտ ամբաստանութիւն մը»*[311]: Կրկին չեմ անդրադառնա Պապի հասցեին հյուսված զրպարտություններին: Ուսումնասիրողների մի մասն էլ զուտ այլ՝ կողմնակի փաստերի բացակայության պատճառով է անհավանական համարում Պապի և Հռոմի միջև ծավալված այս զարգացումները: Պատկերացնու՞մ եք՝ երիտասարդ մի արքա, այն էլ՝ հայ, պահանջներ ներկայացնի Հռոմին: Պարզապես անհավատալի է: Շատ իզուր: Հասկանալու համար, թե ինչի մասին էր խոսքը, հիշենք, որ Պապի պահանջին նախորդել էր Վաղեսի կողմից՝ Փոքր Ասիայի հայաբնակ պրովինցիաների տրոհման և մասնատման ձեռնարկությունը: Գամիրքից, որը բացառապես հայաբնակ էր, ջնջվեց «Առաջին Հայք» անվանումը: Խորամանկ այս քաղաքականության արդյունքում՝ աննկատելիորեն հայաթափվելու էին Հայկական Լեռնաշխարհից թեպետ դուրս գտնվող, սակայն, բնիկ հայկական ազգաբնակչությամբ և բոլոր ժամանակներում Մեծ Հայքի քաղաքական ազդեցության ոլորտ համարված տարածքները: Պապն անմիջապես հասկացավ այս ամենի տխուր հետևանքները և իսկույն հանդես եկավ համահայկական շահերի պաշտպանության դիրքերից[312]: Հռոմին տարածքային պահանջներ ներկայացնելու նրա իրավունքն ավելի քան հիմնավոր էր, և հիմնված էր ոչ միայն Վաղեսի նենգ ծրագրի բացահայտման և Գամիրքի հայաբնակության, այլև՝ այն հզոր ներքին ուժի վրա, որ այդ չորս տարվա ընթացքում Պապն հասցրել էր ստեղծել իր երկրում. կենտրոնաձիգ վարչական ուժեղ համակարգ, զարգացող տնտեսություն և անգերազանցելի բանակ: Դրան զումարած՝ Շապուհի անվերապահ աջակցությունը հնարավոր պատերազմի դեպքում, և կայսեր զգուշությունն արդեն հասկանալի կլինի:

---

[311] Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, էջ 119:

[312] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 106-108:

Այսպես ահա, Պապի Հայաստանն արդեն մտածում էր ազդեցության նախկին ոլորտներ տարածվելու մասին, ինչն անհանգստացնում էր հռոմեասեր ուժերին: Մուշեղը, երկարատև լռությունից հետո, վերջապես սկսեց խոսել: Համոզում էր Պապին, որ չթշնամանա կայսեր հետ[313]: Բայց թշնամանքի սկիզբը Պապը չէր դրել: Իսկ անպատասխան թողնել կայսեր հայատյաց քաղաքականությունը և չձգտել ստանալու իրեն հասանելիքը՝ հայոց արքան պարզապես իրավունք չուներ:

Տերենտիոսը ճողոպրեց Բյուզանդիա: Անտեր թողնված հռոմեական կայազորներին հրամանատար նշանակվեց Տրայանոսը: Կայսրը հավատացնում էր, թե բոլոր թյուրիմացությունները խարդախ Տերենտիոսի պատճառով էին, և նոր ներկայացուցիչն հայոց արքունիքի հետ բարեկամաբար կլուծի հռոմեական կայազորների՝ Հայքից դուրս բերելու խնդիրը: Տրայանոսն, իրոք, հայոց արքայի մոտ հաճախակի ընդունելությունների ժամանակ, նրան էր ներկայացնում կայսերական կնիքներով նամակները, որոնցում հրամայված էր շուտափույթ և բարեկամաբար բավարարել Պապի պահանջները, արագացնել զորքերի դուրս բերումը և ապահովել Պապի բարեկամությունը՝ նրան այնքան սիրող կայսեր հետ: Նամակներն ու Տրայանոսի անկեղծ հավաստիացումները միամտացրին արքային: Հռոմեացին հաճախ էր ճաշի հրավիրվում արքունիք: Պապն, իր հերթին, ոչ մեկ անգամ հյուրընկալվել էր Տրայանոսին: Վստահությունը կատարյալ էր[314]:

Հայոց արքայի դեմ նյութված դավը տարբեր կերպ են մեկնաբանել մատենագիրները: Բոլորն են, սակայն, միակարծիք, որ դավադրության մանրամասներն առավել ստույգ են Բուզանդի մոտ: Դրանք ճիշտ և ճիշտ համընկնում են հռոմեական աղբյուրների տեղեկություններին: Պատմահոր մոտ առկա է ժամանակագրական շփոթ: Սակայն, որոշ մանրա-

---

[313] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԲ.:

[314] Մանանդյան Հ.,. Երկեր, հտ. Բ, էջ 221-222:

մասներ թույլ են տալիս պնդելու, որ Խորենացու տեղեկությունները՝ թեև ոչ ճշգրիտ, սակայն, պարունակում են շատ կարևոր մանրամասնություններ՝ հիմնված կոնկրետ երևույթների վրա: Հիմք ընդունելով Բուզանդի և Ամմիանոսի՝ միմյանց համընկնող վկայությունները, իր տեղում կանդրադառնամ նաև Պատմահոր տեղեկություններին, քանզի վստահ եմ, որ դրանք լույս են սփռում այնպիսի հարցերի վրա, որոնց պարզապես խուսափել է անդրադառնալ Բուզանդը:

374 թվական. հայոց զորքն արքայի հետ Բագրևանդում էր: Նրանից ոչ հեռու գտնվում էր Տրայանոսի գունդը: Եվ ահա, ներկայանալով Պապին, վերջինս հայտնում է սպասված լուրը. կայսեր հրամանով նրա կայազորները դուրս են գալիս Հայոց աշխարհից: Այդքան ձգձգված հարցը բարեհաջող լուծելու համար Տրայանոսը Պապին հրավիրում էր հրաժեշտի ճաշկերույթի: Անվստահության մասին խոսք անգամ լինել չէր կարող. արքային ցույց տրված կայսեր նամակն առավել քան համոզիչ էր: Եվ Պապը համաձայնվեց: Նրա հետ էին հայոց մեծամեծ իշխաններից շատերը, երկրի ավագանին: Հռոմեացիների ընդունելությունը փառահեղ էր: Արքային մեծարում էին ըստ հարկի: Երբ արդեն գինովցած էին ամենքը, Տրայանոսը դուրս է գնում՝ իբրև թե բնական կարիքները հոգալու: Դա ազդանշանն էր: Պապի թիկունքում՝ իբրև պատվո պահակ կանգնած մարդասպաններն սկսում են անխնա հարվածել արքային՝ այն պահին, երբ նա շրթներին էր մոտեցնում գինով լի գավաթը: Քարացած հայ իշխանների սարսափահար աչքերի առջև արքայական արյունը՝ խառնված անապակ գինուն, հորդ շիթերով ներկում է հյուրասիրության սեղանը: Ներս մտած Տրայանոսն անվրդով դիտում էր՝ իրենց արքայի անկենդան մարմնին մոտ գնալու համարձակություն անգամ չունեցող հայոց տերերին: Ամեն ինչ վերջացավ. արքայի շքախումբը ցրվեց տներով[315]:

---

[315] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԲ.:

Ինչպիսի հուզիչ վրդովմունքով է Ամմիանոսը փնովում այս դավը կազմակերպողներին. *«Երիտասարդ թագավորը... վայր ընկավ կրծքից խոցված՝ որպես ամոթալի մի զոհ, և նողկալի կերպով հոշոտվեց հաճախակի հարվածներով: Այսպիսի անարգ նենգությամբ դյուրահավատությունը խարդավանվեց: Օտարականի արյունը, փրփրելով թափվեց շքեղ սեղանածածկոցների վրա՝ դեմ հանդիման հյուրասիրության աստծու հյուրընկալության ժամանակ, որը նույնիսկ Եվքսինյան Պոնտոսի կողմերում խղճամիտ երկյուղածության է արժանանում, և այնուհետև, ճաշկերույթի մասնակիցները՝ չափից դուրս հագեցված, բոլորովին սարսափահար եղան և փախան»*[316]:

Ուշադրություն դարձնենք «դեմ հանդիման հյուրասիրության աստծու հյուրընկալության» տողերին: Դեպքը տեղի է ունեցել Բագրևանդում, ուր բանակել էր հայոց բանակը՝ արքայի, ողջ արքունիքի և երկրի ավագանու ներկայությամբ: Հարց է ծագում՝ ինչու: Ի՞նչ գործ ունեին այստեղ Տրայանոսի լեգեոներները, երբ պետք է գտնվեին Եռանդում և Բախշիում՝ հայոց արևմտյան սահմաններին: Պատասխանը մեկն է. Պապ արքայի հրեշավոր սպանությունը դավադիրների կողմից իրականացվել է Նավասարդյան համահայկական խաղերի ժամանակ՝ այն օրը, երբ Բագրևանդը վերածվում էր Հայոց աշխարհի բոլոր ծայրագավառները միավորող մի սրբավայրի: Հրաշալի բնակլիմայական պայմանները, ցայտաղբյուրջերմուկներն ու Ծաղկանց լեռների բարեբեր ազդեցությունն՝ օգոստոսյան տապին, այստեղ էին ժողովում բոլորին՝ ժողովրդական լարախաղացներից սկսած մինչև Շահապիվանի բանակատեղում մրցություններին սպասող հայոց այրուձին: Այստեղ էին գալիս օտար երկրներից ժամանածները, այստեղ էր արքան և երկրի բոլոր մեծամեծները: Այդ էր հռոմեացիների և հայոց զորքերի մեկտեղ գտնվելու պատճառը: Եվ պատահական չէ, որ Նավասարդյան տոներն հնուց ի վեր վայելել են

[316] Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, էջ 222:

հյուրասիրության մեծ աստծու հովանավորությունը: Այստեղ էր վեր խոյանում Վանատուրի բագինը, որի ավերակների վրա հետագայում կառուցվեց սուրբ Հովհաննու վանքը[317]:

Ահա թե ինչ է նաև ակնարկում լատին պատմիչը՝ «հյուրասիրության աստծու հյուրընկալության դեմ-դիմաց» կատարված նողկալի արարքի մասին խոսելիս: Հայոց երիտասարդ արքան, այսպիսով, սպանվեց համահայկական սրբազան տոնակատարության օրերին՝ Նավասարդյան տոնակատարությունների ժամանակ, իր բանակի և ազգի հզոր միասնության բերկրանքը ճաշակելիս: Ավելի մեծ նախատինք հայոց տերերին՝ հռոմեացին չէր կարող տալ:

ԺԸ

Արշակի և Շապուհի միջև մղվող պատերազմները նկարագրելիս Բուզանդն ընդհատելով ոգևորիչ պատմությունը, անսպասելի անցում է կատարել թեմայի հետ կապ չունեցող հարցի՝ արքայազն Պապի բարոյական կերպարի նկարագրությանը[318]: Այդտեղ հոգեբանական սերտ կապ կա դրա և Պապի սպանությանը հաջորդած իրադարձությունների ու դրանց հետագա մեկնաբանությունների մեջ:

Ընթերցողի ուշադրությունը հրավիրելով Բուզանդի երկում տեղ գտած այս բաժնի այլանդակ բովանդակության վրա՝ Ստ. Մալխասյանցն անկեղծ տարակուսել է, թե ինչպես է այս հատվածը հայտնվել պատերազմական գործողությունների նկարագրությունների արանքում՝ կարծիք հայտնելով, թե հավանաբար դա աղավաղություն է կամ նորամույծ հավելված[319]: Այնինչ, լույսի պես պարզ է Բուզանդի կամ նրան խմբագրողների հետապնդած նպատակը՝ արքայական

---

[317] Նավասարդյան տոնակատարության լավագույն նկարագրությունը տվել է ազգային իմաստասեր Հ. Ասատրյանը (տես՝ Հատընտիր, Ե., 2004):

[318] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԽԴ.:

[319] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ծան. 136:

ընտանիքն արատավորող այս լկտի զազրախոսությունը Արշակի և Շապուհի հակամարտության կենտրոնական հատվածում տեղադրելիս. Արշակի ընտանիքը թաթախված էր կեղտի ու անբարոյականության մեջ, ուստի օրինաչափ էր նրա կործանումը: Պապը տրված էր դևերին, շնացող էր և արվամոլ, ուստի՝ նրա թափված արյունը հատուցում չի պահանջում: Բուզանդի ողջ երկն է՝ սկզբից մինչև վերջ, նպատակաուղղված կերպով սերունդներին փոխանցում այս միտքը: Մեր ողջ մատենագրությունն է միտված հայ արքաներին և նրանց գործը՝ ողջամտության և առաքինության սկզբունքներին հակադրելուն. կուրացավ Տիրանը, որովհետև անօրեն էր, և Դանիելն ու Հուսիկն էին նրան նզովողները: Կործանվեց Արշակը, որովհետև ուրացյալ էր ու գոռոզ, և Ներսեսի անեծքն էր ծանրացած նրա վրա: Սպանվեց Պապը՝ մեծ դժբախտություն չէ. դիվահար էր և անբարո. չարժե նմանի համար հատուցում պահանջել: Ներսեսի արյունն էր նրա խղճին ծանրացած, և հատուցեց ըստ իր գործերի: Ահա այսպես, դարից դար, սերնդե-սերունդ՝ անարգվեցին, մրոտվեցին ու ցեխին հավասարեցվին «արքա» անունն ու գաղափարը: Պետությունը համարվեց անիմաստ ու երկրորդական՝ բռնության մի գործիք, որին հակադրվեց «սուրբ եկեղեցու» փրկչական գաղափարը: Եվ օրինաչափ էր, որ աշխարհակալ պետականություններ տված մի ազգ, ի վերջո, արքայական թագը փոխարինելու էր քահանայապետական խույրով, իսկ գայիսոնը՝ գաղթականի ցուպով: Պետությունն Ազգ է հավերժացնում, իսկ նրա չգոյությունը՝ հոտի վերածում ամենակենսունակ ազգերին անգամ...

ԺԹ

Իրենց արքայի սպանությունից չըմբոստացան հայոց սրտերը: Բուզանդի վկայությամբ, Անձևացյաց տեր Գնելը միայն հանդգնեց իր սուրը մերկացնել՝ խնջույքի սրահում

մարդասպանների հարվածներից իր արքային պաշտպանելու համար: Հազիվ մեկ լեգեոնականի գետնին տապալած՝ ինքն էլ ընկավ գլխատված, հոռոմ զորավարի սրից: Պարզվում է, Անձևացի Գնելն, այնուամենայնիվ, փորձել է պաշտպանել Պապին: Իսկ ի՞նչ է ասում այդ մասին Խորենացին: Պատմահայրը Պապի սպանությունը կապում է Թեոդոս կայսեր անվան հետ, որն, իհարկե, ժամանակագրական շփոթի հետևանք է: Թեոդոսի հրամանով, ըստ Խորենացու, Պապից հալածված Տերենտիոսը կրնկի վրա ետ է գալիս, անսպասելի հարձակվում հայոց բանակի վրա և գերում Պապին: Էականն այս պատմության մեջ այն է, որ Խորենացու վկայությամբ հռոմեական զորքերին մեծ քաջությամբ համառ դիմադրություն էր ցույց տալիս հայոց արևելյան զորքի սպարապետ Գնել Անձևացին[320]: Նորից Գնելը: Ի՞նչ է այս ամենը նշանակում, և ինչու՝ հակառակ Ամմիանոսի մանրամասն նկարագրության և Բուզանդը և թե Խորենացին՝ չեն դադարում Պապի սպանության հետ Տերենտիոսի անունը կապելուց:

Պապի վերջնագրից հետո Տերենտիոսը հեռանում է Հայքից: Բայց, ոչ այնքան հեռու: Նրա հաջորդ Տրայանոսը երբեք չէր կարող Բագրևանդում գտնվող գնդով անպատիժ մնալու երաշխիքներ ունենալ, եթե արքայի սպանության նենգ ծրագիրը սահմանափակվեր միայն հյուրասիրության սեղանն անարգելով: Ճշմարիտ է, որ խնջույքին ներկա իշխանները սիրտ չարեցին պաշտպանել իրենց արքային: Բայց այնտեղ չէին բոլորը: Այնտեղ չէին սպարապետը, Առաջին իշխանն ու Սպանդարատը: Պատմիչները լռում են նրանց մասին: Իսկ հայոց զորքը մոտերքում էր, և Տրայանոսը պետք է, որ իրեն ապահոված լիներ հուսալի պաշտպանությամբ: Այն պահին, երբ Պապը հրավիրվում է խնջույքի, Հայք է ներխուժում հռոմեական լեգեոնների բանակ՝ Տերենտիոսի գլխավորությամբ: Ահա թե ինչ են ցույց տալիս Պատմահոր խոսքերը: Դավադր-

[320] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԼԹ.:

ությունը կազմակերպված էր ամենայն բծախնդրությամբ: Վաղեսն իր հույսը չէր դրել Պապից դժգոհ և ճաշկերույթի արյունոտ վերջաբանին վաղօրոք տեղեկացված հայ իշխանների վրա: Արքան սպանված է, իսկ հռոմեական զորքը ներխուժել է Հայոց աշխարհ: Հենց այս փաստն է, որ Բուզանդն ու Ամմիանոսը չեն ցանկացել անկեղծորեն խոստովանել: Այն, որ Գնելը ճաշկերույթի սրահում չէր և Բուզանդը ցանկացել է ծավալված հետագա իրադարձությունները ներկայացնել իբրև խնջույքի սրահում կատարված ոճրի վայրկենական արձագանք՝ ակներև է: Ամմիանոսի մոտ խոսք չկա հայ իշխաններից և ոչ մեկի՝ դույզն ինչ վրդովմունքի մասին անգամ: Խորենացին պարզ նշում է. հռոմեական զորքերին քաջությամբ դիմադրում էր Գնել Անձևացին: Գնելը՝ հայոց արևելյան զորքերի հրամանատարը, լսելով Պապի սպանության և հռոմեական զորքերի ներխուժման մասին, իրեն վստահված զորքով շարժվում է նրանց դեմ: Սկիզբ է առնում մի շարժում, որի հաղթական ավարտն ավելի քան հավանական էր, եթե Գնելին մենակ չթողնեին: Անձևացյաց հպարտ նահապետը կոչ է անում հայոց իշխաններին՝ միավորվել արքայի անմեղ արյան վրեժն առնելու և խարդախ թշնամուն երկրից դուրս շպրտելու համար: Ահա թե որն էր պատճառն այն շուտափույթ հավաքի, որ կազմակերպվեց Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ: Հավաքվեցին երկրի տերերը՝ քննելու մի հարց. օգնե՞լ Գնելին իր պայքարի մեջ, թե՞ ոչ: Սա էր այն միակ հարցը, որ Բուզանդի մոտ ստացել է հետևյալ ձևակերպումը. *«Ի՞նչ անենք, ի՞նչ գործենք, մեր թագավորի վրեժը պահանջե՞նք, թե՞ ոչ»:* Պատասխանը մեկն էր՝ *«Ոչ. ինչ որ եղավ, եղավ: Թող էլի հունաց թագավորին ծառայենք, նրա իշխանությանը հնազանդվենք, թող հունաց թագավորները մեզ հետ վարվեն՝ ինչպես ուզում են»*[321]:

[321] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԳ.:

Այսպես էր պահպանում արքային տված իր երդումը Մամիկոնյան նահապետը, այսպես էր նա հաստատ մնում իր ուխտին: Այս էր հայոց տերերի վճիռը, և արդարանում էին նրանք խայտառակ մի բանաձևով, որ կարելի է վստահորեն համարել՝ հետագա բոլոր դարերում, հայ քաղաքական մտքի սկիզբն ու վերջը. *«Մենք չենք կարող հեթանոս պարսիկների ծառայության տակ մտնել և հունաց թագավորին թշնամանալ, ոչ էլ՝ երկուսին միասին թշնամանալ, որովհետև առանց որևէ մեկի թիկունքի չենք կարող ապրել»*[322]: Սա պատասխանն էր հայ ազնվականության, այն ազնվականության, որ Արշակ տեսավ և Պապ, որ Թավրիզ տեսավ, Ձիրավ ու Գանձակ, բայց որն այդպես էլ մնաց հոգևոր մուրացկանի խղճուկ մակարդակին՝ հպարտության իր պակասը վերածելով քաղաքական փերեզակության: Անկախ Պետականության հանդեպ հավատի կորուստն էր խոսում նրանց մեջ և վախը՝ այդ անկախության անորոշությունից:

Տերեր էին փնտրում հայ ազատները և նույն խորհուրդն էլ տվեցին Գնելին: Միայնակ մնաց Անձևացյաց տերը՝ մի ողջ կայսրության և սեփական ազգակիցներին դեմ-հանդիման: Եվ կատարվածի հետ հաշտվելու փոխարեն՝ հուսահատ մի պոռթկումով տվեց իր վերջին ճակատամարտը: Հռոմեական լեգեոնները արյան մեջ խեղդեցին Գնելի սկսած շարժումը՝ հայ իշխանների լուռ անգործությունից, իսկ որ առավել հավանական է՝ ստորաքարշ օժանդակությունից օգտվելով: Ընկավ Գնելը սուրը ձեռքին[323]. ընկավ՝ իր արքայի արյան վրեժի մարմաջով, ցեղի խոցված հպարտությունը բավարարելու փափագով: Ընկավ՝ չխառնվելու համար այն փերեզակներին, որոնց տիրադավությունն ու հպարտության կորուստն այսուհետև կոչվելու էին «քաղաքական զգուշավորություն և ճարպկություն»:

---

[322] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, ԼԳ.:

[323] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Գ., ԼԹ.:

Գնելի հետ մեռավ ազնվական այն ոգին, որ սեփական կյանքից առավել՝ հային ստիպում էր սիրել իր Ազգը, իր Պետությունն ու իր Արքային: Գնելն իր հետ գերեզման տարավ մի մեծ գաղափար, մի զորություն, որ հայ ազնվականի մեջ միշտ վառ է պահել անձնուրաց սերն ու պաշտամունքը դեպի իր Տերը: Գնելի հետ գերեզման իջավ Հայ Ազնվական վարքն ու բարքը: Վերջին Հայ Ազնվականն էր Գնելը:

Ի

Պապի սպանությունից հետո չուշացավ Մուշեղի հատուցումը: Մամիկոնյան նահապետը տարերքի մեջ էր: Հիմա նա կենտրոնացրել էր հայոց ռազմական ողջ ներուժը և իրավամբ կարող էր համարվել Հայոց աշխարհի տերն ու տնօրենը: Առանձնահատուկ ոգևորությամբ պատմիչը նկարագրում է այն «հանճարեղ» բարեկարգությունները, որ քրիստոսասեր իշխանն անցկացնում էր իրար ետևից՝ «դիվահար» արքայի մահվանն հաջորդած տարիներին: Նա բարի խրատներ էր տալիս Հայք ուղարկված հռոմեական դրածո Վարազդատին, պահում նրան չարից ու փորձանքից, վատ խորհուրդներից հեռու: Գիշեր-ցերեկ հսկում էր Հայքի սահմանները, հոգում երկրի բարեկարգությանը: Նրա սերն ու մտահոգությունն առ հայրենիք հասավ այնտեղ, որ դիմեց կայսերը՝ խնդրելով յուրաքանչյուր գավառում կառուցել ռազմական՝ հռոմեական զորք տեղակայելու համար: Հայքի ապահովության համար, իհարկե: Բանն հասավ նրան, որ նրա նախաձեռնությամբ կայսրը ծրագրեց ռոճիկ սահմանել հայ ազնվականության և զորքի համար, հայոց ռազմուժը պահել իր ծախսով, որպեսզի պարսից թագավորի մտքովն իսկ չանցնի Հայքը գրավել, և այն հաստատ մնա ու ամուր սիրով կապվի Հռոմին[324]:

---

[324] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, ԼԴ.: Ըստ Հ. Մանանդյանի, եթե Մուշեղի ծրագիրն իրականանար, Հայաստանն ինքնաբերաբար կվերածվեր կայսրության անդրտիգրիսյան մի նահանգի:

Ահա թե ինչ ճակատագիր էր նախապատրաստել Մամիկոնյան նահապետն իր աշխարհի համար: Մեծ Հայքի թագավորությունը՝ զրկված ինքնուրույնության որևէ նշույլից, հաստատուն քայլերով վերածվում էր հռոմեական մի ռազմակայանի: Ապագայում ևս՝ անխախտ պահելու համար այդ վիճակը, Մուշեղը մտածել էր ամենասարսափելին՝ հայոց բանակի կախվածությունը կայսերական ռոճիկից: Իսկ դա նշանակում էր մեկ բան. հայ ազնվականը, հայոց այրուձին այլևս երբեք սուր չէր ճոճելու իր երկրի անկախության համար: Միայն Պապի մահով՝ Հռոմն ստացավ մի ամբողջ երկիր:

Բայց, չգիտես թե ինչու, հանկարծ փոխվեց ամեն ինչ: Վարազդատը, որ ի սկզբանե կոչված էր հսկելու իր թագավորության արագ և հուսալի հռոմեականացումը, ամեն կերպ օժանդակելու Մուշեղի եռանդուն, «ազգանվեր» գործերին, հանկարծ հիշեց, որ ինքն է թագավորը, այլ ոչ՝ բարեպաշտ այդ Մամիկոնյանը: Իսկ հիշեցնողը՝ Սահառունյաց Բատ նահապետն էր: Հենց նրա խորհրդով էլ՝ Վարազդատը սկսում է բանակցել Շապուհի հետ: Հետաքրքիր է, որ Բատ Սահառունուն՝ նախանձից դրդված, Մուշեղի դեմ դավեր նյութելու մեջ մեղադրող Բուզանդը, պատմելով Վարազդատի մոտ նրա չարախոսությունների մասին՝ հատկապես նշում է. *«Մուշեղը սիրել է Պապի թշնամիներին, և ատել՝ նրա սիրելիներին, նրա հրամանով և խորհրդով են հռոմեացի իշխանները սպանել արքային, նա է գրգռել կայսերը Պապի դեմ և սպանել տվել: Այժմ էլ մտադրվել է Հայոց աշխարհը հռոմեական զորակայան սարքելով՝ կամ հռոմեական կայսրությանը հանձնել երկիրը, և կամ քեզ սպանելով, այն ամբողջությամբ իրեն ենթարկել»*[325]:

Ահա թե ինչպիսի «չար» մտքեր էր կաթեցնում արքայի ականջին նենգ Սահառունին: Իսկ մտքերն այդ այնքան էլ անտրամաբանական չէին: Եվ «մանկամիտ» թագավորը, առանց ծանրութեթև անելու, սոսկ Բատին հավատալով՝ հրա-

[325] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԵ.:

մայում է սպանել հայոց «ազատարարին»: Կրկնվում է նույն սցենարը, որով սպանել էին Պապին: Մուշեղին հրավիրելով խնջույքի, մի լավ պատվում են մեծազոր իշխանին, իսկ արքայի՝ սրահից դուրս գալուն պես, նրա զինվորները մտնում են անհոգ բազմած Մամիկոնյան իշխանի թևերը: Մուշեղի հարցական հայացքին՝ նույն պահին հետ վերադարձած արքան պատասխանում է. *«Գնա Պապի մոտ, հարցրու և կիմանաս՝ թե ինչն է այս ամենի պատճառը»*[326]: Իր արքայի հանդեպ թույլ տված ամենաչնչին զանցանքի համար՝ սեփական տոհմակիցներին անգամ չխնայող Վասակը, որի համար երկրի վրա գոյություն ուներ միայն մեկ աստված՝ Հայոց Արքան ու Հայկական Թագը, մտքովն իսկ չէր կարող անցկացնել, որ իր որդին կպատժվի տիրասպանության մեղադրանքով:

«Երանի թե այս մահը ձիու վրա ինձ հասներ.» -սրանք այն վերջին բառերն էին, որ արտաբերեց հերոսի որդին: Բատ Սահառունին անձամբ կտրեց նրա պարանոցը[327]: Մամիկոնյան քաջարի ասպետն, ըստ երևույթին, դեռ կցանկանար իր պետության դեմ սուր ճոճելով հեռանալ այս կյանքից...

Փոշիացան Մուշեղի սկսած բոլոր բարեկարգությունները: Վարազդատը պետական մակարդակով պատերազմ սկսեց Մամիկոնյանների դեմ: Խլվեցին նրանց բոլոր արտոնությունները, իսկ տոհմի նահապետ՝ արքան կարգեց հեզ ու խաղաղ Վաչէին[328]: Սակայն, ինչպես միշտ, երբ պարթև Գրի-

---

[326] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԵ.:

[327] Օրմանյանը փորձ է արել նմանեցնել Բուզանդի մոտ նշվող «Բատ» անունը՝ «Սմբատին» (Ազգապատում, հտ. Ա, էջ 120): Դա ավելի քան տրամաբանական է: Խորենացու և Թովմա Արծրունու հիշատակած Սմբատ սպարապետին Բուզանդը համառությամբ մոռացության է մատնել: Հնարավոր է, որ Պապի սպանությունից հետո հռոմեացիների օգնությամբ երկրին տեր դարձած Մամիկոնյանների դեմ պայքարը շարունակել է Սմբատ Բագրատունին, որի խորհրդով էլ հենց՝ Վարազդատն սկսում է փոխել իր քաղաքական գիծը:

[328] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, ԼԷ.:

գորի տան կամ Մամիկոնյանների տոհմի գլխին կախվում էր մահացու մի վտանգ, անսպասելի օգնություն էր գալիս... Պարսկաստանից: Այս անգամ՝ այն եկավ Մանվել և Կոմս Մամիկոնյանների տեսքով: Տիզբոնում ասես հատուկ բուծարան էին պատրաստել Մամգունի տոհմի զավակների համար: Բայց սա արդեն բոլորովին այլ՝ մեր նյութին չառնչվող պատմություն է...

ԻԱ

Մեհրուժան Արծրունին դեռ երկար ժամանակ անուրանալի ծառայություններ մատուցեց Հայոց աշխարհին: Նրա անմիջական օժանդակությամբ Վարազդատ արքան (374-377) բանակցություններ է սկսում Շապուհ Բ հետ՝ Հայաստանը հռոմեական ազդեցությունից դուրս բերելու նկատառումով[329]: Հենց այս համատեքստում էլ սպանվեց Մուշեղ Մամիկոնյանը, որից հետո հայոց արքունիքը քաղաքական կտրուկ շրջադարձ կատարեց դեպի Պարսկաստան: Վարազդատի՝ Հայաստանը լքելուց հետո, Մեհրուժանն, ըստ երևույթին, մնում է Պարսկաստանում: Համենայն դեպս, մինչև Շապուհի մահը, նրա մասին տեղեկություններ չկան: Օգտվելով Շապուհի մահից հետո Պարսկաստանում ծայր առած գահակալական կռիվներից, Մեհրուժանի խորհրդով, Մանվելը կոտորում է Հայաստանում գտնվող պարսկական զորքը, իր ձեռքում կենտրոնացնում երկրի փաստացի իշխանությունն ու թագավորեցնում Պապի որդի Արշակին: Բնականաբար, Մեհրուժանի դերա-

---

[329] Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց Տան, ԺԱ.: Թեպետ Թովման գրում է, թե սա հայտնի Մեհրուժանի թոռն էր, սակայն, իրականում օգտվելով Խորենացուց, ում կարծիքով Մեհրուժանը սպանվել էր Ձիրավում, նա տոհմական իր աղբյուրներում պահպանված տեղեկությունները շարադրել է սխալ մեկնություն տալով: Թեկուզ միայն ժամանակագրական առումով խոսքը կարող է գնալ միայն Արծրունյաց «ուրացյալ» իշխանի մասին (տես՝ Լալայան Վ., Մեհրուժան Արծրունի):

կատարությունն այստեղ Բուզանդը բացատրում է նախանձի և նենգության շարժառիթներով՝ իբրև թե Արծրունյաց իշխանն ուզում էր թշնամացնել Մանվելին պարսից արքունիքի հետ[330]: Ինչևէ, Մեհրուժանի հաշվարկները ճիշտ դուրս եկան. Շապուհ Գ միայն յոթ տարի հետո կարողացավ միջամտել հայոց գործերին: Հայաստան է ուղարկվում մի մեծ զորաբանակ՝ Մեհրուժանի գնդի մասնակցությամբ: Փորձելով երկիրը զերծ պահել ասպատակությունից, Մեհրուժանը պարսից զորավարին համոզում է՝ իրեն սպասել Կորճայքում, իսկ ինքն իր գնդով շտապում է դեպի Բագրևանդ՝ Մանվելին հանդիպելու: Մեհրուժանն իր գնդի առջև խոստանում է բռնել Մանվելին և նրա աչքի առջև խայտառակել նրա կնոջը՝ տիկին Վարդանույշին[331]: Ո՞րն էր Մանվելի և Մեհրուժանի թշնամության պատճառը: Չէ՞ որ հենց Արծրունյաց իշխանի շնորհիվ էր Մանվելին հաջողվել երկրից թոթափել պարսկական լուծը: Միանգամայն տրամաբանական այն եզրահանգումը, որ Մանվելն ու Մեհրուժանը միմյանց բավականին մոտիկից գիտեին դեռևս Տիզբոնում, ապացուցվում է մի քանի փաստերով. նախ, ինչպես նշում է Բուզանդը, Մանվելին քաջ հայտնի էին Մեհրուժանի նշաններն ու նրա կռվելու եղանակը, անգամ՝ շարժուձևը: Որոշ խորհրդածությունների տեղիք է տալիս նաև Մամիկոնյան տիկնոջը՝ Վարդանույշին, Մեհրուժանի ճանաչելու ակնարկը:

Արդյո՞ք նախանձն էր Մեհրուժանի գործողությունների մղիչ ուժը, ինչպես միշտ փորձում է ներկայացնել Բուզանդը. Իհարկե՝ ոչ: Խնդիրն այն քաղաքականությունն է, ավելի ճիշտ, քաղաքական գծի այն փոփոխությունը, որ Մանվելն անկախության յոթ տարիների վերջում պարտադրեց հայոց արքունիքին: Պարսից լուծը թոթափած Հայոց աշխարհը, Մամիկոնյան սպարապետի ջանքերով, թեքվեց դեպի հռոմ-

---

330 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԼԸ.:

331 Նույն տեղում, ԽԳ.:

եական հպատակություն: Անկախությունն այլևս գերագույն արժեք չէր հայոց համար: Տեր էր անհրաժեշտ նրա իշխաններին, որոնք Պապից հետո այլևս չէին հավատում սեփական ուժերին: Իսկ Մեհրուժանը դրա համար չէ, որ օգնել էր Մանվելին՝ պարսիկներին երկրից վտարելու:

Պարսկական բանակից անջատվելու և սեփական գնդով երկրի խորքը շարժվելու Մեհրուժանի քայլը հետապնդում էր միաժամանակ մի քանի նպատակ: Բացի այն, որ դա հնարավորություն էր տալիս երկիրը զերծ պահել ավերածություններից, նա իր առջև դրել էր հետևյալ խնդիրը. դեմ առ դեմ՝ առանց պարսկական ներկայության, հանդիպել Մանվելին և համոզել հրաժարվել Հայաստանը հռոմեական գաղութ սարքելու մտադրությունից: Անհաջողության դեպքում Մեհրուժանը միտք ուներ ոչնչացնելով Մանվելին՝ ազատել Հայոց աշխարհը նրա փաստացի բռնապետությունից և երկրի կառավարումը վերցնել ձեռքը: Ամեն դեպքում Արծրունյաց իշխանը մտադիր չէր պարսկական զորաբանակին երկիրն ասպատակելու հնարավորություն տալ: Դա է ապացուցում, որ անգամ հմայությունների և բախտագուշակության միջոցով համոզվելով, որ հաջողությունն իր կողմը չէ՝ նա չդիմեց պարսիկների օգնությանը, այլ շարունակեց իր երթը[332]:

Անհաջողությունը Մեհրուժանի կողմն էր: Մամիկոնյան սպարապետը հորթային համառությամբ չէր հրաժարվում երկիրն արյունոտ բախումներից զերծ պահելու մտքից: Մեհրուժանին այլ ելք չէր մնում. ճակատամարտը կայացավ:

Ռազմավարական անզերազանցելի հմտությամբ և հնագույն հայկական մարտարվեստի կատարյալ տիրապետմամբ հայտնի Արծրունյաց իշխանն անմրցելի հակառակորդ էր: Սակայն, կատարվում է անսպասելին. հայ ռազմիկին անվայել միջամտությամբ Մանվելի համհարզը թիկունքից հարձակվե-

[332] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԽԳ.:

լով Մեհրուժանի վրա՝ վերջ դրեց մենամարտին: Մեհրուժանն ընկավ ռազմի դաշտում, սակայն դավադիր հարվածից: Ընկավ՝ մինչև վերջ հավատարիմ Հայոց երկրի հանդեպ իր ստանձնած պարտավորություններին:

Արծրունյաց «ուրացյալ» իշխանը երդումն էր տվել Արշակ արքային, և պահեց այդ երդումը՝ նույնիսկ Արշակի մահից հետո հավատարմորեն ծառայելով նրա Տիկնոջը, որդուն և թոռներին. նախանձելի մի արժանիք, որի կրողներն, այլ ազգերի մոտ, պարուրվում են հերոսի լուսապսակով...

Ըստ Փավստոսի, Մեհրուժանին թիկունքից հարվածողը Բաբիկ Սյունին էր: Բաբիկն Անդովկ իշխանի որդին էր՝ Փառանձեմ թագուհու եղբայրը: Թեպետ որոշակի փաստարկներ չկան՝ այս վկայության ստուգությունը ճշտելու համար, սակայն անհավանական է թվում, որ տմարդի այդ արարքի հեղինակը Բաբիկը լիներ: Բացի այդ, Սյունաց նահապետը, որ Շապուհի կողմից կրկին ստացել էր այն ողջ փառքն ու ժառանգությունը, որ երբևէ ունեցել էին իր նախորդները՝ չէր կարող Մանվելի համհարզը լինել, ինչպես դա նշում է Բուզանդը: Բաբիկը Հայաստան էր վերադարձել դեռ Շապուհի կենդանության օրոք՝ արդեն Տիզբոնում ճանաչվելով որպես Սյունյաց տանուտեր: Դա, ըստ երևույթին, Վարազդատի գահակալման տարիներին է եղել: Իսկ Բուզանդը գրում է, թե Բաբիկն իր երկու եղբայրների հետ Մանվելի մոտ էր ապաստանել իբրև հալածյալ: Այստեղ մեծ շփոթ կա, որն այնքան էլ Բուզանդի մեղքը չէ՝ որքան հետագա խմբագրողների:

ԻԲ

Պապի մահով մարեց այն ջահը, որ վառել էր Արշակ արքան՝ հայոց անկախ, հզոր պետականության տեսլականը: Մեր պատմության և ոչ մի շրջադարձում մեզ այլևս չտրվեց ամբողջական և անկախ պետականություն կերտելու հնարավորություն: Բագրատունյաց, Արծրունյաց, Սյունյաց թե

Լոռվա՝ հետագա դարերում կազմավորված պետական մեր բոլոր միավորումները, որքան էլ ուժեղ, որքան էլ ազգային, երբեք չընդգրկեցին իրենց մեջ հայոց բնական Հայրենիքի ողջ տարածքը, երբեք չեղան անկախ՝ բառի իսկական իմաստով:

Պապից հետո երկար չդիմացավ Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը: Պատմությունը բոլորս էլ գիտենք: Սակայն հետագա տարիներին կատարված բոլոր ողբերգությունների բուն պատճառը հարկավոր է փնտրել հենց 4-րդ դարում: Անկախ պետականության գաղափարը մեռավ Պապի հետ միասին՝ ինքնուրույն ապրելու, Պետության և Տիրակալի պահանջը վերացավ հայոց սրտերից: Թուլասիրտ, խայտառակ լռությունը, որ պատեց երկիրը՝ իր արքայի դավադիր մահից հետո, վերջին ազնվորդու՝ Անձևացի Գնելի, հուսահատ պոռթկումը՝ հայ իշխանների քար անտարբերության և փոքրոգի հաշվենկատության պայմաններում, գուժում էին հպարտ ու ռազմատենչ Արտաշեսների, Տիգրանների, Խոսրովների ու Արշակների ժամանակների վերջը Հայոց աշխարհում: Հայքի տերերի համար այլևս ավելորդ մի ճոխություն էին անկախությունը, թագավորն ու պետությունը: Առավել հանգիստ և անվտանգ էր՝ ապրել Հռոմի շվաքի տակ, եկեղեցու սուրբ հայրերի աղոթքներին ապավեն, և մուրալ այն խղճուկ խաղաղությունը, որ տրվում էր՝ սեփական Հայրենիքը քայլ առ քայլ, պատառ-պատառ կորցնելու գնով: Հոգեբանական այդ բիրտ անցումը՝ դեպի հարմարվելու, սողալու և նվաստացումների քաղաքականություն՝ սա էր ազդարարում Պապի մահը. մնացածը լոկ հետևանք էր՝ երկրի բաժանում, պետականության կորուստ, որ մի օր պետք է գար անխուսափելիորեն:

Պետականության գոյության տարիներին, մեր եկեղեցին ամեն ինչ արեց՝ այդ պետությունը կործանելու, նրա արքաների գարշապարը խայթելու և հազարավոր գաղթականների ու դիակների վրայով՝ իշխանական բուրգի գագաթը բարձրանալու համար: Երբեք և ոչ մի մատյանում չսևեռվեց այն

միտքը, որ առանց պետության ոչինչ է ազգը, որ աստծուց է արքայական իշխանությունը, որ աստվածազարմ են հայ արքաները: Նզովք, ամբաստանություններ և պախարակում. ահա հայ արքային բաժին հասած հիշատակը «սուրբ հայրերի» կողմից: Եվ կործանվեց հայոց պետությունը: Արժեզրկվեց նրա ստեղծման, նրա համար պայքարելու գաղափարն անգամ: *«Առանց որևէ մեկի թիկունքի՝ մենք չենք կարող ապրել»,*- այս տողերի խորքում է թաքնված Արշակի ու Պապի ողբերգությունը: Անկախ Հայրենիք, Արժանապատիվ Ազգ. այս ամենին այլևս չէր հավատում հայ ազնվականը: Հայաստանյայց եկեղեցին էր սպանել այդ հավատը՝ նրա մեջ դատարկությունը լցնելով կուշտ ու ապահով կյանքի առատ հույսերով:

Պապի թագը դուրս տանելով Հայոց աշխարհից, դավադիր հռոմեացին այստեղից հավետ գողացավ այդ թագի ու գահի՝ Անկախ, Հզոր Պետականության պաշտամունքը: Տիրակալի պաշտամունքը մեռավ հայ իշխանների սրտերում: Այսուհետև, մեր բոլոր օժտված թագակիրները լինելու էին սոսկ խղճուկ նմանակումները Հայկյան մեծ արքաների:

Պապը վերջին Տիրակալն էր:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մովսես Խորենացին «Հայոց Պատմությունն» ավարտում է 428թ.: Սա այն տարեթիվն է, երբ հայ նախարարները՝ մեր պատմության մեջ եզակի միասնությամբ, համախմբվեցին և միահամուռ ուժերով վերջ տվեցին հայոց թագավորությանը: 54 տարի էր անցել Պապի մահից, և վերացավ Արշակունյաց գահատոհմը Մեծ Հայքի վրայից: Կատարվեց Մեծն Ներսեսի երազանքը՝ «խմեց, հարբեց Արշակունյաց անիծյալ ցեղն իր վերջին բաժակը և այլևս ոտքի չկանգնեց»:[333] Նրա հետ միասին, ոտքի չկանգնեց այլևս երբեք՝ հզոր ու միասնական Հայոց Պետականությունը: Կործանվեց հայ իշխանների վճռական կամքով և Գրիգորի վերջին շառավիղ պարթև Սահակի պիղատոսյան լուռ համաձայնությամբ:

Այդ իրողությամբ էլ ահա մեր ազգի պատմության շարադրանքն ընդհատեց Պատմահայրը: Իրավացի՞ էր արդյոք մի ազգի պատմությունն իր թագավորի, իր պետականության կորստյան հետ ավարտված համարող պատմիչը:

Համոզված եմ, որ այո: Համահայկական հայրենասիրության և Հայաստանակենտրոն աշխարհայացքի տեր մեր միակ մատենագիրը, որ առավել քան որևէ մեկը, գիտակցում էր Պետության դերը ազգակերտման գործում, սեփական թագավորությունը կորցրած ժողովրդի գոյությունը պարզապես չի համարել Պատմություն:

Չկա պետություն, չկա և պատմություն: Վերացա՞վ սեփական ինքնիշխան թագավորություն ունենալու կամքը մի երկրի տերերի մոտ՝ ժամանակի ընթացքում կրոնական հոտի կվերածվի այդ երկիրը ծաղկեցրած երեկվա հզոր ազգը: Իսկ հոտն ու համայնքը Պատմություն չեն կերտում: Գաղթականի

---

[333] Արշակին հասցեագրված Ներսես պարթևի անեծքից (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԵ.):

ցուպն ու օտարի լուծն են միակ բաժինն ու ճակատագիրն այն ժողովրդի, որն իր թագն ու պետությունը՝ թեկուզ թույլ, թեկուզ բզկտված, բայց այնուամենայնիվ՝ հայկական, կամովին փոխարինում է քահանայապետական գավազանով ու եկեղեցական իշխանապետությամբ: Սա է, որ հասկանում էր Խորենացին:

Իմ խորին համոզմամբ հայոց պետականության կործանումը շատ ավելի վաղ էր սկսվել. դեռ այն պահից, երբ Հայքի փառքն ու աշխարհասասան զորությունը երկինք բարձրացրած Խոսրով Մեծին նենգորեն սպանող Անակի որդին՝ արդեն իր մոր արգանդում համարվեց «աստծուց շնորհված»: Այն պահից, երբ հայոց ավագանին Տիզբոն ուղարկեց Արշակ արքային: Այն պահից, երբ Գնելի կոչն՝ անարձագանք, զարնվեց Հայոց Լեռնաշխարհի քարերին: Այդ պահից ահա սկսվեց մեր Պատմության այդ փուլի ավարտը:

Հետո երկար ու ձիգ դարեր՝ արդարացնելու համար այն, ինչ երբեք հնարավոր չէ ներել, Հայաստանյայց եկեղեցին իր մատենագիրների ջանքերով՝ անհնարին ու հնարավոր բոլոր միջոցներով սևացրեց մեր պատմության լուսավոր էջերը, մուր քսեց մեր արքաների բարի անվանն ու հիշատակին, և մեր պետականության կործանման պատմությունը մեզ հրամցրեց իբրև անօրեն ու պիղծ իշխողների՝ նզովքի արժանի արարքներին օրինաչափ պատիժ: Սա է հոգեբանական այն պատճառը, որ ժամանակ առ ժամանակ պետականություն կերտելու փորձ արած հայորդիներին նզովվող ու պախարակող մեր կղերականներին հաջողվեց սերունդներին համոզել իրենց իրավացիությունը. Պետականության գաղափարը վաղուց արդեն եղծվել էր սերունդների հոգիներում:

Այսօր, մեր Հայրենիքի մի փոքրիկ անկյունում վերահառնած հայոց պետությունը կրկին փորձությունների շեմին է: Եվ ազգային հայեցակարգի մշակման, համահայկական նպատակների իրականացման, Հայրենիքի վերատիրումի և

Հայ Տեսակի հարատևման ճանապարհին՝ պարզապես անհրաժեշտ է մեր եղծված պատմության վերարժևորումը:

Ազգայինի դիրքերից արժևորել է պետք հայոց պատմությունը: Հայաստանյայց եկեղեցին ինքը պետք է վերանայի իր պատմությունը, վերաբերմունքն՝ հայ ազգին և պետականությանը: Հնարավո՞ր է արդյոք այս վերանորոգումը, կարո՞ղ է եկեղեցին ինքնամաքրվելու և ազգայնանալու համար իր մեջ ուժ գտնել՝ դժվար է ասել: Սա է օրվա հրամայականը:

Դասակարգեր և կուսակցություններ, կրոն և դավանանք. դրանք ոչինչ են, զրոյական արժեքներ՝ գերագույն և հավիտենական այն արժեքների կողքին, որ կոչվում են Ազգ և Հայրենիք: Այս երկու արժեքների դիրքերից է, որ պետք է իմաստավորվի մեր պատմությունը: Եվ պիտի իմաստավորվի պետական մակարդակով, պետության հոգածությամբ: Սա է այն կարևոր նախապայմաններից մեկը, եթե ցանկանում ենք, որ մեր գեներում հավետ խոսեն Արշակները, Փառանձեմներն ու Պապերը, եթե ցանկանում ենք, որ Ցեղի արգանդը երբեք չզլանա մեզ պարգևել Վասակներ, Մեհրուժաններ ու Գնելներ:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Գահնամակն» ու «Զորանամակը»՝ իբրև նախաքրիստոնեական և հետքրիստոնեական Հայաստանների ներքաղաքական կյանքի արտացոլումներ

Ազնվական կարգն ու ավանդույթները և ազնվականության մասին պատկերացումներն, ընդհանրապես, վաղնջագույն ժամանակներից են ձևավորվել հայոց մեջ: Ավելին, Հայկական Պետականություններն առաջինն են՝ իշխանական տոհմերի միջև բաշխած կոնկրետ գործառույթների, պետական կյանքը՝ ըստ այդ տոհմերի ստանձնած պարտավորությունների և համապատասխանաբար, նրանց տրված իրավունքների սկզբունքով կանոնավորելու, տոհմի ծագումն ու երկրի պաշտպանության գործը՝ ազնվականության գլխավոր չափանիշներից մեկը դարձնելու առումով:

Այս ավանդույթներն են, որ լայն տարածում գտնելով հարևան ցեղերի մոտ, հետագայում, հայոց պետականության թուլացման և աստիճանական անկման պայմաններում, թյուրիմացաբար կամ միտումնավոր կերպով՝ համարվեցին օտարներից ներմուծված:

Իմ այս ուսումնասիրությունը դեռ շատ քիչ է և, բնականաբար, կարող է և զերծ չլինել թերություններից: Ուսումնասիրողներն ահռելի աշխատանք ունեն անելու այս ուղղությամբ: Կարևոր է սակայն մի հանգամանք. մեր ծագման ազնվությունն ու պետական կյանքի հազարամյակների փորձը, մեզ անսասան հավատ պետք է ներշնչեն հետևյալում. երբեք օտարից չէ, որ հայը պետք է որդեգրեր Պատվի և Ազնվության, զինվորական գործի մասին պատկերացումներն ու սկզբունքները: Հարկավոր է միայն համբերատարությամբ փնտրել, և ժամանակի ընթացքում կվերականգնվեն այն ամենը, ինչ կորցրել ենք՝ հարյուրամյակներ ձգվող հիշողության կորուստի պատճառով:

Ա

Հայոց մեջ ազնվական-իշխանական (նախարարական) տոհմերի քանակն ու երկրի ներքին կյանքում և արքունի դռանն ունեցած դրանց ազդեցությունների չափը, դիրքն ու պատիվը բոլոր ժամանակներում տեղիք են տվել վեճերի և հակասական մեկնությունների: Մատենագիրների տեղեկություններն ու հասած առանձին ցուցակներ՝ միմյանց հակասող տվյալներով առաջին հայացքից ավելի են բարդացնում խնդրի լուծումը: Առաջին հայացքից, որովհետև ցայսօր, այդ ցուցակներից օգտվելիս՝ դրանցում տեղ գտած տարօրինակ անհամապատասխանությունները վերագրվել են ցուցակների անճշտությանը: Հաճախ անտեսվել են պատմիչների մոտ պահպանված պատմական տեղեկությունները: Այդ ցուցակներն և ընդհանրապես հայոց մեջ գահերեցության և երկրի զինված ուժերի բաշխման կարգերը համարելով իրանական ազդեցություն՝ անտեսվել է այն հանգամանքը, որ մեզանում նման կարգեր գոյություն են ունեցել վաղնջական ժամանակներից: Արդյունքում, ցուցակների տվյալները համեմատվել են մի քանի կարճ հարյուրամյակների կտրվածքով և այն էլ՝ խիստ կամայական մոտեցմամբ: Այնինչ, խնդիրը միշտ էլ կարևորվել է նրանով, որ իշխանական այս կամ այն տան ունեցած դիրքը, ուժն ու ազդեցությունը, արքունի-պետական կյանքում ստանձնած պարտավորությունները կարող են ցույց տալ Հայաստանի՝ տվյալ ժամանակահատվածին հատուկ ներքաղաքական, և ինչու չէ նաև՝ բարոյահոգեբանական մթնոլորտը:

Ազնվական տոհմերի դիրքն ու նրանց զբաղեցրած պաշտոնները, բոլոր ժամանակներում, խստիվ կանոնակարգված են եղել հայոց արքունիքի կողմից: Պատմիչների բազմաթիվ վկայությունները խոսում են դրա օգտին: Յուրաքանչյուր նախարար արքունիքում ունեցել է իր գահը կամ բարձը՝ իր տեղն արքունի պալատում, խնջույքների, խորհրդակցություն-

ների կամ ցանկացած այլ արարողության ժամանակ: Իրենց բարձերն ունեին նաև արքունի գործակալները: Այս բարձերի կամ գահերի առաջնայնությունը ցույց էր տալիս այն զբաղեցնող իշխանի դիրքն ու ազդեցությունը երկրում: Հայ իշխանները նախանձախնդիր էին իրենց գահերի դիրքին: Դրանց իջեցումը կամ բարձրացումն արքայի կողմից, համապատասխանաբար, մեծագույն անարգանք կամ պատիվ էր ազնվականի համար: Արքան իրավասու էր վեր հանել իշխանի դիրքն ու դրանով՝ բարձն արքունիքում, կամ իջեցնել, անգամ՝ իսպառ ջնջել ազնվական տոհմերի ցուցակից: Նախարարների դիրքն ու գահի առաջնայնությունը պայմանավորված էին նրանց ծագմամբ, երկրին տված զորական ուժով և պետությանը մատուցած ծառայություններով: Ցուցակները, որտեղ սահմանված են եղել բոլոր այդ մանրամասնությունները՝ հայտնի են «Գահնամակ» (գահերի, բարձերի ցուցակ) և «Զորանամակ» (զորքերի ցուցակ) պայմանական անուններով: Ցանկացած փոփոխություն երկրի ներքաղաքական կյանքում՝ իր դրոշմն էր դնում այդ ցուցակների վրա: Յուրաքանչյուր արքա՝ առաջ կամ ետ մղելով որևէ նախարարական տոհմի, համապատասխանաբար, բարձրացնում կամ իջեցնում էր մյուս ազնվականների տեղն ու դիրքը ցուցակում: Գահնամակի սրբագրումներն ու փոփոխությունները, բացառապես, հայ արքաների մենաշնորհն էին: Ինչու եմ սա շեշտում: Բանն այն է, որ մինչև օրս հայագիտության մեջ տիրապետող է մնում այն համոզմունքը, թե հայ նախարարների դիրքն ու պատիվը սահմանվել է պարսից արքունիքի կողմից: Այս մոլորությունը մի շարք պատճառներ ունի: Նախ, Հայաստանի անկախության կորստից հետո, վերջնականապես, պարսիկ արքաներն էին զբաղվում այս հարցով: Ուշագրավ է Խորենացու վկայությունն այն մասին, թե ինչպես Սահակ պարթևի խնդիրը մերժելով՝ Վռամշապուհ արքան կարգադրում է նրան իշխանական երեք տոհմերի դիրքն ու պատիվը վերականգ-

նելու միջնորդությամբ՝ դիմել Սասանյան Արտաշիր արքային: Նախորդի դառը փորձն աչքերի առջև՝ հայ արքան վախենում էր ինքնուրույն որոշել սեփական երկրի ներքին խնդիրները[334]:

Պարսից արքունիքում գոյություն ունեցած ցուցակները, ուր սահմանված են եղել պարսիկ ազնվականների դիրքն ու պատիվը՝ առիթ են տվել ենթադրելու, թե նման սովորությունը ծնունդ է առել Իրանում, և հայոց մեջ արմատավորվել է պարսիկների միջոցով: Պատմահոր մի տեղեկությունն այն մասին, որ Վաղարշակ պարթև Արշակունին Հայաստանում սահմանում է նախարարական տներ ու արքունի գործակալ-ություններ՝ լավագույն կռվան է հանդիսացել այս կարծիքի կողմնակիցների համար: Կարծում եմ, սակայն, որ այստեղ ակնհայտ կամայական մոտեցում կա: Խորենացու ներկայաց-րած ավանդական Վաղարշակ արքան (մթա. 2-րդ դար), ում անունն ու ծագումն հանելուկ է մինչ օրս, Հայաստան գալով՝ չգիտես թէ ինչու, երկրի գործակալներ է նշանակում և նախա-րարություններ սահմանում Հայկյան բնիկ տոհմերից: Եվ սա այն դեպքում, երբ Վաղարշակն, իբրև թե, պարթև էր: Եվ հետո, ինչու՞ է մինչ օրս անտեսված մնացել Պատմահոր այն տեղեկ-ությունը, որ Վաղարշակը նախարարություններ ճանաչելուց և գործակալություններ հիմնելուց առաջ նախապես ծանոթացել է եղբոր արքունի դիվանի արխիվներին[335]: Եթե դեն ձգենք խճողված մանրամասնությունները, հանգում ենք մի եզրակաց-ության. Խորենացին անուղղակիորեն, բայց բավականին պարզ

---

[334] Վռամշապուհի եղբայր Խոսրովը Տիզբոն էր տարվել և բանտարկվել հռոմեացոց հետ բարեկամության և առանց պարսից արքայի համա-ձայնության Սահակ պարթևին կաթողիկոս նշանակելու համար: Երբ Սահակը դիմում է Վռամշապուհին Սահակ Բագրատունու փոխարեն Համազասպ Մամիկոնյանին սպարապետ կարգելու խնդրանքով, Վռամ-շապուհը *«հիշում է, որ հենց այսպիսի բաների պատճառով է վշտեր կրում իր Խոսրով եղբայրը»:* (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., Ծ., ԾԱ.):

[335] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Ա., Ը., Թ.:

կերպով ցույց է տալիս, որ՝ Ա. Վաղարշակը ծագում էր Հայկյան արքայատոհմից, Բ. երկրի ներքին կյանքը նա կանոնավորել է՝ առաջնորդվելով հինավուրց կարգերով:

Ավելին, Խորենացին բազում վկայություններ ունի, ըստ որոնց հայ իշխանական տոհմերի դիրքն ու զորական ուժը կանոնակարգվել են դեռևս Հայկյան առաջին տիրակալների օրոք, երբ պարսկական հետք անգամ չկար տարածաշրջանում: Եթե Հայկյան Արամը երկրի կուսակալներ էր կարգում ազգակիցներից՝ նշանակում է, որ Հայոց աշխարհի սրտում կային տոհմեր, որոնք երկրի հանդեպ ստանձնելով որոշակի պարտավորություններ՝ համապատասխանաբար, ձեռք էին բերում որոշակի դիրք և ազդեցություն: Եթե գրավոր վկայություններ չեն պահպանվել առավել վաղ շրջանում գոյություն ունեցած աստիճանակարգումների մասին, դա ամենևին էլ չի նշանակում, թե այդպիսիք գոյություն չեն ունեցել: Քրիստոնեական ավերիչ հեղաշրջումը միայն դա չէ, որ ջնջել ու մոռացության է մատնել մեզանում: Վերջապես, անհավանական է, որ Աքեմենյան Պարսկաստանից բազում դարեր առաջ Հայկական Լեռնաշխարհի՝ պետական միավորումներ տված տերերը, պարթև արքաներից կամ Սասանյաններից սովորեին պետության ներքին կյանքը կանոնակարգելու արվեստը:

Բ

Մեզ են հասել երկու ցուցակ, որոնցից առաջինում տրված են հայ նախարարների ցանկն ու գահերեցության կարգը (Գահնամակ), իսկ երկրորդում՝ նախարարներին պատկանող զինվորական ուժերի տվյալները (Զորանամակ): Սրանցում առկա հակասություններն ու անունների՝ հաճախ անհամապատասխանությունը տեղիք են տվել տարբեր մեկնությունների: Հարցը խորապես ուսումնասիրած Ն. Ադոնցը կարծում է, որ թեև Գահնամակը վերագրվում է Սահակ պարթևին, սակայն, այն ավելի ուշ շրջանի ծնունդ է: Զորանամակն,

ընդհանրապես, համարելով արհեստականության արդյունք՝ նա դրա թվագրությունը հասցնում է մինչև 6-7-րդ դարեր[336]:

Ըստ նորագույն ուսումնասիրությունների Գահնամակի ցուցակը հաստատված է 430-ական թվերին[337]: Այս ցուցակից օգտվել է և Խորենացին: Ամեն դեպքում, նրա վկայությունը լիովին համընկնում է Գահնամակի նախաբանին: Ըստ դրա Սահակ պարթևը, Արտաշիր արքայի դիվանում գտնելով ռազմական նամակը՝ զորագնդերի ցուցակը, դիմել է պարսից արքային՝ հայ իշխանների գահերեցությունն ըստ այդ ցուցակի, այսինքն, ըստ Զորանամակի, աստիճանակարգելու խնդրանքով: Նրա խնդրանքը հարգվել է[338]: Գահնամակի այս ցուցակը, որում տրված է 70 անուն, պարունակում է նախարարական տոհմերի և նրանցից ղեկավարվող գործակալությունների ցանկը: Տրամաբանությունը հուշում է, սակայն, որ ազնվական տոհմերի գահերեցությանը զուգահեռ, պետք է, որ եղած լինեին նաև արքունի գործակալությունները սահմանող առանձին ցուցակներ: Գահնամակի մեջ սպրդած որոշ անճշտություններ, իմ համոզմամբ, բխում են նաև՝ երկու այդպիսի ցուցակների միախառնումից: Համոզմունքս առավել քան տրամաբանական է, եթե հաշվի առնենք հայոց իշխանական տոհմերի և գործակալությունների քանակը մատնանշող հակասական այն տվյալները, որոնք պարզապես ապշեցուցիչ են: Փավստոսն վկայում է, որ Արշակ Բ արքունիքում սահմանված են եղել 900 գործակալություններ[339]: Որոշ հետազոտողներ եզրակացրել են, թե ազնվական տոհմերը նույնպես 900 են եղել: «Վարք Ներսեսի» հեղինակն Արշակ Բ արքունիքում նշում է 400 գահ կամ բարձ[340]: Ադոնցը, սակայն, սպառիչ կերպով

---

[336] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 266-330:
[337] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 327:
[338] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ԾԱ.:
[339] Փավստոս Բիւզանդ, Պատմություն Հայոց, Դ., Բ.:
[340] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 270-271:

ցույց տվեց բոլոր այս թվերի չափազանցվածությունը: Հարցն, այնուամենայնիվ, լուծում չստացավ: Եվ դա օրինաչափ է: Պարզապես հարկ է ընդունել, որ բոլորն անտեսել են մի պարզ փաստ. տարբեր ժամանակ հայ ազնվական տների քանակն ու դերը և նրանց վարած գործակալությունների բնույթը տարբեր են եղել: Խնդրին պետք է մոտենալ ոչ թե 5-րդ դարում Սահակ պարթևի կազմած Գահնամակի դիրքից, այլ պետք է հաշվի առնել, որ առավել վաղ շրջաններում անկասկած եղել են նմանատիպ ցուցակներ: Այն, որ Պատմահորը հայտնի են եղել նման տեքստեր՝ կասկածից վեր է: Այդ են վկայում նրա մանրակրկիտ նկարագրությունները՝ Հայկյան զահակալներից սերված իշխանական տոհմերի և տարբեր ժամանակ նրանց ստանձնած պարտավորությունների մասին: Առանց նմանատիպ ցուցակների պարզապես անհնար կլիներ Պատմահոր տեղեկացվածությունը: Բուզանդի և Ագաթանգեղոսի տեղեկությունները նույնպես վկայում են, որ նրանց էլ անծանոթ չեն եղել այդպիսի տեքստեր: Մեր պատմիչների շնորհիվ մեզ հասած տվյալներն անգնահատելի վկայություններն են, որոնք մեզ թույլ են տալիս քիչ թե շատ պատկերացում կազմել տարբեր ժամանակ հայոց մեջ տեղի ունեցած ներքաղաքական փոփոխությունների և հայ արքաների որդեգրած քաղաքական-հայեցակարգային ուղղությունների մասին: Իսկ որ այդպիսի փոփոխությունները խիստ հաճախակի էին դարձել հատկապես քրիստոնեության մուտքից հետո՝ ակնհայտ է:

Գ

Նախքան Գահնամակի և Զորանամակի ցուցակներին անդրադառնալը, փորձենք պատկերացում կազմել դրանց հնագույն տարբերակների մասին: Խորենացին հստակ նշում է, որ դեռևս մթա 2-րդ դարում Հայոց տունը կառավարում էին բնիկ հայկական ծագում ունեցող տոհմերը, որոնք սփռված էին հայոց աշխարհում և ձևավորել էին պաշտպանական

կուռ համակարգ՝ գոնե արդեն Արամից սկսած: Վաղարշակը հենց այս տոհմերից սահմանեց նախարարություններ և նրանց վստահեց արքունի հին, և նոր՝ իր ստեղծած գործակալությունները: Որո՞նք էին այդ տոհմերը: Պատմահորը հայտնի է 49 անուն, որոնց ստուգությունը նրա համար կասկածից վեր է: Յուրաքանչյուր խոսքը բծախնդրորեն ընտրող Խորենացին դիտավորյալ չի նշել մի քանի նախարարական տոհմերի զուտ նրա համար, որ դրանց ծագումն ու մեծատոհմիկությունն իր համար պարզ չեն եղել: Դրանցից են, օրինակ, Կորդուքում կամ Տայքում հաստատված տոհմերը: Հայոց աշխարհի այլ շրջաններում եղած որոշ տոհմերին չհիշատակելու պատճառներից մեկն էլ՝ պետությանը նրանց տված զորական ուժի աննշան քանակությունն է եղել[341]: Պատմահայրն ազնվականությունը պայմանավորում էր ոչ միայն արյան մաքրությամբ ու ծագման մեծատոհմիկությամբ, այլև՝ Հայրենիքին մատուցած ծառայությունների չափով: Վաղարշակը Տայքում և Խաղկտիքում տիրող զորեղ տոհմի (դրանք պետք է լինեին Մամիկոնյանները) նախարարությունը չսահմանեց կամ չճանաչեց միայն մի պատճառով. նրանք չէին ընդառաջել երկիրը վերամիավորելու արքայի կամքին: Ազնվական տոհմերի ու նրանց տների կողմից վարվող գործակալությունների ցուցակները, որոնցից անկասկած օգտվել է Խորենացին, կատարելապես համընկնում են Զորանամակով սահմանված ուժերի դասավորությանը և հանգեցնում են հետևյալ պատկերին[342].

---

[341] Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., ԿԴ.:

[342] Պատմահայրը տալով հայ ազնվական տոհմերի ծագումն ու պարտավորությունները, բնականաբար, խնդիր չի դրել տարբեր ժամանակաշրջաններում նրանց դիրքային հարաբերությունները ներկայացնել: Նրա հստակ տեղեկությունները հնարավորություն են տալիս առավել խոր ուսումնասիրելու դեպքում ստանալ կոնկրետ ժամանակահատվածների կտրվածքով ամբողջական պատկերացումներ: Խորենացու նշած 49 նախարարություններն այն հիմնականներն են, որոնք միշտ կազմել են հայոց ազնվականության կորիզը:

հմ.	Անուն	Տիրույթներ	Գործակալություն	Զորքթիվ	Ծագում
1.	Սիսակյան	Սյունիք, Աղվանք	Արլ-ի կուսակալ	19.400	Հայկյան
2.	Գուգարաց	Գուգարք	Հս-ի կուսակալ	4.500	-
3.	Անգեղտան	Մեծ Ծոփք, Անգեղտուն	Արմ-ի կուսակալ	3.400	-
4.	Կաղմյան	Կորդուք	Հվ-ի կուսակալ	3.200	-
5.	Բզնունի	Տուրուբերան, Արածանուց հվ	-	3.000	-
6.	Բագրատունի	Սպեր, Բագրևանդ, Անգեղտուն, Կոգովիտ	Թագադիր ասպետ, Արմ-ի կուսակալ, Սպարապետ	1.000	-
7.	Խոռխռունի	Տուրուբերան	Մաղխազ, Առաջին իշխան	1.000	-
8.	Արծրունի	Վասպուրական Աղբակ	Արծվակիր, Հվ-Արմ. կուսակալ	1.000	-
9.	Ռշտունի	Վասպուրական Տոսպ	Հվ. զորքի հրամանատար Սպարապետ[343]	1.000	-
10.	Մանավազյան	Տուրուբերան, Հարք	-	1.000	-
11.	Մոկաց	Մոկք	-	1.000	-
12.	Կորդվաց	Կորդուք	-	1.000	-
13.	Ապահունյաց	Տուրուբերան	-	1.000	-

[343] Հայոց նահապետների տարբեր ժամանակներում զբաղեցրած զինվորական կամ արքունի այլ պաշտոնների մասին Խորենացու տվյալները հիմնականում համընկնում են Զորանամակում այդ նահապետների տոհմերին հատկացված տեղերի և զինուժի քանակի տվյալներին:

14.	Ծոփաց	Ծոփք	-	1.000	-
15.	Ուտեաց	Ուտիք	-	1.000	-
16.	Գարդման ացի	Գարդմանք	-	1.000	-
17.	Ծավդեացի	Արցախ	-	1.000	-
18.	Վահունի	Տարոն, Աշտիշատ	Քրմապետ քուրմ	1.000	-
19.	Գողթնեցի	Գողթն	-	500	-
20.	Անձևացի	Վասպուրական	Արլ. զորքի հրամանատար[344]	500	-
21.	Որդունի	Տուրուբերան՝ Բասեն	-	700	-
22.	Աշոցյան	Աշոցք	-	500	-
23.	Առավենյան	Այրարատ	-	300	-
24.	Զարեհավանյան	Այրարատ	-	300	-
25.	Աբեղյան	Այրարատ	Սեղանապետ, արքունի գահի սպասավոր	300	-
26.	Գաբեղյան	Այրարատ	Արքունի ձիանոցների վերակացու	300	-
27.	Վարաժնունի	Ծաղկաձոր, Հրազդան	Արքունի որսապետ	300	-
28.	Սպանդունի	Այրարատ	Սպանդանոցների վերակացու	300	-
29.	Հավնունի	Այրարատ	Բազեակիրներ	300	-

[344] Տիրան Առաջինը (120-95մթա) Անձևացյաց ցեղից առաջ մղելով Երախնավուին՝ ամուսնացնում է Արտավազդի կանանցից մեկի հետ, շնորհում Երկրորդական գահ և նշանակում Արևելյան զորքերի հրամանատար (Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ., ԿԲ.):

30.	Զյունական	Այրարատ	Ամառանոցների վերակացու	300	-
31.	Ակեացի	Վասպուրական	-	300	-
32.	Գարգարացի	Գարդմանք	-	-	-
33.	Դիմաքսեան	Շիրակ, Բուխա	-	300	-[345]
34.	Տրունի	Վասպուրական	Լրտես, Հետախուզության պետ	300	-
35.	Տաշրաց	Տաշիր	-	-	-
36.	Սլկունի	Տարոն	-	300	Նախ. հայկյան
37.	Մանդակունի	Տուրուբերան	Սպարապետ	300	-
38.	Մարդպետունի	Պարսկահայք, Վասպուրական	Մարդպետ	40.000[346]	-
39.	Գնթունի	Նիգ, Ապարան	Արքունի հանդերձապետ	300	Քանանացի
40.	Գնունի	Աղիովիտ, Արճեշ	Արքունի մատռվակ, հազարապետ	500	Հայկյան
41.	Մուրացյան	Նախիջևան	Առաջին Իշխան[347]	300	Մար

[345] Դիմաքսյան և Տրունի տոհմերը հաստատել է Արտաշես Ա՝ իբրև պարգև նահապետների անձնական քաջության: Պատմահայրը կոնկրետ չի նշում նրանց ծագումը՝ ասելով միայն, որ Արտաշեսի մերձավորներից էին: Ենթադրելի է, որ պետք է լինեին բնիկներ: Դիմաքսյանների հողերն աստիճանաբար յուրացրեցին Կամսարականները:

[346] Այս թիվն իրականում Մարդպետունիների զորական ուժը ցույց չի տալիս: Այդ Ոստանիկ ասպարակիրների 4 գնդի ընդհանուր գումարն է, որը ենթարկվում էր Հայր Մարդպետին: Ես այն նշել եմ՝ ցույց տալու համար Հայր Մարդպետի կողմից ղեկավարվող զինուժի քանակը:

[347] Այս տիտղոսն Արտաշեսը տվել է մարաց նահապետ Արգամին՝ վստահելով հայոց Երկրորդական գահը (Մովսես Խորենացի, Գիրք Բ., ԽԷ.):

42.	Վանանդեցի	Վանանդ	-	1.000	Բուլղար
43.	Առավեղյան	Ոստան	-	500	Ալան
44.	Ռոփսյան	Ոստան	-	100	Հույն
45.	Աշխադարյան	Ոստան	-	100	-
46.	Ամատունի	Արտազ, Օշական	Հազարապետ, Սպարապետ	200	Հրեա[348]
47.	Կամսարական	Շիրակ, Արշարունիք	Առաջին իշխան Սպարապետ	600	Կարենի Ղանիալ
48.	Մամիկոնեան	Տայք, Տարոն	Սպարապետ, Արմ. զորքի Հրամանատար	1.000	Նախիայկյան
49.	Աղձնյաց	Աղձնիք	Հվ-ի կուսակալ	4.000	Հայկյան

Եվ այսպես, 49 իշխանական տոհմ և նախարարություն՝ սփռված Հայկական լեռնաշխարհում: Դրանց զգալի մասը ծագել է Հայկյան առաջին արքաներից, հայտնի են իրենց գավառներում մինչև Հայկն իշխած տոհմեր, և միայն քչերն են, որ հետագայում հաստատվեցին հարևան երկրներից: Ըստ աղյուսակի, այս 49 տոհմերից 9-ին Պատմահայրը վերագրել է օտար ծագում, 3-ի ծագումն անհայտ է, իսկ մնացած 39-ը բնիկ հայերն են: Ցայսօր վեճի և տարակարծության տեղիք են տվել Մամիկոնյանների, Բագրատունիների, Արծրունիների, Գնունիների ծագման հարցը, ինչն այսուհետ կարելի է լուծված համարել:

Հնագույն ժամանակներից Հայկյան տոհմերին է վստահվել Հայրենիքի պաշտպանության և արքունի գործակալություն-

[348] Ն. Ադոնցն Ամատունիներին վերագրում է իրանական ծագում (Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 466):

ների վարման խնդիրը: Ժամանակի ընթացքում, օտար ծագման որոշ տոհմեր, սկսում են ակտիվ մասնակցել երկրի ներքաղաքական կյանքին: Այսպես, Մուրացյան տոհմին հաջողվում է Արտաշես Ա օրոք ձեռք բերել արքունի երկրորդ գահը: Այսինքն, այստեղ հանդիպում ենք «Առաջին իշխան» տիտղոսի փոխանցմանը Բագրատունիներից եկվոր մարերին: Արտավազդ արքայորդին թեև խլում է այդ տիտղոսն ու Մուրացյաններին զրկում իրենց բոլոր արտոնություններից, սակայն, այս տոհմը դեռ երկար ժամանակ շարունակեց բարգավաճել Հայաստանում: Արտաշեսի օրոք Հայաստան են գալիս հրեա Ամատունիները, որոնց արդեն քրիստոնեության նախաշեմին տեսնում ենք Հազարապետության գործակալությունը գլխավորելիս, կամ նույնիսկ, Սիսական իշխանի փոխարեն՝ հայոց արևելյան զորքերը վարելիս:[349] Աստիճանաբար մեծ ազդեցություն են ձեռք բերում Կամսարականները, որոնք տիրանում են «Առաջին իշխան» տիտղոսին:

Այս ամենին զուգահեռ, քրիստոնեության մուտքն ու դրան նախորդած և հաջորդած շրջանները համընկնում են բնիկ հայկական ծագման որոշ տոհմերի վերացմամբ: Աստիճանաբար ասպարեզից անհետանում են Վահունիները[350],

---

[349] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Բ., ՁԲ, ՁԵ

[350] Վահունյաց տոհմի դեմ հալածանք սկսեց դեռևս Տիգրան Մեծը: Խորենացին նշում է, որ լսելով հունական քրմերին՝ Տիգրանը Ափրոդիտեի արձանը կանգնեցնում է Աշտիշատում իբրև Վահագնի տարփածուի, Վահունիներին զրկում քրմության պաշտոնից: Փոքր-ինչ խրթին է ներկայացված պատմությունը: Արդյունքում Վահունիներին պատժելու բուն պատճառը պարզ չէ: Իրենց դերն են կատարել Պատմահոր հետագա խմբագիրները: Իրականում, խոսքն այն մասին է, որ Արևմուտքից բերելով օտար աստվածների՝ Տիգրանը փորձել է նրանց պաշտամունքը սինթեզել հայոց դավանանքին: Վկան՝ Ափրոդիտեին Վահագնի տարփածու համարելու փաստը: Վահունյաց քրմերն անկասկած դիմադրել են և, բնականաբար, պատժվել: Վահունիներն ասպարեզից վերջնական հեռացան Գրիգորի Աշտիշատ մտնելուց հետո:

բնաջնջման եզրին են կանգնում և մոռացության մատնվում Մանդակունիները[351]: Քրիստոնեության մուտքը նշանավորվեց Գրիգորի տոհմին ակտիվ օժանդակող մի շարք տների՝ եկվոր, թե բնիկ, դիրքերի ամրապնդմամբ՝ ի հաշիվ հինավուրց տոհմերի: Արդեն նշվեց Ամատունիների մասին: Խոսրով Կոտակի օրոք Ամատունիներին անցավ Օշականը շրջակայքով[352]: Մամիկոնյանների ներգաղթած ճյուղն ընդունելություն չգտնելով Տայքի իր բնօրրանում, ոչնչացնում է Սլկունիներին և ժառանգում նրանց հայրենի Տարոնը՝ Ողական ամրոցով: Դրանով հիմնվում է Մամիկոնյանների երկրորդ տոհմը՝ Գրիգորի տոհմական կալվածքների սերտ հարևանությամբ: Սլկունիների բեկորներին հետագայում հանդիպում ենք արդեն իբրև ճգնավորների և միայնակյացների: Իսպառ բնաջնջվում են Բզնունիները, Մանավազյաններն ու Որդունիները, որոնց ողջ ժառանգությունն անցնում է եկեղեցուն:

Այսուհանդերձ, կարելի է վստահորեն պնդել, որ մինչև կրոնական հեղաշրջման նախապատրաստական աշխատանքները Հայքի ներքին կյանքն ու պետական ապարատը վարող ամենաազդեցիկ տոհմերն էին.

N	Անուն	Գործակալություն	Զորքի թիվ	Ծագում
1	Մարդպետունի	Մարդպետ	40.000	Հայկյան
2	Սյունի կամ Սիսական	Կուսակալ	19.400	-
3	Գուգարաց	Կուսակալ	4.500	-
4	Աղձնյաց	Կուսակալ	4.000	-
5	Անգեղտան	Կուսակալ	3.400	-
6	Կաղմյան	Կուսակալ	3.200	-
7	Բզնունի	-	3.000	-

[351] Սպարապետ Արտավազդ Մանդակունու մահից հետո նրա տոհմի մասին այլևս չի խոսվում:

[352] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., Թ.:

8	Վահունի	Քրմապետություն	1.000	-
9	Խոռխոռունի	Մաղխազ	1.000	-
10	Արծրունի	Արծվակիր, կուսակալ	1.000	-
11	Բագրատունի	Թագադիր, կուսակալ	1.000	-
12	Ռշտունի	Զորապետ	1.000	-
13	Մամիկոնյան	Զորապետ	1.000	Նախա հայկյան
14	Մանդակունի	Սպարապետ	300	-

Քրիստոնեության հաստատման նախաշեմին, սպարապետ Արտավազդ Մանդակունու մահից հետո, Տրդատ Գ չորս զորաբանակների հրամանատարներն են. Վահան Ամատունին՝ Սյունյաց նահապետի փոխարեն, վրաց Միհրանը՝ Գուգարաց իշխանի փոխարեն, Բագարատ ասպետը և Մանաճիհր Ռշտունին:[353] Հազարապետության պաշտոնը վստահված է քրիստոնյա Օտա Ամատունուն: Այս ամենն, ինչպես դեռ կտեսնենք, այնքան էլ բնական արտացոլումը չէին՝ ուժերի իրական դասավորության:

Գ

301 թվական. մեհենական հարստության թալանի տենչն երկրում իրար էր խառնել ամեն ինչ: Քրմական անսպառ հարստությունը՝ ահա թե ինչն էր պարթև Գրիգորին զորավիգ կանգնած նախարարներին մղող ուժը: Այս թալանին չմասնակցողները շատ քիչ էին և պատժվեցին բնաջնջմամբ կամ՝ ասպարեզից դուրս մղվելով: Վերջիններիս թվում էին Տայքի Մամիկոնյանները: Նորահաստատ կրոնն իր հետ բերեց ներքաղաքական շատ փոփոխություններ: Գլխիվայր շրջվեց Գահերեցության կարգը Հայոց աշխարհում: Պարթև Գրիգորին Կեսարիա ուղեկցող իշխանների ցուցակում տեսնում ենք

[353] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., ՁԵ.:

այդ ամենի արձագանքը: Եվ այսպես, Գրիգորին Կեսարիա ուղեկցող հայոց ամենաերևելիներն էին[354].

N	Անուն	Գործակալություն	Զորքի թիվ	Ծագում
1	Անգեղտան իշխան	Կուսակալ	3.400	Հայկյան
2	Աղձնյաց բդեշխ	Կուսակալ	4.000	-
3	Մարդպետության իշխան	Հայր Մարդպետ	40.000	-
4	Ասպետական իշխանության թագադիր իշխան	Թագադիր, զորապետ	1.000	-
5	Սպարապետության իշխան	Սպարապետ	300	Նախա հայկյան
6	Կորդվաց իշխան	-	1.000	Հայկյան
7	Ծոփաց իշխան	Կուսակալ	1.000	-
8	Գուգարաց բդեշխ	Կուսակալ	4.500	-
9	Ռշտունյաց իշխան	Զորապետ	1.000	-
10	Մոկաց իշխան	-	1.000	-
11	Սյունյաց իշխան	-	19.400	-
12	Ծավդեից իշխան	-	1.000	-
13	Ուտեացոց իշխան	-	1.000	-
14	Զարավանդի և Հերի շահապ իշխան	-	?	-
15	Մաղխազության տան իշխան	Մաղխազ	1.000	-
16	Արծրունյաց իշխան	Արծվակիր	1.000	-

Հունարեն «Վարքում» ցուցակը եզրափակվում է հետևյալ խոսքերով. *«Մնացած նախարարներն էլ հավաքվեցին՝ ըստ իրենց գրված հերթականության»:* Այս տողերը վկայում են, որ ցուցակում տրված հերթականությունն արտացոլում է այդ պահին հիշյալ նախարարությունների գրված դիրքն ու

[354] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, էջ 125-126:

ազդեցությունը հայոց պետական կյանքում: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Սյունյաց զորեղ տոհմը հայտնվել է ցուցակի 11-րդ տեղում՝ այն դեպքում, երբ մինչ այդ միշտ եղել է հայոց առաջին տոհմերի հնգյակում: Հունարեն «Վարքում» ցուցակը գլխավորում են վրաց, աղվանից և լազերի թագավորները, որով Սիսական տոհմը գրավում է 14-րդ բարձը: Մեկ ուշագրավ հանգամանք. ցուցակում նշված «սպարապետության իշխանի» փոխարեն հունարեն «Վարքն» ունի հետևյալ հավելումը. *«Մամիկոնյանների նախարար, սպարապետ, որին էին ենթարկվում Հայոց ամբողջ հեծելազորն ու հետևակը և միշտ Հայոց թագավորի հետ էր լինում և պատերազմում նրա զորավարությանն էին ենթարկվում բոլոր վերոհիշյալները և նրանք, որոնց մասին խոսք կլինի ստորև...»*:[355] Ապա շարունակվում է ցուցակի շարադրանքը: Ակնհայտ է, որ հայերեն բնագրում «Սպարապետության իշխան» ասելով նկատի է ունեցվել Մանդակունյաց նահապետը. Խորենացին Արտավազդ Մանդակունու մասին պատմում է ամենայն մանրամասնությամբ, և ոչ մի հիմք չկա Պատմահորը կասկածելու համար: Բացի այդ, հայտնի է, որ Արտավազդի մահից հետո իրականացրած զինվորական ռեֆորմով Տրդատը նոր սպարապետ չնշանակեց՝ բանակը վստահելով չորս զորավարներին:[356] Այդ կարգը շարունակվեց մինչև Տիրան Երկրորդ արքան: Կասկածից վեր է, որ Մամիկոնյանների անվան հիշատակումն այստեղ՝ արդեն արդյունք է հետագա շրջանում այդ տոհմի առաջխաղացման, որից հետո, Մամիկոնյանների և Գրիգորյանների կամքով, այս երկու տոհմերն էին նշվում՝ չորրորդ դարի հայոց պատմության բոլոր դրվագներում:

Ցանկից դուրս են մնացել նախկինում հզոր այնպիսի տոհմեր, ինչպիսիք էին Բզնունիներն ու Մանավազյանները,

---

[355] Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ծան. 44:

[356] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Բ., ՁԵ.: Տես նաև՝ Ա. Դանիելյան, Տրդատ 3-րդի զինվորական ռեֆորմը, ՊԲՀ, 1974, թ. 4:

ինչն ընդհամենը սկիզբն էր այն փոփոխությունների, որոնցով հագեցած է չորրորդ դարը:

Դ

Տրդատ Գ հաջորդ Կոտակի տիրապետության շրջանը լի էր կտրուկ շրջադարձերով: Նախ, նոր կրոնի առկայության փաստին այդպես էլ չհամակերպվելու և քահանայապետական օրեցօր աճող իշխանությանը չենթարկվելու պատճառով՝ իսպառ բնաջնջվեցին Հայկյան Բզնունիները, Մանավազյաններն ու Որդունիները: Կղերական սադրանքներին զոհ է գնում Մանաճիհր Ռշտունին, որով՝ նրա տոհմն առժամանակ թուլացնում է իր դիրքերն արքունիքում: Փոխարենը, դեռևս իրենց բարձրության վրա են Բագրատունիներն ու Խոռխոռունիները: Մարդպետունիներն ու Սյունիները զիջել են իրենց դիրքերը: Իրենց տարերքի մեջ են Տարոնի Մամիկոնյանները, որոնց Վաչէ նահապետն այնքան է ակտիվանում, որ Բուզանդն իրեն հատուկ կողմնապահությամբ միայն նրան է տեսնում արքայի կողքին: Երկրի փաստացի տերը, սակայն, Գրիգորի տոհմն է՝ Վրթանեսի գլխավորությամբ:

Այս կացությունը լավագույնս արտացոլված է մի ցուցակում, որը պարունակում է Տիրանի գահակալության սկզբում Հուսիկին Կեսարիա ուղեկցող հայոց ավագանու կազմը[357].

N	Անուն	Գործակալություն	Ծագում
1	Անձիտի իշխան	Հազարապետ	Հայկյան
2	Մեծ Ծոփքի իշխան	Կուսակալ	-
3	Շահունյաց Ծոփքի իշխան	-	-
4	Հաշտենից Կամինական իշխան	-	-
5	Վանանդի իշխան	-	Բուլղար

[357] Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, ԺԲ.:

6	Անձևացյաց իշխան	-	Հայկյան
7	Գողթնի իշխան	-	-
8	Կողբի իշխան	-	-
9	Զորի իշխան	-	-
10	Խոռխոռունյաց իշխան	Մաղխազ	-
11	Սահառունյաց իշխան	-	-
12	Գնունյաց իշխան	Արքունի մատռվակ	-

Սրանք էին Խոսրով Կոտակի օրոք հայոց պետական կյանքը վարող տոհմերը: Տիրանի գահակալման սկզբում հենց այս տոհմերից էին համալրված արքունի գործակալությունները: Եվ սա այն դեպքում, երբ ներքաղաքական զզվռտոցներից հեռու՝ Արշավիր Կամսարականն ու Անդովկ Սյունին էին միայն, որ զբաղված էին երկրի պաշտպանության հոգսերով:

Այս պատկերն ամբողջովին փոխված ենք տեսնում Տիրանի գահակալման վերջում՝ Փառենին Կեսարիա ուղեկցող մեծամեծների ցուցակն աչքի անցկացնելիս: 14 ավագ նախարարների ցանկը չթվարկելով՝ Բուզանդը սահմանափակվում է միայն դրանցից չորսի անունը տալով իբրև *«մեծք եւ գլխաւորք նահապետք»:* Այդ գլխավորներն էին. Վասակ Մամիկոնյան՝ Տայքից, Մեհենդակ Ռշտունի, Անդովկ Սյունի, Արշավիր Կամսարական:[358] Այսինք, խոսքը սոսկ ուժերի կամայական վերադասավորության մասին չէ: Այստեղ առկա է կոնկրետ քաղաքական-գաղափարական շրջադարձ, որի վկայությունն է՝ թեկուզ Վասակի առկայությունը ցուցակում: Վասակը մինչև 5-րդ դար քրիստոնեություն չընդունած գավառների տերն էր՝ առաջին տայեցին, որ երկարատև ընդմիջումից հետո կրկին հայտնվել էր քաղաքական երկնակամարում: Նույնը կարելի է ասել Մանաճիհրի որդի Մեհենդակի մասին, ով հոր մահից հետո մնացել էր ստվերում: Բոլոր այս չորսն էլ հայտնի էին

[358] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԶ.:

իրենց պետականամետ դիրքորոշմամբ, կողմնակից էին արքայական կենտրոնացված իշխանության և աչքի էին ընկնում իրենց անտարբերությամբ՝ դեպի նոր կրոնը: Փոքր-ինչ ավելի ուշ, ասպարեզ է ելնում Մարդպետունյաց տոհմը՝ իրեն վստահված համանուն գործակալությամբ: Ընդ որում, Շահակին Կեսարիա ուղեկցող նախարարների մասին Բուզանդի խոսքերից ի հայտ է գալիս այն հատուկ, մինչ այդ չտեսնված զորությունը, որ Տիրանի վերջին և Արշակի առաջին տարիներին ուներ Հայր Մարդպետը: Այսպես, ըստ Բուզանդի՝ արքան Շահակ կաթողիկոսին հանձնեց Հայր Մարդպետի ձեռքը:[359]

Արշակ Բ օրոք, արդեն սովորական երևույթ է ավանդական Հայկյան տոհմերի առաջնային կարգավիճակն արքունիքում: Բացառություն են Կամսարականներն ու Ամատունիները: Սակայն, ի տարբերություն Ամատունիների, որոնք պետություն-եկեղեցի հակամարտության բոլոր շրջաններում, մշտապես եղել են եկեղեցու կողքին՝ Կամսարականների նահապետ Արշավիրը մինչև վերջ իր տոհմը ծառայեցրեց Արշակ արքայի հզորության համար:

Տեսնենք, թե ովքեր էին այն երևելիները, ովքեր Ներսեսին ուղեկցում էին Կեսարիա ձեռնադրվելու.

N	Անուն	Գործակալություն	Ծագում
1	Մարդպետունի	Հայր Մարդպետ	Հայկյան
2	Բագարատ Բագրատունի	Թագադիր	-
3	Ծոփաց Դանիել իշխան	Կուսակալ	-
4	Մեհենդակ Ռշտունի	Զորապետ	-
5	Անդովկ Սյունի	Կուսակալ, զորապետ	-
6	Արշավիր Կամսարական	Առաջին իշխան	Պահլավ
7	Շահունյաց Ծոփքի Նոյ իշխան	Կուսակալ	Հայկյան
8	Պարգև Ամատունի	-	Հրեա

[359] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԺԷ. «Եւ տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութեանն...»:

Եթե այս ցուցակին ավելացնենք Արշակ Բ կողմից Բյուզանդիա ուղարկված մեծամեծների ցանկը, ապա կուրվագծվի ներքաղաքական այն իրավիճակը, որ գոյություն ուներ Հայաստանում նրա օրոք.

N	Անուն	Գործակալություն
1	Տայքի նահապետ Վարդան Մամիկոնյան	-
2	Մեհենդակ Ռշտունի	Զորապետ
3	Մեհառ Անձևացի	-
4	Գարջույլ Խոռխոռունի	Մաղխազ
5	Մուշկ Սահառունի	-
6	Գնել Գնունի	Հազարապետ
7	Բառնեից Կիշկեն նահապետ	-
8	Գաբեղենից Սուրիկ նահապետ	-
9	Հաբուժենից Վրկեն նահապետ	-

Այս 16 իշխանների (Մեհենդակ Ռշտունու անունը կրկնվում է) կողմից ներկայացված տոհմերն՝ այն հիմնական ուժն էին, որոնք, բացառությամբ Ամատունիների, կանգնած էին Արշակի որդեգրած՝ ուժեղ, կենտրոնացված իշխանության ստեղծման դիրքերում: Հետագա միակ փոփոխությունը Կամսարականների բնաջնջումն էր: Ինչպես տեսնում ենք, Արծրունիներն այս ցուցակում չկան: Պատճառը Մեհրուժան Արծրունին է, որին Արծրունյաց երկրորդական ճյուղի բնաջնջումից հետո Բուզանդն համառորեն չի հիշատակել, թեև համարել է տոհմի նահապետ: Կամսարականների բնաջնջումով առաջ է մղվում Խոռխոռունյաց նահապետը: «Առաջին իշխան» տիտղոսն Արշակը շնորհում է Գարջույլ Մաղխազին: Հենց այս հանգամանքն էլ դարձել է 5-րդ դարում հաստատված՝ մեզ հայտնի Գահնամակի շփոթեցնող փաստերից մեկը: Սակայն, ոչ միակը, քանզի այստեղ, միմյանց են խառնված նախարարական տոհմերն ու նրանց ներկայացուցիչներից վարվող գործակալությունները: Գրված լինելով 430-ական թվականներին՝ այն ճշտությամբ արտացոլում է մարզպան-

ական Հայաստանում տիրող իրավիճակը, բայց դրանով հանդերձ նրանում ցայտուն կերպով պահպանված են ավելի վաղ՝ ընդհուպ, մինչև չորրորդ դարին հատուկ կարգեր.

N	Անվանում	N	Անվանում
ԱՌԱՋԻՆ ԻՇԽԱՆ ՀԱՅՈՑ ԵՎ ՄԱՂԽԱԶՆ			
ա	Սիւունեաց տէր	լզ	Այղ Աբեղեանն
բ	Ասպետն	լէ	Այղ Դիմաքսեանն
գ	Արծրունեաց տէր	լը	Պալունին
դ	Մամիկոնէից տէր	լթ	Առաւեղեանն
ե	Շահապն Ծոփաց տէր	խ	Աշահմարեանն
զ	Մոկաց տէր	խա	Համբուժեանն
է	Ռշտունեաց տէր	խբ	Վարասպակեանն
ը	Վահունեաց տէր	խգ	Ձիւնականն
թ	Կասպէից տէր	խդ	Ակէացին
ժ	Անձաւացեաց տէր	խե	Զարեհաւանեանն
ժա	Ապահունեաց տէր	խզ	Ընծայեցին
ժբ	Կամսարականն	խէ	Մանդակունին
ժգ	Այղ Ապահունի	խը	Սղկունին
ժդ	Վանանդացին	խթ	Տայգրեանն
ժե	Ամատունի տէր	ծ	Երմանթունին
ժզ	Գողթան տէր	ծա	Սպանդունին
ժէ	Գնունեաց տէր	ծբ	Առաւենեանն
ժը	Այղ Անձաւացի	ծգ	Տրունին
ժթ	Տայոց	ծդ	Տամբերացին
ի	Բասենոյ դատաւորն	ծե	Հաւնունին
իա	Գնթունեաց տէր	ծզ	Բժնունին
իբ	Վարձաւունին	ծէ	Քաջբերունին
իգ	Գարդմանայ տէր	ծը	Մեհնունին
Իե	Սահառունին	ծթ	Նախճերին
իզ	Գաբեղէնից տէր	կ	Քաղաքապետն արքունի
իէ	Աբեղէնից տէր	կա	Որսապետն արքունի
իը	Սիւնեաց երկրորդն	կբ	Արտաշեսեանն
իթ	Արծրունեաց երկրորդն	կգ	Վանանդացին երկրորդ
լ	Արծրունեաց երրորդն	կդ	Ցուլն

լա	Մամիկոնէից երկրորդն	կե	Վիժանունի
լբ	Ռոփսեանն	կզ	Աքածու
լգ	Աշոցեանն	կէ	Շիրակա Դիմաքսեան
լդ	Դիմաքսեանն	կը	Գազրիկանն
լե	Բուխա Դիմաքսեանն	կթ	Մուրացեան տէր
		հ	Վաագրասպունին

Այն, որ այս ցուցակը կազմված է առավել վաղ գոյություն ունեցող բնագրի հիման վրա՝ այնքան էլ դժվար չէ նկատել: Նախ, հաստատված լինելով 434-435թթ.՝ այն պետք է, որ արտացոլեր բացառապես մարզպանական Հայաստանի իրավիճակը: Մինչդեռ, այստեղ կան բավական անուններ, որոնք խոսում են ցուցակի՝ հնագույն ժամանակներում կազմված բնագրի մասին: Ավելին, ես հավանական եմ համարում, որ պարսից արքունի դիվանը Սահակին է տրամադրել տարբեր ժամանակներում հաստատված Գահնամակների մի քանի բնագրեր այն պարզ պատճառով, որ այստեղ առկա են ժամանակագրական բազմաթիվ շերտեր: Այսպես, մարզպանական Հայաստանի կազմից դուրս էին Ծոփքի սատրապությունն ու Կասպքը[360]:

Վահունիներն ու Սլկունիներն այլևս գոյություն չունեին իբրև տոհմ: Ցուցակում առկա է Դիմաքսյանների չորս տոհմ: Այնինչ, հայտնի է, որ Շիրակին և Արշարունիքին տիրող Դիմաքսյանների տոհմի տարբեր ճյուղավորումները, դեռևս Արշակունիների օրոք, արդեն կուլ էին գնացել Կամսարականներին: Այս և մի քանի այլ կրկնվող անուններ, որոնք ժամանակին նշել է Ն. Ադոնցը, վկայում են, որ Գահնամակի ցուցակը կազմողները շատ տեղերում շփոթել են ձեռքի տակ ունեցած բնագրերն իրենց ժամանակի իրողության հետ: Ցուցակն ունի մի քանի այլ թերություններ ևս: Նախ, իշխանական տոհմանունները խառնված են ժամանակին գոյություն

[360] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 266-330:

ունեցած արքունի գործակալություններին: Եվ ապա, դեռ Ն. Ադոնցն է ուշադրություն դարձրել այն հանգամանքի վրա, որ ցուցակում պակասում է ԻԴ համարը: Այս փաստը նա իրավացիորեն համարել է հետևանք այն բանի, որ Խոռխոռունյաց որևէ նահապետ ստանալով «Առաջին իշխան» տիտղոսը, դուրս է բերվել ցուցակից և դասվել Գահնամակի գլխավերևում: Փորձելով ուղղել սխալը՝ նա Մամիկոնյաններից առաջ դնում է «Մաղխազունի» անունը, իրավամբ 4-րդ տեղը համարելով նրանը[361]:

Սակայն, չպետք է շփոթել արքունի գործակալությունը նախարարական տոհմի հետ: Մաղխազը Խոռխոռունիների ժառանգական պաշտոնն էր, և Խոռխոռունիներն, իրոք, Վաղարշակին ուղարկված Գահնամակի ցուցակում զբաղեցրել են 4-րդ տեղը[362]: Արդեն նշվել է «Առաջին իշխան» տիտղոսի Կամսարականներից Խոռխոռունիներին անցման պատմությունը: Ավելացնեմ, որ Բուզանդը մի առիթով վկայում է, որ Հայր Մարդպետի բարձն ամենավերևում էր արքունիքում:[363] Դա նշանակում է, որ անգամ հայոց Երկրորդական գահը ձեռք բերելուց հետո, Խոռխոռունյաց Մաղխազը չպետք է, որ դասվեր բոլոր տոհմերից վեր: Այս դեռ բավական չէ, ցուցակն՝ ընդգրկելով միայն պետականության ժամանակաշրջանում գոյություն ունեցած մի շարք գործակալությունների անուններ, չի նշում Մարդպետության գործակալությունը՝ ոչ իսկ, Մարդպետունյաց տոհմի անունը: Այս հանգամանքն, ըստ իս, ունի մեկ բացատրություն. «Առաջին իշխան Հայոց և Մաղխազն» Խոռխոռունին վեր է դասվել բոլորից՝ զուտ տոհմական բարձերի կարգը սահմանող Գահնամակում: Մինչդեռ, գոյություն ունեցած մեկ այլ՝ արքունի գործակալությունների ցուցակում, ամենաբարձր տեղում է եղել Հայր

---

361 Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 331-357:

362 Ուխտանես եպիսկոպոս, Պատմություն Հայոց, էջ 40:

363 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., Է.:

Մարդպետը: «Առաջին իշխան» և «Մաղխազ» անուններն, այսպիսով, միախառնվել են մեր այս ցուցակում: Ազնվական տոհմերի կարգը սահմանող տեքստում պետք է լիներ միայն «Առաջին իշխան Հայոց» տիտղոսը՝ ցուցակի գլխամասում, ապա 4-րդ տեղում՝ Խոռխոռունյաց, այլ ոչ՝ «Մաղխազունի» անունը: Մաղխազական գործակալությունը մյուս պաշտոնների հետ միասին, պետք է հայտնվեր մեկ այլ ցուցակում՝ Մարդպետական գործակալությունից ներքև:

Ե

Սահակյան Գահնամակի ցուցակը կազմողների շփոթմունքն առավել բացատրելի կդառնա, եթե հաշվի առնենք, որ նրանց ձեռքի տակ եղած՝ տարբեր ժամանակ հաստատված բնագրերին կից, եղել է նաև մեկ այլ՝ հայոց զինուժը սահմանող վավերագիր: Այդ վավերագիրն այն հիմքն է, որի տվյալներն օգտագործվել են Գահնամակի ցանկացած ցուցակ կազմելիս: Այս վավերագրին տրվել է «Զորանամակ» անվանումը: Ն. Ադոնցը թեև ընդունում է ցուցակի՝ արքայական շրջանում գոյություն ունեցած իրավիճակն արտացոլելու փաստը, սակայն, այն համարում է ստեղծված Զ դարից ոչ շուտ, արհեստածին, կյանքից կտրված մի փաստաթուղթ: Փորձեմ պնդել հակառակը: Թե ինչն է ստիպել մեծանուն գիտնականին թերահավատությամբ մոտենալու այս փաստաթղթի վաղեմության հարցին, կհասկանանք՝ կարդալով ցուցակը.

Արմ Դուռն	Զորք թիվ	Արլ. Դուռն	Զորք թիվ	Հս. Դուռն	Զորք թիվ	Հվ. Դուռն	Զորք թիվ
Անգեղ տուն	վն	Սիւնի	աքն	Բդեշխն Գուգա բաց	տշ	Կադմ էացի	ավմ
Բդեշխն Աղձնեաց	ա	Ամա սկոնի	մ	Կամսա բական	ռ	Կորդ վացի	ռ

Բզնուն ական	վ	Աւած ացի	մ	Կասպ եցի	վ	Արծր ունի	ռ
Մանա ւազեան	ռ	Վարձ ատունի	մ	Ուտէ ացի	ռ	Ռշտ ունի	ռ
Բագրա տունի	ռ	Տամր ատացի	ճ	Ծաւդէ ացի	ռ	Մոկ ացի	ռ
Խոռխո ռունի	ռ	Մազա զացի	ճ	Տայեցի	ռ	Գողթ նեցի	շ
Ծոփացի	ռ	Ցողկ եպան	ճ	Մամիկ ոնեան	ռ	Անձե ւացի	շ
Վահունի	ռ	Գրզճ ունի	ծ	Վանան դացի	ռ	Հարու ժեան	ճ
Ապահ ունի	ռ	Վառն ունի	ծ	Գարդմ անեցի	ռ	Տրպա տունի	ճ
Գնունի	շ	Բաք ան	ծ	Որդունի	չ	Մեհն ունի	ճ
Բասեն ացի	ռ	Կճր ունի	ծ	Առուեղ եանք	շ	Ակէ ացի	յ
Պալունի	յ	Գուկ անն	ծ	Աշոց եան	շ	Զարէ հաւա նեան	յ
Ընծաքին	տ	Պատ սպա ռունի	ծ	Դիմաք սեան	յ	Երու անթ ունի	յ
Մանդա կունի	յ	Գազր իկան	ծ	Գընթ ունի	յ	Համա ստու նեան	ճ
Սաղկ ունի	յ	Վիժա նունի	ծ	Բոխա յեցի	յ	Արտ աշես եան	յ
Վարաժ նունի	յ	Զանդ աղան	ծ	Գաբեղ եան	յ	Բագր ատ ունի	ճ
Այծեն ական	ճ	Սոդ ացի	ծ	Աբեղ եան	յ	Աբրա համ եան	ճ

Առուեն եան	յ	Աքած եցի	ծ	Հաւն ունի	յ	Տրունի	յ
Վարժն ունեան	ճ	Ասճշ նեան	ծ	Սահառ ունի	յ	Բուժ ունի	մ
Սպանդ ունի	յ	Կին ան	ծ	Ձեւնակ անան	յ	Քաջբ երունի	ճ
Ռափսե ան	ճ	Տագր եան	ծ	Աշխադ արեան	ճ	Բոդ ունի	ճ
				Վարազ արտիկ եան	ճ	Մուր ացան	յ

...եւ զոմանս ի յայլ աշխարհս գրաւեալս, եւ լինի թիւ մարտիկ արանց որ ընդ ազգաւք ձդ-ից հազարաց թող զսպասաւորս դրանն արքունի որ է ոստան դ, որք ի պատերազմ ելանէին ընդ արքայի եւ մարդպետական, որ է ներքինի պահապան ի վերայ թագուհւոյն եւ զանձուցն եւ ընդ ամենայնն թիւ զօրացն հայոց որ է հարիւր եւ քսան հազարաց:

Ա. Մուշեղյանն առաջինն է, որ հստակ տարբերակում է դրել զորավար մարդպետի և ներքինի մարդպետի միջև[364]: Այս տողերը փաստում են ոչ միայն Հայր Մարդպետից ղեկավարվող արքունի չորս Ոստան գնդերի (40.000) գոյությունը, այլ մի հետաքրքիր հանգամանք ևս, որին հարկ է ուշադրություն դարձնել. այստեղ խոսվում է 120.000-ոց հայկական բանակի Հայր Մարդպետի կողմից գլխավորվելու մասին: Արշակունյաց հարստության շրջանից նման փաստ մեզ հայտնի չէ: Եթե ճիշտ են այս տեղեկությունները, ապա կարելի է ենթադրել, որ դեռևս Արշակունիներից առաջ, ինչոր մի ժամանակ, Հայր Մարդպետը եղել է հայոց բանակի գերագույն հրամանատար: Սա մի հիմք է՝ Զորանամակի տարիքը առավել վաղ շրջանների վերագրելու համար:

[364] Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, էջ 235-246:

Այսպիսով, հայոց զորքերը բաժանված են չորս դռան կամ զորավարությունների: Այս փաստը համադրելով հայոց չորս զորապետների մասին Խորենացու տեղեկություններին՝ Ն. Ադոնցն եզրակացրել է, թե այդ արդյունք է Պատմահոր երևակայության, որի պատճառն իրանական ազդեցությունն է: Ապացույց՝ Բուզանդի մոտ նման ակնարկներ չկան[365]: Խորենացին, իբրև թե հաշվի առնելով պարսկական իրողությունը, նույնը վերագրել է հայերին՝ բանակի բաժանումը վերագրելով Արտաշես արքային: Ըստ Ադոնցի, քանի որ հայոց զինուժի ընդհանուր հրամանատարները Մամիկոնյան սպարապետներն են եղել, ապա Զորանամակի այս բաժանումը, որ լիովին համապատասխանում է Խորենացու տվյալներին՝ ընդամենն արհեստականության արդյունք են, և ապացուցում են նրա՝ 7-րդ դարի, գրքային՝ իրական հիմքից զուրկ լինելու վիճակը: Այսպիսով, հաշվի առնելով, որ Խորենացին ձեռքի տակ ունեցել է 7-րդ դարում ստեղծված արհեստական այս ցուցակը, արդեն դժվար չէ Պատմահոր ժամանակը տեղափոխել առնվազն մինչև 7-րդ դարավերջ:

Նախ, տեսնենք, թե իրոք Բուզանդն անտեղյակ է հայոց բանակը չորս զորավարական ուղղությունների բաժանելու սկզբունքին: Գանձակի ճակատամարտից հետո, ըստ նրա, Ատրպատականի սահմանին է մնում Դղակ մարդպետը՝ 30.000 զորքով: Նույն ուղղությամբ էր գործում նաև Գնել Անձևացին: Եթե այս փաստը բավական չէ՝ Բուզանդի մոտ հայոց բանակի արևելյան ստորաբաժանման առթիվ նկատեմ, որ լրացնելով նրան՝ Խորենացին Գնելին համարում է Արևելյան զորքերի հրամանատար: Բացի դա, Բուզանդին հայտնի է հայոց սահմանները հսկող չորս կուսակալների՝ բդեշխների առկայության փաստը: Այս բդեշխներն էլ հենց այն գլխավորներն են, որոնցով սկսվում է Զորանամակի չորս դռների ցուցակը՝ Անգեղ տուն, Սիւնի, Գուգարաց, Կաղմէացի: Սա Բուզանդի

[365] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 266-330:

վկայություններին՝ Զորանամակի չհակասելու փաստերից է: Մինչ օրս բդեշխությունների մասին կարծիքները հայագիտության մեջ ամրապնդվել են՝ համաձայն Պլուտարքոսի մի վկայության թյուրըմբռնման: Ըստ Պլուտարքոսի, Տիգրան Մեծին մշտապես շրջապատում և ծառայում էին չորս թագավորներ: Դրանից Մարկվարտը եզրակացրել է, որ դրանք հենց չորս բդեշխներն էին: Համարյա բոլոր ուսումնասիրողներն, այսպիսով, բդեշխությունների ձևավորումը կապել են Տիգրան Մեծի ժամանակաշրջանի հետ:[366] Նախ, այնքան էլ համոզիչ չի թվում չորս թագավորներին բդեշխների հետ նույնացնելու գաղափարը: Երկրորդ, բդեշխությունների մասին անուղղակի վկայություններ կան Խորենացու մոտ՝ դեռևս Հայկյան Արամի ժամանակներից: Առավել համոզիչ է թվում Ս.Կրկյաշարյանի այն պնդումը, որ բդեշխության համակարգն օտար երևույթ չէր հայոց համար, այլապես Տիգրան Մեծից հետո այն իսկույն կվերանար: Բդեշխներն առկա են եղել մեզանում թերևս Ուրարտական շրջանից էլ առաջ, պարզապես, դրանց մասին ստույգ վկայություններն արդեն ստացել ենք Արտաշեսյան հարստության շրջանից:

Մեկ հանգամանք ևս. Բուզանդին հատուկ է Արշակունյաց շրջանի հայոց ռազմական փառքը մեկ տոհմի՝ Մամիկոնյաններին վերագրելու մարմաջը: Եվ այն, որ նա ցանկացած ճակատամարտում կամ ռազմական գործողության ժամանակ, իբրև գլխավոր հերոս, տեսնում է միայն Մամիկոնյաններին՝ արհամարհելով այլ զորապետների գոյության հավանականությունը, ամենևին էլ չի նշանակում, թե այդպես է, թե հայոց բանակն այլ զորավարներ չի ունեցել: Չգիտես թե ինչու, հայոց սպարապետների անունները թվարկելիս բոլոր ուսումնասիրողները ցիտել են Բուզանդին. Վաչէ, Արտավազդ, Վասակ, Մուշեղ... Պարզապես արհամարհվել է Պատմահոր՝

[366] Կրկյաշարյան Ս., Բդեշխությունների առաջացումը Հայաստանում, ՊԲՀ, 1966, թ. 4:

առավել անաչառ մոտեցումը: Համոզված պնդում եմ, որ Տրդատի, Կոտակի, Տիրանի, Արշակի և Պապի տարիներին Մամիկոնյան տոհմը տվել է միայն մեկ սպարապետ. նա Վասակն է: Ռշտունիներ, Մանդակունիներ, Սյունիներ, Բագրատունիներ... Ահա հայոց սպարապետական տոհմերը հնագույն ժամանակներից մինչև հայոց պետականության կործանումը: Ընդ որում, Պատմահայրը չի զլացել անուն առ անուն թվարկելու նաև հայոց սպարապետների հրամանատարության ներքո գործող այլ քաջարի զորապետներին:

Այն, որ հայոց բանակը գլխավորել են սպարապետները, մի՞թե նշանակում է, թե հայկական բանակը զորաթևերի բաժանված չի եղել: Նկարագրելով Խոսրով Կոտակի գահակալման սկիզբը՝ Խորենացին նշում է, որ Անտիոքոս զորավարը վերահաստատեց չորս զորավարների՝ Բագարատ Բագրատունու, Միհրան բդեշխի, Վահան Ամատունու, Մանաճիհր Ռշտունու հրամանատարությունները՝ համապատասխանաբար, հայոց Արևմտյան, Հյուսիսային, Արևելյան և Հարավային ուղղությունների վրա:[367] Հիշենք, որ դեռ Տրդատ Գ էր սպարապետի մահից հետո հաստատել նման ստորաբաժանում: Նման բաժանումներ մեզ հայտնի են գոնե Հայկյան Արամից սկսած: Եթե այդ սկզբունքն իրանական ազդեցության արձագանք է, ապա դժվար թե հռոմեացի զորավարն իրեն զրկեր երկրում հռոմեական կարգեր հաստատելու գայթակղությունից: Եվ հետո, ի՞նչ է նշանակում՝ իրանական ազդեցություն: Առավել քան տրամաբանական է, որ ռազմական հազարամյակների փառք և ավանդույթներ ունեցող մի երկրում, ընդհանուր հրամանատարության ներքո, զորքերը բաժանված լինեին չորս կամ ավելի ուղղությունների: Այն, որ Պարսկաստանում ևս գործում էր նույն սկզբունքը՝ չի կարող նշանակել, թե Խորենացին կամ Բուզանդը (ինչպես տեսանք, Բուզանդի մոտ ևս որոշակի պատկերացում կա չորս ուղղությունների

[367] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Գիրք Գ., Զ.:

մասին) պարզապես այս տեղեկությունները հորինել են՝ ազդվելով հարևան երկրում գործող կարգերից: Բայց այս սկզբունքը գործել է նաև շատ այլ երկրների բանակներում: Շեշտեմ, որ Պատմահոր մոտ տարբեր ուղղությունների բաժանված մեր զորքի գործողություններն արհեստականության նշույլ անգամ չունեն, այլ համապատասխանում են Զորանամակում սահմանված չորս դռների տրամաբանությանը:

Զորանամակն արհեստածին բնորոշելու Ադոնցի մյուս փաստարկն այն է, որ այստեղ պահպանված չէ որևէ սկզբունք՝ անգամ տերիտորիալ: Օրինակ, Բագրատունին և Բասենի իշխանը միասին հայտնվել են Անգեղտան, Կասպքի իշխանը՝ Գուգարաց, իսկ Գողթան իշխանը՝ Կաղմէաց խմբում[368]: Իրականում, սակայն, այստեղ գործել է հետևողական մի սկզբունք. տվյալ նախարարի զորքերը պատերազմի ժամանակ և առհասարակ, նաև՝ խաղաղ պայմաններում, հսկում են իրենց գավառներից դուրս գտնվող սահմանները: Այս սկզբունքն իր ազդեցությունն է թողել նաև այսօր՝ շատ երկրներում գործող համանման օրինաչափության վրա, երբ զորակոչիկը պարտավոր է ծառայել իր հայրենի ծննդավայրից որոշակի հեռավորության վրա: Սա ոչ միայն օգնում էր արքունիքին վերահսկելու նախարարական զորքերը, այլև զինվորի մեջ Հայրենիքի պաշտպանության գաղափարը վեր էր հանում տեղական հայրենասիրության մակարդակից՝ այն վերածելով Համահայաստանյան հայրենասիրության:

Այն, որ Զորանամակում տեղ են գտել Մանավազյանները, Որդունիներն ու Բզնունիները՝ ամենևին էլ չի խոսում փաստաթղթի արհեստածին լինելու մասին, եթե իհարկե, հարցին չենք մոտենում կանխակալ կարծիքով: Ընդհակառակը, այն միայն ցույց է տալիս, որ Զորանամակն արտահայտում է շատ վաղ շրջանի պատկերը, երբ հիշյալ նախարարությունները վերացված չէին և բարգավաճում էին:

---

[368] Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 266-330:

Բոլոր այս ցուցակներին զուգահեռ կան նաև այլ՝ առավել ուշ շրջաններն արտացոլող վկայություններ: Դրանց քննարկումն այստեղ խնդրից դուրս է: Ես ընդհամենը փորձեցի ցույց տալ հայոց գահերեցության կարգն ու դրա որոշիչ սկզբունքները՝ մեր պատմության վաղ շրջաններից մինչև պետականության վերջնական անկումը: Փաստ է, որ մեզանում առավել, քան որևէ այլ տեղ, ազնվականության և պետական ապարատի փոխհարաբերություններն եղել են խիստ համակարգված: Դրանց հիմքում դրված է եղել ծագման ազնվությունն ու Հայրենիքի հանդեպ ծառայությունը: Այս սկզբունքը գործել է անհիշելի ժամանակներից: Վկան՝ Պատմահայրը: Այլ խնդիր է, որ հայոց մշակույթի՝ այդ թվում քաղաքական, ոչնչացումը հանգեցրեց նրան, որ հետագայում, օտար դիվաններում հայտնաբերված որոշ փաստաթղթեր մեզ մատուցվեցին աղճատված վիճակում՝ ուսումնասիրողների կողմից բնորոշվելով իբրև օտար մշակույթների արձագանքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Ե., 1977:
2. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987:
3. Ազգային-պետական գործիչներ, Ե., 2007:
4. Ասատրյան Հ., Հատընտիր, Ե., 2004:
5. Ավետիսյան Կ., Հայրենագիտական էտյուդներ, Ե., 1979:
6. Արզումանյան Ն., Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող «Մատեան Գունդ» զորամասը, ՊԲՀ, 1973, թ. 2:
7. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Ե., 2006:
8. Դանիելյան Ա., Տրդատ Գ զինվորական ռեֆորմը, ՊԲՀ, 1974, թ. 4:
9. Թովմա Արծրունի, Պատմություն Արծրունյաց Տան, Ե., 1978:
10. Լալայան Մ., Հայ եկեղեցին և մենք,- «Ազգ Եվ Դավանանք», Ե., 1996:
11. Լալայան Վ., Հայոց դիցաբանության և քրիստոնեության համեմատություն, Ե., 2009:
12. Լալայան Վ., Մեհրուժան Արծրունի, «Դարձ», 2001, թ. 22:
13. Լեո, Երկերի ժողովածու, հտ. Ա, Ե., 1966:
14. Լեո, Հայ կղերական դիվանագիտություն, Ե., 1992:
15. Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., 1979:
16. Կրկյաշարյան Ս., Բդեշխությունների առաջացումը Հայաստանում, ՊԲՀ, 1966, թ. 4:
17. Հովհան Մամիկոնյան, Տարոնի Պատմություն, Ե., 1989:
18. Հրանտ Ք. Արմեն, Պապ Արշակունի, Երուսաղեմ, 1958:
19. Հրանտ Ք. Արմեն, Փառանձեմ թագուհի, Վենետիկ, 1962:
20. Մանանդյան Հ., Երկեր, հտ. Բ, Ե., 1958:
21. Մեր Հաղթանակները, հտ. 2, Ե., 2009:
22. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Ե., 1961:
23. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Ե., 1969:
24. Մովսիսյան Ա., Աշխարհաժողով. Հին Հայաստանի բարձրագույն խորհրդակցական ժողովը՝ երկրի դասային համերաշխության երաշխավոր, «21-րդ Դար», 2006, թ. 3:

25. Մուշեղյան Ա., Մովսես Խորենացու դարը, Ե., 2007:
26. Նալբանդյան Վ., Գնել-Տիրիթյան վիպական ավանդության պատմական հիմքի հարցի շուրջ, ՊԲՀ, 1964, թ. 4:
27. Չամչյանց Մ., Հայոց Պատմություն, հտ. Ա, Ե., 1985:
28. Սեբէոս, Պատմութիւն, Ե., 1979:
29. Սվազյան Հ., Ճենները և Ճենաց աշխարհը՝ ըստ հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1976:
30. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, Ե., 1986:
31. Վարդանյան Վ., Բագրատունի տոհմի ծագմանը և գործառույթներին առնչվող մի քանի հարցերի շուրջ, ՊԲՀ, 2008, թ. 1:
32. Ուխտանես, Պատմություն Հայոց, Վաղարշապատ, 1871:
33. Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, Ե., 1987:
34. Օրմանեան Մ., Ազգապատում, հտ. Ա, Պէյրութ, 1959:
35. Страбон, География, М., 1964.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից 3
Ներածություն 7
Գիրք Առաջին.
Անօրեններ. Տիրան Երկրորդ 19
Գիրք Երկրորդ.
Ուրացյալներ. Արշակ Մեծ 73
Անկախություն 98
Մորթված հույսերի քաղաքը. Արշակավան 121
Պատերազմ 133
Փլուզում 155
Աղետ 169
Գիրք Երրորդ.
Դիվահարներ. Վերջին Տիրակալը 201
Ազատագրում 207
Դիվահարը 245
Կռապաշտության զոհը 267
Վերջաբան 291
Հավելված 294
Օգտագործված գրականության ցանկ 326

ԳԵՎՈՐԳ ԻՇԽԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՏԵՐԵՐԸ

Կազմի վրա՝ Արտաշես Ա Աշխարհակալը հռոմեական կայսերական գայլին ոտնած (հեղինակ՝ Վահան Ղարիբյան)

Գրքին վերաբերող հարցերով կարող եք դիմել հեղինակին՝ ceghakron@haykjanner.org հասցեով: